

ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ ԵՒ ՀԱՆՐԱՅԻՆ

ԱՄՍԱԳԻՐ

ՏԱՍՆԵՒՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

1906 № 7—8 ՅՈՒԼԻՍ ՕԳՈՍՏՈՍ

ԹԻՖԼԻՍ



ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ ԵՒ ՀԱՆՐԱՅԻՆ

ԱՄՍԱԳԻՐ

ՏԱՍՆԵՒՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

1906 № 7—8 ՅՈՒԼԻՍ ՕԳՈՍՏՈՍ

Հրատարակիչ Ա. Փուրարեշատի, Մոսկովսկի փողոց, № 5.
ԹԻՖԼԻՍ 1906

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

I Պեշիկթաշլեան եւ թատրոնը Հայոց մէջ. ԱՐՇԱԿ ՉՕՊԱՆԵԱՆ 5

II * * Տ. ՇՈՒԼՈՒԵԱՆ 46

III Հայաստան եւ հայերը Ե. եւ Դ. դարերում Քրիստոսից առաջ. ԿԵՍԱՐ 47

IV Երբ մենք մեռածներս սթափուենք. Հենրիկ Իբսէնի. գերմ. թարգմ. Ց. ԲՈՋԻԵԱՆ . . 59

V Սահմանադրական-ժողովրդական կուսակցութիւնը եւ աջակողմեանները. բժ. Ս. ՇԱՀԵՆԱԶԱՐԵԱՆՑ 81

VI Անաբեր ժայռը. Կ. Միքէլաձէի. վր. թարգմ. Հ. ՏԷՐ-ԱՍՏՈՒԱԾԱՏՐԵԱՆՑ . . . 94

VII Աւետարանի եղբայրները. ԼԵՒՈՆ ԽԱՆԶԱԴԷ . 96

VIII Վշտերի աշխարհ. Ա ԳԱԲՐԻԷԼԵԱՆ . . 124

IX Ի՞նչ է բարոյագիտութիւնը. ըստ Մենգէրի ԳԱՐ. ԵՆԳԻԲԱՐԵԱՆ 125

X Ապագայ մարդկութիւն. պրոֆ. Պաօլո Մանտէգացցայի. սոցիալական ֆանտազիա. թարգմ. Մ. ՊՈՊՈՎԵԱՆ. 128

XI Նոր կեանքի շէմքին. Ա. ԳԵԱՆՋԵՑԵԱՆ. . 142

XII Ս. Ներսէս Շնորհալի. ՔՆՆԱՍԷՐ . . 153

XIII ՄԱՄՈՒԼԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Անահիտը հայոց հարցի մասին։ ՎԱՐԴԳԷՍ 169

XIV ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Էվոլիւցիայի օրէնքը։—Նամակ խմբագրութեան. Ս. ՄԱԼԽԱՍԵԱՆ։ Նամակ Ս. Էջմիածնից։— Ներքին լուրեր։ 172

XV ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

XVI ՑԱՒԵԼՈՒԱԾ

1. Ենինս Վարիպանիձէ. Արտուր Լայստի. Գերմ. թարգմ. ԱԲԻՍ. ՑՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ . .17—32

ՊԵՇԻԿԹԱՇԼԵԱՆ ԵՒ ԹԱՏՐՈՆԸ ՀԱՅՈՑ ՄԷՋ

Թատերական սեռը Հայոց ամբողջ հին գրականութեան մէջ բացարձակապէս պակսած է։ Յատկանշական է արդէն որ գործողութեան վրայ հիմնուած բոլոր գրական սեռերը բացակայած են մեր նախնեաց գրականութենէն։ Մեր հայրերը մեզի չեն թողած ոչ դիւցազներգութիւն, ոչ ողբերգութիւն, ոչ կատակերգութիւն, ոչ վէպ. շարունակական քնարերգութիւն մը՝ն է որ կը տիրէ, աստուածաբանական, խրատաբանական քարոզներու և պատմական ժամանակագրութեանց հետ. նոյն իսկ այս վերջիններուն մէջ չի յայտնուիր բանագործական (dramatique) զգացումը, ինչպէս յոյն ու լատին մեծ պատմաբաններու գործերուն մէջ. պատմուած իրողութեանց շարքեր են՝ յաճախ կցկտուր ու անյարիր՝ մեր գրեթէ բոլոր պատմագիրներու գործերը, առանց ընդհանուր որոշ յատակագծի մը, առանց իրողութիւններն իր շուրջը բոլորող տիրական գաղափարի մը. միայն Եղիշէի արձակ քերթուածն է որ ունի քիչ մը բանագործական նկարագիր։ Նոյն իսկ մեր հին աշուղներու բանաստեղծութեանց ու ժողովրդական անանուն երգերուն մէջ, գործողութեան պակասը բացարձակ է. ուրիշ բան չենք գտներ հոն բայց եթէ քնարերգական թռիչներ, կամ հատուածական նկարագրութիւններ, կամ վարդապետական խորհրդածութիւններ. հազիւ քանի մը տաղաչափուած հեքեաթ, հազիւ քանի մը «Պալլատ», անոնք ալ շատ թոյլ գործողութեամբ։ Ատիկա գլխաւորապէս կը բացադրուի քրիստոնէութեան տիրական ազդեցութեամբը։ Չենք գիտեր թէ հեթանոսական շրջանին մէջ, «վիպասանաց երգ»երուն, «թուելեաց երգ»երուն, «ցուցք»երուն ու «զրոյց»ներուն հետ մեր հին այեանները թատերական փորձեր ալ չունէի՞ն գէթ սաղմնային ձևով։ Որոշապէս գիտենք սակայն որ Տիգրան Բ.-ի արքունիքին մէջ, ուր յունական արուեստն ու լեզուն կը տիրէին, Աթենքէն բերուած դերասաններ հելլեն ողբերգութիւններ կը ներկայացնէին, և Տիգրանի որդին Արտաւազդ ինքն իսկ կը յօրինէր թատերա-

խաղեր. եթէ գրի գիւտն ու հայ գրաւոր մատենագրութեան հիմնարկութիւնն այդ շրջանին կատարուած ըլլար, շատ հաւանականաբար հայերէն լեզուով թատերական—ինչպէս և դիւցազներգական ու վիպական—գրականութիւն մը պիտի արտադրէին մեր հեթանոսական շրջանի նախնիք. բայց որովհետև քրիստոնէութեան պաշտօնական հաստատումէն յետոյ, ու քրիստոնէական կղերին ձեռքով կատարուեցաւ գրի գիւտն ու գրականութեան հիմնարկութիւնը, այդ գրականութիւնը կրեց խորապէս քրիստոնեայ ու վանական կղերին ընդհանրապէս արուեստատեաց ու մասնաւորապէս թատերատեաց ազդեցութիւնը, և եղաւ անվերջ քարոզ մը, շարունակական շարական մը, անդադրում սաղմոսերգութիւն մը։ Աստուածաշունչը դարձաւ՝ հայ մտաւորականութեան համար՝ գիրքերուն գիրքը, տիպար—գիրքը, և Աստուածաշունչը՝ գէշ հասկցուած. որովհետև եթէ ճշմարիտ է որ Եբրայական գրականութեան այդ յիշատակարանը քնարերգական ու խրատաբանական է ամենամեծ մասամբ, անոր մէջ կան սակայն մասեր որ եթէ բուն իսկ դիւցազներգութիւն, վէպ կամ թատերգութիւն չեն, այդ սեռերուն ոգին ունին,—ինչպէս «երգ երգոց»ը որ սիրային թատերաբերթուած մը՝ է, Յորայ գիրքը, դիւցազներգական շունչով, Տովբիթի, Յուդիթի, Հռութի, Եսթերի վիպակները և Աւետարանին հոյակապ դիւցազնավէպը։ Վանականները Աստուածաշունչին մէջ տեսած են միայն վարդապետական ու միստիքական տարրը. այդ նոյն երևոյթը կը նկատուի արդէն ասորական ու բիւզանդական գրականութեանց մէջ ևս՝ զոր նմանապէս մեծ մասամբ քրիստոնեայ վանականներ են յօրինած. ատոնց մէջ ալ կը պակսի թատերական ճիւղը և նոյն իսկ՝ ընդհանրապէս՝ բանագործական ոգին, ինչ որ աւելի տարօրինակ է՝ մանաւանդ Յունաց համար, որոնք՝ դասական շրջանին՝ գերազանցապէս օժտուած ցեղը յայտնուած են թատերական ճիւղին մէջ։ Սակայն Յոյնը զէթ իր ժողովրդական բանաստեղծութեանց մէջ պահպանած է բանագործական ոգին։ յունական հին ու նոր աւանդական երգերուն մէջ կը վխտան պալլատներ, վիպակներ, ուր զգացումը գործողութեան ձևով կը յայտնուի, ուր ներշնչումը՝ փոխանակ կեցած տեղը անշարժ մխալու, կը քալէ, կ'ընդհարի, կը շաղապատուի, կը մաքառի, կ'ապրի։ Հայը շատ աւելի խորապէս կրած է քրիստոնէական—կղերական ազդեցութիւնը քան Յոյնը, ազդեցութիւն որուն դէմ Եւրոպական նոր ցեղերը գրեթէ բոլորն ալ առաջին օրէն ապստամբութեան նշաններ ցոյց տուած են, քանի որ Միջին դարուն՝

քրիստոնէական կղերին բացարձակ տիրապետութեան տակ իսկ՝ վանական գրականութեան հետ անոնք հիմունքը դրած են թատերական, դիւցազներգական, վիպական գրականութեան՝ «միսթէռ»ներով, «սոթիս»ներով, «մորալիթէ»ներով, «շանսոն տը ժեսթ»երով, «փապլիօ»ներով, «ռոման»ներով։

Ժէ դարուն է որ գրուած է առաջին թատերգութիւնը հայերէն լեզուով. և այդ ալ բացառիկ երևոյթ մըն է, արդիւնք օտար միջավայրի և օտար ազդեցութեան. Լեմպերկի հայ գաղութին մէջ, թէադինեան կրօնաւորները տեղւոյն հայկական դպրոցին մէջ թատերական ներկայացումներ կը սարքէին՝ ուր կրօնական նիւթերու վրայ յօրինուած թատերգութիւններ կը խաղացուէին. այդ ներկայացումներուն համար է որ իրենցմէ մին, Ալեքսիանոս վարդապետը, խմբագրած է Հռիփսիմէ գրաբար ու տաղաչափեալ ողբերգութիւնը որուն նիւթն է Տրդատի և Հռիփսիմէի սիրային—միստիքական ծանօթ դրուագը *). այդ ողբերգութիւնը, զոր Բազմավէպը հրատարակած է իր 1884, 85 և 86 ի հատորներուն մէջ, շահեկան գործ մըն է, ուր շարժում ու յուզում կայ՝ որոշ չափով. սէրը չէ վտարուած անկից և նոյն իսկ բաւական կարևոր դեր մը կը կատարէ հոն. վերջին արարէն զատ որ զուտ կրօնական, վարդապետական գոյն ունի և անհամ ու տկար է բացարձակապէս, առաջին չորս արարները կը պարունակեն սիրուն ու երբեմն նոյն իսկ ուժեղ կտորներ, զգացումով և երևակայութեամբ հարուստ. թատերական հիւսքը զուրկ չէ ամրութենէ, ճարտարութենէ, տիպարները անկենդան չեն, եթէ չեն ալ շատ հզօր. ոճը մերթ կը ստանայ ճշմարտապէս ինքնատիպ, գունագեղ նկարագիր մը, իր միամտութեանը մէջ՝ հաճեղ. լեզուն հեռու է ոսկեդարեան մաքրութիւն ունենալէ, բայց տափակ ու գռեհկէ չէ երբէք, մշտական ձգտում մը ունի դէպի ազնուութիւն։

Այդ նորութիւնը, Հայութեան հատուածի մը երոպական

---

*) Վիեննայի Մխիթարեանց մատենադարանին թիւ 486 ձեռագիրը որ կը պարունակէ տեսութիւն մը այս ողբերգութեան, հետևեալ ծանօթագրութիւնը կը կրէ. «Թռակէտիա. մարտիրոսութիւն սրբուհւոյն Հռիփսիմէի Հռոմէական մեծի կուսին իշխանուհւոյ, շարակարգեալ ի կարգէ Թէադինոսացն Ալեքսիանոս աստուածաբան վարդապետէ կառավարող և վերակացուէ հայրապետական մեծի դպրատան որ Հայոց վանս։ Հրատարակի ի Լով (Լեմպերկ) մայրաքաղաք լեհաց, ի թուին քրիստոսի ՌՈԿԸ և ի Հայոց ՌՃԺԷ (1668) ապրիլ ամսոյ։

միջավայրին հետ անմիջական շփումին արդիւնք, մնացած է անվաղորդայն։ Ամբողջ ԺԸ. դարուն մէջ ոչ մէկ թատերգութիւն չենք գիտեր հայերէն լեզուով գրուած, ոչ իսկ օտար լեզուէ թարգմանուած։ Մխիթարեաններն իսկ, այդ դարուն իրենց հրատարակած թարգմանութեանց շարքին մէջ թատերական ճիւղէն ոչ մէկ գործ մտցուցած են. դեռ չափազանց «քրիստոնեայ» էին այդ գերազանցապէս հեթանոսական ճիւղը մշակելու համար. բայց վանքին մէջ սկսած էին արդէն կրօնական նիւթով գրաբար փոքրիկ թատերախաղերու ներկայացումներ սարքել *)։

ԺԹ. դարուն սկիզբը, քանի մը թատերական փորձեր տեղի կունենան մասնաւոր շրջանակներու մէջ։ Առաջին նախաձեռնակը Մխիթարեան մը է նորէն, Հ. Մինաս Բժշկեան, Տրապիզոնցի. 1815-էն 1817 Պոլիս մնալով, Տիւզեանց տպարանին մէջ աշխարհաբար թատերգութիւններ ու կատակերգութիւններ թարգմանօրէն յօրինուած՝ ներկայացնել կուտայ. 1828—30 ի միջոցներուն, Պեզճեան Յարութիւն ամիրայի հովանաւորութեամբ՝ Աստուածաշունչէն հանուած նիւթեր՝ թատերգութեան վերածուած՝ խաղացուած են Պեզճեան վարժարանին մէջ։

---

*) Հ. Բարսեղ Սարգիսեանի «երկարիւրամեայ գրական գործունէութիւն և նշանաւոր գործիչներ Վենետկոյ միաբանութեան» գործը, որ լոյս տեսաւ այս ուսումնասիրութեան աւարտումէն յետոյ, երևան կը բերէ շատ շահեկան ու անտիպ տեղեկութիւններ Ս. Ղազարու մէջ տեղի ունեցած թատերական գործունէութեան մասին. այդ տեղեկութեանց համեմատ, 1760 էն իսկ առաջ, Մխիթարեան Հայրերը սկսած էին Ս. Ղազարու վանքին մէջ թատերական ներկայացումներ տալ և շատ աւելի լայն ծրագրով քան ինչ որ ցարդ մեզի ծանօթ տեղեկութիւններէն գիտէինք. խաղերը իրենք իսկ Մխիթարեան հայրերը կը յօրինէին, և նորընծաներն ու «վարժարանեայք» կը ներկայացնէին զանոնք։ Նախ, Ս. Գրքէն ու սրբոց վարքերէն առած են թատերգութեանց նիւթերը. յետոյ՝ Հայոց պատմութենէն, հռովմէական և յունական պատմութենէն ու ժամանակակից հայ կեանքէն. Հ. Սարգիսեան կը յիշէ հարիւր տասնէն աւելի տիտղոսներ ողբերգութեանց, դրամաներու և նոյն իսկ բազմաթիւ կատակերգութեանց՝ ժամանակակից հայ կեանքէն քաղուած, Հայոց բարքերու թերութիւնները, ասիական կոպտութիւնները, ծիծաղելի կողմերը ձաղկելու և ուղղելու դիտումով գրուած, այդ խաղերուն, որոնց ձեռագիրներ պահպանուած են և փափագելի էր որ հրատարակուէին—մեծ մասը ինքնագիր է, մասամբ նմանողական, մասամբ ալ՝ թարգմանութիւն։

1836-ին, Զմիւռնիոյ մէջ, Մեսրոպեան վարժարանի ուսուցիչ Անդրէաս Փափազեանը իր աշակերտներուն ներկայացնել տուաւ Իտալերէն թատերգութիւն մը, մինչ որ մեծ գայթակղութիւն յառաջ բերաւ տեղւոյն դեռ կրօնամոլ հասարակութեան մէջ և մնաց առանց շարունակութեան։

1839—40 ին, աւելի լուրջ թատերական փորձ մը տեղի կունենայ Մոսկուայի մէջ. Դայուստ Շիրմազանեան կը յօրինէ և իր տան մէջ ներկայացնել կուտայ երգիծական թատերգութիւն մը, ուր ժամանակակից հայ ընկերութեան կարգ մը տգեղ տիպարներ — կաշառակեր պետական պաշտօնեաներ, զեղծ ու եսամոլ հոգևորականներ, և այլն.— ի հանդէս բերուած էին՝ համարձակութեամբ մը որ մեծապէս գնահատելի է այդ շրջանին ուր քննադատութիւնը դեռ գոյութիւն չունէր Հայոց մէջ։ Այդ խաղը մնացած է անտիպ։

Այս բոլոր թատերական փորձերուն մէջ կնոջ դերը միշտ բացակայ էր. այդ միջոցին դեռ ասիական ըմբռնումներ կը տիրապետէին Հայոց մէջ կնոջ մասին. մանաւանդ Պոլիս, ուր Հայք ամենէն աւելի խորապէս կրած էին Թրքական բարքերու ազդեցութիւնը. բնական էր որ այդպիսի պայմաններու մէջ՝ թատերաբեմի վրայ հասարակութեան առջև կիներ իբր դերասան՝ և այն ալ սիրային տեսարաններու մէջ՝ երևնալն ու խաղալը անհանդուրժելի խայտառակութիւն մը պիտի նկատուէր։

1845 ին, Հ. Պետրոս Մինասեան կը հրատարակէ Վենետիկի մէջ Խոսրով մեծ անունով հնգարար ողբերգութիւն մը, գրաբար, արձակ։ Այդ ողբերգութեան սկիզբը կը գտնուի ընդարձակ յառաջաբան մը, որու մէջ հեղինակը, բացատրելով հանդերձ թատրոնի կարեւորութիւնը, որոշ զանազանութիւն մը կը դնէ «կրթական» թատրոնին և «ցոփ» թատրոնին մինջև. առաջինը դպրոց մըն է. ուր հանդիսատեսը կ՚ուսանի սիրել առաքինութիւնը, քաջութիւնը, ազնուութիւնը և ատել մոլութիւնները. անոր մէջ տեղ չի կրնար գտնել սէրը, որ պիղծ է, բնականաբար և դերասանուհիներու երևումը հոն անհանդուրժելի է. երկրորդը անբարոյականութեան աղբիւր մըն է. «Եւրոպայի մէջ երկու տեսակ թատրոն կայ, կըսէ Հ. Մինասեան, անունով ալ իրարմէ զանազանուած. մին կը կոչուի թատրոն աշխարհական, երկրորդը՝ թատրոն կրթական։ Առաջինները հրապարակային թատրոն են, վերջինները՝ առանձնական, որ գրեթէ Եւրոպայի բոլոր գլխաւոր վարժարաններուն ու կրթարաններուն մէջ կը գտնուին. այս կրթական թատրոն-

ներուն մէջ կինները չեն մտներ, այլ միայն մանուկները, երի-տասարդները, վարժարաններուն աշակերտները. այդ թատրոն-ները հաստատուած են թէ կրթելու թէ զուարճացնելու համար։ Թէ այդպիսի թատրոններն ալ զբօսեցուցիչ են, ստիկա յայտնի է, քանի որ հոծ և խուռն բազմութեամբ մարդիկ կը ժողվուին պնոնց մէջ, թէպէտ և անոնց մուտքը վճարքով է։ Եւ ամեն տեսակ թատրոնական քերթուածներ կան այդ կրթա-կան թատրոններուն մէջ ալ. ողբերգութիւններ, նոխազերգու-թիւններ, եղերերգութիւններ, կատակերգութիւններ և զաւեշտ-ներ։ Եւ ահա այս կրթական թատրոններուն մէջ՝ զուարճու-թեան հետ կան ամեն տեսակ օգուտներ..., նաև քաղցր մխի-թարութիւն մը սրտի, վասն զի իրենց ազդեցութեամբը կը յորդորեն, միտքը զերծ պահելով մեղմեխ և վայրաքարշ կրքերէ, կամ աստուածպաշտութեան, ազգասիրութեան և ամէն տե-սակ առաքինութեանց կը բորբոքեն. ուստի խոհական և բարեսէր անձեր շատ կը հաւնին ասոնց, եւ այսպէս երևան կելնէ ճշմարտութիւնը. վասն զի մեր ազգասէրները եթէ կուզեն մեծապէս օգտակար ըլլալ ազգին և վերահաս նորանոր չարիքներուն առաջը առնել, միմիայն թատրոնի այս տեսակը պէտք է ընտրեն...։

Յառաջաբանին շարունակութեանը մէջ, հեղինակը սապէս կը բանաձևէ «աշխարհական» թատրոնին դատապարտութիւնը.

«Այժմեան աշխարհական թատրոններուն վնասն այն է որ, Ա. ամուսնական դաշինքները, որ այնքան վսեմ ու պա-տուած են, և լռելեայն՝ փորձ մարդոց հետ միայն կը կա-տարուին Արևելքի մէջ և նոյն իսկ հեթանոսներու մէջ, մեծ անարգութեան հասած են Եւրոպայի մէջ, ինչպէս յայտնի է գիտցողներուն։ Ասոր հակառակ՝ ամէն կերպով հաւաստի է որ եթէ Եւրոպայի մէջ պակաս ըլլային աշխարհային թատրոն-ները, այս քրիստոնէութեան ծաղկեալ դարուս մէջ՝ շատ աւելի պարկեշտ պիտի ըլլային Եւրոպայի ազգերը, և աւելի բազ-մամարդ. վասն զի այն ատեն մեծ ճշտութեամբ պիտի պա-հուէր ամուսնութեան աստուածադիր կարգը և աւելի պին-տուած պիտի ըլլար եկեղեցւոյ այդ մեծ խորհուրդը։ Բ. Զա-րիք է, վասն զի մատաղ մանուկները, լսելով կը սորվին ամէն տեսակ անառակութիւն՝ օրինաւորին հետ անզանազան խառ-նուած, իրենց բարքն ալ կապականի, որով հազիւ արբունքի հասած, ուսմունքն ու գիտութիւնը ոտնակոխ ընելով, մտքեր-նուն ամբողջ ուշադրութիւնը թատրոններու զբօսանքին կը

դարձնեն, և իրենցմէ շատերուն վրայ մահը կը հասնի չար սուրհանդակի պէս։ Դ. Զարիք մը ևս, անհաւատարմութիւնը ամուսնական կեանքի... Դ. Զարիք՝ արհամարհութիւն կրօնքի և մերժում աստուածպաշտութեան, և այլն»։

Աւելորդ իսկ է ցոյց տալ սխալը և տղայականութիւնը այս տեսութեանց։ Թատրոնը, ինչպէս ամբողջ գեղարուեստը, նման է կրակի. ոչինչ աւելի բարերար է քան կրակը, կեանքի աղբիւրն ու պահպանիչն է ան, բայց անոնք որ անկարող են անկից օգտուելու՝ կայրին ու կը փճանան անկից. յանցանքը կրակինը չէ. երբեք տրամաբանական չէ սակայն՝ անոր վնասէն զերծ մնալու համար, զայն դնել այնպիսի վիճակի մը մէջ ուր ալ դադրի կրակ ըլլալէ. «կրթական» թատրոնը կրակն է՝ իր բոցէն զրկուած, մոխիրով փաթթուած, պզտիկ «մաղմաղ» մը դարձած։ Մխիթարեանք դեռ չէին հասած այդ պահուն այն մտաւոր ազատութեան, անվերապահ գեղասիրութեան կատարին՝ ուր հասան Բագրատունիի ու Հիւրմիւզի մեծ օրերուն, երբ առանց վարանելու նոյնութեամբ թարգմանեցին Հոմերոսի ու Վիրգիլիոսի գերազանցապէս «աշխարհական» այսինքն կենդանի, ամբողջական, ու մաքուր՝ քանի որ գեղեցիկ՝ գործերը. Հ. Մինասեան կը մտածէր ու կը գրէր՝ ճշմարիտ վանականի մը պէս։ Ճիշտ է՝ մասամբ՝ որ, այդ շրջանին, երբ թատրոնը դեռ նոր կը մտնէր Հայոց մէջ, անհրաժեշտ էր զգուշութիւն դնել խաղերու ընտրութեան մէջ, սկսիլ խաղերէ որ առանց բոլորովին մաղուած ըլլալու, լպիրշ չըլլային։ Եթէ ընդհանուր սկզբունքով, Հ. Մինասեանի յառաջաբանը անճիշտ է, այդ տեսակէտով ճիշտ կրնայ նկատուիլ,—թեպէտ այդ նկատողութիւնն իսկ ծայրայեղութեան հասած է հոդ, քանի որ կնոջ դերը, նոյն իսկ մօր, քրոջ, պարկեշտ ամուսնոյ,—կը նկատուի, և թատրոնը կը զրկէ յուզման—և բարոյացուցիչ յուզման ամենէն ուժեղ աղբիւրէն։

Ամէն պարագայի մէջ Հ. Մինասեանի այդ հրատարակութիւնը թուական մըն է հայ թատրոնի պատմութեան մէջ։ Այդ վանականը պէտքը կը քարոզէր թատրոնին, սեղմելով հանդերձ անոր սահմանը. և կուտար առաջին իրագործում մը իր թատերական ըմբռնումին. քիչ յետոյ կը հրատարակէր երկրորդ ողբերգութիւն մըն ալ, Սմբատ առաջին. երկուքն ալ, կոկիկ ու սիրուն ոճով մը գրուած, ազնիւ ոգւով մը տոգորուած, բարոյախօսական «դաս»-եր են, և գեղարուեստի հետ իրենց կապը բաւական հեռաւոր է. բայց առաջին ողբերգութիւն-

ներն են Եւրոպական ոճով լղացուած ու գրուած հայերէն լեզուով Հռիփսիմէ-էն յետոյ*)։

Բաղձանքը զոր Հ. Մինասեան յայտնած էր իր Խոսրով Մեծին յառաջաբանին մէջ և զոր իր վարդապետական ոգւով թաթաւուած դրաբար ողբերգութիւնները անկարող եղած էին իրականացնելու, տասը տարի յետոյ վերջնապէս ժարմնաւորուեցաւ շնորհիւ Պեշիկթաշլեանի, որ հիմնեց հայկական թատրոն մը։ Մինչև այն ատեն կատարուած փորձերը հատուածական ու թոյլ էին եղած և անհետևանք մնացած. Պեշիկթաշլեան, որ լաւ ուսումնասիրած էր թատերական արուեստը և թատրոնի նշանակութիւնն ու դերը աւելի լայն ու ազատ կերպով կըմբռնէր քան իր ուսուցիչ Հ. Մինասեանը, ունենալով նաև հզօր կամք և յարատևող նկարագիր, յաջողեցաւ Հայոց բարքերուն մէջ մտցնել՝ այլ ևս տևական կերպով թատրոնի սէրը և ազգային բեմի մը պէտքը։

1856-ին է որ Պեշիկթաշլեան սկսած է ձեռնարկել թատերական գործին հիմնարկութեան։ Մեծ համակրութիւնը զոր կը վայելէր Օրթաքէօյի բոլոր բարեկեցիկ ընտանիքներուն մէջ, դիւրացուց իր ճիգերուն յաջողութիւնը։ Կազմեց սիրող—դերասաններու խումբ մը, որուն մէջ էին Անտոն Էֆէեան, Փատուայի Ռափայէլեան վարժարանին նախկին աշակերտ, Զահրապ և Ստեփան Փափազեան եղբայրները, Մեսրոպ Զօհրապեան (այժմ եղբայր Անտոն՝ Ս. Ղազարու վանքին մէջ), Պողոս Լազ Յովսէփեան՝ Փարիզի Մուրատեան վարժարանէն, Յովհաննէս Հիւրմիւզեան, նոյնպէս Մուրատեան վարժարանէն, Կոմիտաս Քէօչէեան, Եսայի Եսայեան, Յ. Շահինեան և Անտոն Օգոստինոսեան (այս վերջինը՝ երգիչ)։ բոլորն ալ կը պատկանէին հայ կաթոլիկ հասարակութեան. Պեշիկթաշլեան զանոնք կը հաւաքէր իրենց պարապոյ ժամերուն, դերերը կը սորվերցնէր, փորձերուն կառաջնորդէր։ Ներկայացումները սկսան տեղի ունենալ Օրթաքէօյի հայ կաթոլիկներու Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյն կից Լուսաւորչեան վարժարանին մեծ սրահին

---

*) Հ. Բարսեղ Սարգիսեանի ցուցակին մէջ յիշատակուած կը տեսնենք բացի տպուած այս երկու ողբերգութիւններն Հ. Պ. Մինասեանի հետևեալ անտիպ թատերական գործերը, հին եւ նոր ամանակի քաղաքավարութեան մրցում՝, սեծամեծախ խնոջք, նորելոյթ սովորութիւնն, Հայ զաղթականի մը արկածները (կատակերգութիւններ, վերջինը՝ Կարնոյ և Պաշալովի գաւառաբարբառներով գրուած), Արշակ Բ. եւ Երուանդ (ողբերգութիւններ).

մէջ։ Առաջին իրիկունը, ներկայացուցին Միթասթազիոյի Թեմիստոկլէս ողբերգութեան գեր. Գ. Հիւրմիւզի դրաբար թարգմանութիւնը և Հ. Պետրոս Մինասեանի Խոսրով Մեծը։ Ունկնդիրները, կաթոլիկ ու Լուսաւորչական, որոնք հոս բազմութեամբ եկած էին ողջունել այդ նորութիւնը, շատ բան չհասկացան այդ խրթին գրաբարով շարադրուած ողբերգութիւններէն և դժգոհ մեկնեցան։ Այն ատեն է որ Պէշիկթաշլեան ըմբռնեց աշխարհաբարին անհրաժեշտութիւնը հայ թատրոնը կենդանի, տեսական և ճշմարտապէս օգտակար դարձնելու համար, և սկսաւ ինքն իսկ խաղեր յօրինել կամ թարգմանել նոր հայերէնով։ Իր առաջին ինքնագիր ողբերգութիւնը եղաւ Կոռնակը, որուն յաջորդեցին յետոյ իր Վահան, Վահէ և Արշակ Բ. ողբերգութիւնները, Սաւուղ, Բրուտոս և Մահ Կեսարու թարգմանութիւնները և երեք քաջեր ու Աւազակք նմանողաբար գրուած զաւեշտները։ Կոռնակի առաջին ներկայացումը ամենամեծ յաջողութիւն գտաւ, շնորհիւ դիւրահասկանալի, պարզ ու հմայիչ լեզուին, և նիւթին՝ որ թէպէտ Հայոց հին պատմութենէն քաղուած՝ հրատապ այժմէականութիւն ունէր, Հայոց հին նախարարներու արիւնռուշտ երկպառակութեանց մութ պատկերը վերակենդանացնելով այնպիսի պահու մը ուր Հայերը երկպառակութեան չարիքին մատնուած էին նորէն։ Ներկայացումները շարունակուեցան մեծ ոգևորութեամբ և յարաճուն յաջողութեամբ, շաբաթը երեք ներկայացում կը տրուէր, հինգշաբթի, շաբաթ և կիրակի իրիկունները. սկիզբները, մուտքի տոմսակ չէին ծախեր. հրաւիրեալ «կոչ»երէն մին որահին դուռը կը կենար՝ ձեռքը ափսէ մը բռնած, և կը խնդրէր որ ամէն եկող ուզածին չափ գումար մը նուիրէր գործին. ետքէն, տեսնելով յաջողութիւնը որ հետզհետէ կ'ընդարձակուէր, տոմսակի սիստեմը մտցուցին։ Դերակատարները իրենց կրած նեղութեանց համար երբէք ոեւէ վճարում չէն ուզած ընդունիլ. Պէշիկթաշլեան ինքն իսկ որ իր ժամանակին մէկ ահագին մասը կը զոհէր այդ գործին, խաղերը կը գրէր կամ կը թարգմանէր, երգերուն եղանակ կը յարմարցնէր, դերերը կը սորվեցնէր, ներկայացումները կը սարքէր, ամենափոքր բաժին մ'իսկ չէ ուզած ստանալ գոյացած հասոյթէն։ Այդ հասոյթը կը յատկացուէր մասամբ Ս. Լուսաւորիչ եկեղեցիին, մասամբ լուսաւորչեան դպրոցին և մասամբ ներկայացմանց համար հարկ եղած իրեղէններուն, զգեստներուն և տեքօրներուն հայթայթման։ Կոռնակի ներկայացումէն քիչ յետոյ, Մասիս լրագիրը՝ իր 1857-ի յունուար 24-ի թուին մէջ՝ հրատարակած

է Պեշիկթաշլեանի լուսաւորչական աշակերտներէն պ. Մկրտիչ Ճանըմեանի մէկ նամակը որ կը բացատրէր թատերական գործին նշանակութիւնը և ամբողջ հայ հասարակութեան համակրութիւնն ու խրախոյսը կը հրաւիրէր անոր վրայ։

«Ներկայ ժամանակին մէջ, կըսէ նամակագիրը, նորանոր յառաջդիմութեանց վրայ ազգայնոց ունեցած անխոնջ եռանդը ճանչնալով՝ կը փութամ ծանուցանելու որ 15–20-ի չափ ազգին յառաջդիմութեանը ցանկացող և ձեռնտու անձինք՝ ամէն աշխատանք յօժար կամօք յանձն առնելով, Օրթագիւղի Հռովմէական Հայոց նորակառոյց դպրոցին մէջ մէկ քանի թատերական ողբերգութիւններ ներկայացնելու սկսեր են։ Ասոնք ու գլխաւորապէս իրենց վերատեսուչը և նոյն իսկ հատուածոց հեղինակ ազնուամեծար Մկրտիչ աղան Պեշիկթաշլեան (որ իր վսեմ ձեռնարկութեանն ու գովեստից արժանի գրչին համար անմահ անուն մը պիտի ստանայ ազգային պատմութեան մէջ) կը ջանան յառաջիկայ երեք ողբերգութիւններովս թատերգութեանց յարգը ազգերնուս մէջ ալ մտցնելու նախաձեռնութիւնը մը տալ»։

Նամակին շարունակութիւնը յատկացուած է քանի մը բառով ծանօթացնելու Կոռնակ, Մահ-Կեսարու և Բրուտոս խաղերուն նիւթը։

Նոյն թերթը իր նոյն տարուան փետրուար 21-ի թուին մէջ հրատարակած է յօդուած մը պ. Տիգրան Եուսուֆեանի, որ բացատրելէ յետոյ թատրոնի օգուտները՝ իբր ազգի մը բարոյական կրթիչ, ասպէս կը ջատագովէ Պեշիկթաշլեանի ձեռնարկը.

«Հայաստանի կործանեալ ժամանակը՝ առաջին անգամ ազգերնուս անոր (թատրոնի) վրայ ճաշակ մը տալու ձեռնարկութիւն ընողներն ալ՝ Պեշիկթաշլեան և իւր ընկերները՝ այս մասին գովութեամբ պիտի յիշուին ազգային պատմութեան մէջ։

«Օրթագիւղի հայկական տեսարանին խաղարկութիւններուն հանդիսատես եղողը լաւ պիտի ըմբռնէ թէ այն երիտասարդ ողբերգակներու խումբը ինչ դժուար գործի մը ձեռնարկութիւն ըրեր և յաջողեր են ազգին համարումը գրաւելու, երբ իմանալու ըլլայ որ այն սրահը՝ մէջը գտնուած բոլոր զարդերովը՝ միմիայն իրենց աշխատութեամբը և ուրիշ մէկ քանի ազգասէր յարգելեաց ջանիւքը յառաջ եկած է, և թէ նկարագրեալ ողբերգութիւններէն ոմանք ալ պ. Պեշիկթաշլեանի յաջողակ գրչէն ելած են։ Այո, չեմ կրնար առանց յիշելու անցնիլ

որ հայկական տեսարանին ներքին տնօրէնը կրկնակի իրաւունքներ ունի որով կարժանանայ իւր հիմնադրած և յաջողութեամբ գլուխ հանած դժուար գործքին համար ազգերնուս լուսաւորեալ և բարենախանձ մասէն անկեղծ շնորհակալութիւններ ընդունելու»։

Քիչ յետոյ, Մասիսը կը հրատարակէ դարձեալ պ. Տիգրան Եուսուֆեանէն, ընդարձակ յօդուած մը՝ 6—7 թուի մէջ շարունակուած, ուր մանրամասն վերլուծումը կը տրուի Պէշիկթաշլեանի յօրինած ու թարգմանած խաղերուն, մասնաւորապէս Կոռնակ-ին, զոր յօդուածագիրը՝ ծայրայեղ խանդավառութեամբ՝ «ողբերգութեանց առաջին կարգին մէջ» կը դասէ։

Այդ յօդուածները նպաստեցին Պէշիկթաշլեանի ձեռնարկին տարածման ու զօրացման՝ ոչ միայն Օրթաքէօյի մէջ, այլ և Պոլսոյ բոլոր հայաշատ թաղերուն մէջ, որոնցմէ թատերասէրները երբեմն կուգային Օրթաքէօյի ներկայացումներուն հանդիսատես ըլլալու։

Թուրք կառավարութիւնը և Թուրքերն ընդհանրապէս ոչ միայն ոևէ արգելք չէին հաներ, այլ ընդհակառակն մեծ համակրութեամբ կը վերաբերուէին անոնց նկատմամբ։ Օրթաքէօյի ներկայացմանց ներկայ կը գտնուէին միշտ Թուրք ոստիկաններ, երբեմն նոյն իսկ հարիւրապետներ, հազարապետներ ինչպէս և տէրութեան պաշտօնեաներ թէպէտ շատ բան չէին հասկնար այդ խաղերէն, բայց Հայերուն խանդավառութիւնը տեսնելով և թատերական ներկայացմանց նորութենէն զուարճացած, կը մասնակցէին հասարակութեան ծափահարութիւններուն. մասնաւորապէս իրենց հաճոյք կը պատճառէր տեսնել բեմի վրայ հայ իշխաններ կամ թագաւորներ Պարսիկ թագաւորներու հետ կռուի բռնուած (և ատիկա էր այդ ողբերգութեանց մեծ մասին նիւթը՝ այդ միջոցին)։ իրենց պարսկատեցութեանը համար ախորժելի էր ատիկա։ երբ պատահէր որ հայ գունդերը յաղթէին (բեմի վրայ) պարսիկ գունտերուն, Թուրքերը Հայերէն աւելի աղմուկով կը ծափահարէին, ծաղրական աղաղակներ արձակելով պարսիկներուն հասցէին, «Աճէմ պ... ը ետի»ի պէս նսարեատինեան ոճով բացագանչութիւններ։

Հակառակ իր փափաքին, Պէշիկթաշլեան ինքն ալ չկրցաւ այդ խաղերուն մէջ կնոջ դեր մտցնել, որովհետև դեռ անհնար էր դերասանութիւն ընել յանձն առնող կին մը գտնել Հայոց մէջ, և ատկեց զատ՝ Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյն աւագերէցը, սիրով թոյլ տալով հանդերձ որ եկեղեցւոյն կից դպրոցին մէջ այդ ներկայացումները տրուէին, պայման դրած էր

որ այդ խաղերը լոկ «կրթական» պիտի ըլլային՝ Հ. Մինասեանի բանաձևին համեմատ, և կին պիտի չերևար երբէք բեմի վրայ։ Ատի այնպիսի արգելք մը էր որուն Պէշիկթաշլեան անկարող էր յաղթելու։ Եւ սակայն դառնապէս կը դանգատէր ատկից, ինչպէս կը հաւաստեն իր բարեկամները. «Որքան դժուար է, կըսէր, առանց կնոջ դերի՝ կատարեալ ու կենդանի խաղեր յօրինել»։ Չկրնալով զսպել իր զգացումները, անուղղակի կերպով ջանացած է երբեմն լրացնել այդ պակասը. Արշակ Բ ողբերգութեան մէջ, Շապուհի որդին Որմիզդը, որ եղբայրական սիրով մը կապուած է իր հօրը թշնամի Արշակին որդւոյն Սիսակին հետ, յայտնապէս աղջկան դեր մը էր հեղինակին մտքին մէջ, հարկի ստիպմամբ մտերիմ ընկերոջ դերի մը փոխարկուած։ Իսկ Վահան ողբերգութեանը մէջ, թէպէտ կինը բեմի վրայ չերևար, բայց առանցքը կը կազմէ խաղին. Վահան Մամիկոնեանի որդիներէն մին, Սուրէն, կը սիրէ, պարսիկ աղջիկ մը՝ Ասթինէ, և որովհետև հայրը խստիւ կ'արգիլէ անոր ամուսնանալ թշնամի ցեղէն աղջկան մը հետ, կերթայ Հայաստանի վրայ յարձակող պարսիկ զօրքերուն կը միանայ, բայց վերջ ի վերջոյ, սիրոյ և պարտականութեան երկայն պայքարէ մը յետոյ, որ կանցնի իր հոգիին մէջ՝ կը հետևի պարտականութեան ձայնին և պարսիկներուն դէմ իր եղբայրը պաշտպանելով կը մեռնի։ Նմանապէս Վահէ-ին մէջ, Արտաւազդ հայ նախարարը կը սիրէ Վահէ թագաւորին դուստրը՝ Արուսեակը, բայց որովհետև Վահէ չի հաւանիր իր աղջիկն անոր տալու, Արտաւազդ կերթայ դաշնակցիլ Հայաստանի վրայ յարձակող Աղէքսանդր Մակեդոնացիին գունտերուն հետ, որոնք կը ջախջախեն Վահէի բանակը և կը կործանեն Հայկազանց հարստութիւնը։

Պէտք է անցողակի նկատեմ որ եթէ կնոջ վտարումը թատերաբեմէն՝ բարբարոսական արարք մը էն է, ճիշտ չէ սակայն Պէշիկթաշլեանի վերագրուած կարծիքը թէ առանց կանացի դերի —մասնաւորապէս՝ առանց սիրահարական տարրի— գեղեցիկ խաղ մը գրել անկարելի է. այդ տարրը գեղարուեստի բոլոր ճիւղերուն մէջ՝ ճանհունապէս կարևոր տեղ մը կը բռնէ, բայց վերջապէս անհրաժեշտ չէ միշտ. Ռասինի Գոթոդիան ու Նսթէրը, Շէքսպիրի Լիրը, Յուլիոս Կեսարը, Մաքպէթը, Շիլլերի Վիլհելմ Թէլը և դեռ ուրիշ այնքան թատերախաղեր կատարեալ հրաշակերտներ են՝ սիրային ոլորտէն դուրս անցնելով հանդերձ։ Պէշիկթաշլեան իր խաղերուն մէջ կինը միմիայն իբր սիրուհի ցոյց տուած է, և այն ալ շատ միօրինակ պայմաններու

մէջ։ Բայց թատերգութիւններէ կանացի դերերը բոլորովին վտարելու միջնադարեան ձգտումին դէմ բողոքած, այդ ձգտումը ջնջած ալ է մասամբ, —ատոր մէջ կը կայանայ իր արժանիքը։

Պէշիկթաշլեան ինքն իսկ քանի մ'անգամ մասնակցած է, իբր դերասան՝ իր սարքած այդ ներկայացումներուն. Օրթաքէօյ՝ իրիկուն մը Ներսէս իշխանին դերը կատարած է Կոռնակի մէջ. և յետոյ Փերայի թատրոնին մէջ Արշակ Բ. ի Ներսէս կաթողիկոսին դերը խաղացած է։ Ողբացեալ դերասանապետ Պինլեանը ինծի հաւաստած է թէ Պէշիկթաշլեան շատ նուրբ ըմբռնողութիւն, շատ խորին հմտութիւն ու ճաշակ ունէր բեմական արուեստի մասին. իր օրով յայտնուած հայ դերասաններէն գրեթէ բոլորին հետ ծանօթացած ու գործակցած է, և անոնց շատին օգնած է լաւ խորհուրդներ տալով։ Այն մէկ քանի անգամուն երբ ինքն իսկ խաղացած է, խորապէս յուզած է սասարակութիւնը իր բնական ու հոգեկից խաղացուածքովը, բայց իր ընկերները կաղաչէին որ ետ կենար դերասանական մասնակցութենէ, վախնալով որ իր փափուկ առողջութիւնը չվտանգուէր խաղալու ատեն իր զգացած բուռն յուզմունքէն։

Պէշիկթաշլեանի հեմնած գործը շուտով տարածուեցաւ ու ճիւղաւորուեցաւ թէ Օրթաքէօյի և թէ Պոլսոյ միւս թաղերուն մէջ, և յետոյ՝ Պոլսէն ալ դուրս՝ այլ և այլ հայ կեդրոններու մէջ։ Եւ թէպէտ, այդ երկրորդ փուլին մէջ՝ Պէշիկթաշլեան այլ ևս անձնապէս դեր չէ կատարած, այն բոլոր ձևերը որոնցմէ անցաւ այնուհետև հայ թատերական շարժումը՝ հետևանքն էին Պէշիկթաշլեանի հիմնական ճիգին, և անոնց դէթ հակիրճ մէկ ուրուագիծը անհրաժեշտ կը նկատեմ տալ այստեղ։

1859-ին, Օրթաքէօյի լուսաւորչական հայերն ալ, հետեւելով Պէշիկթաշլեանի և իր ընկերներուն օրինակին, սկսան թատերական ներկայացումներ կազմակերպել։ Այդ տարուան յունիս 11-ի իրիկունը, Օրթաքէօյի լուսաւորչականներու Ս. Թարգմանչաց դպրոցին մէջ, խումբ մը սիրողներ, առաջնորդութեամբ Թովմաս Պեռեանց անուն անձի մը, ներկայացուցին դպրոցին տնօրէն Յովհաննէս Վանանդեցիի Միհրդատ ողբերգութիւնը, և անոր ներկայ եղող խուռն բազմութեան մէջ կը գտնուէր նաև Կ. Պոլսոյ հայոց պատրիարքը։ Այդ խումբը այնուհետև շարունակեց, Պէշիկթաշլեանի խումբին հետ զուգահեռաբար, իր ներկայացումները տալ այդ դպրոցին մէջ։ Քիչ յետոյ, Յակոբ պէյ Պալեան՝ վեհանձն գեղարուեստասէրը՝ իր ծախքով Օրթաքէօյի մէջ կառուց փոքրիկ թատրոն մը, որ կը մնայ ցարդ. և

այնուհետև այնտեղ է որ տրուեցան ներկայացումները, որոնք քսան տարիի չափ շարունակեցին։

Փերայի մէջ, արդէն բաւական տարիներէ ի վեր գոյութիւն ունէր «Նաումի թատրոնը» Նաում՝ կաթոլիկ Ասորիին ձեռքով հիմնուած. իտալական խումբեր կուգային հոն օփերաներ ներկայացնել, ու քանի մը տարիէ ի վեր՝ Սրապիոն Հեքիմեանի տնօրէնութեամբ՝ թրքերէն լեզուով կատակերգութիւններ կը խաղցուէին, ևրոպական խաղեր զոր Հեքիմեան ինքն իսկ կը թարգմանէր կամ կը պատշաճեցնէր թրքերէնի։ Մասիս ի 1859 ի Մարտ 5ի թուով հրատարակուած յօդուածի մը մէջ, Պ. Տիգրան Եուսուֆեան, գոհունակութեամբ նկատելէ յետոյ թատերական շարժման տարածումը Պոլսոյ մէջ, հետևեալ տողերը կը նուիրէ Նաումի թատրոնին թրքերէն ներկայացմանց.

«Զենք կրնար զլանալ նաև մեր համակրութիւնը Պէյօղլուի թատրոնին մէջ նկարագրուած տաճկերէն կատակերգութեանց հեղինակի, որ է հասարակաց սիրելի բանաստեղծն արդոյ պ. Ս. Հեքիմեան, որն որ կատակերգութեան ազդու միջոցաւ հասարակութիւնը զբօսցնելով կրթելու, այսինքն լուսաւորութիւն բաւին նշանակութեանը մէջ սպրդած պախարակելի սովորութիւնները ընտրութեան մէջէն վանելու համար նախ և առաջ օտար ազգաց բարոյականի վրայ գրուած կատակերգութիւնները թարգմանելով կը ջանայ իբրև օրինակ նուիրել զայն և հասարակութեան ականջը կամաց կամաց վարժեցնելով օր մը բոլորովին ազգայինի դարձընել խաղերուն նիւթն ու լեզուն»։

Հեքիմեանի նախաձեռնութեամբ տրուած այդ ներկայացումները առաջին փորձը եղած են Պոլսոյ մէջ թէ թրքախօս Հայերուն և թէ Թուրքերուն ևրոպական թատրոնը ծանօթացնելու, և նախերգանքը թրքական ևրոպաձև թատրոնի մը հիմնարկութեան որուն յետոյ ձեռնարկեցին Թուրք մտաւորականներ՝ միշտ Հայերու աջակցութեամբ։ Սուլթան Մէճիտ որ կը պաշտէր թատրոնը, քանի քանի անգամ իր պալատը հրաւիրած է այդ հայ դերասանական խումբը որ անոր առջև ներկայացուցած է բաւական խաղեր,—Տօն Կրիկորիօ, Նեղսիրտ բարեգործ, Համեստութեան վարձատրութիւնը, Տօն Սեզար տը Պազան, և այլն։

1860 փետրուար 26-ի իրիկունը, Նաումի թատրոնին մէջ առաջին անգամ ըլլալով ներկայացուցած են հայերէն լեզուով խաղ մը. հոտ ալ—կարծես Մխիթարեանց ու գրաբարին յարգանքի հարկ մը մատուցանելու համար—այդ առաջին ներկայացման համար ընտրուած խաղը եղած է գրաբար լեզուով

գործ մը, Մոնթիի Արիստոտեմը, թարգմանութիւն Հ. Եդուարդ Հիւրմիւզի։ Այդ իրիկունը նորէն կարևոր թուական մըն է սակայն հայ թատրոնի պատմութեան մէջ։ Այդ առաջին անգամն էր որ սիրողներու շրջանակէն դուրս ելլելով հրապարակային մեծ թատրոնի մը մէջ հայերէն լեզուով ներկայացում մը կը տրուէր՝ արհեստական դերասաններու ձեռքով որոնց խումբը Հեքիմեանի առաջնորդութեամբ կազմուած էր և թրքերէն ներկայացմանց մէջ իր առաջին փորձերն ըրած։ Այդ ներկայացումէն քանի մը օր յետոյ, պ. Տիգրան Եուսուֆեան հետևեալը կը գրէ.

«Տարւոյս փետրվարի 26 ուրբաթ գիշերը, ժամը 2½-ին, Նաումի թատրոնին սրահը ազգայնոց բազմութեամբ լցուէր էր... Անշուշտ չեմք սխալիր եթէ այս հանդէսին շքեղութիւնը նկարագրելու համար «ազգային» կոչեմք զանիկա. վասն զի ազնուական, հարուստ, աղքատ, արհեստաւոր, գրագէտ, ուսումնական, և վերջապէս ազգին ամեն դասը իւր ներկայացուցիչն ունէր սրահին մէջ»։

Նոյն իրիկունը, ներկայացման աւարտումէն յետոյ, Կարապետ Գարագաշ և Մ. Պէնտէրեան ճառեր արտասանած են, որոնց մէջ, յիշելով Պէշիկթաշլեանի Օրթաքէօյ 1859 փետրուար 24ի երեկոյթին կարդացած ատենաբանութեան սա ֆրազը՝ «Մեզի մեծ վարձք պիտի համարուի եթէ ազգը այս օգտակար ձեռնարկութեան կարևորութիւնը ճանչնալով, ջանայ զայն կատարելագործել», ուրախութեամբ կը հաստատեն Պէշիկթաշլեանի տենչին իրականացումը։ Եուսուֆեան իր վերոյիշեալ յօդուածին շարունակութեան մէջ, նկատել կուտայ որ հակառակ խուռն ամբոխ եկած հասարակութեան խանդոտ տրամադրութեանց, խաղացուած խաղը չէ յաջողած մեծ ոգևորութիւն մը ներշնչել հանդիսականներուն. ատոր գլխաւոր պատճառներէն մին խաղին գրաբար ըլլալը չէ նշմարած. ըստ իրեն՝ խաղը ինքն իսկ՝ իր դասական լրջութեամբ՝ անմատչելի է եղած այդ դեռ խակ հասարակութեան. իրեն համեմատ, պէտք է ներկայացնել կատակերգութիւններ և տռամներ. ինքը «տռամ» կը կոչէ Պէշիկթաշլեանի խաղերը, և այդ հանգամանքին կը վերադրէ անոնց գտած յաջողութիւնը,—թէպէտ իսկապէս Պէշիկթաշլեանի խաղերը ողբերգութիւններ են, և անոնց յաջողութիւնը կը բացատրուի լեզուին ժողովրդականութեամբը և ոճի պարզութեամբը, նիւթերու ճարտար ու պատեհաւոր ընտրութեամբը։ Գրաբար խաղի մը այդ ներկայացումը արդէն այլ ևս չէ երկրորդուած Փերայի թատրոնին մէջ, ուր այնուհետև

կը տրուին աշխարհաբար լեզուով խաղեր, և ընդհանրապէս նուազ դասական ոճով գործեր։

Պաշտօնական դերասանախումբի մը կազմութեամբը, Պէշիկթաշլեանի սիրող դերասաններու խմբակը իր դերն այլ ևս աւարտած համարեց ու քաշուեցաւ, մանաւանդ որ Փերայի խումբը յաճախ Օրթաքէօյ ալ կ'երթար Յակոբ պէյի թատրոնին մէջ ներկայացումներ տալու։ Ինքն իսկ Պէշիկթաշլեան այլ ևս թատերական շարժման մէջ ոևէ նախաձեռնութիւն ցոյց չտուաւ, դադրեցաւ նոյն իսկ խաղեր գրելէ. արդէն ինքը երբեք թատրերգակի յաւակնութիւններ չէր ունեցած. իր խաղերը գրած էր թատերական գործը կազմակերպելու և Հայոց մէջ կարգ մը ազնիւ սկզբունքներ տարածելու նպատակով. տեսնելով որ իր հիմնած գործը յաջողած էր տարածուիլ ու կանոնաւորապէս կազմակերպուիլ, տեսնելով նաև որ նոր հեղինակներ ելած էին, կը գրէին ու կը թարգմանէին թատերախաղեր իրեն չափ խանդով ու գիտակցութեամբ և մերթ աւելի փայլով և ինքնատպութեամբ, Պէշիկթաշլեան այլ ևս բաւականացաւ իր հիմնած գործին ընդարձակման ու յառաջդիմութեանը հանդիսատես ըլլալով. իր խաղերը միշտ կը խաղացուէին թէ Օրթաքէօյի, թէ Փերայի թատրոններուն մէջ, և այլուր. ինքն իսկ յաճախ հանդիսատես կ'ըլլար ներկայացմանց, կը խրախուսէր դերասանները, կը ծափահարէր նոր թատերագիրները, մտերիմն ու խորհրդակիցն էր Յակոբ Պէյին։ Այս վերջնոյն թատրոնին մէջ 1866 փետրուար 16ին տրուած երեկոյթի մըն է որ, իր Վահան ողբերգութեան ներկայացումէն յետոյ՝ աղքատներու ինպաստ դրուած, Պէշիկթաշլեան արտասանած է իր ճառերէն մին, որուն մէջ բարեգործութեան ներբողը կը հիւսէ.

...(Դթութիւնը) երկնային բնագաւառներէն իջնալով՝ երկրիս վրայ կը դեգերի միշտ, թշուառ մարդկութեան դողդոջ քայլից առաջն յոյս և մխիթարութիւն կը սփռէ, անողոք բախտին հարուածները կը դարմանէ, արեանց վրայ ծաղիկ կը ցանէ, և աւերակաց վրայ լոյս կը ծաւալէ. ուր որ ինքը կ'երևնայ ամենայն ինչ ժպտի, ամենայն ինչ նորոգ կը ծաղկի ու կը կենդանանայ. ինքն է որ փափուկ ու վեհ սրտերը իրեն օթևան ընելով՝ մարդկային ցեղը տագնապող աղէտից դէմ խնամակալ անձինքներ կը յարուցանէ, որ չեն սպասեր թէ աղքատը իրենց գայ, իրենք աղքատին կերթան հացը ձեռքերնին, անուշ ու սփոփիչ խօսքեր ի շրթունս... ո՜հ, եթէ իրենց աչքին քան զընաւս սիրալի և հաճելի տեսարան մը կայ, մարդոյ առ մարդ ցոյց տուած գթասրտութեան տեսարանն է. մէկը որ կիյնայ և մի-

սը որ անոր ձեռք կը կարկառէ, մէկը որ կուլայ և միւսը որ նորա արցունքը կը սրբէ, մէկը որ վիրաւոր կը հեծէ և միւսը որ նորա վէրքը կը պատէ. այսպէս՝ գթոյ և թշուառութեան, ցաւոյ և մխիթարութեան խորհրդաւոր և անքննելի լծորդութեամբն և հակադրութեամբը կը վերականգնի, կը վսեմանայ և բարձրագլուխ յառաջ կը քալէ առ նպատակն իւր՝ տիեզերաց ներդաշնակութեանց մէջէն»։

Յակոբ Պէյ Պալեան եղած է մին այն Հայերէն որոնք հշմարտապէս արժանի հանդիսացած են «Մեկենաս» տիտղոսին։ Ոչ միայն իր ծախքով կառուցած է Օրթաքէօյի թատրոնը, այլ և թատերական գրականութիւնը մշակող գրագէտներու— մասնաւորապէս Թէրզեանին ու Թղլեանին— նիւթական լայն աջակցութիւն շնորհած է. դերասաններէն շատերուն ամսական կապած էր. մասնաւորապէս օգնած է Ադամեանին զոր ջերմօրէն կը սիրէր. Պէնլեան պատմած է ինծի շահեկան միջադէպ մը որ ցոյց կուտայ մինչև ուր կը հասնէր Պալեանի սէրը Ադամեանի համար, ինչպէս և իր առատաձեռնութիւնը. իրիկուն մը Պալեան կը կանչէ Ադամեանը, հարիւր ոսկի կուտայ անոր և կըսէ՝ «Տեսնեմ, մէկ գիշերուան մէջ պիտի կըրնաս ուտել այս գումարը». Ադամեան, որ այնքան մխող էր որքան հանճարեղ, սարդանաբալեան գիշեր մը անցընելէ յետոյ՝ հետևեալ առտուն կուգայ բացարձակապէս պարապ գրպանով մը ներկայանալ Պալեանին։ Հայ թատրոնը իր առաջին շրջանի խստաբարոյ, դասական, զուտ կրթական փուլէն եղած էր արդէն, սկսած էր ըլլալ հշմարիտ թատրոնը, գեղեցկութեան վառարան մը՝ ամեն բանէ առաջ, ազատ և անկաշկանդ, և ուր մինչև իսկ երևան կուգային թատերական «պոհեմ»ի բարքերը։

Բոլոր նախապաշարումները որոնք սահմանափակած ու կապկպած էին հայ թատերական շարժումը՝ իր առաջին քայլերուն մէջ, այժմ արդէն ջախջախուած էին այդ շարժման բնական և անդիմադրելի յառաջխաղացութենէն։ Այլ ևս՝ խաղերուն մէջ սէրը չէր վտարուէր, կամ քօղարկուած, քուլիսի մէջ երևալով չէր բաւականանար. կը տիրապետէր արուած ներկայացումներուն մէջ։ Ու դերասաններուն հետ այժմ կերևային, նաև՝ հայ բեմին վրայ՝ դերասանուհիներ. ըստ ոմանց, առաջին Հայուհին՝ որ յանձն առաւ դերասանական՝ ասպարէզին նուիրել ինքզինքը, օր. Արուսեակ Փափազեանը եղաւ։ Պոլսոյ Հայոց թատերական շարժման մասին խանդավառ յօդուածի մը մէջ

զոր հրատարակած է Սվաճեանի Մեղուն (1861 դեկտեմբեր 20), Միքայէլ Նալբանդեանց որ այդ պահուն Պոլիս կը գտնուէր, գրած է հետևեալը. «Հայկական թատրոնի պատմութիւնը չէ պիտոյ մոռանայ Արուսեակ և Աղաւնի Փափազեան արգոյ օրիորդների անունները, որոնք առաջինն են որ քաջութեամբ ոտք կոխեցին թատրոնաբեմի վրայ, քաջութեամբ պատերազմեցան հասարակաց նախապաշարմունքի իւրեանց վրայ արած ազդեցութեան հետ, և յաղթելով նրանց հրապարակ իջան։» Իսկ Ս. Անգեղեայ Պոլսոյ «Ծաղիկ» շաբաթաթերթին 1903 Փետրուար 1 ի թուով հրատարակուած յօդուածի մը մէջ օր. Ֆանին և օր. Աղաւնի Գէորգեան անունները կը յիշէ իբր առաջին հայ դերասանուհիները։ *)

Նալբանդեանի այս յօդուածը գրուած է «Արևելեան թատրոն»ին բացման առթիւ. այդ յօդուածը շատ շահեկան է. Նալբանդեան անոր մէջ՝ թէև չէ տուած թատրոնի գեղեցկագիտական ամենալայն ու ամենաճիշտ սահմանը, ըսած է գէթ ինչ որ պէտք էր և կարելի էր ըսել այդ շրջանին՝ թէ թատրոնի օգտակարութիւնը Հայոց բացատրելու և թէ այդ դեռ խակ հասարակութեան հանդէպ անհրաժեշտ եղող ընտրողականութիւնն ու զգուշութիւնը մատնանշելու համար, ահա այդ է յօդուածին գլխաւոր մասերը.

«Այն մարդը միայն կարող է նախապաշարեալ հայեացք ունենալ թատրոնականաց վրայ, որ կարծում է թէ թատրոնը մի տեղ է, ուր զուարճանալու համար միայն երթում են մարդիկ. բայց միթէ այդ է թատրոնի բուն և էական խորհուրդը։

---

*) «Բերայի Նաումի թատրոնին մէջ թուրքերէն լեզուով բաւական երկար ատեն ներկայացումներ կուտան առանց կին դերասանուհի մը ունենալու իրենց մէջ։ Ստեփան Էքշեան թուրք և հայ թատրոնին պէտքը միանգամայն կը լրացնէ յաջողելով գտնել հայ օրիորդ մը որ յանձն առնէ ժամանակին բարքերու այդ անները շրջանին, կուրծք տալ զանազան չարախօսութեանց... 1856-ին վերջերը Մէօհիւրտար (Գատը գիւղ) տրուած հայերէն առաջին ներկայացման միջոցին բեմը կ'ելլէ առաջին հայ դերասանուհին օր. Ֆանին անուամբ։

«Օր. Ֆանին—իր անուամբը օր. Աղաւնի Խամսեան—իակը չմնաց... 1868-ին, օր Ֆանիին գործակից կը գտնենք մաև օր. Աղաւնի Գէորգեանը որ նոյն տարին Սրապիոն Հեքիմեանի կազմած խումբին մէջ ուշագրաւ դերը մը գրաւելու կարող կելլայ։ Ու երբ 1861 դեկտ. 14-ին Արեւելեան թատրոնը կը կազմակերպուի, դերասանուհիներու խումբը աւելի կը բազմանայ, որոնց մէջ առաջին կը ներկայանան օր. Արուսեակ Փափազեան և օր. Ֆանին։

«Թատրոնի բեմը ստոր չէ ուսումնական ամբիոնից. Թատրոնի բեմն է այն աթոռը, ուր նստում է փիլիսոփայութիւնը և մարմնաւորելով բանը կենդանի, գործնական գաղափարներով և օրինակներով, ազատում է հասարակութիւնը այդ գաղափարքը երևակայութեամբ միայն ըմբռնելու աշխատութիւնից. Թատրոնի բեմն է այն ահեղ դատաստանը, ուր արդարութիւնը և յանցանքը, առանց աչառութեան, ստանում են իւրեանց արժանի հատուցումը: Մարդկային բանականութիւնը, միայն այդ բեմին տուել է այն կախարդական մեծ զօրութիւնը, որ մի ակնթարթում ցոլացնում է բոլոր հանդիսականների սրտի մէջ ուրախութիւն, տրտմութիւն, զարմանք, զմայլանք, ցաւ և կարեկցութիւն: Մի խօսքով այդ բեմը տիրում է մարդու բոլոր հոգեբանական կարողութիւններին:

«Չկայ մարդ որի վերայ ազդեցութիւն չգործէ Թատրոնը. չկայ մարդ, որ չկարողանայ մի օգուտ քաղել այն օրինակներից, որ մարդկային կեանքի փորձերի որպէս հետևանք տրված էին Թատրոնաբեմի վերայ: Նա մի նոր տեսակ դպրոց է, ուր ուսանում են ամէն հասակի մարդիկ: Նա ուսուցանում է գեղեցիկ հայախօսութիւն, նա մշակում է լեզուն և աննկատելի կերպով ներս է բերում ազգի մէջ ընտիր ոճեր և ազգու դարձուածներ. նա չէ միայն աղնուացնում հասարակութեան գաղափարքը, այլ և ցոյց է տալիս առաքինութեան վսեմութիւնը, մոլութեան վատթարութիւնը· առաջինին խրախուսելով և երկրորդին զգուշացնելով և ոչ միայն այսչափ նա քրքրում է ընտանեկան կեանքը, քննում է նորա և ամենանուրբ կողմերը և մերկպարանոց դնում է հասարակութեան դատաստանի առաջև:

«Բայց այն բոպէին, հասարակութեան մնում է միայն ընդունել մինը և մերժել միւսը. քանզի արդէն համոզված է, քանզի քուէն ձգված է: Հասարակութեան սիրտը և զգացմունքը, ախտակից լինելով անցքին, զուգահեռաբար՝ երթում էին գործողութեան հետ. դերասանների ցոյց տուած ախտերը և կիրքերը արդէն բացարձակվել էին հասարակութեան ջիղերի վերայ:

«Հասարակութիւնը գիտէ այս, քանզի զգում է ,քանզի մարդ է: Եւ Թատրոնի մէջ նա մոռանում է իւր նախապաշարմունքը դերասանների և դերասանուհեաց ընդդէմ, նա շատ անգամ պատրաստ է դափնիներով պսակել այնտեղ այդ նուիրական տաճարի քուրմերը և քրմուհիքը. այո, և պսակում է իսկ. այո, և չէ խնայում իւր կոկորդը կեցցէներ գոռալով, չէ խնայում

իւր ձեռքերը և ձեռնոցները, որ շատ անպատ մի երեկոյի մէջ պատռուելով անպիտանանում են կատաղի ծափահարութիւնից։ Ինչ է սորա պատճառը։

«Թատրոնի մէջ անկեղծ է հասարակութիւնը։ Թատրոնի դուռի մօտ ցած է դնում դէմքից այն դիմակը որ աշխարհի սուտ դասակարգութիւնը դրել են նորա երեսի վերայ. նա որպէս մի օտարաշխարհ մտանում է թատրոնի մէջ վկայ լինելու միայն մի անցքի, մի գործողութեան, որից մի վնաս գալու չէր նորա անձնական շահին։

«Բայց թատրոնից դուրս գալու ժամանակ, երբ պիտի մտանէ դարձեալ իր ատմոսֆէրի մէջ, չէ մոռանում իւր հետ առնուլ իւր դիմակը, դարձեալ դնում է աչքին տեսութիւնը խարդախող ակնոցները և ահա դերասանը և դերասանուհին փոքրանում են նորա աչքի առաջև։

«Ամենափոքր է նա, որ ուրիշին համարում է փոքր և ամենատոր, որ իւրեան համարում է բարձր ուրիշ մարդերից։

«Այսպէս լինելով բաների կարգը, իհարկէ ոչ ոք չէ ցանկանում հանդէս գալ թատրոնաբեմի վերայ, քանի որ այնտեղ ոտք կոխողը գրեթէ հասարակաց անարգութեան պիտի հանդիպի։ Եւ միթէ պակաս քաջութիւն հարկաւոր է, հասարակաց մի սխալ կարծիքը ոտքի տակ կոխելով, նոյն այդ հասարակութեան էական օգտին սպասաւորելու համար. միթէ յաջողութեան մեծութիւնը նորա արգելքների և խափանների մեծութեամբ չէ՞ չափվում։ Միթէ շատ մարդիկ կան, որ հասարակաց սխալ կարծիքը արհամարհելով, պիտի կարողանային ցոյց տալ իւրեանց մէջ այդ բարոյական ոյժը, որ յետոյ նոյնը քնքուշ սեռից յուսալու իրաւունքը ստանային։

«... Յոյս ունինք թատրոնական վերատեսչութեան կողմից, որ նա մանաւանդ ուշադրութիւն դարձնէ Ա. թատրերգութեանց լեզուի մաքրութեան, յստակութեան և միութեան վերայ և Բ. ներկայանալի թատրերգութեանց ընտրութեան և թարգմանութեան վերայ։ Ոչ ամենայն թատրերգ, որ կարող է երևիլ որևիցէ եւրոպական քաղաքներում՝ յարմար է հայկական բեմին, ոչ ամենայն եւրոպական դարձուած հում հում թարգմանուելով կարող է հայանալ։

«Հայոց ազգի ընտանեկան կեանքը խեղճ է ինչպէս մի ասիական ազգի կեանք, բայց խեղճութիւնը դէպի թշուառութիւն կը փոխվի եթէ եւրոպական ընտանեկան բարքի զեղխութիւնքը և աւերանքը որպէս քաղաքակրթութեան յատկութիւնք պատուաստվէին հայկական ընտանիքի վերայ։

«Արևելեան թատրոն»ին բացումը տեղի ունեցած է 1861 դեկտեմբեր 14-ի իրիկունը։ Նաումի թատրոնը՝ ինչպէս յայտնի է՝ զուտ հայկական թատրոն մը չէր. Փերայի մէջ ազգային թատրոն մը ունենալու պէտքը կը զգացուէր բաւական ատենէ ի վեր. այդ պէտքը լրացուցին 1861-ին Ալթուն–Տիւրրի եղբայրները՝ Գրիգոր Ֆրէնկեան և Գրիգոր Բուրտաճեան եղբայրներուն գործակցութեամբ. Ալթուն-Տիւրի Առաքել և իր երեք եղբայրները, քաջ իտալագէտ և ջերմ թատերասէր, արդէն 1860ին Հասքէօյի մէջ կառուցած էին փոքրիկ թատրոն մը և քանի մը հայերէն ներկայացումներ տուած էին հոն, բայց գիւղին թուրքերը, այս նորութենէն զայրացած, քիչ յետոյ եկած թատրոնը փլցուցած էին։ Այն ատեն, այդ չորս եղբայրները, վերոյիշեալ երկու վաճառականներու հետ, վարձեցին Փերայի Ալքազար անուն սրճարան – թատրոնը որ Հայոց եկեղեցւոյն կը պատկանէր, և զայն անուանեցին Արեւելեան Թատրոն. այլ ևս այդ թատրոնը եղաւ հայ թատերական շարժման կեդրոնը. բայց որովհետև այդ թատրոնը մեծ բեմ չունէր, ընդարձակ տեսարան պահանջող մեծահանդէս խաղերը կը ներկայացուէին նորէն Նաումի թատրոնին մէջ։ Այսպէս, 1862 մարտ 23-ի իրիկունը Պէշիկթաշլեանի Արշակ Բ.-ը շատ շքեղ կերպով ներկայացուցած են՝ ի նպաստ աղքատաց՝ Նաումի թատրոնին մէջ. և այդ իրիկունն է որ Պէշիկթաշլեան ինքն իսկ կատարած է մեծն Ներսէսի դերը։ Այդ ներկայացման ներկայ գտնուած են նոյն իսկ Պոլսոյ ֆրանսերէն լրագիրներու խմբագրապետները, և շահեկան է հոս յիշել այն ներբողալից յօդուածները զոր նուիրած են այդ առթիւ հայ թատրոնին.

Ժուրնալ թերթը կը գրէր հետեւեալը *).

«Աղքատաց համար ներկայացուած հայկական թատերախաղերը միշտ գեղեցիկ են, և այս ուրբաթ իրիկուան գոյացած արդիւնքը որ խել մը թշուառներու մխիթարութիւն պիտի տայ՝ մեր ըսածին յայտնի վկայութիւն մ'է։

«Ասանկ ճշմարտախօս գումարի մը առջև հարկ չմնար ըսելու թէ Նաումի թատրոնը բովանդակ լեցուն էր, և չկար օթեակ մը կամ նստարան մը որ կրկնապատիկ գրաւեալ չըլլար։ Բայց ամենէն աւելի նշանակութեան արժանին ան է որ այս ամեն օթեակներն ու նստարանները ազգին ամենէն երեւելի ու մեծամեծ ընտանեաց անդամներէն բռնուած էին։

---

*) Այս թարգմանութիւնները նոյնութեամբ կ'արտատպեմ Մասիս-էն։

«... Ցիշեալ խաղին համար տեսնուած հաւանութեան նշաններն այնչափ եռանդուն ու միաձայն էին, որ քանի քանի անգամ ցաւեցանք Հայոց լեզուն չհասկնալուս վրայ, որով գրրած էր պ. Մ. Պէշիկթաշլեան այս ողբերգութիւնը...»։

Իսկ Քուռիէ տ'Օրիան կը գրէր.

«... խաղը խիստ մեծ հաւանութիւն ստացաւ. մէկ քանի հատուածները որ զգացմամբ լի էին՝ մոլեգին ծափահարութիւններ գրգռեցին։ Հեղինակին լեզուի մաքրութեանն ու ոճի գեղեցկութեանն վրայ գովեստներ ըրին մեզի։ Պ. Պէշիկթաշլեան Հայոց ամենայարգի գրիչներէն մէկն է։ Այս գովեստը իր նախանձորդները կուտան իրեն, որով կրկնապատիկ արժէք կունենայ։

«Մեր տեսած հայ թատերգութիւններուն մէջ ամենէն աղէկ խաղացուածն այս ողբերգութիւնն էր։ Հեղինակն ալ գլխաւոր դերերէն մէկը ներկայացուց. և բուն դերասանի մը պէս իր պաշտօնը կատարեց։ Միւս ընկերներն ալ արժանի եղան դրուատեաց։ Իսկ հայկական խումբին առաջին օրիորդը գերազանցեց. վրան տեղացած պսակներու տարափը հանդիսատեսաց գոհութեանն ապացոյց էր։ Ասոնց լաւ թատրոն մը պէտք կը լայ։

«Հիմակուց կը գուշակենք թէ Հայերը մօտաւոր ապագայի մը մէջ ընտիր թատերգութիւններ և ընտիր դերասաններ պիտի ունենան։»

Պէտք է նկատել անցողակի թէ այս յօդուածին մէջ հայ դերասանուհիի մը գովուիլը ցոյց կուտայ որ Արշակ Բ. ին մէջ կնոջ դեր մը աւելցուած էր։ 1866 ի Մասիս ին մէջ, Պ. Պառնասեան, խօսելով Արշակ Բ-ի ներկայացման մը մասին, կը յիշէ Շապուհի դուստր Ռոքսանէի դեր մը. այդ դերը պարզապէս Որմիզդի դերն է՝ ստացած իր բուն կանացի նկարագիրը, զոր՝ հայ թատրոնի սկզբնական շրջանին ամօթխած օրերուն մէջ Պէշիկթաշլեան ստիպուած էր սքօղել։ Ցաւալի է որ Պէշիկթաշլեանի գործերուն առաջին տպագրութեան մէջ, հրատարակիչները «Որմիզդ» ձևը պահած են՝ փոխանակ բուն հարազատ «Ռոքսանէ» ձևը պահպանելու։

Տարիի մը չափ տևեց «Արեւելեան Թատրոն»-ին թատերական գործունէութիւնը, ամենամեծ փայլով և ոգևորութեամբ։ Այդ միջոցին բեմի վրայ փայլող ամենէն ուշագրաւ դերասաններն էին Պէնլեան, Էքշեան, օր. Արուսեակ Փափազեան։ Բայց յանկարծ գժտութիւն մը ծագեցաւ Էքշեանին և թատ-

րոնին տնօրէններուն միջև. 1862 ի վերջերը, իրիկուն մը, ներկայացման մը կէսին Էքշեան կուգայ բեմին վրայ յայտարարել թէ դերասանները որոշած են չշարունակել խաղը, որովհետև դժգոհ են տնօրէններէն որոնք կանոնաւորապէս չեն վճարեր զիրենք. հասարակութիւնը կը զայրանայ երեկոյթին այդպէս կիսատ մնալէն, և ներկայացումը կաւարտի աղմուկի ու խայտառակութեան մէջ։ Այդ դէպքը վնասած է պահ մը թատերական գործին, վարկաբեկելով «Արևելեան թատրոնը». ժողովուրդը մեծ մասամբ այլևս չէ ուզած յաճախել այդ թատրոնը. Պէնլեան ինծի յայտնած է որ Էքշեան անարդար էր իր ամբաստանութեան մէջ՝ Ալթիւն-Տիւրբինեանուն դէմ, որոնք հազարաւոր ոսկիներ իրենց գրպանէն ծախսած էին թատրոնին համար, և թէ անձնական հակառակութենէն պատճառով այդ վարմունքն ունեցած էր։ Թերթերէն ոմանք, մասնաւորապէս Մասիսը, փոխանակ յանդիմանելու ժողովուրդը, որ այդպիսի պատահական անախորժութեան մը համար կը լքանէր թատրոն մը որմէ այնքան բարոյական դասեր ու գեղեցկագիտական վայելքներ ստացած էր, տնօրէններուն դէմ պայքար մը կը սկսին, մատնանիշ ընելով կարգ մը թերութիւններ— միջնարարներու երկայնութիւնը, ներկայացման որոշուած ժամուն չսկսիլը, ծանուցուած խաղի մը տեղ մերթ ուրիշ խաղ մը տրուիլը— թերութիւններ որոնք եւրոպական ամենամեծ թատրոններու մէջ ալ կը տեսնուին երբեմն։ Ա. Մ. Գարագաշեան՝ որ այդ միջոցին գործակցած է թատրոնական շարժման՝ թարգմանելով քանի մ'եւրոպական խաղեր (ինչպէս Բինեարի խաղամոլը), Մասիսի մէջ հրատարակած է շատ ողջամիտ ու զօրեղ պատասխան մը այդ անիմաստ ու փոքրոգի խծբծանքներուն՝ այդ ոգւով նոյն իսկ Մասիսի մէջ երևցած յօդուածի մը առթիւ.

«Այն մասնաւոր կէտերը, կըսէ Գարագաշեան, որոնք իբրև թերութիւն յառաջ կը բերէք, արդարև ճշմարիտ իրողութիւններ են, բայց անոնցմէ հազիւ թէ թատրոնին տնօրէնութիւնը կրնայ մեղադրուիլ. ոմանք լոկ անհաճոյ դէպքեր են որոնք անակնկալ պատահած են և կրնան պատահիլ. ոմանք ալ այլալելով կամ ստուարացնելով յիշուած են։ Բայց... եթէ յիշեալ կէտերուն ամենն ալ իրօք այնպէս ըլլային ինչպէս որ յիշուած են, այսինքն ճշմարտապէս ուղղելի ակամայ թերութիւններ, տակաւին ուրիշ բան չեն եթէ ոչ նիւթական պակասութիւններ։ Երբ բանի մը նիւթական երեսը կամ արտաքին երևոյթը կը դիտենք, անոր բարոյական կողմն ալ նկատելու

պարտաւոր ենք, եթէ կուզենք որ մեր տեսութիւնը կատարեալ և մեր կշիռն արդար ըլլայ։ Հիմայ պիտի հարցնեմ ձեզի թէ թատրոնը նիւթականէն կամ արտաքինէն զատ աւելի բարձր և աւելի պատուական ուստի և դիտողութեան աւելի արժանի երես մը չունի՞, զոր ես թատրոնին բարոյական և ներքին տեսութիւնը կմնուանեմ։ Կամ աւելի յայտնի ըսեմ. մինթէ Արևելեան թատրոնը մեր հասարակութեան համար միակ ա՞յն ատեն արդիւնաւոր, և հետևաբար անոր համակրութեանն ու քաջալերութեանց արժանի եղած պիտի ըլլար, եթէ ձեր յիշած նիւթական պակասութիւնները չունենար. այսինքն եթէ տեսարանները խոստացուած ժամանակին բացուէին, եթէ վարագոյներուն միջոցները քիչ մ'աւելի կարճ ըլլային, եթէ երբեք հրատարակուած խաղի մը տեղ ուրիշ խաղ չտրուէր, և ասոնց նման թերութիւններ զորոնք կը յիշէք։ Ըստ ես այնպէս չէ. ես թատրոնին մէջ բարոյական երես մը կը նկատեմ, և ան է ըստ իս պատուականը։ Ես կը նկատեմ թէ թատրոնը մեր հասարակութեան համար ինչ ընկերական օգտի նպաստ եղաւ և պիտի ըլլայ. անոր, իբրև ընկերութիւն մը, ուրիշ ընկերութեանց քով ինչ համարում և դիրք տուաւ. ինչ զոհերով յառաջ եկաւ, և իր շարունակութեանը մէջ տակաւին ինչ զոհեր կը պահանջէ. ժողովրդեան իմացական և բարոյական կենաց յառաջադիմութեանը համար ինչ բանասիրական և զգացողական կարևորութիւն ունի. վերջապէս իր սկիզբէն ի վեր նիւթապէս և բարոյապէս գոնէ այնչափ յառաջդիմութիւն չցուցուց որչափ նոր շարժելու սկսող ժողովրդեան մէջ կարելի է։ Թատրոնին աս ներքին և բարոյական երեսը արտաքինին, ուստի և ձեր յիշած նիւթական թերութիւններուն հետ կշռելով, կը խորհիմ թէ արդեօք կրնամ, պէտք կամ վայելուչ կամ արդար է որ ժողովրդեան կողմէն կամ ժողովուրդին ըսեմ թէ՝ «Հասակը բակութիւնը իրաւունք ունի չյաճախելու այնպիսի տեղ մը ուր իր տուած ստակին փոխարէն իր դիւրահաւանութեանը վրայ կը խնդան և իր վստահութեամբը կը զեղծանին։»... Իմ դատողութիւնս այսպէս չէ. ես նախ չեմ համարձակիր վճռելու թէ թատրոնին տնօրէնութիւնը կամաւ թոյլ կուտայ որ թատրոնին մէջ թերութիւններ սպրդին, ետքն ալ կը նստի հասարակութեան վրայ կը խնդայ թէ ի՞նչպէս աղէկ ժողովուրդը խաբելով ստակը կառնեմ։ Ասոր հակառակ գիտեմ թէ թատրոնին տնօրէնութիւնը մինչև հիմայ ամէն բան ըրաւ և ընելու պատրաստ է որ հասարակութեան փոքր տհաճութեան մ'անգամ առիթ չտայ. և երբ իր ջանքերուն հակառակ թերութիւններ և

ժողովրդեան գանգատելու առիթներ կը տեսնէ, ոչ միայն չինդար, այլ և կը վշտանայ և կը տրտմի, քանզի իր շահուն դէմ է, իր նպատակին ալ, որ ազգին պատիւն ու հասարակութեան գոհութիւնն է։...

«...Երկրորդ, թատրոնը ընկերական կարգադրութեանց մէջ գլխաւորն է, քաղաքակրթութեան մէջ մտնել ուզող ժողովրդեան մը համար կենսական պէտք մըն է. և մեր հասարակութեան մէջ թատրոնի հաստատութեան դէպքը՝ հասարակութեանց յառաջադիմութիւնը դիտող և անոր փափաքող միտքերու՝ հայ հասարակութեան համար նշանաւոր պարագայ մը ճանչցուեցաւ. Արևելեան թատրոնը, իբրև մասնաւոր ընկերութեան մը ձեռնարկութիւնը, մեծ զոհեր ըրաւ, և ըրած զոհերուն հետ ալ յառաջդիմութեան համար ջանքեր պակաս չըրաւ. այս յառաջդիմութիւնը զգալի և շատ՝ երէն վկայուած է, քանզի, եթէ ոչ միշտ, գէթ շատ անգամ, իր չափուն և հասակին համեմատ, հասարակութեան վրայ ըրաւ ան ազդեցութիւնը որ թատրոնին ընութենէն կը պահանջուի. մեր հասարակութիւնը. գէթ չափով մը, աւելի քիչ անգամ չեղաւ հայ թատրոնէն գեղեցկին ու վսեմին հեշտականութեամբն ու հիացմամբը պաշարուած, որչափ ուրիշ հասարակութիւն մը իր թատրոնէն. լեզուն, որ ընկերականութեան մէջ բնական գործողն է, սկսաւ շարժում մը ստանալ, այնպէս, որ մեր հասարակութիւնը կը սկսի ճաշակ իմանալ իր լեզուէն, և կուզէ որ տեսարանն իրեն հայերէն խօսի քան թէ շատերուն աւելի ընտանի տիրող լեզուով մը։ Ուստի այս տեսութեամբ ալ, եթէ հասարակութիւնը քանի մը թերութեանց համար թատրոնը ոտք չկոխելու որոշում ընէ, կարճամիտ վրէժխնդրութիւն մը ըրած կըլլայ, քանզի այս գործը լոկ իբրև շահագիտական ձեռնարկութիւն մը նկատած կըլլայ և ոչ ազգային և ընկերական կարգադրութիւն մը։»

Այս վճիռ ու այնքան զօրեղօրէն փաստաբանուած կոչը անազդեցիկ մնաց։ Հասարակութիւնը շարունակեց քէն պահել «Արևելեան թատրոնին» դէմ։ Դերասանական խումբն ալ արդէն պառակտուած ու մասամբ ցրուած էր։ Էքշեան, Օր. Արուսեակ Փափազեանի և Օր. Ֆանէնի հետ գնաց Զմիւռնիա, ներկայացմանց շարք մը տալու. բայց հասարակութիւնը շատ պաղ ընդունելութիւն ըրաւ այս խումբին՝ զայն պատճառ նկատելով «Արևելեան թատրոն» ին անկման. Էքշեան վերջնապէս քաշուեցաւ դերասանութենէ. իր օրինակին հետևեցաւ նաև Օր. Ֆանին. օր. Փափազեան ամուսնացաւ Սոփոն Պեզիրճեան ծանօթ գծագրիչին հետ, և հակառակ որ հայ թատրոնին ամենէն փայլուն ա-

բուեստագիտուհիներէն մին էր եղած, այլ ևս չերեցաւ բեմի վրայ։

1864-ին, Ալթուն-Տիւրրի եղբայրները, իրենց ազնիւ թատերասիրութեանը մէջ ամուր և անվկանդ, ուզեցին նոր ճիգ մը նել վերականգնելու համար թատերական գործը, հակառակ հասարակութեան ապերախտ վարմունքին. փլցուցին «Ալքազար»ի շէնքը և անոր տեղ աւելի մեծ ու շքեղ թատրոն մը կառուցին, զոր դարձեալ անուանեցին «Արևելեան թատրոն». այս անգամ տնօրէնութիւնը յանձնեցին Սրապիոն Հեքիմեանին, որ Նաումի թատրոնին մէջ տարիներէ ի վեր թատերական ներկայացմանց սարքման գործակցած, մեծ փորձառութիւն ունէր. Հէքիմեան իր հետ բերաւ նաև Նաումի թատրոնին գլխաստայարդարը, Հոչի անուն իտալացի մը, Իտալիայէն հրաւիրեց Առթի կոչուած ծերունի քաջավարժ դերասանապետ մը՝ փորձերը վարելու, տեսարանները կազմակերպելու համար. ներկայացումները վերսկսան, և հասարակութիւնը վերստին խուժեց թատրոնը որ իր նախկին ոգևորութիւնն ու փայլը գտաւ նորէն, ինչ որ սակայն շատ երկար չտևեց։

1870-ին այդ թատրոնը, ինչպէս և Նաումինը, այրեցան Փերայի մեծ հերդեհին մէջ։ «Արևելեան թատրոն»ին աւերակներուն վրայ նորէն կառուցուեցաւ թատրոն մը, որ այլ ևս կոչուեցաւ Nouveau theatre français, ուր տրուեցան այնուհետև թրքերէն, և մանաւանդ ֆրանսերէն թատերգութիւններ, օփերեթներ, ու երբեմն ալ հայերէն խաղեր. այդ թատրոնն ալ այրեցաւ 1892-ին, և տեղը կառուցուեցաւ պանդոկ - ճաշարան մը։

1861-էն սկսեալ, թատերական շարժումը տարածուեցաւ Պոլսէն դուրս՝ այլ և այլ հայաշատ քաղաքներու մէջ։ 1861-ին, Զմիւռնիոյ Հայերը հաստատեցին թատրոն մը, ուր տեղական խումբեր ինչպէս և Պոլսէն գացող դերասանախումբեր տարիներով ներկայացումներ տուին։ 1863-ին, Տրապիզոնի երիտասարդութիւնը դերասանախումբ մը կազմեց և շարք մը ներկայացումներ տուաւ։ Նմանօրինակ ջանքեր եղան, թէպէտ կարճատև, ուրիշ քաղաքներու մէջ։

1865-ին, Պոլսոյ Կէտիկ-Փաշա թաղին մէջ Աբրահամ Փաշա Երամեան կառոյց թատրոն մը, որ կոչուեցաւ «Օսմանեան թատրոն». թուրք հասարակութիւնն ալ սկսած էր համառնել թատրոնէ, թուրք գրագէտներուն մէջ ձգտումն արթնցած էր՝ «քարակէօզ»-ի ու «մէյտան օյունու»-ի աւանդական ու տարբական ներկայացմանց տեղ եւրոպաձև թատրոն մը ստեղծելու. այդ ձգտումներն իրականացնելու համար էր որ

«Օսմանեան թատրոն»ը հաստատուեցաւ. դերասանախումբը կը բաղկանար միմիայն Հայերէ, դերասանապետն էր Յակոբ Վարդովեան. թատրոնին թրքական թատերախաղերը կը հայթայթէին Քէմալ Պէյ, Ահմէդ Միտհաթ Պէյ, Ապտիւլ Հաքք Համիտ, Պէտրի Պէյ, Ռիֆաթ Պէյ, և այլն։ Այս գրագէտները, ինչպէս և հայ զրողները, շատ մը եւրոպական գործերու թրքական թարգմանութիւններ ալ կը յօրինէին այդ թատրոնին համար. թրքերէնը Պոլսոյ տիրական և ամենէն շատ տարածուած լեզուն ըլլալով, հասարակութիւնը սկսաւ շատ աւելի հոծ բազմութեամբ Օսմանեան թատրոնը խոնուիլ քան Արևելեանը. Վարդովեան, ճարպիկ «ռէժիսէօր», միջակ դերասան, անզարգացած միտք, կոպիտ ու շահամոլ նկարագիր, այդ նոր ուղղութեան գլուխ կանգնելով, մեծ վնաս հասցուց զուտ-հայկական թատերական շարժումին. Օսմանեան թատրոնը, թէպէտ հիմնադիրները, դերասանները և տնօրէնը Հայ էին, հայկական թատրոնին անկումը պատրաստեց և թրքական թատրոնին ծնունդին ու զարգացման նպաստեց։ Շաբաթը չորս անգամ թրքերէն ներկայացումներ կը տրուէին այդ թատրոնին մէջ, և մէկ անգամ հայերէն։ Հայ հասարակութիւնն ալ, մեծ մասամբ՝ ալ կարծես ձանձրացած «հայրենասիրական» խաղերէն կամ բարձր ու վսեմ ոճով եւրոպական թատրերգութիւններէն, ու թրքերէն լեզուն իրեն աւելի մատչելի լինելով քան մաքուր հայերէնը, սկսաւ նախընտրել «Օսմանեան թատրոն»ը «Արևելեան թատրոն»էն. մանաւանդ որ Վարդովեան, գործի մարդ՝ ամէն բանէ առաջ, իր ներկայացմանց մէջ շատ մեծ տեղ մը կուտար «զուարճալի» տարրերու, — ժամանակակից կեանքէ առնուած խաղեր, կատակերգութիւններ. և հուսկ ապա՝ ֆրանսական օփերեթներ թրքերէնի վերածուած, ու նոյն իսկ անոնց հետևողութեամբ՝ թրքական օփերեթներ, Տիգրան Զուհաճեանի և Ահմէտ Միտհաթի երաժշտութեամբ։ «Արևելեան թատրոն»ը այդ զօրեղ մրցումին դիմադրելու համար, ինք ալ փոխեց իր ուղղութիւնն ու ոգին, «Օսմանեան թատրոն»ին յայտագիրն ընդգրկեց, ինք ալ մեծ տեղ մը տուաւ իր բեմերթուարին մէջ տաճկերէն խաղերու, կատակերգութիւններու, օփերեթներու։ Հայկական թատրոնը, ոչ միայն այլ ևս չէր այն «կրթական» յարկը զոր բաղձացած էր խստաբարոյ Հ. Մինասեանը, այլ և կը դադրէր նոյն իսկ ըլլալէ ինչ որ իր բուն նկարագիրն էր, «գեղարուեստի տաճար» մը, ինչ որ Պէշիկթաշլեան ու Նալբանդեան կուզէին որ ան ըլլար։ Ըսել չեմ ուզիր որ թեթև կատակերգութիւնն ու օփերեթը պէտք է բոլորովին վտարուին

թատրոնէն. անոնք ալ գեղարուեստի մէկ բաժինը կը կազմեն— թէպէտ ամենախոնարհ բաժինը—և իրենց տեղը ունին թատերական աշխարհին մէջ. այդ տեղը սակայն պէտք է որոշ ըլլայ, իր յատուկ անկիւնին մէջ սահմանաւորուած, չխառնուի մեծ արուեստի բաժնին հետ, ու մանաւանդ չգերակշռէ անոր վրայ. Փարիզի պէս ազատ քաղաքին մը մէջ, ուր այդ փոքրիկ ու չարաճճի—և իրենց ուրոյն հրապոյրն ունեցող — սեռերը այնքան զարգացած են, անոնք իրենց յատուկ թատրոններն ունին և «թէաթր ֆրանսէ»ն կամ «Օտէոն»ը երբէք Ղդիպոս արքային կամ «Սիտ»ին քով տիկին Անկոյի աղջիկը կամ ժիրոֆլէ ժիրոֆլան պիտի չհիւրընկալէ։ Իսկ մերինին պէս դեռ անկազմ հասարակութեան մը համար, այդ սեռերուն մուտքը մեր թատրոնին մէջ՝ վաղահաս էր անշուշտ, և անոնց տիրապետումը՝ աղետաւոր, թէ բարոյական, թէ գեղեցկագիտական տեսակէտով։ Երկդիմի ու գռեհիկ հաճոյքը զոր անոնք կուտային, մեծապէս նպաստեց մեր հասարակութեան՝ բարձր թատրոնէ պաղելուն։ Օփերեթին ու թեթև զաւեշտներու տիրապետումէն ալ աւելի վնասակար եղաւ թրքերէն լեզուի տիրապետումը. ատով՝ հայ թատրոնը արդէն իր հիմէն կը խախտուէր, մեր ընիկ լեզուն իսկ՝ որ մեր թատրոնին ազգայնութեան գլխաւոր նեցուկը պիտի ըլլար՝ տեղի տալ սկսելով հասարակութեան ստուարագոյն մասին աւելի հասկանալի եղող օտար լեզուի մը առջև։

Խեղճ Պէշիկթաշլեան։ Ո՞րքան տխրելու էր, իր մահէն առաջ իսկ տեսնելով այդ ապականումն ու անկումը ուր արդէն կը գահավիժէր իր այնքան գուրգուրանքով և սուրբ խանդավառութեամբ, ազնիւ ու անշահախնդիր եռանդով հիմնած գործը։ Հայ թատրոնին վրայ, ուր Վարդաններու, Ներսէսներու Վահէներու, Վահաններու, Սանդուխտներու, Հռիփսիմէներու, Համլէթներու, Ռիւ Պլասներու, Ֆրանց Մուրներու, Էրնանիներու, Բրուտոսներու ազնիւ դէմքերը պատկերացած էին մինչև այն ատեն՝ հայկական բարբառին հարազատ շեշտերովը ամենավեհ զգացումներ տարածելով ժողովրդին մէջ, այժմ հայ դերասաններ միևնոյն բեմին վրայ կուգային թրքերէն լեզուն հնչեցնել՝ գռեհիկ կատակերգութիւններու մէջ, կերևային Օֆենպախի և Լեքոքի խեղկատակ հերոսներուն դիմակին տակ ու կերգէին.

Սաքքալը ուզուն, սաքքալը ուզուն
Ագամեմնուն...

Մասիսի 1868 սեպտեմբեր 28-ի թիւին մէջ, յօդուածագիր մը որ «Վահրամ» ստորագրած է, (և որ շատ հաւանականաբար

Գրիգոր Օտեանն էր), հետևեալ ցաւագին տողերով կողբար հայ թատրոնին այդ անկեալ վիճակը. «Արևելեան թատրոնը իւր նորատի և այնքան սուղ ժամանակի մէջ անակնուանելի փառաց գագաթէն մինչև «քաֆէ շանթան»ի ստորնութեան նուաստացաւ. ինչպէս այն ընտիր խումբը որուն բազմաթիւ ճիգերը երբ զինքը կատարելագործութեան հասցնելու վրայ էին, այսօր ցրուած և անհետ եղած է, ամենափոքր բացառութեամբ մը... վասն զի Հայը դեռ թատերասէր չէ, և եթէ հաւատալու արժանի է խմաստասիրին սա խօսքը թէ «թատրոնը ազգաց փորձաքարն է», պէտք է ընականաբար հետևցնել թէ Հայը դեռ քաղաքակրթեալ չէ։»

«Արևելեան թատրոնը», հակառակ իր սկզբնական ուղղութենէն հեռանալով «Օսմանեան թատրոն»ին ճամբուն հետևելուն, չկրցաւ արդէն մրցումին մէջ յաղթել. Վարդովեան յաջողեցաւ «Արևելեան թատրոն»ին լաւագոյն դերասանական ուժերը մէկիկ մէկիկ իրեն քաշել. և Փերայի մեծ հրդեհով փճանալէ առաջ, «Արևելեան թատրոն»ը արդէն ինկած էր և իր երբեմնի պատկերին մէկ այլանդակուած ու խարխուլ ուրուականը միայն կը ներկայացնէր։

1867-էն սկսեալ, Վարդովեանի խումբը ամառները Իւսկիւտարի «Ազիզիէ» թատրոնին մէջ ներկայացումներ կ'երթար տալ, մեծ մասամբ թրքերէն լեզուով։ Քանի մը տարի յետոյ, Աթապէյ անուն թուրք մը գնեց այդ թատրոնը, նորոգեց, մեծցուց, զարդարեց զայն, և այնուհետև ան կոչուեցաւ «Աթապէյի թատրոն». երկայն ատեն այնտեղ տրուեցան ներկայացմանց շարքեր, թրքերէն և հայերէն. հայերէն ներկայացմանց մէջ մեծ տեղ մը կը գրաւէին Պետրոս Դուրեանի միամիտ բայց կրակոտ թատերախաղերը, որոնք վերջին աղաղակներն էին հայկական «հայրենասիրական» թատրոնին։ Հոգ ալ սակայն «հայրենասիրական թատրոն»ը մեծ ճիգերով հազիւ կը հասնէր իր գոյութիւնը պահպանելու «զուարճալի» ու տաճկերէն թատրոնին տիրապետութեանը դէմ։ Խումբ մը Հայեր «Ասիական ընկերութիւն» մը հիմնեցին՝ հայ թատրոնը կանգուն պահելու նպատակով, բայց անոր ջանքերն ալ շատ վճռական արդիւնք մը չունեցան. «Իւսկիւտարու մէջ Աթա-պէյի կառուցած Ազիզիէ անուն թատրոն մը կայ այսօր, կը գրէ այդ միջոցներուն անանուն յօդուածագիր մը Մասիս ին մէջ, ուր Արևելեան դերասանական խմբին աւերակաց վրայ բարձրացած Ասիական Ընկերութիւնը գոհ ընելու կը ճգնի սակաւաթիւ թատերասէրները։ Եւ ինչպէս կը պակէ Իւսկիւտարցին նորա ջանքերը. ընդհան-

բապէս պարապ թողլով թատրոնը (եթէ թատրոնին սիկարէթներու ծխովը լցուիլը լցուիլ չկոչենք) *)»։

1870-ին, Վարդովեան այլ ևս բացարձակ ու միահեծան տէրը դարձած էր Պոլսոյ թատերական շարժումին. դերասանական բոլոր կարևոր ուժերը իր շուրջը հաւաքած էր. յաջողեցաւ մինչև իսկ տասը տարուան համար մենաշնորհ մը ստանալ Պոլսոյ մէջ։ Այդ տասնեակի միջոցին, օփերեթներն էին Պոլսոյ թատրոններուն վրայ գլխաւորապէս տիրողը, վարնոց մելոտռամներու և գռեհիկ զաւեշտներու հետ, բոլորն ալ թըրքերէն. հայերէն ներկայացումները չէին դադրած, բայց ամենափոքր բաժին մը կը կազմէին այդ թատերական ընդհանուր գործունէութեան մէջ։

1870-ին, Սուլթան Համիտ գնեց Աբրահամ փաշայէն Կէտիկ-փաշայի թատրոնը և զայն փլցնել տուաւ. ատոր շարժառիթն եղաւ այն գրգռումը զոր պալատին Չէրքէզներուն մէջ յառաջ բերած էր Ահմէտ Միտհաթի Չէրքէզ Էօզտէնլէրի անուն խաղը, որուն մէջ չէրքէզ երեսասարդ մը, տեսնելով որ իր սիրած աղջկան ծնողքը կընդդիմանան իրենց ամուսնութեան, ինքզինքը կը սպաննէ։ Չէրքէզները աննեղելի կը նկատէին որ «կնկան մը համար» Չէրքէզ տղամարդ մը ինքզինքը սպաննելու տկարութիւնն ունենար։ Համիտ, որ արդէն շատ աղէկ աչքով չէր նայեր թատերական շարժումին—մասնաւորապէս Օսմանեան թատրոնին, ուր յանդուգն ու ազատամիտ գաղափարներ կարտայայտուէին,—պատրուակ բռնեց այդ միջադէպը՝ փակելու համար Կէտիկ-փաշայի թատրոնը որ կենդրոնավայրն էր օսմանեան թատերական շարժումին։ Այդ շարժու-

---

*) Խմբագրութեան կողմէ նօթ մը կը բացատրէ այս վերջին ֆրազը, դատափետելով թատրոնի մէջ կանանց ծխելու տգեղ և չափազանց տարածուած սովորութիւնը, որ երբեմն թատրոնը մուխով ողողելու և թատերաբեմը անտեսանելի դարձնելու աստիճանին կը հասնէր։ Մեղրուն, այդ թուականներուն, հրատարակած է ծաղրանկար մը, ցոյց տալու համար թէ զիրենք «եւրոպացած» կամ տեղական բառով «ալաֆրանկա» կարծող այդ Հայուհիները որքան այլանդակ կերպով ըմբռնած էին Եւրոպացումը։ Երկու մասի բաժնուած նկարին մէկ բաժնին մէջ, Եւրոպացի պարոն մը վայելուչ ձևով մը ծխելու թոյլտուութիւն կը խնդրէ երկու տիկիններէ որոնց մօտ նստած է. միւս բաժնին մէջ (Հայերու ալաֆրանկան) կերևայ խեղճ մարդ մը որ հաղէն կը խեղդուի երկու կիներու մէջտեղը որոնք մուխը քթին բերնին նետելով կը ծխեն լիրը նստուածքով մը։

մը բոլորովին անդամալուծելու համար, Վարդովեանն ալ իրեն կապեց, հրաւիրելով զայն իր պալատին մէջ ներկայացումներ տուող խումբ մը կազմելու. Վարդովեան յօժարակամ յանձն առաւ այդ պաշտօնը. իր անունն իսկ Թրքացուց փոխեց «Կիւլլիւ»-ի, և մնաց այնուհետև մինչև իր մահը Սուլթանին անձնական թատրոնին տնօրէն ու դերասանապետ. վերջերը նոյն իսկ մահմետականութիւն ընդունեցաւ և Թրքուհիներու փոքրիկ հարէմ մը կազմեց իր տանը մէջ։

Կէտիկ-փաշայի թատրոնին փակումէն և Վարդովեանի հրապարակէ քաշուելէն յետոյ, թէպէտ հայերէն ներկայացումներ տալը արգիլուած չէր, բայց ամէն կազմակերպութիւն քայքայուած, հասարակութիւնը հայկական թատրոնէն պաղած ըլլալով, ամենակարևոր հայ դերասաններն ու դերասանուհիները սկսան հետզհետէ երթալ Կովկաս, ուր թատերական շարժումը իր ամենէն փայլուն շրջանին մէջ էր այդ պահուն։

1859-ին է, Պէշիկթաշլեանի թատերական ձեռնարկին սկզբնաւորութենէն քանի մը տարի յետոյ, որ հայկական թատրոն մը լրջօրէն և տևականօրէն հիմնուած էր Ռուսահայոց մէջ։ Հոն ալ, նախաձեռնները կը կատարուին սիրողներու ձեռքով. 1859 յունուարին, խումբ մը ուսանողներ, Մոսկուա, հարուստ Հայու մը տանը մէջ կը ներկայացնեն Վանանդեցիի «Արիստակէս» պատմական ողբերգութիւնը։ Հիւսիսափայլը իսկոյն կը հրատարակէ խիստ քննադատութիւն մը՝ գործին շինծու, ուռուցիկ, անկենդան նկարագիրը ցոյց տալով և պահանջելով հայ բեմի համար՝ իրական կեանքէ առնուած, Հայոց բարքերը պատկերացնող ու ձաղկող խաղեր։ Քննադատութիւնը որ կերևար Ռուսահայոց մէջ՝ անոնց թատերական առաջին փորձին հետ զուգահեռաբար՝ շարունակեց միշտ ռուսահայ թատրոնին ընկերանալ իր բոլոր փուլերուն մէջ, այլ և այլ գրողներու ձեռքով, որոնք միշտ պահանջեցին բեմէն իրական կեանքի պատկերացում մը։ Եւ ռուսահայ բեմը առաջին օրէն հետևեցաւ իր քննադատներուն պահանջած ուղղութեանը, որ արդէն աւելի համապատասխան ալ էր Ռուսահայոց յատուկ դրական ոգիին։ Արիստակէս ողբերգութեան չյաջողած փորձէն անմիջապէս յետոյ, սիրողներու խումբը Մոսկուայի մէջ ներկայացուց «Վայ իմ կորած յիսուն ոսկի» վոտվիլը, որուն նիւթը առնուած էր Թիֆլիսի Հայոց ժամանակակից բարքերէն. «Որքան էլ թոյլ ու անարուեստ լինէր այդ ծիծաղաշարժ և ծաղրական գրուածքը, բայց նա մեծ հաճոյք պատճառեց հանդիսականներին. բեմի վրայ երևացին ժամանակակից մարդիկ, ո-

րոնք բերին իրանց հետ իրանց սովորական գործնական լեզուն, իրանց բարքերն ու հասկացողութիւնները...։ Դա բնական էր. դա ցոյց էր տալիս բեմին իսկական մեծ նշանակութիւնը, որ է լինել կեանքի, իրականութեան արտայայտիչը։ Հայոց թատրոնը Ռուսաստանում իր առաջին քայլից գտաւ իր իսկական ճանապարհը—իրականի ճանապարհը *)։

Միևնոյն տարին Թիֆլիսի մէջ ալ կը սկսի թատերական գործունէութիւն մը։ Միքայէլ Պատկանեան, Գամառ-Քաթիպայի ազգականներէն մին, իր նախաձեռնութեամբ խումբ մը կը կազմէ Թիֆլիսի մէջ, ներկայացումներ կը սարքէ, ինքն իսկ կը գրէ թատերգութիւններ, որոնց նիւթը միշտ ժամանակակից բարքերէն էր առնուած։ «Այդ գրուածքները առանձին աչքի ընկնող արժանաւորութիւններ չունին, բայց պատմական ողբերգութիւնների հետ համեմատած, այն մեծ առաւելութիւնն ունին որ փոխանակ փայտից ու թղթից շինած պատմական հերոսների, բեմի վրայ ման են գալիս օրուայ մարդիկ։ Փոխանակ ազգասիրական-բարոյախօսական բառակոյտերի, բեմից հնչում են և ժողովրդականութիւն են ստանում ժամանակի բարքերը, անհաշիւ շռայլութիւնը, կապիկութիւնը այնքան կծու կերպով ծաղրող խօսքերն ու երգերը **)։»

Հակառակ բոլոր քննադատութիւններուն, «հայրենասիրական» թատերգութիւնը նորէն իր բաժինը կունենայ Ռուսահայոց թատրոնին մէջ,—և չէր կրնար ուրիշ կերպ ըլլալ, տրուած ըլլալով այդ ժամանակաշրջանին Հայոց ընդհանուր հոգեբանութիւնը։ Երևան կուգան Ցակոբ Կարինեան վարժապետին Շուշանիկ և Վարդան Մամիկոնեան ողբերգութիւնները, և Աղեքսանդր Երիցեանի Արուսեակը, նմանութիւններ պոլսական ողբերգութեանց, ու մեծ խանդավառութեամբ կընդունուին հասարակութենէն՝ իրենց արտայայտած ազգասիրական տաք զգացումներուն համար։ Այսու հանդերձ, իրապաշտ ու քննադատական ուղղութիւնը, թէպէտ Ռուսահայոց պահպանողական մասէն խստիւ դատափետուած, կը շարունակէ գոյութիւն ունենալ Կովկասի հայ թատրոնին մէջ ու տիրապետողը կը մնայ։ 1863-ին կը ներկայացուի Փուղինեանի Դալալ Ղալօ կատակերգութիւնը որու մէջ տառապող թրքահայաստանցիին—Մշեցի Կիվկիվին-ցաւը, որ յետոյ Գամառ-Քաթիպայի և Բաֆֆիի գործերուն մէջ այնքան մեծ տեղ պիտի բռնէր, առաջին անգամ կը հնչէ։ Քիչ յետոյ Երևան կուգայ

*) **) Լէօ—Ռուսահայոց գրականութիւնը։

ուրիշ թատերագիր մը, բժիշկ Մ. Տէր-Գրիգորեան, որուն գրիչը, «աւելի բեղմնաւոր, աւելի ուժեղ ու կարող» ըստ Լէօի, կարտադրէ բաւական թուով կատակերգութիւններ, Ժլատ, Տինսի նշանուիլը, Խոտորնակին խոտորնակ, Էս էլ քի մօցիքլութին, Վոյ քի իմ վէյէր, Ո՞վ է մեղաւոր, Պառաւներուն խրատ։

Վերջապէս կը յայտնուի ռուսահայ թատրոնին և ամբողջ հայ թատերական գրականութեան ամենէն հլոր ու ինքնատիպ դէմքը, Գաբրիէլ Սունդուկեանց, որ արտադրած է, 1873-էն 1890, եօթը թատերախաղ՝ որոնց մէջ Թիֆլիսի բարքերն ու կարգ մը տիպարները զօրեղ ու կենդանի գծերով կը պատկերանան,—Դիշերուայ սաբրը խէր է, Խաթապալա, Պեպո, Օսկան Պետրովիչը էս կինքումը, Էլի մէկ զոհ, Ամուսիններ։

1878-էն 1883, այսինքն այն շրջանին երբ ռուսо-թուրք պատերազմէն ու Պերլինի վեհաժողովէն յետոյ, ազգային քաղաքական ժառանգութիւնները ամենէն աւելի տիրական դարձած էին Հայոց մէջ ու գրականութեան բոլոր ճիւղերը տիրաբար կը գրաւէին, Կովկասի հայ թատրոնը՝ կազմակերպական ճոխութեան ինչպէս և հասարակութեան ցոյց տուած խանդավառ համակրութեան տեսակէտով՝ իր ամենէն փառաւոր շրջանը կունենայ, բայց և վայրկեանին հոգեբանական ազդեցութեան տակ՝ հայրենասիրական խաղերն են որ կիշխեն բեմին վրայ. ժանաւանդ որ այդ միջոցին Թիֆլիս գալ կը սկսին Պոլսոյ լաւագոյն դերասանները—Ադամեան, Մնակեան, Ֆասուլաճեան, Հրաչեայ, Աստղիկ, Սիրանոյշ, Մարի-Նուարդ, և այլն,—և իրենց հետ կը բերեն պոլսական ողբերգութիւնները։ Կը ներկայացուին Պէշիկթաշլեանի, Հէքիմեանի, Թէրզեանի թատերախաղերը (որոնց վրայ կաւելնայ Մուրացանի «Ռուզան» ողբերգութիւնը), ինչպէս և թարգմանութիւններ Շէքսպիրի, Հիւկօի, Շիլլերի և ուրիշ եւրոպացի մեծ թատերգակներու գործերուն։

Հայ թատրոնը կը շարունակէ ցարդ իր գոյութիւնը Կովկասի մէջ։ Ներկայացուած խաղերը մեծ մասամբ եւրոպական գործերու թարգմանութիւններ են. բայց այս վերջին 10-15 տարիներուն մէջ երևցած են նաև քանի մը՝ ինքնագիր գործեր, ինչպէս Շիրվանզադէի Իշխանուհի, Ցեղինէ, Ունէ՞ր իրաւունք, Պատուի համար, տաղանդալից թատերգութիւնները, որոնց մէջ բարոյական—ընկերական հարցեր նիւթին հիմը կը կազմեն, Լեոն Մանուէլեանի Տիգրանուհին, Տոքթոր Երուանդ Բօշայեանը, Վ. Փափազեանի Ժայռը, և։

Իսկ Պոլսոյ մէջ, եթէ հայկական թատրոն մը այլ ևս

գոյութիւն չունի, մինչև այսօր կան հայ դերասանախումբեր, որոնք կը ներկայացնեն միմիայն ֆրանսական ամենաողորմելի թոյն՝—դաշոյնական մելոտրամներու և վարնոց զաւեշտներու թրքերէն թարգմանութիւններ։

Հայ թատրոնի պատմութիւնը իր ամբողջութեանը մէջ քննական վերլուծումի մը ենթարկելով, նախ սա իրողութիւնը կը հաստատենք որ հայ դերասանները աւելի տաղանդ և ինքնատպութիւն ցոյց տուած են քան հայ թատերգակները, մասնաւորապէս Տաճկահայոց մէջ։ Հայ հասարակութիւնը, յանկարծ իր ծոցէն երևան հանելով դերասաններու և դերասանուհիներու այն ճոխ ու շողշողուն բոյլը, իր արուեստագիտական բնածին թաքուն կարողութեանց ամենէն զօրեղ ապացոյցներէն մին տուաւ ատով. իր ամբողջ գոյութեան մէջ՝ առաջին անգամ ըլլալով Հայը արուեստի այդ ճիւղը կը փորձէր, և իսկոյն տուաւ տաղանդներ, որոնց հաւասարը Արևելքի մէջ ոչ մէկ տեղ չէր տուած անկից առաջ և չէ տուած ցարդ, ոչ իսկ յոյնը՝ որ սակայն հնուց ի վեր թատրոն ունեցած է և ունի մինչև հիմայ. Ռշտունի՝ բարձր կատակերգութեան մէջ, Թրեանց՝ թեթև կատակերգութեան մէջ, Երանուհի Գարագաշեան, Հրաչեայ՝ ողբերգութեան մէջ, Մարի-Նուարդ (զոր Աղամեան Սարա-Պերնարէն վեր կը դնէր) տռամի մէջ, Սիրանոյշ՝ որ մինչև այսօր Կովկասի առաջին դերասանուհին կը մնայ, Եւգինէ Գարագաշեան՝ «սուպրեթ» դերերու մէջ, և դեռ այնքան ուրիշներ Պոլսոյ բոլոր հասարակութեանց սքանչացումը գրաւեցին ու Եւրոպական ամենամեծ բեմերու վրայ իսկ պիտի կարենային յառաջնակարգ տեղ մը բռնել. իսկ Աղամեանը ռուսական քննադատներէն ինչպէս և Սալվինիի ու Բոսիի պէս վարպետներու կողմէ աշխարհիս մեծագոյն ողբերգուներէն մին հռչակուեցաւ։

Միևնոյն բանը կարելի չէ ըսել մեր թատերական հեղինակներուն մասին։ Այն հարիւրի չափ ողբերգութիւններէն ու տռամներէն որ գրուած են Պոլսոյ մէջ, ոչ մէկը եւրոպական քննադատութեան առջև պիտի կարենար շնորհ գտնել՝ իբրև ինքնատիպ ու բնորոշ գործ մը։ Եւ ատոնց բուն թերութիւնը ժամանակակից բարքերէն ներշնչուած, իրապաշտ ուղղութեամբ գրուած չըլլալնին չէ՝ ինչպէս միշտ նկատած են ռուսահայ քննադատները։ Սխալ է կարծել թէ թատերգութիւն մը, ինչպէս ոևէ գրական սեռի պատկանող գործ մը, կենդանի է միայն երբ ժամանակակից բարքերը կը ներկայացնէ, երբ

-ժողովրդի մը յատկանշական տիպարներն ու նիստուկացը առօրեայ իրականութեան մէջէն ցոյց կուտայ. գործ մը շատ լաւ կարող է կենդանի, գեղեցիկ ու ազդեցիկ ըլլալ՝ նիւթը հին պատմութենէ առնուած կամ նոյն իսկ բոլորովին մտացածին ըլլալով հանդերձ. թատերական գրականութեան թագն ու պսակը կը կազմեն Շէքսփիրի խաղերը, որոնց մէջ սակայն հեղինակին ժամանակակից անգլիական տիպարները չեն որ կերևան, այլ գրեթէ միշտ պատմական կամ մտացածին հերոսներ. նմանապէս հին յունական ողբերգութիւնը, այնքան հրաշալիօրէն կենդանի, իր նիւթը առած է հէլլէն դիցաբանութենէն ու առասպելախառն հին պատմութենէն. նոյնպէս՝ Ռասինի զմայլելի ողբերգութիւնները. նոյն իսկ մեր դարուն մէջ, Շիլլերի, Կէօթէի հսկայ գործերը, և մեզի աւելի մօտ՝ Իպսէնի Պրանտն ու Սոլնէսը, Մեթերլինքի Մոննա Վաննան ստեղծուած տիպարներ կը պարունակեն, և ոչ ընթացիկ կեանքէն օրինակուած։ Այդ տեսակ գործերը կրնամ ըսել աւելի կենդանի են քան սովորական իրականութեան վրայ կաղապարուածները, որովհետև անոնց մէջ մարդկային հոգեբանութեան այս կամ այն երեսը կարտայայտուի համադրական, խտացած ձևով մը. ատոնք գերազոյն սեռն են գրականութեան մէջ. և ատոնց մէջ յաջողելու համար անհրաժեշտ է «հանճար» ունենալ։ Մեր պոլսական ողբերգակներուն թերութիւնը այն է որ հանճար չեն ունեցած. և ծիծաղելի պիտի ըլլար ադիկա իրենց մեղադրել։ Իսկ պատմական նիւթեր նախընտրած ըլլալնուն համար ոչ միայն մեղադրելի չեն, այլ և գովելի. նախ, այդ է արդէն քնական կարգը. բոլոր մեծ ազգերուն մէջ՝ ողբերգութիւնը, բարձր թատերգութիւնը կանխած է կատակերգութիւնը. Յունաց մէջ Էսքիլէս ու Սոփոկլ Արիստոփանէն առաջ կը ծաղկին և իրենք կը հիմնեն թատրոնը. ինքն իսկ Արիստոփան՝ կատակերգութեան հայրն ըլլալով հանդերձ՝ խորին սքանչացող մը էր Էսքիլէսի, և քնարերգական ձիրքը իր մէջ այնքան ուժեղ է որքան երիգիծականը. Ֆրանսացւոց մէջ Ռոթրուէն ու Քորնէյլէն ետքն է որ կերևայ Մոլիէրը։ Նկատի ունենալով այն հոգեկան մտաւոր վիճակը ուր կը գտնուէր հայ հասարակութիւնը՝ այն պահուն երբ Պէշիկթաշլեան ուզեց թատրոն մը հիմնել Հայոց մէջ, թատերական ուղղութիւնը զոր նախընտրեց՝ անվիճելի կերպով լաւագոյնն էր, օգտակարութեան տեսակէտով ալ. ամենամեծ մասամբ տգէտ էր այդ հասարակութիւնը, կոպիտ, ասիական նախապաշարումներով բեռնաւորուած, ստրկական ոգիի մէջ թաթխուած, կրօնական, դասակարգա՞կանա

տելութիւններով պատռտուած, անգիտակ իր հայրենի լեզուին, իր դարաւոր պատմութեանը, իր ազգային ճակատագրին, գաղափարէն իսկ զուրկ՝ այն բոլոր դիւցազնական վեհ առաքինութեանց որ մարդկային պատմութեան զարդը կը կազմեն և զոր ստրուկ ցեղերը դատապարտուած են կորսնցնելու. այդպիսի հասարակութեան մը թերութիւնները մաքրելու և անոր մէջ ազնիւ զգացումներ մտցնելու համար դասական կամ ռոմանթիկ ոգւով պատմական ողբերգութիւններն ու տռամները շատ աւելի ազդեցիկ էին քան ինչ որ պիտի ըլլային ժողովրդի արդի առօրեայ կեանքը պատկերացնելը, անոր զզուելի կողմերը նոյնութեամբ իրեն ցոյց տալն և զանոնք ձաղկելը իրենց գլխաւոր նպատակ ունեցող թատերգութիւնները. այդ ուղղութեամբ գրուած խաղերու կամ վէպերու մեծ նշանակութիւնը ուրանալէ հեռու եմ. բայց համոզուած եմ որ մարդկային զանգուածները ազնուացնելու համար շատ աւելի արդիւնաւոր են այն գործերը ուր մարդկային հոգւոյն մէջ գոյութիւն ունեցող վեհ զգացումներուն պատկերացումը կը տիրապետէ քան անոնք ուր տգեղութեանց ու ցածութեանց նկարագրութիւնը կը գերակշռէ։ Քորնէյլի խաղերը, թէպէտ բնականութենէ զուրկ են յաճախ և արուեստականին մէջ կիյնան՝ ազնուութեան ծայրայեղ տիպարներ իտես դնելով, այդ օգտակարական տեսակէտով աւելի արգասաւոր եղած են քան Մոլիէրի ձաղկող ու ծաղրող և իրականութիւնը ցոյց տուող կատակերգութիւնները. «եթէ Քորնէյլ իմ օրովս ապրէր, ըսած է Նափոլէոն՝ որ «նկարագիր», «քաջութիւն», «դիւցազնութիւն» ըսուած բաները մենէ շատ աւելի կը ճանչնար, իշխանական աստիճան կը շնորհէի իրեն, որովհետև իրեն կը պարտի Ֆրանսա իր հերոսներէն շատերուն կազմութիւնը։» Ու Շէքսպիր ամենամեծ թատերգակն է՝ ճիշտ անոր համար որ կրցած է միացնել երկու տարրերն ալ, ցոյց տալով մարդկային հոգին իր ամբողջութեանը մէջ, և սակայն նորէն՝ ինչ որ կը գերակշռէ իր գործին մէջ, վեհ դէմքերը, վսեմ զգացումները, ազնիւ ձգտումներն են. օրինակ «Օթելլո»-ն. անոր մէջ կը տեսնենք հրէշային Եակօն, բայց անոր անդնդային գծութենէն որքան կը մխիթարեն մեզ Տեզտեմոնայի հրեշտակային մաքրութեամբ հոգին, Էմիլիա աղախնին անձնուէր և իր գոհեկութեանը մէջ բարի ու շիտակ նկարագիրը, Քասիօի միամիտ, կրակոտ ու սիրուն տիպարը և ինքն իսկ Օթելլոյի դժբաղդ, կրքոտ բայց վեհ ու դիւցազնական խառնուածքը։ Անշուշտ նախընտրելի էր՝ այդ սկզբնաւորութեան շրջանին մէջ՝ այդպիսի գործեր ներկայացնելը

ԱԹուԹեան ու կեղտի մէջ թաթաւուած հայ հասարակութեան՝ զայն լուսաւորելու և զայն լուալու համար։ Պէտք է նաև նկատի ունենալ որ այն շրջանին երբ Պէշիկթաշլեան ձեռք զարկաւ այդ գործին, Եւրոպայի մէջ «բարձր թատերգութիւնը» — ողբերգութիւն ու տռամ—կը տիրապետէին. գերմանական բեմերուն վրայ Շիլլերի, Ֆրանսական բեմերուն վրայ Ռասինի, Քորնէյլի, Հիւկօի, Ա. Տիւմա հօր, Իտալական բեմերուն վրայ՝ Ալֆիէրիի, Մանզոնի գործերը կիշխէին. «Իրապաշտ» թատերգութիւնը դեռ գերակշիռ չէր հանդիսացած. —գերակշռութիւն որ այժմ սկսած է նորէն տեղի տալ համադրական, գերագոյն արուեստի վերականգնումի առջև (Վակներ, Իպսէն, տ՝ Անունցիօ, Մեթերլինք, ևն)։ Ինք՝ Պէշիկթաշլեան և իր գործակիցներն ու յաջորդները Իտալիա կրթուած, կամ Պոլսոյ մէջ Եւրոպական դաստիարակութեամբ մարզուած, շրջանին այդ տիրական ոգւոյն պիտի հպատակէին բնականաբար։ Գեղարուեստական—կրթական գործը զոր ուղեցին կատարել, կատարեցին որքան որ իրենց ուժերը կը ներէին. ծանօթացուցին հայ հասարակութեան Եւրոպական թատերգութեան ամենէն բարձր գործերը,— և հոս իրենց ճիգը եղած է բացարձակապէս անքննադատելի և ամէն կերպով արժանի դրուատման, —անվրէպ ճաշակով ընտրած են արևմտեան թատրոնին ամենէն գեղեցիկ արտադրութիւնները Շէքսպիրի, Շիլլերի, Կէօթէի, Ռասինի, Քորնէյլի, Վոլթէրի, Հիւկօի, Ալֆիերիի, Մոնթիի, գլուխ-գործոցները. ինչպէս և կատակերգութիւնները Մոլիէրի, Բենքարի, Կոլտոնիի և վերջերը նոյն իսկ «Իրապաշտ» թատրոնի գործեր՝ ինչպէս «Գամելիաազարդ Տիկինը», ևն, (ցաւալի է միայն որ այդ բոլոր թարգմանութիւնները հրատարակուած չըլլան նոյն միջոցին. այսօր ամօթը չէինք ունենար նկատելու որ դեռ այդ էական հրաշակերտներուն —ինչպէս գրական ուրիշ ճիւղերու մէջ ալ այնքան կարևոր գործերու-հայերէն թարգմանութիւնները կը պակսին մեր ազգային աղքատիկ մատենադարանին մէջ)։ Իրը ինքնագիր գործ, տուած են բազմաթիւ ողբերգութիւններ ու տռամներ. անվիճելի է որ այդ գործերը ինքնագիր են բայց ոչ ինքնատիպ. Պէշիկթաշլեան իր խաղերը գրած է գլխաւորաբար օգտակար ըլլալու ձգտումով, ու յաճախ ներշնչուած է, թէպէտ շատ միջակ յաջողութեամբ, Եւրոպական բնատիպարներէ, —ճիշտ ինչպէս քիչ յետոյ Նալբանդեան ու Գամառ—Բաթիպա շատ մը Եւրոպական բանաստեղծութիւններ հայացուցած են՝ հայ ժողովրդին մէջ Եւրոպական զգացումներ տարածելու նպատակով. Թէրզեան աւելի ճիրք ունէր թատեր-

գութեան համար, այդ արուեստը լաւ ուսումնասիրած էր. իր խաղերը ճարտարօրէն հիւսուած են. անոնց մէջ կան մերթ սիրուն տեսարաններ, քնարերգական գեղեցիկ կտորներ. բայց նմանողութիւնը չափազանցութեան հասուցած է յաճախ. Երոպական հրաշակերտներու ամբողջ տեսարաններ նոյնութեամբ փոխադրած է իր թատերգութեանց մէջ։ Սրապիոն Թղլեան գրած է տուամներ՝ գլխաւորապէս Հիւկոի հետեողութեամբ. ցոյց տուած է աշխոյժ երևակայութիւն, տուժական կացութիւններ ստեղծելու կարողութիւն, իր խօսակցութիւնները արագ ու կրակոտ են. բայց իր մէջ ալ նմանողութիւնը կը տիրապետէ՝ ներելի սահմանէն անդին անցնելով. իբր գրագէտ, Պէշիկթաշլեանէն ու Թէրզեանէն շատ վար կը մնայ։ Սրապիոն Հէքիմեան գրած է տասներկու ողբերգութիւններ, որոնց չորսը— Արտաշէս եւ Սաթենիկ, Հարմակ եւ Աշխէն, Սամէլ, Վահրամ, —տպուած են իր Տաղը, Քերթուածք եւ Թատերգութիւնք հատորին մէջ։ Ինքնատպութեան ջանք մը կայ անոնց մէջ, մերթ քանի մը յուզիչ կացութիւններ, մերթ քնարերգական գեղեցիկ հատուածներ. բայց ամբողջութիւնը ցուրտ է, հռետորական, լեզուն՝ խրթին ու քիչ մը խորթ գրաբար մը, տաղաչափութիւնը աննկարագրելի։

Պետրոս Դուրեան արտադրած է բազմաթիւ ողբերգութիւններ, խանդով ու երևակայութեամբ լեցուն, տեղ տեղ քնարերգական սիրուն թռիչներով, բայց հիմնովին տղայական։ Եղած են նաև ուրիշ կարգ մը թատերագիրներ, Ռոմանոս Սէտէֆեան, Վանանդեցի, Մ. Աղաբէգեան, Է. Եսայեան, Ա. Հայկունի, որոնց ողբերգութիւնները մեծ յաջողութեամբ ընդունուած են իսկ հասարակութենէն, բայց որոնք գրական ճշմարիտ նշանակութենէ զուրկ էին։ Բոլոր այդ շեղջակուտակ արտադրութեան մէջ պակսած է՝ ինչպէս ըսի՝ հանճարը, պակսած է նոյն իսկ փայլուն, ուժեղ տաղանդ մը, (թատերական տաղանդը՝ ըսել կուզեմ, որովհետև քնարերգական տաղանդը, որ արդէն Պէշիկթաշլեանի, Թէրզեանի, Հէքիմեանի և Դուրեանի բանաստեղծութեանց մէջ իր բնիկ փայլովը շողացած է՝ անոնց թատերգութեանց մէջ մերթ շողիւն մը կը դնէ). այդ բոլոր ողբերգութիւններն ու տուամները պատմական նիւթերու շուրջ կը դառնան, բայց անոնց մէջ բացարձակապէս անգոյ է պատմական ուսումնասիրութիւնը, միջավայրի ցեղի, ժամանակի մասնայատկութեանց հետախուզութիւնը. հայ անուններ կը կրեն այդ հերոսները, բայց անոնց կարելի է տալ ուէ ազգի անուններ, անոնք միշտ պիտի մնան ինչ որ են՝ անկենդան խամաճիկներ,

առանց ոեէ անձնական որոշ ու ապրող հոգեբանութեան, հեղինակն է միշտ որ կը խօսի անոնց բոլորին բերնէն, և անոնց խօսքերը մշտական ճառ մը կամ քնարերգութիւն մըն են։ Ողբերգութիւններու այդ բազմաշեղջ դէզին մէջ, մէկ «տիպար» մը, մէկ «նկարագիր մը» կարելի չէ գտնել, որ հզօրապէս ստեղծուած, ինքնատիպ, կենդանի ըլլայ։

Այդ թատերական գրականութեան մէջ, կատակերգութիւնն ու բարքեր պատկերացնող թատրերգութիւնը շատ քիչ տեղ բռնած են. ատի անշուշտ ցաւալի է, որովհետև որքան այ բարձր թատրերգութիւնը նախընտրելի կը թուի ինծի այն բոլոր տեսակէտներով զոր բացատրեցի վերև, կատակերգութիւնն ու բարքերու թատրերգութիւնը շատ կարևոր ճիւղեր են գրականութեան մէջ. այդ պակասը ոչ միայն ցաւալի, այլ զարմանալի ալ է, ծանօթ ըլլալով Պոլսեցուց յատուկ սրամտութիւնը, դիտողութեան ու հեգնութեան ձիրքը, որ յետոյ պիտի տար երգիծանքի մեծագոյն վարպետները զոր Հայք ունեցած են։ Պակասը բացարձակ չէ սակայն. քանի մը գործեր երևցած են այդ ճիւղին պատկանող. անոնց առաջինն է ժամանակագրական կարգով՝ Արեւելեան Ատամնաբոյժ կատակերգութիւնը Յ. Պարոնեանի, որ տարիներ յետոյ գրեց նաև Պաղտասար աղբարը, փայլուն զաւեշտներ, ուր Մոլիէրի ազդեցութիւնը հզօրապէս կը զգացուի, և որոնք ծայրայեղ երգիծանքներ են աւելի քան իրական բարքեր ու տիպարներ պատկերացնող գործեր։ Պէտք է յիշել նաև Խորէն Նարպէյի Ալաֆրանկա կատակերգութիւնը, կրակոտ սրամտութեամբ գրուած գործ մը, որ թէև թատերական արուեստի տեսակէտով թերութիւններ ունի, շատ աւելի ինքնատիպ գործ մըն է քան Արշակ Բ. ողբերգութիւնը, և որու մէջ Ստուերը Հայկականքի հեղինակը կը ձաղկէ Եւրոպացման ձգտումը վնասակար ու ծիծաղելի չափազանցութեանց հասցնող, մինչև ազգուրացութեան տանող օտարամոլ կապկահոգի Հայերը. վերջապէս Պետրոս Դուրեանի Թշուառները Պոլսոյ հայ դերասաններու կեանքէն դրուագ մը, որու մէջ հեղինակը ուզած է իրապաշտ ըլլալ բայց մնացած է խորապէս ռոմանթիկ, նոյն իսկ «ռոմանեսք». խաղը, միամտօրէն յղացուած ու գրուած, գրական ոեէ արժէք չունի, բայց շահեկան է իբրև ժամանակակից բարքերէ քաղուած տուամի միակ փորձը որ կատարուած է այդ շրջանին մէջ։

Այս է ամբողջը՝ այդ ճիւղին մէջ. և շատ քիչ է անշուշտ։ Նիւթը չէր որ կը պակսէր։ Պոլսոյ միջավայրին մէջ՝ կան

այնքան այլազան, յատկանշական տիպարներ, բարքերը հոն ունին այնքան կողմեր՝ նկարուելու արժանի. թատերագրական տաղանդն է որ պակսած է։

Մեր թատերական գրականութեան այդ թերութիւնները արդիւնք են նաև լուրջ ու գիտակից քննադատութեան մը պակասին։ Պոլսոյ լրագիրներուն մէջ՝ թատերական շարժման այդ ամբողջ շրջանին, երևցած յօդուածները ջատագովական կամ նկարագրական պարունակութիւն ունին լոկ. հմուտ, գիտակից, սրատես քննադատ մը չէ գտնուած. հանճարը, թէպէտ կրնայ օգտուիլ քննադատութենէ, անհրաժեշտ պէտք չունի անոր, որովհետև ինքնաբուխ վիթխարի ուժ մըն է ան որ իր սխալներուն մէջ իսկ մեծ ու շուարեցուցիչ կը մնայ, որ «նոր» տարրեր, ամենէն հմուտ քննադատին իսկ անծանօթ, գեղեցկագիտութիւնը խախտելու և վերանորոգելու կարող տարրեր բերելու պաշտօնն ունի. տաղանդը անհրաժեշտ պէտք ունի քննադատութեան խարտոցին տակ յղկուելու. տարակոյս չկայ որ եթէ մէկ լուրջ ու նրբազէտ քննադատ մը գտնուէր այդ միջոցին, Պէշիկթաշլեանները, Թէրզեանները, Հէքիմեանները՝ իրենց ունեցած անհերքելի տաղանդով՝ պիտի արտադրէին գործեր, եթէ ոչ աւելի հզօր, գէթ աւելի խնամուած, ուսումնասիրուած, աւելի հայադրոշմ, աւելի ինքնատիպ։ Դալով հասարակութեան, բացարձակապէս զուրկ ոչ միայն քննադատական հմտութենէ, այլ և գեղեկցագիտական ամենապարզ ըմբռնողութենէ, նոյնքան խանդավառութեամբ կը ծափահարէր Սէտէֆճեանի այլանդակ խաղերը որքան Պէշիկթաշլեանինները կամ Թէրզեանինները՝ որ գէթ ճաշակով գրուած էին, և միասնաբեր ազդեցութիւն մը միայն կրնար ունենալ թատերագիր հեղինակներու վրայ զանոնք վարժեցնելով դիւրին յաջողութեանց։

Թերևս այդ պակասները դարմանուէին, և իր բնաշրջութիւնը կանոնաւորապէս յառաջ տանելով՝ Պոլսոյ թատերական գրականութիւնը հետզհետէ զարգանար, զօրանար, ամբողջանար՝ նոր և աւելի ինքնատիպ տաղանդներու յայտնուժով, լուրջ քննադատութեան մը կանգնուժով, եթէ Վարդովեանի շահամոլական ուղղութիւնը ապականած և կործանած չըլլար այդ շարժումը։ Պէտք է դիտել որ հասարակութիւնը, միշտ խակ մնացած, շատ յօժարակամ յարեցաւ Վարդովեանի բերած նորութեան, ինքն իսկ ուրեմն գործակցեցաւ հայ թատրոնին անկման. գրագէտները ոչ մէկ ուժեղ ճիգ չըրին, լրագրութիւնը ոչ մէկ հզօր բողոք չարձակեց՝ նոր ու միասակար հոսանքը արգիլելու համար։ Հայկական թատրոնը ծիւրեցաւ ու մեռաւ Հայոց ձեռ-

քով։ Անոնք որ մեր թատրոնի մահը կը վերագրեն Սուլթան Համիտին, կը սխալին։ Համիտինը տանք Համիտին, ու Հայունը Հայուն։ Մեր յանցանքը երբեք ուրիշին չվերագրենք։ Համիդի գահակալութենէն յետոյ՝ տասը տարիի չափ հայերէն ներկայացումները,—նոյն իսկ պատմական խաղերու ներկայացումը—շարունակուած է։ 1890-էն յետոյ՝ պատմական, հայրենասիրական խաղերու ներկայացումը արգիլեց Համիտ, բայց բայց հայերէն լեզուով ներկայացմանց դէմ երբեք արգելք չէ դրած. 1888-էն 1891, Ադամեան Պոլսոյ մէջ տուաւ բաւական ներկայացումներ հայերէն լեզուով. արգիլուեցան միայն Համլէտն ու Լիրը որոնք արգիլուած են Եւրոպացի ամենամեծ դերասաններուն ալ՝ երբ Պոլսոյ մէջ զանոնք ներկայացնել ուզած են. բայց, հակառակ որ Ադամեանի պէս հրաշալի արուեստագէտ մըն էր ներկայացումներուն մէջ փայլողը, Փերայի թատրոնը յաճախ կիսով պարապ էր, և Համիտը չէր ատոր պատճառը։ 1891-ին, Գատրքէօյի մէջ Տոտէի Փրոմոն և Ռիսլեր խաղին հայերէն թարգմանութիւնը և 1892-ին Փերայի, Գատրքէօյի և Իւսկիւտարի մէջ՝ այս տողերը գրողին Մութ խաւեր թատերգութիւնը և նոյն տարուան վերջերը՝ Դուրեանի Թշուառները ներկայացուեցան առանց ոեէ արգելքի։

Եթէ Տաճկահայոց մէջ հայ թատրոն մը կանոնաւորապէս չէ շարունակուած մինչև այսօր, ատոր գլխաւոր պատասխանատուն թրքահայ հասարակութիւնն ինքն իսկ է։

Իր պակասութիւններովը հանդերձ, թատերական գործը զոր հիմնեց Պէշիկթաշլեան և զոր ատեն մը շարունակեցին իր ընկերներն ու յաջորդները, եթէ չունեցաւ իր լիակատար զարգացումը և կէս—ճամբան՝ ընդհատուեցաւ, հասաւ սակայն իրականացնելու՝ մեծ չափով մը՝ մէկ քանին այն էական նպատակներէն զոր Պէշիկթաշլեան առաջադրած էր։ Վայելուչ հայերէնով գրուած կամ թարգմանուած այդ բոլոր խաղերը Պոլսոյ տաճկախօս Հայութեան մէջ մտցուցին մաքուր հայերէն խօսելու ձգտումը, տարածեցին հայրենիքի, ազատութեան, քաջութեան, միութեան, անձնուիրութեան սկզբունքներ, «Եւրոպական» բարքեր, զգացումներ, ժեսթեր ներմուծեցին մեր միջավայրին մէջ, վերջապէս՝ քով քովի համախմբելով և ազնիւ խանդավառութեանց մէջ իրարու մօտեցնելով ամէն դաւանանքի պատկանող Հայեր, ազգային միութեան իրականացումը փութացուցին։

ԱՐՇԱԿ ՉՕՊԱՆԵԱՆ

Պարիս

* *
*

Կանաչ պարտիզի զով ըստուերներում
Մտերիս բոլում ես խորասուզուած
Մաև էի գալիս, անհասաս քայլում,
Միտս վշտաբեկ, կսկիծով խոցուած։

Եւ տաւում էի ես իմ մտերով
Դէպ այն աշխարհը, ուր սեւ ցաւերից
Երկինքն է այրում, շանթեր սփռելով,
Ուր արհաւիրքի թախծոտ երերից
Արեան նետեր է արեւը սփռում
Հաչունաչ եղած թշուառ երկրում։

Ուր հորիզոնը արեան շիթերից
Կրակի նման կարմիր է փայլում,
Եւ ծաղիկներդ մոայլ դալշտերում
Փոխան ջրուելու անգութ երկնից.
Բնութեան պարգեւ կենսատու ցողով
Երկրի կրծքից արիւն են ծծում։

Եւ շատ ապագիսի սե՞ւ, ցնցոզ մտեր
Ուրագ թեւերով ինձնից սաւառնում,
Սահում, անցնում են իրեւ ըստուերներ
Դառնացած ստիս նոր վերք պատուաստում։

Եւ ինձ մորմոքող արևոտ մտերից
Վիշտն ու թախիծը տիրեցին հոգուս.
Ու նրանց մաշող, կրծող ճանկերից
Մաշում եմ, հալում եմ կեանքս չալիս։

Տ. ՇՈՒԼՈՒԵԱՆՑ

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ՀԱՅԵՐԸ*)

Հինգերորդ և չորրորդ դարերում Քրիստոսից առաջ

Ըստ Քսենոֆոնի

II. Գիւղերը

Գիւղերի տեղերը.—Տները.— Ամիչքները.— Իւղերը.— Պաշարեղէնների առատութիւնը։

Բարեբաղտաբար Քսենոֆոնը համեմատաբար աւելի լրիւ և արժէքաւոր տեղեկութիւններ է տալիս հայոց—գլխաւորապէս Տարոնի—գիւղերի և սոցա տների մասին։

Այս տեղեկութիւններն այն տեսակէտից են արժէքաւոր, որ մեզ մօտաւոր գաղափար են տալիս հինգերորդ և չորրորդ դարերի հայերի կեանքի, ապրուստի, նիստ ու կացի և զբաղմունքների մասին։ Այստեղ ևս երևան է գալիս բնութիւն, լեռ ու ջուր սիրող, աշխատասէր և շինարար հայը, որը միշտ ձգտում է իւր մայրենի երկիրը շէնցնել և մշակել։ Այլ և որոշ չափով գաղափար ենք կազմում հայ գեղջուկի նախնական, պարզ ճարտարապետութեան և հնարամտութեան վրայ։

Ինչպէս տեսանք թէ Արևելեան և թէ Արևմտեան Հայաստանում կային բազմաթիւ մեծ ու փոքր, շէն ու աւեր գիւղեր, որոնց միջով անցնում էին յոյները։ Մեծ գիւղերում նստում էին թագաւորները, Արևելքում Օրոնդը, յատկապէս որ գիւղում շատ դժուար է որոշել և ասել. իսկ Արևմտքում, ամենայն հաւանականութեամբ այժմեան Խնուս քաղաքում, Տիրիբաշը։ Մեծ գիւղերից Արևելեան Հայաստանում նշանաւոր է եղել նաև սատրապանիստը։ Միւս գիւղերը, որոնք կառավարւում էին

---

*) Տես «Լուսայ» № 4.

իրենց առանձին իշխաններով կամ գիւղապետներով (կոմարխէս)*), ցրուած էին երկրի զանազան կողմերում։

Այս մեծ ու փոքր գիւղերն ըստ մեծի մասին շինուած էին լինում ջրառատ տեղերում, գիւղերի ափերին և ամրացրած՝ աշտարակներով կամ բերդերով։ Ինչպէս Քսենոֆոնը յիշում է, եղել են գիւղեր Արևելեան Տիգրիսի (Դենտրիդես գետի) մօտի դաշտի վրան, սակայն սոքա աւերուել են Կորդուաց դէմ մղուած պատերազմների ժամանակ։ Շատ գիւղեր եղել են նաև Մշոյ վտակի (Տելեբոաս գետի) ափերի վրան Խնուսի շրջակայքում (Արևելեան Հայաստանում) և այլ զանազան տեղեր. գլխաւորապէս այն ճանապարհի վրան, որով յոյներն էին անցնում։

Որովհետև այդ գիւղերը թշնամիների կողմից միշտ ենթակայ էին լինում ամէն տեսակ ասպատակութիւնների կողոպուտի, յափշտակութեան, ինչպէս և անում են Քսենոֆոնի իշխանութեան տակ եղած զօրքերը, պարզ է, որ պէտք է շինուած լինէին ամուր տեղերում, լեռների վրայ։ Մեծ գիւղերն, ինչպէս երևում է, ունեցել են ամրութեան և պաշտպանութեան համար շինուած բերդեր, կամ թէ շատ տների վրան եղել են աշտարակներ, ինչպէս սատրապանիստ գիւղում (Արևելեան Հայաստանում)։

Առանձնապէս հետաքրքրական և ուշագրաւ է տների նկարագիրը։ Այս կտորը մեզ համար շատ թանգագին է և մեծարժէք, որովհետև չունենք ուրիշ աւելի հին նկարագրութիւն, որով կարողանայինք գաղափար կազմել այն յարկի մասին, որի տակ հայ գեղջուկը անց է կացնում իւր թէ տխուր և թէ երջանիկ օրերը, ուր նա իւր աշխատակից կենդանիների հետ միասին աշխատանքից յետոյ հանգիստ է առնում և ուր նա, պահպանում է իւր սեպհականութիւնը, քան թէ այս համառօտ, սակայն խիստ ամփոփ նկարագրութիւնը։

Եթէ այդ նկարագրուած տների հետ համեմատելու լինենք ներկայումս Շիրակում և Արարատում գտնուած մի քանի գիւղերի տները կամ օդանները, որոնք նոյն դերն են կատարում ինչ որ կատարում էին Քսենոֆոնի նկարագրածները, կը տեսնենք, որ հայ գեղջուկի տունը գրեթէ նոյնն է մնացել, ինչ որ եղել է դեռ ևս հինգերորդ, չորրորդ դարերում Քրիստոսից առաջ։ Իսկ թէ ինչն է նպաստել հայ գեղջուկին մնալու զարգացման նոյն

*) Գուցէ այժմեան գալաւաններն են, կամ տանուտէրներին համապատասխան։

աստիճանի վրայ, ինչ աստիճանի վրայ որ եղել է նախնական դարերում.—հարցի պատասխանն, անշուշտ, պատմական կեանքի զանազան աննպաստ պայմաններում պէտք է որոնենք։

Տան նկարագրի հետ միասին Քսենոֆոնը Anabasis IV, 5, 25—27) նկարագրում է նաև մի նոր տեսակ՝ գարուց պատրաստուած խմիչք, որի մասին այժմ նոյն իսկ գաղափար չունենք և հազիւ թէ կարելի լինի համեմատել ներկայումս Հայաստանում և այլ երկրներում եղած խմիչքներից մէկն ու մէկի հետ։ Քսենոֆոնի նկարագրութիւնից երևում է, որ այդ խմիչքը Հայաստանում շատ տարածուած, սովորական, ընդունուած և սիրելի է եղել սովորած մարդկանց համար։ Բայց, որովհետև այժմ չունենք այդպիսի խմիչք, շատ դժուար է ընդունել, որ այդ նոյն խմիչքն է ինչ որ գարեջուրը, ինչպէս կարելի է կարծել ի նկատի ունենալով նկարագրութիւնն, այլ մի բոլորովին ուրիշ տեսակի և յատկութեան ուրոյն խմիչք։

Ահա թէ ինչպէս է նկարագրում Քսենոֆոնը հայ գեղջկի պարզ, անպաճոյճ տունն ու սիրելի խմիչքը։

«Տները ստորերկրեայ (կատագէյոյ) էին. բերանները ջրհորի բերնի նման, բայց ներքևը ընդարձակ էր և միայն կենդանիների համար էր մուտք փորուած. իսկ մարդիկ վերևից ցած իջնում էին սանդուխքներով։ Տների մէջ կային այծեր, ոչխարներ, եզներ, հաւեր և նոցա ճուտերը։ Ներսն եղած կենդանիները շատ էին խոտ ուտում. բայց կար նաև ցորեն, գարի, ընդեղէններ և կարասներում գարուց պատրաստուած գինի (խմիչք)։ Գարիները (ջրի) վերան լողում էին։ Դրուած էին մեծ ու փոքր եղէգներ, որոնք ծունկեր չունէին։ Եթէ մէկը կամենար խմել, այս եղէգները պիտի դնէր բերնին և ծծէր։ Այս խմիչքը շատ դառն էր, եթէ մէկն անապակ էր խմում. սակայն սովորածի համար շատ քաղցր խմիչք էր։»

Հայ գեղջուկը բացի այս անծանօթ խմիչքը ունէր նաև հին ու անուշահոտ գինի, որ պահում էր կարասների մէջ և թաղում հողի տակ։ «Եւ երբ մէկը բարեկամաբար կամենում էր խմել ընկերոջ կենացը, տանում էր նորան կարասի մօտ և ինքը կռանում ու եզի նման ներս էր քաշում գինին։» (Anabasis IV, 5, 34)։

Խմիչքներից զատ, Քսենոֆոնը նկարագրում է, որ յոյներն իրենց ատտիկական սովորութեան համաձայն ձէթով օծուելու համար Հայաստանում ճարել էին նաև մեծ քանակութեամբ և զանազան տեսակի ուրիշ իւղեր, ինչպէս օրինակ՝

չխոզի ճարպ, կնճիթ, դառն նշից ու բևեկնից մզուած իւղ և մրտենու իւղ (միւռոն)։

Մի նշանաւոր հանգամանք կայ, որ առանձին կերպով և մի քանի անգամ է շեշտուում Քսենոֆոնը. այդ Հայաստանի գիւղերի լիութիւնն ու պաշարի առատութիւնն է, որից և առատ-առատ օգտուում են յունաց զօրքերը։ Այդ պաշարեղէններն էին՝ մսացու, ցորեն, հին և անուշահոտ գինի, չափիչ և զանազան ընդեղէններ։ Միևնոյն սեղանի վրայ գարուց և ցորենից թխած հացով յոյները վայելում էին ոչխարի, այծի, խոզի, հորթի և հաւի մսից պատրաստած զանազան տեսակ խորտիկներ, անշուշտ, անուշահոտ գինին էլ հետը վայելելով։

Ուրեմն, իսկապէս որ Հայաստանը եղել է մի լիառատ երկիր, որ կրկին ապացոյց է հայ գիւղացու աշխատասէր, առկուն ու համբերող ոգուն, որով նա մշակած է իւր երկիրը, պահում ընտանի կենդանիները և ամենայն առատութեամբ օգտուում այդ երկրի վերոյիշեալ բարիքներից և օտարների համար էլ բաժին հանում։

III Գիւղացիք.

Գիւղացու կրօնը.—Ներքին ընտանեկան կեանքը.—Հարկը.—Պարապմունքները.—Բնութեան դէմ պաշտպանուելու հնարամտութիւնը։

Մի ժողովրդի մասին խօսելիս, անշուշտ, նախ պէտք է ի նկատի ունենալ այդ ժողովրդի կրօնական—բարոյական կեանքը, աշխարհահայեացքը, թէ նա ինչպիսի աստուածներ ունի, ինչպէս է հաւատում և վերաբերւում դէպի այդ աստուածները, ինչպիսի պաշտամունք է կատարում դոցա համար և այլն.—հարցեր, որոնց պատասխանները նախկին հայերի համար շատ և շատ հետաքրքրական են, սակայն, դժբաղդաբար, շատ քիչ բան միայն գիտենք այդ բոլորի մասին և այնքան քիչ, որ համարեա թէ ոչինչ չը գիտենք։

Արդարև այդ հարցերի պատասխանները բաց կանեն մեր առաջ այն հրապարակը, որի վրայ պարզապէս կերևայ, թէ ժողովուրդը իւր ներքին, հոգեկան, կրօնական-բարոյական որոշ պահանջներին ինչպէս է բաւարարութիւն տալիս։

Հարկաւ հայ ժողովուրդն ևս որպէս մի կազմակերպուած համախմբութիւն և ամբողջութիւն պիտի ունենար իւր հոգե-

կան որոշ պահանջները, որոնց բաւարարութիւն տալ կարող էր միմիայն կրօնով։

Արդ՝ նախնական հայերի կրօնին վերաբերեալ մի շատ թանկագին յիշատակութիւն ունենք Քսենոփոնի երկի մէջ, որի համար և մեզ շատ երախտապարտ պիտի համարենք, որովհետև՝ այդ յիշատակութիւնը, թէև շատ աննշան և թերի, սակայն և այնպէս, միակն ու գնահատելին է այն տեսակէտից, որ վերաբերում է շատ հին ժամանակի և որ այդ ժամանակուանից առաջ և դեռ ևս մինչև երրորդ, երկրորդ դար (Քրիստոսից առաջ) նման տեղեկութիւն և գաղափար չունենք հայոց կրօնի և աստուածների մասին բացի Ագաթանգեղոսի տուածներից։

Ըստ այդ յիշատակութեան հայերն ունեցել են արեգակի պաշտամունք, որ և կատարուել է զոհաբերութեամբ և յատկապէս ձի է զոհ բերուել։ Այս լսած լինելով Քսենոփոնն իւր ծերացած ձին տալիս է գիւղապետին ի վարձատրութիւն, որ սա կերակրէ, պարարտացնէ այն և զոհ բերէ արեգակին։

Անշուշտ շատ հետաքրքրական կը լինէր իմանալ թէ արդեօք այդ ձևի պաշտամունքը Հայաստանի բոլոր նահանգներում ևս էր կատարւում, թէ՞ որոշ մասերում միայն, կամ տեղերում։ Այս մասին, սակայն, դժբաղտաբար, ոչինչ չի աւանդել մեզ Քսենոփոնը։ Բայց ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ հնում՝ Հայաստանում կային մարդիկ, որոնք ըստ իրենց կրօնական պաշտամունքի Արևորդիք էին կոչւում,—հաւանականաբար այն պատճառով, որ սոքա ևս ունէին արևի պաշտամունք, ուստի և կոչւում էին Արևի-որդիք— կարելի է ենթադրել, որ Քսենոփոնի յիշած արևի պաշտամունք կատարողներն ևս մի առանձին կարգի ժողովուրդ են եղել և կամ որոշ գաւառի, նահանգի բնակիչներ։ Բայց թէ, արդեօք, այս նոր կարգի արևի պաշտամունք կատարողները նոյն այդ Արևորդիքն են, թէ մի այլ ժողովուրդ, կամ նոյն ինքն հայերը, շատ հետաքրքրական է իմանալ, սակայն դժուար է դրականապէս այս կամ այն ասել և պնդել։

Չը պիտի մոռանալ, սակայն, մի հանգամանք ևս, որ արևին, որպէս մեծ ջերմատուի և լուսատուի, մեր ժողովուրդը մինչև այժմ էլ շատ մեծ յարգանքով է վերաբերւում և որոշ տեղերում նոյն իսկ գիւղացիք առաւօտեան արևածագին դէպի արևելք դարձած խաչ են հանում երեսներին։

Իսկ թէ ի՞նչպէս էր հայի ներքին, ընտանեկան կեանքը. այդ ևս որոշ չենք տեսնում Քսենոփոնի բեկորներից, թէև կան դորա վերաբերեալ մի քանի յիշատակութիւններ։ Ներքին կեան-

քի երևոյթներից յիշում է օրինաւոր պսակը, կամ ամուսնութիւնը։ Եւ ապա մի գլխաւոր հանգամանք ևս, որ բնաւ չը պէտք է անտես առնել։ Ինչպէս Քսենոֆոնի նկարագրութիւնից երևում է, հայ աղջիկն ու կինը հին դարերում չի եղել այն հարեմական, փակուած, կաշկանդուած դրութեան մէջ, ինչ որ եղել է յետոյ, հաւանօրէն մահմեդականութեան ազդեցութեան տակ. այլ՝ հայ կինն ու աղջիկը եղել են աւելի ազատ, քան ներկայումս գիւղերումն է։ Սոքա համարձակ կերպով խմբով գնում են գիւղից դուրս՝ աղբիւրը ջուր բերելու։ Այս արդէն ցոյց է տալիս, որ ինչպէս միշտ, նոյնպէս և հին դարերում տան ներքին բարեկարգութիւնն ու կառավարութիւնը, ինչպէս են օրինակ՝ ջուր բերել, կերակուր եփել, տունը մաքրել, սեղան պատրաստել և այլն, և այլն տան կնոջ և աղջկայ պարտականութիւնն են եղել։ Սոքա անարկիւղ դիմում են օտար զինուորներին հարցնելով, թէ ո՞վ են դոքա և իրենց ստացած պատասխանին իրենք էլ նորից են պատասխանում։ Եւ այս խօսակցութիւնը տեղի է ունենում դուրսը, ազատ դաշտի վրայ և պարսկերէն լեզուով։

Իսկ թէ ի՞նչով պիտի բացատրել հայ գեղջկուհու քաջ պարսկերէն խօսելը, կարծում ենք, այնքան էլ դժուար չէ։ Գուցէ հէնց այն պատճառով, որ Պարսից տիրապետութեան տակ էին գտնուում և իրենցից պահանջւում էր անպայման կերպով պարսկերէն իմանալ և խօսել։ Այս կարծիքն այնքան էլ անհաւանական չի լինի, եթէ ի նկատի ունենանք անցեալում իշխող պետերի նոյն դիտաւորութեամբ դէպի իրենց ստորադրեալներն ունեցած վարմունքը։ Օրինակ՝ մեր Արամ նահապետը, ըստ Խորենացու աւանդութեան, սպառնում էր կտրել Մաժակի (Կեսարիոյ) բնակիչ այն յոյնի լեզուն, որը կը համարձակուէր իւր մայրենի լեզուով խօսել և այլն։ Բայց թէ, արդեօք, հայ գիւղացիք միմիայն պարսկերէ՞ն էին խօսում, (թէ դուրսը և թէ տանը), թէ՞ հայերէն էլ էին խօսում, շատ դժուար է եզրակացնել Քսենոֆոնի հատ ու կտոր յիշատակութիւններից։

Գալով հարկատուութեան խնդրին պէտք է ասել, որ հայ գեղջուկը ի նշան հպատակութեան՝ պարսից արքայի համար իբրև հարկ պէտք է մնուցանէր ու մի առանձին խնամքով պահէր Հայաստանի ընտիր նժոյգներից, որոնք թէև փոքր էին, քան թէ պարսկականները, սակայն շատ աւելի տոկուն ու աշխոյժ և որոնք առանձին հսկողութեան տակ բազմանում ու աճում էին արօտներում և ապա միայն պատշաճաւոր եղանա-

կով հայոց կողմից իբրև հարկ ուղարկուում պարսից արքունիք։ (Եւս Գաթրճեան)։

Հարկաւ, ինչպէս ամեն մի երկրում, նոյնպէս և Հայաստանի գիւղերում շատ մեծ տեղ պէտք է բռնէին գիւղական պարապմունքները, որոնց մասին, սակայն, շատ բան չունենք Քսենոֆոնից աւանդուած։ Բայց, ի նկատի ունենալով ընդեղէնների առատութիւնը, կարելի է ըստ ամենայն հաւանականութեան ենթադրել, որ ինչպէս միշտ, նոյնպէս և այն նախնական դարերում հայ գիւղացու, այն գիւղացու, որը դարերից ի վեր դեռ ևս շատ սերտ կապերով է կապուած իւր մայրենի երկրի և սորա մշակութեան գործի հետ, ամենամեծ և գլխաւոր պարապմունքը պիտի լինէր երկրագործութիւնը և առ հասարակ դաշտային աշխատանքը։ Շատ բնական է, որ դեռ ևս հինգերորդ, չորրորդ դարերի հայ գեղջուկն ևս, որ յոյների զօրքերին առատութեամբ ցորենի և գարու հաց էր մատակարարում, գլխաւորապէս զբաղուէր յիշեալ սուրբ արհեստով։ Հետևաբար որպէս զի կարողանար զբաղուել այդ արհեստով հայ գեղջուկը պիտի ունենար և իւր մշտական աշխատակից և օգնական ընտանի կենդանիները, որոնց առանձին հոգատարութեամբ խնամում ու պահում էր իւր տանը և պիտի զբաղուէր նաև խաշնարածութեամբ։

Շատ պարզ է, որ բնութիւն, ազատութիւն ու գործ սիրող հայ գիւղացին երբ ազատ կը լինէր իւր վերոյիշեալ պարապմունքներից, պիտի զուարճանար նաև որսորդութեամբ, որսալով նապաստակ և այլ կենդանիներ, որոնցով լիքն էին Հայաստանի անտառներն ու լեռները։

Այս բոլորով ևս չէր կարող բաւականանալ հայ գեղջուկը։ Նա ունէր իւր ազատութեան և ուրախութեան ժամերը։ Իսկ այդ ժամերը ինչով պիտի անցկացնէր նա, եթէ ոչ զուարճանալով, երգեր յօրինելով և գինի խմելով։ Ուրեմն նա պիտի պարապէր նաև պատրաստելով խմիչքներ՝ գինի և վերոյիշեալ գարուց պատրաստուած գինին։ Բայց թէ ի՞նչ եղանակով էր պատրաստում նա այդ խմիչքները, թէև չը գիտենք, բայց շատ պարզ է, որ պիտի լինէր հասարակ, նախնական, պարզ եղանակով և գործիքներով։

Հայ գիւղացին չէր կարող անտես առնել նաև իւր զանազան կարիքների համար հարկաւոր բազմատեսակ իւղեր պատրաստելը, օրինակ՝ խոզի իւղ, կնճիթի իւղ, դառն նշից և բևեկնից մղուած իւղ, միւռոն և այլն։

Մի խօսքով հայը պիտի աշխատէր իւր երկիրն այնպէս մշակել, այնպիսի գործերով զբաղուել և օգտուել այնպիսի մեծ բարիքներից, որ օտարն իրաւամբ կարողանար հայի երկիրը անուանել բառի բուն իմաստով վերցրած լիութեան և առատութեան երկիր։

Կանայք էլ, արդեօք, բացի իրանց վերոյիշեալ տնային գործերից զբաղուում էին իրենց յիշեալ ծանր գործերով, ինչպիսին է օրինակ երկրագործութիւնը, խաշնարածութիւնը, օգտուում էին իրենց ամուսինների և եղբայրների աշխատանքներով. չը գիտենք։ Բայց դժուար չէ ենթադրել, որ ճիշտ այնպէս եղած լինէր, ինչպէս որ ներկայումս է, այսինքն՝ որքան որ իւր կանացի թոյլ ուժերն ու բազմատեսակ զբաղմունքներն էին ներում։

Ուրեմն, կարելի է ասել, որ շատ աննշան զանազանութեամբ նախնական դարերի հայոց գիւղն ու գիւղացին ըստ ամենայնի նոյնն է եղել և նոյն զբաղմունքներն է ունեցել, ինչ որ այժմս է և այժմս ունի։

Չը պէտք է աչքաթող անել մի շատ հետաքրքրական կէտ ևս, որ առանձին ուշադրութեամբ և առանձին զգուշութեամբ է յիշել Քսենոֆոնը։ Հայ գիւղացին ոչ միայն ընդունակ և կարող է եղել կռուել իւր թշնամիների հետ և նոցանից պաշտպանելու համար գիւղերը բերդերով և կամ տները աշտարակներով ամրացնել, այլ և նա ընդունակ և կարող է եղել կռուել նաև բնութեան դէմ։ Անշուշտ դորան նպաստում էր ինքը երկիրը, սորա դիրքն ու բնութիւնը։ Բնականաբար գիւղացին էլ բնական ճանապարհով և դարաւոր փորձով սովորում և գտնում էր բնութեան վտանգաւոր երևոյթների դէմ կռուելու հնարներն ու միջոցները։ Այսպէս օրինակ.—երբ Քսենոֆոնը գիւղից հեռանում էր, գիւղապետը նորան սովորեցնում է թէ պէտք է ճանապարհին ձիերի և գրաստների ոտներին քակներ կապել, երբ ստիպուած են ձիւնի միջով գնալ, որովհետև առանց քակների ձիերը մինչև փորները խրուում էին ձիւնի մէջ, որով արդէն այն ժամանակ ծածկուած էին Հայաստանի լեռներն ու դաշտերը։

Այս օրինակը մի գեղեցիկ փաստ է հայ գեղջուկի բնութեան դէմ կռուելու և հնարամտութեան ընդունակութեան։

IV. Հիւրասիրութեան մասին։

Անցնենք ամենակարևոր խնդրին՝ այսինքն հիւրասիրութեան։

Անշուշտ այն ժամանակուանից, երբ սկսել է կարդացուել Քսենոֆոնի երկը, մինչև այժմ թէ օտարազգիների և թէ հայերի մէջ տիրել, տարածուել և ընդունուել է այն կարծիքը, թէ Քսենոֆոնը մի առանձին բերկրանքով նկարագրում է հայ գիւղացիների այն մեծ հիւրասիրութիւնը, որ նոքա ցոյց են տուել յոյների զօրքերին։ Բայց իսկապէս, եթէ ուշի ուշով հետևելու լինենք Քսենոֆոնի երկի ընթացքին, առանձնապէս հայերի մասին պատմած կտորներին և թէ մանաւանդ այն մասին, ուր նկարագրուում է հիւրասիրութիւնը, կը տեսնենք, որ հայի սիրալիր հիւրասիրութիւնը այն մտքով, ինչով որ ընդունուած է, չի եղել եւ չի էլ կարող եղած լինել։ Միջանկեալ նկատենք, որ մեր նպատակը չէ ապացուցանել, թէ հայը երբէք հիւրասէր չի եղել և չէ։ Հայի հիւրասիրութիւնը արդէն մի այնպիսի անուրանալի ճշմարտութիւն է, որին նոյն իսկ հէնց մեր օրերումն էլ կարող ենք ականատես լինել, եթէ երբ և իցէ պատահելու լինենք հային իւր նուիրական օջախում, յարկի տակ։ Բայց կրկին ենք շեշտում, որ Քսենոֆոնը իւր երկում հիացմունքով նկարագրում է ոչ թէ հայերի հիւրասիրութիւնը, այլ իրենց՝ յոյների յոյներին ցոյց տուած հիւրասիրութիւնը։ Իսկ թէ ինչ հնարքներով ու միջոցներով է կատարուում այդ հիւրասիրութիւնը, կը տեսնենք ստորև։

Արդ՝ փորձենք փաստով ապացուցանել մեր ասածը, որի համար պէտք է ի նկատի ունենալ հետևեալ ոչ պակաս նշանաւոր նախորդ հանգամանքները։

Նախ՝ յոյները, ինչպէս տեսանք, որոշ պայմաններով և դաշինքով մտան Հայաստան, բայց նոքա իրանց վարմունքով գնացին բոլորովին հակառակ դաշինքի տրամագրութեան և մինչև իսկ յանդգնութիւն ունեցան իրենց դաշնակից Տիրիբազի վրանը կողոպտել, եղած արժէքաւոր իրերը վերցնել և սպասաւորներին գերել։ [9])

Երկրորդ՝ երբ արդէն յոյների յաւակնութիւնը այն աստիճանի էր հասել, որ նոքա անպատիժ՝ թագաւորի վրանն էին կողոպտում, ինչ պիտի եղած լինէր խեղճ հայ ժողովրդի դրու-

---

[9]). Թէպէտ կրկին հայի սիրալիր հիւրասիրութիւնը երևում է հէնց այն հանգամանքից, որ Տիրիբազը թոյլ է տալիս նոցա անցնել իւր երկրի միջով և օգտուել պաշարեղէնից, որքան որ իրենց հարկաւոր կը լինէր, սակայն և այնպէս սորանով ևս չի վերջանայ բուն խնդիրը, որ յետոյ է կատարուում։

թիւնը և նա ինչպէս պիտի կարողանար ազատուել վերահաս բռնութիւնից։ Եւ իրաք վերոյիշեալով ևս չբաւականանալով, ինչպէս տեսանք, Պոլիկրատէս Աթենացին իւր պնտագոտիներով յարձակւում է այն գիւղի վրայ, որ վիճակով Քսենոֆոնին էր ընկել և կալանաւորում ու գերում է բոլոր տներում եղողներին. նոյն իսկ գիւղապետին, սորա տղաներին, նորապսակ աղջկան ևայլն։ Արդ՝ ինչպէս պիտի վարուէր անպաշտպան հայ գիւղացին, եթէ ոչ յունաց այսչափ անօրէն վարմունքներից յետոյ նեղուէր, ճնշուէր ու գերուէր։ Եւ այսպէս գերութիւնը շարունակւում էր այն գիւղերում, ուր յոյներ կային։

Երրորդ՝ այսքանով էլ չեն բաւականանում յոյներն և հաւանականաբար՝ որպէս զի Պարսից արքայի ուշադրութիւնն ու բարկութիւնը հայերի վրայ դարձնելով հայերին աւելի դժուար ու անելանելի դրութեան մէջ դրած լինեն, խլում են և իրենց վերցնում այն քուռակները, որոնք մնում էին իբրև հարկ արքային։

Այս բոլորից յետոյ հարց ենք տալիս.—ինչ սրտով և ինչպէս կարող էր տանջուած, կողոպտուած ու գերուած հայ գիւղացին հիւրասիրել յոյներին։ Գուցէ առարկուի, թէ հօ բոլոր հայերը չէին այդ թշուառ դրութեան մէջ։ Սակայն կը պատասխանենք, այո, թէև բոլոր հայերը չէին այդ թշուառ դրութեան մէջ և բոլոր հայերն էլ չէին կարող լինել, բայց հիւրասիրութիւնը տեղի էր ունենում այն գիւղերում, ուր կային յոյներ և որոնց հայ բնակիչները կողոպտուած, գերուած ու տանջւում էին։

Իբրև ասուածների, այսինքն թէ յոյներն ամեն բան արել և անում էին ուժով և բռնութեամբ, ապացոյց և լրումն յիշենք այս ևս։ Երբ Քսենոֆոնը գերուած գիւղապետին ճաշի է հրաւիրում, խոստանում է վերջնիս վարձատրել առատ պաշարեղէնով և բաց թողնել իրեն իւր ընտանիքի բոլոր գերուած անդամների հետ միասին, եթէ միայն նա համաձայնէր լաւ առաջնորդ լինել մինչև որ յոյները դուրս գային հայոց երկրի սահմաններից։ Ուրեմն գիւղապետը բռնադատուած էր առաջնորդելու այն յոյներին, որոնք իւր և իւր հայազգիների տներն ու գիւղերը քար ու քանդ էին արել։ Շատ պարզ է, որ գերի գիւղապետը ի սէր իւր և իւրայինների չէր կարող և պէտք էլ չէր որ հակառակուէր Քսենոֆոնի և յոյների կամքին։ Ուստի իբրև վարձ իւր երախտիքների առաջարկւում է գիւղապետին ընտրել ինչ որ ինքն է ցանկանում։ Իսկ սա ինչ աւելի լաւ

քան կարող էր ցանկանալ և ընտրել, եթէ ոչ գէթ միայն իւր ազգական գերիներին ազատել յոյների ձեռից։ Սակայն այդ էլ կատարուում է, թէ ոչ, չի երևում Քսենոֆոնի պատմութեան շարունակութիւնից։

Զը պէտք է մոռանալ, որ այս բոլոր իրողութիւնները և փաստերն ինքը Քսենոֆոնն է տալիս մեզ։ Իսկ թէ ուրիշ ինչ աւելի անօրէն բաներ են արել, որ Քսենոֆոնը չի նկարագրում այլ ևս, անհնարին է ենթադրել։

Արդ՝ տեսնենք թէ ինչպէս է նկարագրում այդ հիւրասիրութիւնը ինքը պատմագիրը։ Փակագծի մէջ նկատենք, որ, ինչպէս վերևում էլ տեսանք, վիճակով իւրաքանչիւր զօրավար մի գիւղ իրեն էր վերցրել և իւր զինուորներով քաշուել այնտեղ։ Այժմ զօրավարներն իրենց զինուորների հետ միասին գնում են միմեանց տեսակցութեան և փոխադարձաբար իրարից հիւրասիրուում։

Նախ Քսենոֆոնը գնում է Խէյրիսոֆոսի մօտ։

Ահա այդ կտորը թարգմանութեամբ (Anabasis IV. 5, 30—31)։

«Հետևեալ օրը Քսենոֆոնն առնելով գիւղապետին գնաց Խէյրիսոֆոսի մօտ։ Ուր որ գիւղ էր մնում (ի հարկէ ուր յոյն զինուորներ կային) գնում էին իրանցից գիւղերում եղողների մօտ եւ Քսենոֆոնն ամէն տեղ (նոցա) գտնում էր բարեկեցիկ եւ քաջալերուած։ Եւ ոչ մի տեղից (յոյները) չէին թողնում (անշուշտ Քսենոֆոնին և նորա շքախմբին) մինչեւ որ մատուցանում էին նոցա կերակուրներից ամենալաւները։ Եւ ոչ մի տեղ չկար, որ միեւնոյն սեղանի վրայ (յոյները) չմատուցանէին ոչխարի, այծի, խոզի, հորթի եւ հաւի միս, շատ ցորենից եւ գարուց թխած հացով»։

Շատ պարզ է, որ այսքան առատ պաշարեղէնները յոյն զինուորները պիտի կարողանային ձեռք բերել միայն կողոպտուած հայ գիւղերից՝ գերուած գիւղացիների տներից։ Թէպէտ և վերոյիշեալ կտորը շատ քիչ չափով մութն է պատմուած, սակայն մտքից և քերականական կազմութիւնից շատ պարզ երևում է, որ ամբողջապէս վերաբերում է յոյներին եւ ոչ մի խօսք չկայ հայերի մասին։

Ուրեմն տեսնում ենք, որ, եթէ չափազանց չի լինի ասել, այդ սխալ եզրակացութեան յանգել են մարդիկ միմիայն այն պատճառով, որ ուշադրութիւն չեն դարձրել նախորդ դէպքերի պատմութեան և յիշեալ կտորի քերականական կազմութեան

ու մտքի վրայ։ Իսկ, եթէ ի նկատի ունենանք վերոյիշեալ բոլոր հանգամանքներն ու փաստերը և այս վերջին կտորը, այն ժամանակ մեզ համար միանգամայն պարզ կը լինի, որ յոյներն են յոյներին հիւրասիրողները և ոչ թէ հայերը—յոյներին։ Այսինքն՝ Քսենոֆոնը նկարագրում է, թէ ինչպէս է մի յոյն զօրավար իւր իշխանութեան տակ գտնուած հայ գիւղերից բռնութեամբ վերցրած կողոպուտով ու թալանով հիւրասիրում միւս յոյն զօրավարին և նորա շքախմբին։

Ափսոս, որ աւելի մանրամասնութիւններ չունենք այս խիստ հետաքրքրական խնդրի վերաբերեալ։

Սակայն և այնպէս չենք կարող մերժել հայի միշտ հիւրասէր ու պատրաստակամ հոգին։

ԿԵՍԱՐ

Հենրիկ Իբսէն

ԵՐԲ ՄԵՆՔ ՄԵՌԱԾՆԵՐՍ ՍԹԱՓՈՒԵՆՔ *)

Դրամատիքական էպիլոգ երեք արարուածով

ԵՐԿՐՈՐԴ ԴՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

(Լեռնային մի բուժարանի մօտերքը։ Տեսարանը ներկայացնում է լեռնային լճի ափին փռուած ընդարձակ ծառազուրկ սարահարթ։ Ջրի միւս ափին երևում են լեռնաշղթայի շարքեր, ձորակներում ձիւն։ Ետև դէպի ձախ, սեպաձև ժայռից երկու մասի բաժանուած, հոսում է մի աղբերակ, որի երկարութեամբ ընկած են քարեր, թփեր ու բուսականութիւն։ Ետև դէպի աջ գտնուում է մի բարձրավանդակ, գագաթին քարէ նստարանով։ Ամառ է, կէսօրից յետոյ, արևի մայր մտնելուց փոքր առաջ։ Սարահարթի մի կողմում խաղում, պարում, երգում են մի խումբ երեխաներ, քաղաքացու ու գիւղացու հագուստներով, որտեղից և տարածւում է զուարթ ծիծաղ։

Ռուբէկը մի շալ ուսերին ձգած, նստած է վերի նստարանի վրայ ու դիտում է խաղը։ Փոքր յետոյ սարահարթի ձախ կողմում, թփերի մէջ երևում է Մայան և ձեռքերը ճակատին դրած, աչքերը ստուերելով շրջահայում է։ Նա հագած է կարճ, բարձրացրած լոդիկ, ունի ճանապարհորդի թաղեայ գլխարկ, բարձր կօշիկներ և ձեռին մի երկար լեռնափայտ)։

Մայա. (Վերջապէս նկատում է Ռուբէկին ու կանչում)։ Հահահօօ...։ (Սարահարթով առաջ է գալիս, ձեռնափայտին յենուելով թռչում աղբերակը ու բարձրանում բլրակը)։

Մայա. (Հևալով)։ Ախ, ինչքան եմ վազվզել ու փնտռել քեզ։

Ռուբէկ. (Սառնասիրտ)։ Բուժարանից ես գալիս։

---

*) Լուսայ 5—6.

Մայա. Այո։

Ռուբէկ. (Նայում է հարևանցի)։ Ճաշի չէիր եկել։

Մայա. Մենք մեր ճաշը բացօդեայ վայելեցինք, երկուսս...

Ռուբէկ. «Երկուսս»։ Ի՞նչ երկուս։

Մայա. Ես—և այն տարօրինակ արջասպանը։ Էլ ո՞վ կլինէր։

Ռուբէկ. Ախ նա։

Մայա. Այո՛ նա. և մենք կամենում ենք առաւօտեան վաղ նորից բարձրանալ։

Ռուբէկ. Արջե՞ր որսալով։

Մայա. Ցիրաւի։

Ռուբէկ. Սկի՞ հետք գտե՞լ էք։

Մայա. (խորհուն)։ Խնդրեմ, մերկ բլրների վրայ արջ չի լինում։

Ռուբէկ. Հապա ո՞ւր։

Մայա. Խորքում։ Զառիվայրում—ուր անտառը անչափ խիտ է և սովորական քաղաքացիք ընդհանրապէս անցնել չեն կարող։

Ռուբէկ. Այնտե՞ղ էք կամենում ելնել առաւօտեան։

Մայա. (Մեկնում է կանաչի վրայով)։ Այդպէս ենք պայմանաւորուել։ Բայց թերևս հենց այս երեկոյ ելնենք։—Եթէ դու ընդդէմ չես։

Ռուբէկ. Ե՞ս։ Ամենևին—

Մայա. (Արագ)։ Լարսն էլ մեզ կուղեկցի շներով—այս էլ ասեմ։

Ռուբէկ. Ես սկի՞ չը հետաքրքրուեցի հարցնել պարոն Լարսի ու նրա շների մասին։ (Ընդհատելով)։ Բայց դու չէի՞ր կամենալ այստեղ շնորհքով նստել։

Մայա. (Յոգնած)։ Ոչ, շնորհակալ եմ։ Այսպէս հանգիստ պառկած եմ կանաչի վրայ։

Ռուբէկ. Ինչպէս տեսնում եմ յոգնած ես։

Մայա. (Խորը շնչելով)։ Հաւատացած եմ, որ շուտով կը յոգնեմ։

Ռուբէկ. Այդ դեռ յետոյ կը տեսնես, երբ մեծ ջանք գործ կը դնես։

Մայա. (Ննջող դռնով)։ Այո։ Ցանկանում եմ փոքր ինչ աչքերս խփել։

(Կարճ պաուզա)։

Մայա. (Ցանկարծ անհամբեր)։ Չէ, Ռուբէկ—չեմ հասկանում ինչպէս ես կարողանում երեխաների աղմուկը միշտ լսել և տեսնել նրանց այդ ցատկոտումները։

Ռուբէկ. Նրանց շարժուածքների մէջ որոշ մոմենտներում

ներդաշնակութիւն կայ—մի տեսակ երաժշտութիւն։ Եւ այդ սակաւ մոմենտներին սպասելը ինձ բաւականութիւն է պատճառում։

Մայա։ (Փոքր ինչ արհամարհական ժպտով)։ Իրաւ որ դու միշտ ու յաւէտ գեղարուեստագէտ ես։

Ռուբէկ. Եւ ցանկանում եմ այդպէս էլ միշտ մնալ։

Մայա. (Թաւալւում է մի կողմ և ետևը ամուսնուն շրջում)։ Նրա մէջ գեղարուեստագիտութեան ոչ մի հետք չը կայ։

Ռուբէկ. (Ուշադիր)։ Ո՞ւմ մէջ։

Մայա. (Քնոտ)։ Նու—միւսի մէջ։

Ռուբէկ. Արջասպանի։

Մայա. Այո։ Նրա մէջ գեղարուեստագիտութեան ոչ մի հետք չը կայ։

Ռուբէկ. (Ժպտով)։ Ոչ, երկինքը վկայ, դու իրաւացի ես։

Մայա. (Բուռն, առանց շարժուելու)։ Եւ ինչ ատելի է նա։ (Պոկում է մի փնջիկ խոտ ու դէն շպրտում)։ Այնպէս ատելի, այնպէս ատելի։

Ռուբէկ. Բայց և այնպէս դու սիրով ձգտում ես նրա հետ դրսում անցնել—որսի ելնել։

Մայա. Ես էլ չը գիտեմ։ (Շրջւում է դէպի նա)։ Դու ևս ատելի ես, Ռուբէկ։

Ռուբէկ. Նո՞ր ես նկատում։

Մայա. Ոչ, վաղուց գիտէի։

Ռուբէկ։ (Ուսերը թօթափելով։) Մարդ պառաւում է, տիկին Մայա, ծերանում։

Մայա։ Ես ամենևին այդպէս չեմ կարծում։ Սակայն քո հայեացքը կարծես թէ յոգնած է, ճնշուած։—Երբ դու բարեհաճում ես ինձ կողքից նայել։

Ռուբէկ։ Դու կարողացել ես այդ նկատել։

Մայա։ (Գլուխը տատանելով։) Քո աչքերը աւելի ու աւելի են այդ վատ արտայայտութիւնը ընդունում։ Կարծես դու իմ դէմ մի գաղտնի դիտաւորութիւն ունես։

Ռուբէկ։ Հա։ (Ուրախ, բայց լուրջ։) Արի ու նստիր ինձ մօտ, Մայա։ Փոքր ինչ զրուցենք։

Մայա։ (Կիսով չափ ուղղւում է։) Կարո՞ղ եմ քո ծնկներին նստել, ինչպէս նախկին տարիները։

Ռուբէկ։ Ո՛չ, այդ չի կարելի։ Հիւրանոցից մեզ կը տեսնեն։ Բայց դու կարող ես այստեղ նստել, նստարանի վրայ—ինձ մօտ։

Մայա։ Ո՛չ, շնորհակալ եմ, այդ դէպքում կը մնամ

այստեղ պառկած։ Ես այստեղից ես լաւ եմ լսում։ (Նայում է հարցական։) Նու, ինչի՞ մասին ես կամենում խօսել։

Ռուբէկ։ (Սկսում է ծանր։) Ինչ ես կարծում, ինչո՞ւ եմ ես այս ժամային ճանապարհորդութիւնը ձեռնարկել։

Մայա։ Շատ պատճառաբանութեամբ հանդերձ 'ի միջի այլոց ասում էիր, որ ինձ համար ես շատ լաւ կը լինի։ Բայց—

Ռուբէկ։ Բա՞յց—

Մայա։ Բայց այժմ այլ ես չեմ հաւատում, որ պատճառը այդ էր։

Ռուբէկ. Ա՞յլ—

Մայա. Այլ 'ի սէր այն գունատ տիկնոջ։

Ռուբէկ. Տիկին Սատովի՞։

Մայա. Այո, նրա պատճառով, որ մեզ հետապնդում է և երեկ երեկոյեան էլ այստեղ է ժամանել։

Ռուբէկ։ Նու, յետո՞յ։

Մայա. Դու նրան շատ լաւ ծանօթ ես եղել, նախ քան ինձ հետ ծանօթանալդ։

Ռուբէկ. Եւ կրկին մոռացել—վաղուց, նախ քան քեզ պատահելս։

Մայա. (Ուղիղ նստելով։) Դու այդպէս շուտ մոռանում ես, Ռուբէկ։

Ռուբէկ. (կարճ։) Այո՛, անասելի շուտ։ Երբ մոռանալ եմ կամենում։

Մայա. Նոյնպէս և մի կնոջ, որ քեզ իբրև մոռնալ է ծառայել։

Ռուբէկ. Երբ ես նրան այլ ես եր կար կարիք չ'ունեմ։

Մայա. Նոյնպէս և երբ նա քո առջև բոլորովին մերկացել է։

Ռուբէկ. Այդ ոչինչ չի նշանակում։ Գոնէ գեղարուեստագէտների համար։ (Այլ տոնով։) Մէկ էլ—եթէ հարցնել կարող եմ— ինչպէ՞ս կարող էի գուշակել, որ նա այստեղ է։

Մայա. Օ՛, դու կարող էիր նրա անունը ամառանոցի հիւրաթերթի մէջ կարդալ։ Կամ թէ մի այլ լրագրում։

Ռուբէկ. Բայց նրա այժմեան անունը ամենևին չը դիտէիմ կեանքում Սատով անուն չէի լսել։

Մայա. (Ցոգնած ձևանալով։) Նու, երևի դու մյլ պատճառով կամեցար ճանապարհորդել։

Ռուբէկ. (Լուրջ։) Այո՛, Մայա,—բոլորովին այլ պատճառով։ Եւ սրա մասին կարևոր է մեզ վերջապէս խօսել։

Մայա. (Զսպելով ծիծաղը։) Ինչ հանդիսաւոր տեսք ունես։

Ռուբէկ։ (Կասկածոտ կերպով զննելով։) Այո՛, թերևս աւելի հանդիսաւոր, քան այդ կարևոր է։

Մայա. Ինչպէ՞ս—

Ռուբէկ. Իսկ մեզ երկուսիս համար պէտք է որ այդ կարևոր լինի.

Մայա. Դու սկսում ես ինձ հետաքրքրել, Ռուբէկ.

Ռուբէկ. Հետաքրքրել միայն։ Եւ ոչ փոքր ինչ անհանգստացնել։

Մայա. (Գլուխը շարժելով։) Ամենևին։

Ռուբէկ. Լաւ։ Դէ լսիր։—Դու այնտեղ, Ներքև, ամառանոցում ասում էիր, որ ես վերջերս ջղային եմ դարձել։

Մայա. Այո և այդ ճիշտ էր։

Ռուբէկ. Իսկ ինչ պատճառով, ինչ ես կարծում։

Մայա. Ես ինչ գիտեմ։ (Արագ։) Գուցէ դու արդէն յագեցել ես ինձ հետ միասին յաւէտ կեանք վարելուց։

Ռուբէկ. Յաւէտ։ Աւելացրու խկոյն և մշտնջենական։

Մայա. Նու, ուրեմն ասենք ամենօրեայ միասին ապրուստից։ Մենք երկու աներեխայ մարդիկ չորս-հինգ տարի իրար հետ ենք անցրել միշտ, հազիւ մի ժամ իրարից զատ։— Միշտ երկուսս մեն-մենակ։

Ռուբէկ. (Հետաքրքրուած։) Նու, յետոյ։

Մայա. (Շեշտուն։) Դու հասարակական մարդ չես, Ռուբէկ։ Դու հաճոյքով գնում ես քո ճանապարհովը ու զբաղւում քո սեպհական շահերով։ Իսկ ես չեմ կարողանում ոչ մի անգամ կանոնաւոր կերպով խօսել քեզ հետ քո գործերի մասին— այդ գեղարուեստական հարցերի մասին։ (Ձեռքի մի շարժումով)։ Եւ Աստուած վկայ, այդ ինձ չի էլ հետաքրքրում։

Ռուբէկ. Այո, ուստի և մենք մեծ մասամբ նստում ենք վառարանի մօտ ու շատախօսում քո գործերից։

Մայա. Տէր Աստուած,—դրանք ինչ գործեր են որ։

Ռուբէկ. Թէկուզ չնչին, բայց և այնպէս։ Իսկ ժամանակը առանց այդ էլ անցնում է, Մայա։

Մայա. Այդ դէպքում դու իրաւացի ես։ Ժամանակը անցնում է և պատրաստւում քեզնից հրաժեշտ վերցնելու, Ռուբէկ։ Եւ այս է, որ քեզ անհանգիստ է անում։—

Ռուբէկ. (Գլխի տատանումներով)։ Եւ անհաստատ։—Այս աղքատ կեանքը հազիւ ես երկար տանել կարողանամ։

Մայա. (Կանգնում ու փոքր հեռուից դիտում է նրան)։ Կամենում ես ինձնից ազատուել, ասա պարզօրէն։

Ռուբէկ. Ի՞նչ արտայայտութիւն։ Քեզնից հեռանալ։

Մայա. Եթէ կամենում ես ինձնից ազատուել, կարող ես բոլորովին պարզ խօսել։ Եւ ես խկոյն կը կապեմ իմ կապոցը։

Ռուբէկ. (Անանկատելի ժպտով)։ Այդ հնչում է որպէս մի սպառնալիք, Մայա։

Մայա. Քեզ համար այդ հաւանօրէն սպառնալիք լինել չի կարող։

Ռուբէկ. (Բարձրանալով)։ Ոչ, յիրաւի ոչ։ (Փոքր յետոյ աւելացնում է)։ Մենք երկուսս անկարող ենք այլ ևս երկար միասին ապրել։

Մայա. Ուրեմն—

Ռուբէկ. Խնդրեմ, ոչ մի ուրեմն։ Մենք չենք կարող միասին ապրել, սակայն այդ չի նշանակում, թէ մեզ կարևոր է բաժանուել։

Մայա. (Արհամարհական ժպտով)։ Միայն փոքր ինչ բաժան ապրել, հա։

Ռուբէկ. Եւ ոչ մի անգամ։

Մայա. Նու, ասա—ուրիշ ի՞նչ ես կամենում անել։

Ռուբէկ. (Փոքր անհանգիստ)։ Ինչ ես այժմ այսքան սառտիկ ու ցաւալի կերպով թախծում եմ, այդ մի էակ է, որ ներքնապէս իրաւ որ ինձ աւելի մերձ է կանգնած։

Մայա. (Գրգռուած ընդհատում է)։ Միթէ։ Ես այդպէս չե՞մ, Ռուբէկ—

Ռուբէկ. Սխալ մի հասկացիր։ Ես պէտք է մի էակի հետ կենակցէի, որ միևնոյն ժամանակ ինձ լցնել, ամբողջացնել կարողանար, մէկ լինէր ինձ հետ իմ բոլոր ձեռնարկութիւնների ու ստեղծագործութիւնների մէջ։

Մայա. (Ծանր)։ Այո՛, այդպիսի բարձր պահանջներին բաւարարութիւն տալ անտարակոյս ես անընդունակ եմ։

Ռուբէկ. Այդ քեզ շատ դժնդակ կը լինէր, Մայա։

Մայա. (Եռանդուն) Նոյնպէս և ոչ մի ցանկութիւն։

Ռուբէկ. Ես այդ լաւ գիտեմ։ - Եւ քեզ հետ կապուելիս ես այդ օգնութեան մասին ամենևին չէի մտածում։

Մայա. (Նրան զննելով)։ Քո հայեացքում ես կարողանում եմ կարդալ, որ դու մէկի մասին մտածում ես։

Ռուբէկ. Հա։ Ես չը գիտէի, որ դու մտքեր կարդալ գիտես։ Ուրեմն դու իմ հայեացքում այդ տեսնո՞ւմ ես։

Մայա. Տեսնո՞ւմ։ Էհ, Ռուբէկ, ես քեզ ճանաչում եմ, շատ լաւ ճանաչում։

Ռուբէկ. Նու թերևս գիտես և ու՞մ մասին եմ մտածում։

Մայա. Յիրաւի։

Ռուբէկ. Նու խնդրեմ։

Մայա. Դու մտածում ես այն—այն մոդելի մասին, որ դու ունեցել ես այն—(Ցանկարծ թելը կորցնելով։) Գիտե՞ս, որ հիւրանոցում մարդիկ նրան ցնորուած էին համարում։

Ռուբէկ. Նա։ Իսկ ինչ են կարծում քո և արջասպանի մասին։

Մայա. Մեր խօսքը դրա մասին չէ։ (Շարունակելով ընդհատածը։) Ցամենայն դէպս դու մտածում ես այն գունատ տիկնոջ մասին։

Ռուբէկ. (Հաստատ։) Նրա մասին միայն և ոչ ուրիշի։— Երբ ես այլ ևս նրան կարիք չունէի,—ասենք բացի այդ նա ինքը ինձ թողեց—և անհետ կորաւ—

Մայա. Այն դէպքում դու ինձ իբրև մի տեսակ ապաւէն ես վերցրել։

Ռուբէկ. (Անակնած։) Ճիշտն ասած, համարեա այդպէս, իմ փոքրիկ Մայա։ Ես մէկ կամ մէկ ու կէս տարի միայնակ թափառելուց յետոյ, ձեռք մեկնեցի— վերջին անգամ—իմ աշխատանքին։ «Յարութեան օրը» աշխարհ եկաւ, ինձ համբաւ բերաւ—իսկ միւսներին բերկրանք։ (Աւելի տաք։) Սակայն ես չէի սիրում իմ երկը այլ ևս։ Եւ մարդկանց պակներից ու խնկարկումներից ես աւելի սիրով մութ անտառներ կը փախչէի։ (Նայում է նրան։) Նու, դու մտքեր գուշակող ես—կարող ես այժմ գուշակել, ինչ էր մնում ինձ անել։

Մայա. Պարոնների ու կանանց կենդանագիրներ շինել։

Ռուբէկ. (Գլխի տատանումներով։) Ըստ պատուէրի, այո։ Դիմակի տակ կենդանակերպ ծաղրանկարներով, որը ստանում էին ձրի—իբրև յաւելուած։ (Ժպտում է։) Սակայն իսկապէս, չէի կամենում ասել։

Մայա։ Այ՛լ։

Ռուբէկ. (Լուրջ։) Բոլոր այս գեղարուեստական հոչակը, այս գեղարուեստական գրաղմունքը, բոլորը, ինչ սրա հետ կապակցուած է—սկսեց ինձ հիմնապէս դատարկ, ունայն ու չնչին թուալ։

Մայա. Իսկ ինչ կը կամենայիր դրա փոխարէն։

Ռուբէկ։ Կեանք, Մայա։

Մայա. Կե՞անք։

Ռուբէկ. Այո, միթէ՞ գնահատելի չէ գեղեցկութեան մէջ, արևի ճառագայթների տակ կեանք ունենալ, քան մինչև վերջը տանջուել մի խոնաւ որջում կաւէ-զանգուածի ու քարէ-կաղապարի հետ։

Մայա. (Թեթև հառաչով։) Կատարեալ եմ կարծիքի համեմատ։

Ռուբէկ. Բացի այդ ես արդէն բաւական հարստացել էի՝ տատատութեան մէջ ու արևի հպարտ ճառագայթների տակ

ապրելու։ Ես կարողացայ Տաունիցէր լճի ափին մի վիլլա կառուցանել և քաղաքում մի պալատ։ Մնացածի մասին դեռ լռենք։

Մայա. (Ամուսնու տոնով։) Եւ 'ի վերջոյ միջոց էլ ունեցար ինձ ձեռք բերելու և բոլոր քո գանձը ինձ հետ կիսելու։

Ռուբէկ. (Կատակով։) Եւ չէ՞ կամենում միթէ, քեզ մի բարձր լեռ տանել ու աշխարհի բոլոր հրաշալիքը ցուցնել։

Մայա. (Հեղօրէն։) Թերևս դու ինձ բարձր լեռ ես տարել, Ռուբէկ, սակայն աշխարհի հրաշալիքները դեռ ցոյց չես տուել։

Ռուբէկ. (Թեթև զրգռուած։) Անբաւական ես դու, Մայա, անբաւական։ Բայց գիտե՞ս ամենից շատ ինչն է տխրալի։ Տեղեկութիւն ունե՞ս։

Մայա։ Երևի այն, որ դու կապուած ես ինձ հետ քո կեանքի ամբողջ ընթացքով։

Ռուբէկ. Ես չեմ ցանկանում այդ աստիճան անսիրտ արտայայտել։

Մայա. Սակայն իմաստը հաւանօրէն նոյնքան անսիրտ է։

Ռուբէկ. Դու ամենևին գաղափար չունես, ինչ բնաւորութիւն ունի գեղարուեստագէտ մարդը։

Մայա (Ժպտում ու գլուխը շարժում է։) Ես սկի իմ սեպհական ներքինի մասին գաղափար չունեմ։

Ռուբէկ. (Անվրդով։) Ես արագ եմ ապրում, Մայա։ Գեղարուեստագէտներիս համար միշտ այնպէս է, մեր ծանօթութեան այն մի զոյգ տարիների ընթացքում ես մի ամբողջ կեանք անցրի։ Ինձ նման մարդիկ չափաւոր յագեցման մէջ ոչ մի բաղդաւորութիւն չեն գտնում, ես համոզուեցի այս բանում հետզհետէ։ Ինձ և ինձ նմանների համար կեանքը այսպէս հասարակ չէ։ Ես պիտի անդադար աշխատեմ—երկի ետևից նոր երկ ստեղծեմ—մինչ իմ վերջին օրը։ Այդ իսկ պատճառով քեզ հետ երկար կենակցել չեմ կարող։—Առնուազն քեզ հետ միայնակ։

Մայա. (Հանգիստ։) Մի խօսքով այդ նշանակում է տաղտկալի՞ է քեզ ինձ հետ։

Ռուբէկ։ (Զայրացած։) Այո։ Տաղտկալի է այս կենակցութիւնը քեզ հետ, անարտայայտելի ու ձանձրալի։ Այժմ լսեցիր այդ։ (Զսպուելով։) Կոշտ, ատելի խօսքեր եմ ասում քեզ հա։ Ես այդ լաւ եմ համարում։ Իսկ դու ոչինչ չես կարող անել—ես այդ լաւ գիտեմ։ Ես, միմիայն ես եմ կերպարանափոխուել, (կիսով չափ ինքն իրան.)—և մի վերածնունդ կրել իմ սեպ-

հական կեանքի համար։

Մայա. (Ձեռները ժածուցելով։) Սակայն մենք ինչո՞ւ չենք կարող մեր ճանապարհը շարունակել։

Ռուբէկ. (Զարմացած նայում է։) Կը կամենայիք։

Մայա։ (Ուսերը թօթափելով։) Այո, եթէ այդ պէտք է—

Ռուբէկ. (Դրգռուած։) Սակայն այդ չը պէտք է լինի։ Կայ միայն մի ելք։

Մայա։ (Ձեռը շարժելով։) Այժմ դու նորից մտածում ես այն գունատ կնոջ մասին։

Ռուբէկ։ Այո, ճիշտն ասած, ես պէտք է անդադար նրա մասին մտածեմ։ Այն րոպէից, երբ նրան կրկին տեսայ։ (Մի քայլ մօտ։) Ես այժմ ցանկանում եմ սիրտս քեզ բանալ, Մայա։

Մայա. Նո՛ւ։

Ռուբէկ. (Զառնում է կրծքին։) Տեսնում ես այստեղ—ես սրա մէջ մի փոքրիկ կողպած արկղիկ ունեմ։ Իմ բոլոր քանդակագործները այստեղ են պահուած։ Երբ նա անյայտացաւ, կողպուած մնաց արկղը, որովհետև բանալին նրա մօտ էր, նա հետը տարել էր։ Դու, իմ փոքրիկ Մայա, բանալի չունէիր։ Ուստի և ամեն ինչ մնաց արկղի մէջ առանց գործադրուելու։ Անցնում են տարիներ, սակայն այդ կողպուած գանձը ձեռք բերել ես չեմ կարողանում։

Մայա։ (Նենգ ժպիտը ճնշելով։) Թոյլ տուր նրան նորից բանալու—

Ռուբէկ. (Չի հասկանում։) Մայա՞—

Մայա։ Նա հօ այժմ այստեղ է։ Եւ երևի այդ արկղիկի պատճառով է եկել։

Ռուբէկ։ Սրա մասին ոչ մի խօսք չի եղել նրա ներկայութեամբ։

Մայա։ (Նայում է անմեղ։) Բայց սիրելի Ռուբէկ—արժէ՞ մի այս տեսակ հասարակ բանի համար այսքան խօսել ու վիճել։

Ռուբէկ։ Դու այս համարում ես հասարա՞կ բան։

Մայա։ Անտարակոյս։ Ապրիր նրա հետ, որին կարիք ունես։ Ես կարող կը լինեմ ինձ ապաստան գտնել։

Ռուբէկ. Ո՞ւր։

Մայա։ (Անհոգ։) Նու, ինձ մնում է միայն վիլլա քաշուել, եթէ այդ կարևոր լինի։ Սակայն այդ կարևորը չէ, քանի որ քաղաքում,—մեր մեծ տանը երեքիս համար հօ տեղ կարող է լինել։

Ռուբէկ։ (Անհաստատ։) Իսկ դու կարծում ես այդպէս

երկաթը կը տեսի։

Մայա։ (Թեթև տոնով։) Տէ՛ր Աստուած,—այդ չի կարելի, այսպէս չի լինիլ։ Աւելի լաւ է ուրեմն այդ մասին այժմ գլուխ չը ճաքեցնել։

Ռուբէկ։ Իսկ եթէ այդպէս անկարելի լինի, Մայա,—այն ժամանակ ի՞նչ։

Մայա։ (Անհոգ։) Այդ դէպքում կը թողնենք իրար, բոլորովին կը բաժանուենք։ Ես դեռ կարող եմ աշխարհում ինձ համար մի տեղ գտնել, ուր ես ազատ կը լինեմ, ազատ, ազատ։ (Յանկարծ աչ ցոյց տալով։) Ահա, պարոն պրոֆեսոր, ահա նա։

Ռուբէկ։ (Շրջելով։) Ո՞ւր է։

Մայա։ Ահա այնտեղ։ Որպէս մարմարեայ արձան նա քայլում է այստեղ։

Ռուբէկ։ (Դիտում է ներքև, ձեռները աչքերի վերև։) Նա մարմնացած «յարութեան օրը» չէ՞։ (Ինքն իրան։) Եւ ես կարողացայ նրան յետ վանել—ստուերում թողնել։ Օ՛, ես խենթ։

Մայա։ Ինչի՞ մասին ես ակնարկում։

Ռուբէկ։ Ոչինչի։ Առնուազն ո՛չ քեզ հասկանալի։

(Իրենան մտնում է սարահարթը ձախ կողմից։ Խաղացող երեխաները նրան նկատելով, ընդառաջ են վազում ու շրջապատում նրան։ Նրանցից մի քանիսը արիասիրտ ու մտերիմ են, միւսները երկչոտ ու վախկոտ։ Իրենան խօսում է կամացուկ նրանց հետ և դէպի սանատորիա ուղարկում, որոնք վազում են մացառների միջով։ Իրենան կամենում է աղբերակի ափին փոքր հանգստանալ, մերձենում է լեռնապարսպին ու ձեռքը թաթաւում թափուող սառը ջրի հոսանքի մէջ։)

Մայա (Խզուած ձայնով։) Գնա ներքև նրա մօտ և խօսիր հետը, Ռուբէկ։

Ռուբէկ։ Իսկ ո՞ւր կերթաս դու։

Մայա։ (Նայում է նրան նշանակիչ։) Այսօրուանից ես կերթամ սեպհական ուղիով։ (Ի՞նչում է բլրակից, ձեռնափայտի օգնութեամբ ցատկում առուակը ու Իրենայի մօտ կանգ առնում։) Ռուբէկը սպասում է ձեզ վերև, յարգելի տիկին։

Իրենա։ Ի՞նչ է կամենում։

Մայա։ Դուք պէտք է օգնէք նրան մի կողմած արկղիկ բանալու։

Իրենա։ Արդեօք կարող եմ ես։

Մայա։ Նա կարծում է, որ դուք միայն կարող էք։

Իրենա։ Ուրեմն կը փորձեմ։

Մայա։ Այո՛ դուք պարտաւոր էք, յարգելի տիկին։ (Գնում է դէպի Սանատորիա։)

Ռուբէկ։ (Իջնում է Իրենայի մօտ ու մնում առուակի այս ափին կանգնած։)

Իրենա։ (Կարճ պառուզայից։) Միւսը ասում էր որ դու սպասում էիր ինձ։

Ռուբէկ։ Ես տարեց տարի քեզ սպասել եմ,—առանց այդ գիտակցելու։

Իրենա։ Ես չէի կարող գալ, Արնոլդ։ Ես անձնատուր էի մի երկար ու աներազ քնի։

Ռուբէկ։ Այժմ արթնացած ես, Իրենա։

Իրենա։ (Գլուխը շարժում է։) Այն ծանր, խոր քունը ես դեռ կրում եմ աչքերիս մէջ։

Ռուբէկ։ Դու կը տեսնես որ մեզ երկուսիս համար մութ և լոյս կը լինի։

Իրենա։ Ես այդ չեմ հաւատում։

Ռուբէկ (Շեշտուն։) Ես հաւատում եմ։ Ես գիտեմ։ Այժմ, երբ քեզ կրկին գտել եմ—

Իրենա։—Յարութիւն առած—

Ռուբէկ։—Եւ պայծառացած։

Իրենա։ Միայն յարութիւն առած, Արնոլդ։ Ո՛չ պայծառացած։

Ռուբէկ։ (Թափուող ջրի հոսանքը ձեռքով դէպի նա ուղղելով։) Ո՛ւր էիր ամբողջ օրը, Իրենա։

Իրենա։ (Խուսափելով թռչուելուց)։ Հեռո՛ւ, մահուան դաշտավայրում։

Ռուբէկ։ (Թողնելով խաղը։) Քո ընկերուհին այսօր քեզ հետ չէ։

Իրենա։ (Ժպտում է։) Բայց և այնպէս նա հետևում է ինձ աչքերով։

Ռուբէկ։ Այդ նա կարո՛ղ է։

Իրենա։ (Երկչոտ շրջահայելով։) Հաւատացած եղիր։ Ուր էլ գնամ, ուր էլ կանգնեմ, նա ինձ աչքից չի թողնիլ, (շշնջալով,) մինչև մի գեղեցիկ առաւօտ ես նրան կը մոռթեմ։

Ռուբէկ. Կամենո՞ւմ ես։

Իրենա։ Ամբողջ սրտով։ Երբ յարմար բոպէ գտնեմ։

Ռուբէկ։ Բայց ինչո՞ւ։

Իրենա։ Որովհետև նա ուրուական է։ (Գաղտնալից։) Երևակայիր, Արնոլդ։ Նա իմ ստուերն է դարձել ուղղակի։

Ռուբէկ. (Փորձում է հանգստացնել։) Նու, նու, —մենք բոլորս էլ ստուեր ունենք։

Իրենա։ Ես ինքս իմ սեպհական ստուերն եմ։ Չեմ հասկանում ինձ։

Ռուբէկ. (Ճնշուած։) Օ՛, ոչ, Իրենա, ես քեզ հասկանում եմ։ (Նստում է առուակի ափին քարի վրայ։ Իրենան յենուած ժայռին կանգնած է նրա ետև։)

Իրենա. (Փոքր պաուզայից։) Ինչ ես նստել այդտեղ ու աչքերդ ինձնից շրջում։

Ռուբէկ. (Կամաց, գլուխը շարժելով։) Ես քեզ չը պէտք է նայեմ, չէ։

Իրենա. Ինչու՞ այդպէս միանգամից։

Ռուբէկ. Քեզ տանջում է մի ստուեր, իսկ ինձ իմ խայթիչ զղջանքը։

Իրենա. (Ուրախ գոչիւնով ու թեթևացած։) Վերջապէս։

Ռուբէկ. (Ցատկում է։) Իրենա—ինչ կայ։

Իրենա. (Խոյս տալով։) Հանգիստ միայն, հանգիստ, հանգիստ։ (Խորը շնչում և որպէս բեռից ազատուած, խօսում է։) Այդպէս։ Այս անգամ ազատ եմ։—Այժմ մենք կարող ենք նստել ու զրուցել, որպէս առաջ,—կենդանի կեանքում։

Ռուբէկ. Օ՛, եթէ միայն այդ կրկին կարողանայինք։

Իրենա. Նստիր տեղդ, իսկ ես կը նստեմ քեզ մօտ։

(Ռուբէկ նստում է նախկին տեղը, իսկ Իրենան նրա մօտ, մի այլ քարի վրայ։)

Իրենա. (Փոքր լռութիւնից։) Ես դարձել եմ քեզ մօտ հեռաւոր երկրից, Արնոլդ։

Ռուբէկ. Այո՛, իսկապէս մի ճանապարհորդութիւնից, որ անվերջ երկար էր։

Իրենա. Յետ եմ դարձել իմ տիրոջ, իմ հրամանատուի մօտ—

Ռուբէկ։ Դարձել ես տուն Իրենա,—և մենք տանն ենք։

Իրենա։ Սպասել ես ինձ ամբողջ օրերով։

Ռուբէկ։ Ինչպէս կարող էի։

Իրենա։ (Թեք հայեացքով։) Ո՞չ,—ինչպէս կարող էիր։ Դու ոչինչ չը գիտէիր։

Ռուբէկ. Իսկապէս այն ժամանակ դու ինձ ուրիշի պատճառով չես թողել։

Իրենա։ Չէիր կարող միթէ քո պատճառով լինել, Արնոլդ։

Ռուբէկ։ (Անհաստատ նրան է նայում։) Քեզ չեմ հասկանում—

Իրենա։ Երբ ես հոգով ու մարմնով քեզ ծառայում էի — և արձանը պատրաստ էր, — մեր երեխան, ինչպես դու կոչում էիր — այն ժամանակ ես իմ ամենաթանկագին զոհը դրի քո ոտքերի առջև — և ինձ յաւէտ ոչնչացրի։

Ռուբէկ։ (Գլուխը շարժելով։) Որով և իմ կեանքը ամայի դարձրիր։

Իրենա։ (Վառ։) Ես այդ ցանկանում էի։ Քեզ այլ ես ոչինչ չը պիտի յաջողուէր, ոչինչ — երբ արդէն պատրաստել էիր մեր միակ երեխան։

Ռուբէկ։ Նախանձում էիր։

Իրենա։ (Սառը։) Աւելի շուտ ատում։

Ռուբէկ։ Ատում, Իրենա։

Իրենա։ (Տաք։) Այո, քեզ — այն գեղարուեստագէտին, որ այնպէս անփոյթ, անհոգ կերպով մի տաքարիւն մարմին վերցրեց, մի ջահել մարդու կեանք և նրա հոգին յափշտակեց, նրանից մի գեղարուեստաերկ ստեղծելու։

Ռուբէկ։ Այդ բիրտ ես լսում։ — Միթէ ինքդ անհուն ցանկութեամբ ու ամենասուրբ տենչանքով չես մասնակցում իմ աշխատանքին։ Մի աշխատանք, որի մասնակից էինք ամեն առաւ տ ջերմեռանդութեամբ։

Իրենա։ Ես կամենում եմ քեզ մի բան ասել, Արնոլդ։

Ռուբէկ։ Նու։

Իրենա։ Քո գեղարուեստը ես երբէք չեմ սիրել, նախ քան քեզ ծանօթանալը։ — Եւ ոչ էլ յետոյ։

Ռուբէկ։ Սակայն գեղարուեստագէտին, Իրենա։

Իրենա։ Գեղարուեստագէտին այո։

Ռուբէկ։ Նոյնպէս և իմ միջի գեղարուեստագէտին։

Իրենա։ Հենց նրան։ Երբ ես կատարեալ մերկ կանգնում էի այնտեղ քո առջև, ատում էի քեզ, Արնոլդ —

Ռուբէկ։ (Վառ։) Ո՛չ, Իրենա։ Այդ ճիշտ չէ։

Իրենա։ Ատում էի քեզ, որովհետև դու կարող անում էի անշարժ մնալ։

Ռուբէկ։ (Ծիծաղում է։) Անշարժ։ Կարծում ես։

Իրենա։ Կամ առնուազն կատարեալ անձնիշխան։ Որովհետև դու գեղարուեստագէտ էիր, միայն գեղարուեստագէտ և ոչ մարդ։ (Տաք ու սրտանց։) Սակայն ես սիրում էի արձանը, թաց ու կենդանի տոնի մէջ, — ինչքան նա հում տձև զանգուածից վեր էր յաղթանակում, որպէս մարդու մի ոգեշունչ երեխայ — և նա մեր ստեղծածն էր, մեր երեխան։ Իմ և քո։

Ռուբէկ։ Իրապէս ու հոգով նա այդպէս էր։

Իրենա։ Տես Արնոլդ, այդ երեխայի պատճառով եմ ես այս երկար ուխտագնացութեանը ձեռնարկել։

Ռուբէկ։ (Յանկարծ ուշադիր։) Այդ մարմարեայ պատկերի՞ պատճառով։

Իրենա։ Անուանիր ինչպէս կամենում ես։ Ես կոչում եմ մեր երեխան։

Ռուբէկ։ (Անհանգիստ։) Եւ կամենում ես տեսնե՞լ։ Պատրաստ։ ,,Սառը'' մարմարը, ինչպէս դու միշտ ասում էիր։ (Արագ։) Չը գիտես մի՞թէ, որ նա այժմ մի մեծ մուզէումի մէջ է գտնւում։

Իրենա։ Լսածներից։

Ռուբէկ։ Իսկ մուզէները քեզ գարշելի են թւում։ Դու նրանց միշտ գերեզման էիր կոչում։

Իրենա։ Ես կամենում եմ մի ուխտագնացութիւն անել այնտեղ, ուր իմ հոգին ու իմ երեխան թաղուած է։

Ռուբէկ։ (Անհանգիստ ու երկիւղած։) Դու երբէք չը պիտի տեսնես այն։ Լսո՞ւմ ես, Իրենա։ Ես թախանձում եմ։ Երբէք, երբէք։

Իրենա։ Կարծում ես թերևս ես մի անգամ ևս կը մեռնեմ։

Ռուբէկ։ Ես ինքս էլ չը գիտեմ ինչ եմ կարծում։ — Ի՞նչ կարող էի կարծել, որ դու այդպէս անբաժան կերպով կապուած ես այդ նկարի հետ։ Երբ ինձ թողեցիր—նախ քան լիակատար.

Իրենա։ Նա կատարեալ կերպով վերջացած էր։ Ուստի և ես կարող էի հանգիստ հեռանալ—և քեզ մենակ թողնել։

Ռուբեկ։ (Արմունկները ծնկներին է յենում և ձեռներով աչքերը ծածկում։) Նա դեռ այն չէր, ինչ լեռոյ պիտի լինէր։

Իրենա։ (Արագ ու աննկատելի հանում է կրծքի տակից մի բարակ ու սուր դանակ ու բորբոք շշնչում։) Արնոլդ,—մեր երեխային որև է ցաւ ես պատճառել։

Ռուբէկ։ (Խուսափելով։) Ցաւ։ — Ի՞նչ ես հասկանում այդ մտքի տակ։

Իրենա։ (Շնչասպառ։) Ասա շուտով, ինչ ես արել մեր երեխայի հետ։

Ռուբէկ։ Կասեմ, երբ դու հանգիստ նստես ու ինձ լսես։

Իրենա։ (Թագցնում է դանակը։) Կամենում եմ—կամենում եմ հանգիստ լսել, եթէ միայն այդ կարող է մի մայր, երբ...։

Ռուբէկ։ (Ընդհատելով։) Եւ ապա մի նայիր ինձ, երբ ես պատմում եմ։

Իրենա։ (Նստում է նրա ետև քարի վրայ։) Ահա նստում եմ այստեղ, քո ետև։—Միայն թէ սկսիր։

Ռուբէկ։ (Ձեռները վերցնում է աչքերից ու դիտում առջևը։) Երբ քեզ գտայ, այն բոպէից այլ ևս ինձ պարզ էր, ինչպէս պէտք է քեզնից իմ կեանքի աշխատանքը սկիզբ առնէ։

Իրենա։ «Յարութեան օր» էիր կոչում դու այդ երկը։ Ես կոչում եմ «մեր երեխան»։

Ռուբէկ։ Ես այն ժամանակ դեռ ջահել էի, առանց որևէ փորձառութեան, կարծում էի յարութիւնը ամենալաւ ու սքանչելի կերպով կարող է ներկայացնել միայն մի դեռատի, անարատ կին—որին կեանքը դեռ չէ սրբապղծել,—ազատ է որև է բծից կամ աղտից։

Իրենա։ (Արագ։) Հա,—այդպէ՞ս եմ պատկերացած ես այն երկի մէջ։

Ռուբէկ։ Իրօք ոչ ամբողջապէս, Իրենա։

Իրենա։ (Լարուած։) Ո՞չ ամբողջապէս։ Ո՞չ այնպէս, ինչպէս ես քո առջև կանգնած էի։

Ռուբէկ։ (Պատասխանից խուսափելով։) Հետևեալ տարիների ընթացքում ես խելացի դարձայ։ «Յարութեան օրը» իմ երևակայութեան մէջ սկսեց աւելի աճել, աւելի բովանդակիչ դառնալ և ես կամեցայ նոր բաներ աւելացնել։ Սակայն պատուանդանը, որի վրայ միմիայն քո երկար նկարն էր կանգնած, աւել տեղ չունէր։

Իրենա։ (Դիմում է դանակին, ապա նորից թողնում։) Նոր ի՞նչ ես աւելացրել։ Ասա։

Ռուբէկ։ Ինչ շրջապատում իմ սեպհական աչքերով տեսնում էի։ Ես կամենում էի այդ ամենը նկարի մէջ ունենալ։ Այլ կերպ չէի կարող, Իրենա։ Ես ընդարձակեցի պատուանդանը, այնպէս որ նա այժմ մեծ ու ազատ էր։ Նրա վրայ դրի ուռած ու ճեղքուած երկրի մի կտոր, որի խորշից դուրս էին սողում խորհրդաւոր կենդանակերպ մարդիկ—կանայք ու տղամարդիկ—ինչպէս որ կեանքից գիտէի։

Իրենա։ (Շնչասպառ լարուած։) Իսկ ամբոխի մէջ պայծառ ուրախութեամբ դեռատի կո՞յսն է կանգնած։ Չէ՞, Արնոլդ։

Ռուբէկ։ Ո՞չ բոլորովին մէջ տեղը։ Ես ստիպուած էի արձանը յետ քաշել—համօրէն ներդաշնակութիւն պահպանելու համար, այլապէս շատ էր աչքի ընկնում։

Իրենա։ Սակայն պայծառ հայեացքը դեռ շողո՞ւմ է իմ դէմքին։

Ռուբէկ։ Ցիրաւի, Իրենա։ Գոնէ որոշ չափով։ Թերևս

փոքր ինչ մթագին, ինչպէս իմ նոր իդէան պահանջում էր։

Իրենա։ (Կանգնում է։) Այդ նկարը արտայայտում է կեանքը այնպէս, ինչպէս դու այդ տեսնում ես այժմ, Արնոլդ։

Ռուբէկ։ Այո՛, արդար է։

Իրենա։ Եւ այդ նկարում դու ինձ մի փոքր գունատ ես դարձրել, իբրև ետևի նկար—մի գրուպպայի մէջ կանգնած։ (Հանում է դանակը։)

Ռուբէկ։ Ո՛չ ետև, այլ աւելի շատ մէջ տեղը—կամ թէ մօտաւորապէս։

Իրենա։ (Շնչում է։) Այժմ դու ինքդ կարդացիր քո դատավճիռը։ (Կամենում է խրել։)

Ռուբէկ։ (Շրջում, նայում է նրան։) Իմ դատավճիռը։

Իրենա։ (Թագցնում է դանակը և խօսում խուլ, որպէս տանջանքներից։) Իմ ամբողջ հոգին—դու և ես—մենք, մենք, մենք և մեր երեխան այդ մենակեաց կերպարանքի մէջ էինք։

Ռուբէկ։ (Սրբում է ճակատի քրտինքը։) Բայց լսիր և նոյնպէս ինչպէս եմ ես ինձ ներկայացրել այդ գրուպպայի մէջ։ Աղբիւրակից փոքր հեռու, ինչպէս այստեղ, նստած է մի յանցապարտ մարդ, որ չի կարողացել երկրի կեղևից ամբողջովին դուրս լինել։ Ես այդ անուանում եմ կորցրած կեանքի ստրջանք։ Նա մատերը թաւալուող ջրի մէջ է սուզում մաքրելու—և տանջում, գալարուում է այն մտքի տակ, որ այդ նրան չի յաջողուել։ Նա չի կարող յաւիտեանս ազատուել, ապրել ու յարութիւն առնել։ Նա յաւէտ կը մնայ իր այդ գեհենի մէջ։

Իրենա։ (Կոշտ ու սառը։) Բանաստեղծ։

Ռուբէկ։ Ինչո՞ւ բանաստեղծ։

Իրենա։ Որովհետև դու անոյժ ու անկամք ես և քո ձեռնարկութիւնների ու մտքերի համար կատարեալ արձակ։ Սկզբում սպանեցիր դու իմ հոգին,—ապա ձևակերպում ես ինքդ քեզ զղջանքի, ստրջանքի ու ինքնամբաստանութեան մէջ (ծիծաղում է) և կարծում ես թէ դրանով ամեն ինչ լրացաւ։

Ռուբէկ։ (Խրոխտ։) Ես գեղարուեստագէտ եմ, Իրենա—և չեմ ամաչում մի քանի թուլութեանցս համար, քանի որ գեղարուեստագէտ եմ ծնուած, տեսնում ես և ուրիշ ոչինչ էլ չէի կարող լինել, բացի գեղարուեստագէտից։

Իրենա։ (Նայում է նենգ ժպտով ու խօսում քաղցր։) Բանաստեղծ ես դու, Արնոլդ։ (Ձեռը կամացուկ քսում է նրա մազերին։) Իսկ դու ծեր, սիրելի մեծ—երեխայ այդ չես տեսնում։

Ռուբէկ։ (Տխուր։) Ինչո՞ւ յարատև ինձ բանաստեղծ ես կոչում։

Իրենա։ (Դիտուն։) Որովհետև այդ խօսքի մէջ մի արդարացումն կայ, բարեկամս։ Մի թողութիւն - որ բոլոր թողութեանց վրայ իր քօղն է տարածում։ (Հանկարծ այլ տոնով։) Բայց ես այն ժամանակ մարդ էի։ Մի կեանք պէտք է ունենայի, մի ճակատագիր պէտք է կրէի։ Տեսս այս ամենը թողեցի, դէն ձգեցի միայն քեզ հպատակուելու։—Օ՜, այդ մի ինքնապանութիւն էր. մահուան մի յանցանք ինքս իմ դէմ։ (Կէս շշնչուն։) Իսկ այս յանցանքը քաւել ես չեմ կարող։ (Նստում է Ռուբէկի մերձ առուակի ափին, աչքերով հետևում նրան ու ցնդուածի պէս փետում թփերի ծաղիկները։) Ես պէտք է երեխաներ ծնէի։ Շատ երեխաներ։ Իսկական երեխաներ։ Ո՛չ այնպիսիները որոնք գերեզմաններում պահուէին։ Այդ կը լինէր իմ կոչումը։ Երբէք չը պէտք է քեզ ծառայէի քեզ, բանաստեղծիդ։

Ռուբէկ։ Լաւ ժամանակներ էին, Իրենա, հրաշալի ժամանակներ, երբ յիշում եմ—

Իրենա։ (Նայում է քնքոյշ հայեացքով։) Դիտե՞ս ինչ խօսք ասացիր դու այն ժամանակ, երբ պատրաստ էիր, պատրաստ ինձ և մեր երեխայի հետ։ (Թեքւում է դէպի նա։) Յիշո՞ւմ ես այն փոքրիկ խօսքը, Արնոլդ։

Ռուբէկ։ (Նայում է հարցական։) Միթէ՞ այն ժամանակ ես գործ եմ ածել մի այնպիսի խօսք, որ դու դեռ յիշել կարողանում ես։

Իրենա։ Այո՛։ Չե՞ս յիշում այլ ևս։

Ռուբէկ։ (Գլուխը շարժում է։) Ո՛չ, իսկապէս ոչ։ Գոնէ այժմ։

Իրենա։ Դու վերցրիր իմ երկու ձեռները, սեղմեցիր բորբոք կերպով, այն ինչ ես շնչասպառ սպասում էի քո առջև։ Ապա ասացիր՝—ամբողջ սրտով շնորհակալ եմ քեզ, Իրենա։ Սա մի յաղթալից էպիզոդ էր ինձ համար։

Ռուբէկ. (Տարակուսական։) Էպիզո՞դ ասացի։ Ուրիշ անգամ այդ խօսքը գործ չեմ ածում։

Իրենա. Այո՛, էպիզոդ ասացիր։

Ռուբէկ. (Հաճելի հանդարտութեամբ։) Իսկապէս այդ մի էպիզոդ էլ էր։

Իրենա. (Կարճ։) Այդ խօսքի համար թողեցի քեզ։

Ռուբէկ. Ամեն ինչ դու քո օրտին շատ մօտ ես ընդունում, Իրենա։

Իրենա. (Սրբելով ճակատը։) Թերևս դու իրաւացի ես։ Թօթափենք մեզնից ամեն մաղձ ու ծանրութիւն։ (Փետրում է մի վայրի վարդի տերևներ ու առուակը նետում։) Նայիր, Արնոլդ։ Ահա լողում են մեր թռչունները։

Ռուբէկ. Ի՞նչ թռչուններ։

Իրենա. Կարմրաթևիկները. չե՞ս տեսնում։ Վարդագոյն կարմրաթևիկները։

Ռուբէկ. Նրանք չեն լողում, այլ տարուում են ջրի հոսանքից։

Իրենա. Ուրեմն նրանք որորներ են (Lapus)։

Ռուբէկ. Կարմիր կտուցներով, այո։ (Պոկում է մեծ մեծ տերևներ ու առուակը նետում։) Այժմ նրանց ետևից ուղարկում եմ իմ շոգենաւերը։

Իրենա. Միայն առանց որսորդների։

Ռուբէկ. Առանց որսորդների։ (Ծպտում է։) Յիշում ես այն ամառը, երբ նստած էինք գիւղական խրճիթների առջև, Տաունիտցէր լճի ափին։

Իրենա. Շաբաթ երեկոյեան, երբ պրծելէինք շաբաթուայ աշխատանքից—

Ռուբէկ.—և երկաթուղիով այնտեղ էինք եկել կիւրակին դրսում անցնելու —

Իրենա. (Ատելութեամբ լի աչքերով։) Այդ մի էպիզոդ էր, Արնոլդ։

Ռուբէկ. (Իբր թէ չը լսելով։) Այնտեղ ես առուակում լողալու թռչուններ էիր բաց թողնում. ջլաշուշաններ։

Իրենա. Սպիտակ կարապներ էին նրանք։

Ռուբէկ. Կարապներ, այո։ Եւ ես դեռ յիշում եմ, ինչպէս մի մեծ, անհարթ թերթ էի կպցրել նրանցից մէկին։ Թրթռնջուկի թերթ էր այն —

Իրենա. Այդպէս կատարեալ Լոհենգրինի նաւակն էր դարձել—կարապով հանդերձ։

Ռուբէկ. Ի՞նչ սիրով խաղում էիր դու, Իրենա։

Իրենա. Մենք յաճախ այդպէս խաղում էինք։

Ռուբէկ. Կարծում եմ ամեն կիւրակի—ամբողջ ամառուայ ընթացքում,

Իրենա. Դու ասում էիր, ես կարապն եմ և քաշում եմ քո նաւակը։

Ռուբէկ. Հմ։ Այո։ (Խաղով զբաղուած։) Տես որորները ինչպէս ջրի հոսանքով ներքև են լողում։

Իրենա. Իսկ քո նաւերը ամեն ինչ ցաւաք են նետում։

Ռուբէկ. (Աւելի շատ տերևներ թափելով։) Ես դեռ նաւերի պաշար ունեմ։ (Դիտում է տերևներին, մի քանի թերթիկներ ազատում և փոքր պաուզայից ասում։) Դու Իրենա, Տաունիտցէր լճի ափին այն գիւղացու տնակը ես գնել եմ։

Իրենա. Հա, այժմ քո՞նն է։ Դու յաճախ էիր ասում, թէ հենց որ միջոց ունեցար իսկոյն կը գնես։

Ռուբէկ. Յետոյ միջոց ես բաւական ունէի և գնեցի այդ տնակը։

Իրենա. (Նայում է խէթ։) Այժմ այնտե՞ղ ես ապրում,— մեր հին տանը։

Ռուբէկ. Ո՛չ, տնակը վաղուց քանդել եմ տուել և կառուցել մի նոր հիանալի ու յարմար ամարանոց (վիլլա) շուրջն էլ պարկ։ Առհասարակ ամառը այնտեղ ենք անցնում մենք—ես։

Իրենա։ Դու և մի՞սը դուք երկուսդ այժմ միշտ այնտեղ էք լինում։

Ռուբէկ. (Փոքր համարձակ։) Այո, եթէ մենք,—ես և կինս—չենք ճանապարհորդում ինչպէս այս տարի։

Իրենա. (Ծռուած հայեացքով։) Լաւ կեանք էր Տաունիտցէր լճի ափին։

Ռուբէկ. Բայց և այնպէս, Իրենա —

Իրենա. Բայց և այնպէս այդ ամբողջ սիրուն կեանքը մենք անտես արինք։

Ռուբէկ. (Կամաց ու ազդուած։) Այժմ զղջալ ուշ է։

Իրենա. (Զի պատասխանում, մնում է փոքր լուռ, ապա նայում հեռուն։) Տես, Արնոլդ։ Ահա արևը մայր է մտնում։ Տես ինչպէս դաշտը նրա վերջին ճառագայթներից կարմիր ներկուել է։

Ռուբէկ. (Նայում է։) Վաղուց է ինչ լեռնային երկրում արևի մուտք չեմ տեսել։

Իրենա. Եւ ոչ էլ արևի ելք։

Ռուբէկ. Արևի ելք կարծեմ ես դեռ երբէք չեմ տեսել։

Իրենա. (Խորասուզուած ժպտում է։) Ես մի անգամ արևի մի սքանչելի ելք եմ տեսել։

Ռուբէկ. Հա։ Որտե՞ղ։

Իրենա։ Բարձր, բարձր, մի սարսափելի անդունդի ափին։ Դու ինձ վերև հրապուրեցիր և խոստացար աշխարհքի հրաշալիքները ցոյց տալ, եթէ—

Ռուբէկ. Եթէ։—Նո՛ւ։

Իրենա. Ես հաւատացի ու հետևեցի քեզ։ Ապա այնտեղ ես

ծունկ իջայ, աղօթեցի ու ծառայեցի քեզ։ (Մի բոպէ լռում է, ապա կամաց։) Այնտեղ ահա, արևի մի ելք տեսայ։

Ռուբէկ. (Խուսափելով։) Չէ՞ իր ցանկալ մեզ հետ վիլլա գալ ու մեզ հետ ապրել։

Իրենա. (Արհամարհական ժպտով։) Քեզ ու միւսի հետ միասի՞ն։

Ռուբէկ. (Շեշտելով։) Ինձ հետ միասին—որպէս նախկին օրերին։ Որպէս զի բացուեն իմ ներսը կողպուած բոլոր դռները։ Ձեռ կամենում, Իրենա։

Իրենա. (գլուխը շարժելով։) Քո ներքինի բանալին այլ ևս չունեմ ես, Արնոլդ։

Ռուբէկ. Այդ բանալին դու ունես, միմիայն դու։ (Աղաչական։) Օգնիր ինձ նորից ապրելու։

Իրենա. (Անշարժ։) Դատարկ երազներ։ Ունայն-անկենդան երազներ։ Մեր կենակցման այլ ևս ոչ մի յարութիւն չի հեռեւիլ։

Ռուբէկ. Թող գոնէ շարունակենք մեր խաղը։

Իրենա. Այո՛, խաղալ, միայն խաղալ։

(Նստում են, փետրում ծաղիկների թերթիկները ու առուակներում։ Խորքից, դէպի ձախ, երևում են Ուլֆհայմ ու Մայա, որսորդական պատրաստութեամբ։ Ետևից գալիս է Լարսը, ծառան, շների ոհմակով, որ անցնում է դէպի աջ։)

Ռուբէկ. (Նկատելով նրանց։) Ահա փոքրիկ Մայան արջասպանի հետ երևում է։

Իրենա. Քո Մայան։

Ռուբէկ. Կամ թէ նրանը։

Մայա. (Փոքր յետոյ նկատում է երկուսին։) Բարի գիշեր, Ռուբէկ։ Երազիր իմ մասին։ Այժմ գնում ենք արկածախնդրութեան։

Ռուբէկ. (Ցեռ կանչելով։) Ի՞նչ տեսակ արկածախնդրութեան։

Մայա. (Մերձենալով։) Ես այժմ ամենից առաջ ապրել եմ կամենում միայն։

Ռուբէկ. (Հեգնական։) Նո՛ւ, դուն էլ, փոքրիկ Մայա։

Մայա. Այո՛։ Բացի այդ ես կազմել եմ հետևեալ ոտանաւորը՝ (երգում ու ցնծում է)

Ես ազատ եմ, ես ազատ։
Բանտի դաժան կապանքից,
Որպէս արձակ մի թռչուն,
Ես այլ ևս ազատ եմ։

Այո։ Ես այժմ կարծում եմ, որ վերջապէս արթնել եմ։

Ռուբէկ. Այդպէս է թւում։

Մայա. (Շնչում է ամբողջ թոքերով։) Ա՛հ—ի՞նչ երկնային թեթեւութիւն։

Ուլֆհայմ. (Հեռուից։) Սատանան տանէ ձեր ցանկութիւնը. կամենում էք մեզ անյաջողութի՞ւն հմայել։ Զէք տեսնում, որ որսի ենք գնում—

Ռուբէկ. Ի՞նչ կը բերես ինձ համար որսից, Մայա։

Մայա. Դու ինձնից ձեւակերպելու համար մի գիշատիչ թռչուն կը ստանաս։ Ես մէկին թեւաւոր կանեմ։

Ռուբէկ. (Դառն հեգնով։) Այո՛, մէկին թեւաւոր կանես սխալմամբ—այդ քեզ յատուկ է։

Մայա. Իմ ապագան թողէք ինձ։ (Զարհուրանքի ծիծաղով։) Մնաս բարև—ցանկանում եմ քեզ մի սիրուն, հանգիստ ամառային գիշեր.

Ռուբէկ. (Զուարթ։) Շնորհակալ եմ։ Իսկ աշխարհքի ամեն անբախտութիւն ձեզ և ձեր որսի վրայ։

Ուլֆհայմ. (Ծիծաղում է։) Բռավո՛, այդ մի ցանկութիւն է, որպիսին անհրաժեշտ է։

Մայա. (Ծիծաղով։) Անչափ շնորհակալութիւն, Ռուբէկ, անչափ շնորհակալութիւն։

(Մայա և Ուլֆհայմ գնում են դէպի աջ սարահարթի վրայով։)

Ռուբէկ. (Փոքր պաուզայից։) Ամառային գիշեր լեռներում։ Այո՛, այս է կեանքը։

Իրենա. (Ցանկարծ, աչքերի վայրենի արտայայտութեամբ։) Ցանկանո՞ւմ ես մի այդպիսի ամառային գիշեր-ինձ հետ։

Ռուբէկ. (Ձեռները տարածելով։) Այո՛, այո՛։-Արի։

Իրենա. Իմ սիրած տէր ու հրամանատար։

Ռուբէկ. Օ՛, Իրենա։

Իրենա։ (Ժպտում ու սեղմւում է նրա կրծքին։ Կերկեր։) Ա՜խ մի՞այն մի էպիզոդ կը լինի—(արագ շշնչելով։) Լու։ Մի շրջահայիր, Արնոլդ։

Ռուբէկ։ (Շշնչելով։) Ի՞նչ կայ։

Իրենա։ Մի անշարժ հայեացք դիտում է ինձ։

Ռուբէկ։ (Ակամայ շրջւում է։) Ո՞ւր է։ (Դիտում են միասին։) Ա՛հ։ (Ձախ կողմը, անտառի միջից երևում է սարկաւագուհու գլուխը։)

Իրենա. (Բարձրանում է ու խզուած ձայնով ասում։) Մենք պէտք է բաժանուենք։ Դու մնա նստած, լսում ես,—դու ինձ

մի՛ ուղեկցիր։ Թեքու

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ-ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ (ԺՈՂՈՎՐԴԻ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ) ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱՋԱԿՈՂՄԵԱՆՆԵՐԸ

Կուսակցական դիսցիպլինայի հարցերը սովորաբար գրի են առնու

գրացնելով իրենց «սահմանադրական-արքայական» (конституціонно-монархическій) ցուցանակը՝ միաժամանակ իւրացրել են իրենց իր տեսակի լոսկեցութեան եւ անորոշականութեան տակտիկան՝ ծրագրային մի շարք՝ սկզբունքի նշանակութիւն ունեցող հարցերի նկատմամբ, սրան կից՝ առանց քաշուելու մեղադրական մի շարք՝ երբեմն ըստ արտաքինի իսկ այլանդակ շեշտեր ուղղելով Սահմանադրական-ժողովրդական կուսակցութեան հասցէին։

Մի կողմ թողնելով աջակողմեանների այս բոպէ ակնարկածս շեշտերը՝ անցնենք նրանց ծրագրների տակտիկային։

Համառուսական վաճառա-արդիւնաբերական Միութիւնը (Всероссійскій Торгово-Промышленный Союзъ) և Հոկտեմբերի 17-ի Միութիւնը (Союзъ 17-го Октября) լռում են սահմանադրական-ժողովրդական կուսակցութեան ծրագրի այնպիսի ծանրակշիռ հարցերի մասին, որպիսիք են, զօրօր., «ժողովրդական ներկայացչութեան մասնակցութիւնը պետական եւնմից ցուցակի որոշումն», «Բարձրագոյն և ստորին ադմինիստրացիայի գործողութիւնների օրինականութեան և նպատակայարմարութեան վերաբերեալ կոնտրոլը (հաշուեքննութիւնը) (Սահմ. ժող. կուս. ծրագրի § 15) և նոյն ժողովրդական ներկայացուցչութեան «օրէնսդրական ինիցիատիւի (նախաձեռնութեան) իրաւունքը» (§ 18)։

Ապա։ Համառուսական վաճառա-արդիւնաբերական Միութիւնը և իրաւական կարգի կուսակցութիւնը (Партія Правового порядка) լիակատար լռութեան են մատնում ընտրողական իրաւունքների հարցը (§ 14)։ Իսկ Հոկտեմբերի 17-ի Միութիւնը, չի հասկացուում թէ ինչու վերակոչում է «всеобщее» (ընդհանուր) ընտրողական իրաւունքը»—«общее» ընտրողական իրաւունքի, միաժամանակ, կատարեալ լռութիւն պահպանելով՝ «ուղղակի և գաղտնի ձայնատուութեան» հարցի նկատմամբ։

Ապա։ Համառուս. վաճ.-արդիւնաբերական Միութիւնը և իրաւական կարգի Միութիւնն իրենց ծրագրներում ամենևին լռում են զեմստվային և քաղաքների ինքնավարութեան մասին (§§ 20—23), իսկ սրանցից առաջինը՝ Համ.-վաճ.-արդ. Միութիւնը լռում է ծայրերկրների հարցում (§§ 24—55) ևս։ Այդ երկու կուսակցութիւնները միասին լռում են դատարանին վերաբերեալ հարցում (§§ 27—29)։

Ապա։ Ժողովրդական օգտի (Народнаго Блага), Սահմանադրականների ժողովրդական Միութեան (Демократическій Союзъ Конституціоналистовъ) և Զափաւոր յառաջադիմական-

ների (Умѣренно Прогрессивная) կուսակցութիւնները լռում են եկեղեցուն-դաւանութիւններին վերաբերեալ հարցում (§ 2)։ Նոյն այդ հարցին վերաբերեալ լռում է Համառուսական վաճառ-արդիւնաբերական Միութիւնը ևս՝ ծածկուելով անց. տ. Հոկտեմբերի 17-ի մանիֆեստով։

Ապա։ Համ. վաճ. արդ. Միութիւնը լռում է ժողովրդական լուսաւորութեան հարցում (VIII՝ §§ 50—57)։ Նոյն Համ. Վաճ. Արդ. Միութիւնը և Հոկտեմբերի 17-ի Միութիւնը լռում են մասնաւոր հողային սեպհականութեան ստիպողական (որևէ խմաստով) բարձման հարցի մասին։

Ես դեռ չեմ ասում կանանց հաւասար իրաւանց հարցը (§ 14), որի վերաբերեալ լռում են բոլոր աջակողմեան կուսակցութիւնները, իսկ Հոկտեմբերի 17-ի Միութիւնը նոյն իսկ բացարձակապէս բացասում է իր՝ վերջերս լոյս ընծայած և այնքան այլանդակ վերագիր կրող մի բրոշիւրով, որը ուղղած է յատկապէս Սահմ.-Ժողովրդական կուսակցութեան հասցէին։

Եւ այլն...

Հարց.—Սահմանադրական-ժողովրդական կուսակցութիւնից դէպ աջ թեքուած կուսակցութիւնների քանակի շատութեան կից՝ ինչ ասել սրանց լռութիւնն այդքան մի շարք կարդինալ հարցերի նկատմամբ։

«Чужая душа потемки—ուրիշի հոգին մթին է» ասում է առածը։ Այո։ Սակայն, երբ այդ մթութեան վրայ, նոյն իսկ այս՝ հրապարակին իշխող կրկնակի թեւաւորուած բռնակալութեան յիրաւի ծանր, սարսափելից օրերում, ծածանւում է Հոկտեմբերի 17-ի Միութեան դրոշակը, մի դրոշակ, որը կոչ է անում «ամենքին միանալ՝ լայն թափով գործելու յօգուտ ուժեղ եւ հեղինակաւոր իշխանութեան» (Власть), երբ նոյն այդ ուժեղ պետական իշխանութեան համար աշխատող իրաւական կարգի կուսակցութիւնը գրում է իր դրոշակի վրայ՝ «Պետական Դուման կոչուած է՝ թե և թիկունք հանդիսանալու պետական իշխանութեան հեղինակութեան ամրապնդելուն. ինքը Պետական Դուման ոչ այլ ինչ է քան նոր հրապարակ եկած բարձրագոյն մարմին նոյն այդ իշխանութեան, և նա պարտաւոր է նպաստել, որպէս զի ապահովուի անպայման յարգանք դէպ այդ իշխանութիւնը, անառարկելի հնազանդութիւն վերջնիս», —երբ, վերջապէս, սահմանադրական-ժողովրդական կուսակցութեան դէմ են ելնում, և այն՝ միացած ոյժերով, Համ. Վաճ. Արդիւնաբերական Միութիւնը և Իրաւական կարգի կուսակցութիւնը՝ ինտիմ բլոկ, մտերմական դաշն կռելով Հոկտեմբերի

17-ի Միութեան կուսակցութեան հետ,—մի կուսակցութիւն, որն իր շրջանն է ընդունել Սմոլենսկ նահանգում գործող՝ Ազատութեան և կարգի կուսակցութիւնը (Партія свободы и порядка), վերջնիս դեմքով՝ «բարձրագոյն իշխանութիւնը պիտ իրացուի միայնեւեթ կայսեր»,—կրկնում եմ, ահա շնորհիւ այսպիսի պարագաների՝ մեզանում մնում-աճում է ուրիշի հոգու մթութեան խորքում կարդալու ընդունակութիւնը և մենք սկսում ենք նշմարել-զատել այդ մթութեան խորքում ոչ այնքան խստապահանջ բարոյականութեան հողի վրայ մնուած-մեծացած կուշտ ու խուլ ինքնագոհութեան հակասահմանադրական մոտիւները և տրամադրութիւնները...

Հապա ծրագրային անորոշականութիւնները...

Այստեղ ես մանրամասն կանգ չեմ առնելու այն ամեն առաձգական, բազմիմաստ խօսքերի, դարձուածքների վրայ, որոնք այնքան առատութեամբ գրի են առնուած մի շարք Աջակողմեանների ծրագրներում՝ հանդիսանալով երբեմն այնքան զժուարըմբռնելի մի-մի հանելուկներ, մի-մի բառեղծուածներ...

Ի՞նչ արժեն, զորօր., բազմարովանդակութեան, բազմիմաստութեան այնպիսի մարգարիտներ, ինչպէս Համ. Վաճ. Արդիւնաբերական Միութեան ծրագրում գրի առած «Экономическое содружество—տնտեսական գործակցութիւն»-ը, որը, ըստ նոյն ծրագրի, պիտի հաստատուի «վաճառա-արդիւնաբերական դասակարգերի և սրանց ծառայողների միջև՝ դէպ երկու կողմի ևս անձնական և ստացուածքային ինտերեսը տածած յարգանքի հողի վրայ... ընդդէմ անխիղճ վաճառքի ամեն տեսակների մղելիք պատերազմի համար» (§ 7)... Հարց.—ի՞նչ իմաստով է իրագործուելու այդ՝ ցայսօրուայ հոչակեալ «հայր և որդիներ»-ի «գործակցութիւն»-ը...

Ի՞նչ արժեն, զորօր., Հոկտեմբերի 17-ի Միութեան ծրագրի հետևեալ մարգարիտները՝—«ինքնավարութեան սկզբունքի տարածելը, ըստ կարելւոյն, իմպերիայի ամեն տեղերի վրայ՝ անհատների որքան կարելի է լայն շրջան հրաւիրելով մասնակցելու ինքնավարութեանը» (§ 4՝ в)... կամ՝ նոյն ծրագրի մի ուրիշ շեշտը՝ «մասնաւոր հողային սեպհականութեան մի մասի թոյլատրելի (?) գրաւումն պետական տեսակէտից (?) նշանակութիւն ունեցող դէպքերում» (§ 4՝ а)... Հարց.—ի՞նչ դէպքերի մասին է այստեղ խօսքը, ի՞նչ չափով և իմաստով է լինելու գրաւումն, ի՞նչ ասել է՝ «թոյլատրելի» գրաւումն...

Եւ այլն...

Խօսել այդպէս Բնորոշ, և այն՝ արդի հանգամանքներում

կարելի է շնորհիւ մի շարք պատճառ-առիթների, որոց թւում թող ներուի ինձ ընդգծել մի ենթադրելի տակտիկ միտում՝— Չլինի՞ թէ որոշականութիւնը խրտնեցնի ընտրողին կուսակցութեան անդամ գրուելուց...

Սահմանադրական-ժողովրդական կուսակցութիւնից դէպ աջ թեքուած կուսակցութիւնները, ընդհանուր առմամբ, շատ անգամ վերցնում են առաջնի ծրագրի մի շարք կէտերը և... անգունացնում այդ կէտերը՝ տալով սրանց առաձգական արտաքին։ Հարկաւ, աջակողմեաններին պէտք էր սահմ.-ժողովրդական կուսակցութեան ծրագրի սկզբունքների միայն արտաքին փայլը, և ոչ՝ սրանց ներքին պարզ եւ որոշակի իմաստը։ Սրան կից, ինչպէս մենք արդէն գիտենք, նոյն Աջակողմեանները լռում են նոյն Սահմ.-ժողովրդական կուսակցութեան ծրագրի մի շարք կարդինալ կէտերի մասին, և այն՝ լռում են ինչ-ինչ խորհրդաւոր խորիմաստութեամբ...։

Այո, այդպիսի դեմոնստրատիւ (ցուցարարական) ձևով լռում են, այդպիսի՞ պարզութեամբ տքնում են ծածկել իրենց «քաղցր խօսքեր»-ի իսկական աստառը նրանք, որոնք, ըստ իրենց ասութեան, գնում սահմանադրական—արքայական դրօշակի տակ ու գոչում են «սրբազան պարտականութեան» մասին այսօր՝ «հայրենիքի այս դժուարին րոպէին, այս փառաւոր, սակայն մեծ երկիւղով լի րոպէին» (Հոկտ. 17-ի Միութեան ծրագրից)...

Այստեղ գրիչս լակամայիցս գրի է առնում վիրաւորական խօսք՝ Ամօթ է...

Սակայն տեղի տալով գրչիս զայրոյթին՝ ես կկամենայի գէթ երկու խօսքով պաշտպան ևս ելնել նրան։

Պաշտպանութեան համար «կարևորը գտնում եմ «Русскія Вѣдомости» լրագրի ս. տ. № 67-ում գրի առածում, որը վերաբերում է Հոկտեմբերի 17-ի Միութեան մարտի 8-ի ժողովին։ Ահա այն.

«Զեկուցանողը՝ Վ. Վ. Բելեաև նկարագրեց զանազան կուսակցութիւնների ծրագրները՝ գլխաւորապէս կանգ առնելով Հոկտեմբերի 17-ի Միութեան և ձախակողմեան սահմանադրական կուսակցութիւնների ծրագրների տարբերութեան վրայ։ Ըստ զեկուցանողի՝ ձախակողմեան սահմանադրականների ծրագրները, իրօք, շատ քչով են տարբերւում Հոկտեմբերի 17-ի Միութեան ծրագրից, և այն՝ ի վնաս նրանց պարզութեան և իրականացման։ Նամանաւանդ խստիւ քննադատուեց սահմանադրական-ժողովրդական կուսակցութեան ծրագիրը։ Վախեցնե-

լով սոցիալ յեղափոխութեան պատրուակով՝ զեկուցանողը յիշեց Ռոդիչևի խօսքերն այն մասին, որ Սոցիալ ժողովրդականների (Соціалъ-Демократы) և Սոցիալիստ-յեղափոխականների (Социалисты-Революціонеры) ծրագրի minimum-ը կազմում է սահմանադրական-ժողովրդական կուսակցութեան ծրագիրը։ Սահմ.-ժողովրդականները մեղադրում էին նրանում, որ իրենց ծրագրի համապատասխան կէտերով զրգռում են գիւղացիներին և բանուորներին։ Երևաց, որ ժողովրդի ազատութեան (սահմ.-ժողովրդական—id) կուսակցութիւնը՝ պահանջելով զատ զատ խմբերի և դասակարգերի հաւասարութիւն՝ դրանով իսկ դիպչում է գիւղացի սեպհականատէրերի խաթրին, նամանաւանդ երբ դնում է քրէական պատասխանատուութեան ենթարկելու պահանջը՝ աշխատանքի վերաբերեալ օրէնքները խախտելու դէպքում, մինչդեռ բանուորներին՝ գիւղական աշխատանքների նկատմամբ վերապահում է լիակատար ազատութիւն - խախտել պայմանագիրը գործադուլներով։ Զեկուցանողը բացատրում էր ընդհանուր ընտրողական իրաւունքը՝ իբր ամեն դասակարգերի իրաւունք—ընտրել ժողովրդական ներկայացուցիչներ։ Վիճաբանութիւններում կուսակցութեան կազմին չպատկանողներին թոյլ չէին տալիս մասնակցել, իսկ Միութեան անդամներից մէկը, պ. Գերասիմովը, բացատրութիւն է պահանջում զեկուցանողից—թէ ինչո՞ւ է սա համարում Միապետական-աբսոլիւտիստներին (Монархисты-Абсолютисты)՝ իբր տիրող կարգի հակառակորդներ, մինչդեռ Կայսրը շնորհակալութիւն է յայտնել նրանց պատգամաւորներին և ընդունել է Ռուս ժողովրդի Միութեան (Союзъ Русскаго Народа) անդամակցութեան շքանշանը։ Զեկուցանողի հարցին—թէ, ուրեմն, ո՞ր կուսակցութեան է պատկանում ինքը պ. Գերասիմովը, վերջինս պատասխանեց՝ «Ես անդամ եմ Հոկտեմբերի 17-ի Միութեան եւ Ռուս ժողովրդի Միութեան եւ անսահման ինքնակալութեան, կողմնակից եմ»։ «Sic!» — աւելացնում է լրագիրը փակագծում...

Ես կասէի ոչ թէ՝ Sic!, այլ՝ Sapienti sat...

Այո՛. ընթերցողը տեսնում է թէ ինչո՞ւմն է Հոկտ. 17-ի Միութիւնը մեղադրում սահմանադրական-ժողովրդական կուսակցութիւնը, մեղադրում է՝ գտնելով այնու ամենայնիւ, որ սա «իրօք, շատ քչով է տարբերւում» իրենից, և այլ՝ «ի վնաս սահմ.-ժողովրդ. կուսակցութեան ծրագրի պարզութեան և իրականացման» Ահա այստեղ ես կդնեմ՝ Sic!

Սրան կից, սակայն, ընթերցողը տեսնում է և այն թէ

Հոկտ. 17-ի Միութիւնը՝ յանձին իր ադէպտ՝ պ. Գերասիմովի ինչ յաջողութեամբ է պաշտպանում սահմ.—ժողովրդական կուսակցութիւնը...

Այդ դէպքը, ըստ իս, վերին աստիճան ուշագրաւ է և նշանակալից, քանի որ նրանում, ինչպէս հայելու մէջ, Հոկտ. 17-ի Միութեան ծրագրային հանելուկներին—բառեղծուածներին և նրա անշնորհք պաշտպաններին կից՝ իր ամբողջ հասակով գծագրւում—արձանանում է այդ կուսակցութեան իսկական ադէպտի (հետևող) սրտաբաց դէմքը՝... ինքնակալութեան վահանը ձեռքին և Ռուս ժողովրդի Միութեան շքանշանը կրծքին...

Կրկնում եմ՝ Sapienti sat!...

Սակայն այդ դեռ ամենը չի։ Անհրաժեշտ է առանձին ուշադրութեամբ դիտել-զննել Աջակողմեանների հոգին ոչ միայն այն դէպքում, երբ այդ կուսակցութիւնները լռում են կամ գծում հնարում են պէսպէս հանելուկներ—առեղծուածներ, այլ և՝ երբ սրանք, առանց ինչ երկմտելու, խօսում են իրենց խօսքը՝ բարձր թեքելով երազակալը։ Այդպիսի պայմաններում ասուածները նամանաւանդ գնահատելի են՝ նրանց միտքն ու կամքն օրը-ցերեկով ուղեկցող—առաջնորդող, այսպէս ասած, բարոյական ցենզի և կուլտուր իմպերատիւի (հրամայական շեշտ, սկզբունք) տեսակէտից։

Ինչքան այն տարօրինակ թուայ, սակայն այդ տեսակէտից Սահմ.-ժողովրդական կուսակցութիւնից դէպ աջ թեքուած կուսակցութիւններն երբեմն անցնում են,—գործ ածենք ամենամեղմ խօսքը,—բարոյական կուլտուր նստակեցութեան շրջագծից դէնը...

Ահա, զորօր., Սահ. ժողովրդական կուսակցութեան աջակողմեան ամենամօտիկ դրացիներից մէկը՝ սահմանադրականների ժողովրդական Միութեան կուսակցութիւնը (Партія Демократическаго Союза Конституціоналистовъ)։ Նա, այդ կուսակցութիւնը—յետագայումս բերում եմ այդ կուսակցութեան ծրագրի մի կտորի բառացի թարգմանութիւնը—«դընում է իրեն խնդիր՝ խմբել—սպառազինել (мобилизировать) երկրի ամեն կենդանի եւ ազնիւ ոյժերը՝ միահամուռ կարով պատերազմելու մեր դժբախտ հայրենիքի համար աւելի լաւ ապագայի համար, մեր կեանքի նորոգման և բարեկարգման համար՝ վերջնիս ամեն շրջաններում»...

Այո, հէնց այդպէս էլ բառացի գրուած է սահմանադրականների ժողովրդական Միութեան կուսակցութեան ծրագրում։

Սակայն, ըստ իս, դա ծիծաղելի կլինէր, եթէ միայն չլինէր այնքան նեղլիկ՝ ըստ ներքին իմաստի։

Ցիրաւի։ Ըստ երևոյթին սահմանադրականների ժողովրդական Միութեան կուսակցութիւնը, հպատակելով «նորոգել և բարեկարգել մեր կեանքը՝ վերջնիս ամեն շրջաններում» կամ՝ ինչպէս ասուած է նոյն կուսակցութեան ծրագրի մի այլ կէտում, «նորոգել քաղաքական կեանքի հաւայն կազմը՝ ճշմարտութեան և մարդկայնութեան սկզբունքների վրայ»,—կրկնում եմ, սահմանադրականների ժողովրդ. Միութեան կուսակցութիւնը՝ դնելով իր առաջ մի այսպիսի նպատակ՝ չի նկատել «երկրի կենդանի և ազնիւ ոյժեր»-ի կարելի մնացորդը, սակայն սահմանադրականների ժողովրդական Միութեան կուսակցութիւնից դուրս։

Ճիշտ է, սա մի հարուած է՝ ուղղուած դէպի տարածութեան յորձանքը, առանց հասցէտիրոջ որոշակի նշանակուած լինելով, սակայն հարուած, որի մասով անկարելի է անցնել լռելեայն, քանի որ այն տրուում է սահմանադրութեան դրոշակի տակ և նամանաւանդ, երբ այդ դրոշակի վրայ փայլում են «ժողովրդական Միութեան» խօսքերը...

Ոչ։ Վստահանում ենք հաւատացնել սահմանադրականների ժողովրդ. Միութեան կուսակցութիւնը, որ ոչ այն ամենը, ինչ «կենդանի և ազնիւ» է Ռուսիայում, կխմբուի այդ կուսակցութեան բանակում, մի բան էլ, անշուշտ, կմնայ այլ կուսակցութիւնների զօրախմբերի համար...

Գնանք յառաջ։

Սահմ.-ժողովրդական կուսակցութեան աջակողմեան յետադայ դրացիներից մի ուրիշը՝ ժողովրդական-Տնտեսական կուսակցութիւնը (Народо-Хозяйственная Партія)՝ խոնարհեցնելով իր գլուխը «թագաւոր կայսեր անյողդողդ կամքի արտայայտութեան առաջ»՝ «տալ բնակչութեանն անխախտ հիմունքներ քաղաքացիական ազատութեան (ի միջի այլոց) խղճի իսկական ազատութեան հիմունքների վրայ» (անց. տ. հոկտ 17-ի մանիֆեստից), առանց որև է շփոթի դրի է առել իր ծրագրում՝

«Ռուսիայի բնակչութիւնը կազմող այլ և այլ ազգութիւնների և սրանց դաւանութիւնների նկատմամբ ենթադրւում է առաջնորդուել հետևեալ թեզերով՝

«Պրաւոսլաւ դաւանութեանը—հոգևոր իշխանութիւն (духовное господство), այլ դաւանութիւններին—յարգելու ազատութիւն» (§ 2, a)։

«Հոգեւոր իշխանութիւն» պրաւօսլաւ դաւանութեան...

Ռուս պետութեան «այլադաւաններ»-ին արդէն այնպէս էլ բաւականին հասկանալի է այդ «հոգեւոր իշխանութեան» կոնկրետ իմաստը, վերջնիս ակտուալ՝ ներզործական կացութեամբ։ Եւ ահա այսօր, ըստ երևոյթին, չգիտես ո՞ւմ են ուզում համոզել, որ պրաւօսլաւ դաւանութեան «հոգեւոր իշխանութիւն» ասածդ—ինչ մտքով էլ լինի այն՝ հոգեւոր, քաղաքական, պօլիցիական—ուչաստական, և այլն—չի դուրս վռնդում—բացասում «այլ դաւանութիւններ»-ն «յարգելու ազատութեան» կարելիութիւնը։ Ընդունենք մի բոպէ այդ։ Սակայն, այն ժամանակ, թոյլատրելի է հարցնել, ինչ տարբերից է գոյանալու «իշխանութիւն»—«իշխել» ասածիդ իմաստը և ինչո՞վ է զատուելու այլ դաւանութիւններն «յարգելու ազատութիւն»-ը պրաւօսլաւ դաւանութեան «հոգեւոր իշխանութիւն»-ից, «հոգեւոր իշխել»-ուց...

Ոչ. ըստ իս՝ մենք այստեղ գործ ունենք դիտմամբ մրթնեցրած բառախաղի հետ, ոչ աւելին։ «Իսկապէս ազատ խիղճ»-ը և պրաւօսլաւ դաւանութեան «հոգեւոր իշխանութիւն»-ը, «հոգեւոր իշխել»-ը—միմեանց փոխադարձաբար բացասող երևոյթներ են։ Այդպիսի բառերը, այդպիսի գաղափարներն երկու տեսակ բացատրել կարող է միայն նա, որի հոգուն խորթ է պարտաճանաչութեան անխախտ, ես կասեմ իսկ՝ համոզուած ինքնագիտակցութիւնը—յարգել ուրիշի խղճի շեշտումները—պահանջները։ Եւ, ճիշտն ասած, պրաւօսլաւ դաւանութեան «հոգեւոր իշխանութեան»—«հոգեւոր իշխել»-ու և այլ դաւանութիւնների «յարգելու ազատութեան» էակցութիւնը (сосуществованіе) Ժողովրդական-Տնտեսական կուսակցութեան ծրագրում ինձ շատ է յիշեցնում Համառուսական Վաճառա-Արդիւնաբերական Միութեան՝ վերը շեշտածս «տնտեսական գործակցութեան» այնքան կասկածելի «յարգանք»-ի և «խղճի»՝ ցայսօրուայհնչակեալ իրականութեան անփառունակ հովերը, որոնք այսօր՝ իբր սոսկ դասակարգային սկզբունք ծրագրւում են ապագայի նկատմամբ ևս...

Ինչպէս տեսնում է ընթերցողը, Ժողովրդական-Տնտեսական կուսակցութեան ծրագրին ևս խորթ չի sui generis՝ իր տեսակի «սահմանադրական» հարուածի տենդենցիան (միտում), սակայն այս անգամ հարուածն ուղղուած է արդէն ոչ թէ դէպի տարածութեան, յորձանքը ընդհանրապէս, այլ՝ աւելի որոշ հասցէով—դէպ այլադաւանների խղճի յորձանքը...

Գնանք յառաջ և ուշադիր նայենք Սահմ.-Ժողովրդական

կուսակցութեան աջակողմեան աւելի հեռաւոր դրացիներին։

Հոկտեմբերի 17-ի Միութիւնը՝ դրապուելով իր ծրագրում «խաղաղ և բացարձակ բանակռուով իր իդէաների, իր համոզմունքների յաղթանակն յաջողեցնել տքնող» ասպետի անխոցելի իդէալոգի տոգայով (վերարկու հին հռովմ.)»՝—այդ խօսքերն արձանագրելուց հազիւ մի երեք ամիս անց, ս. տ. փետրուարի համաժողովում տքնում է—յետագայում բերում եմ «русск. Вѣдомости» ս. տ. № 42-ում գրի առածը—«վերապահել ամենմի ծայրագաւառին իրաւունք՝ ընտրել Պետական Դումայի համար զէթ մի ռուս անդամ և Լեհաստանից՝ զէթ երկու պատգամաւոր»...

Ինչպէս տեսնում է ընթերցողը, այդ ևս հարուած է, և այն՝ աւելի ևս որոշ հասցէով՝—հարուած դէպի ծայրագաւառների տրամադրութիւնների յորձանքը...

Մեր առաջն է գաղափարական անհաստատութեան, գաղափարական ներերման, համոզման «տիկ-տակ»-ի անհերքելի փաստը, այո։ Սակայն, եթէ ի նկատի առնելու լինենք, որ Հոկտ. 17-ի Միութեան «խաղաղ» ձեռքն այս անգամ պարզւում է ծայրագաւառների և, ի մասնաւորի, Լեհաստանի քաղաքացիական իրաւունքները խախտելու նպատակով, այն ժամանակ թոյլ կտրուի ինձ մի փոքր աւելի ճիշտ բնորոշել այս փաստը, այն է՝ իբր բարոյական երերումն, էտիքական աբերրացիա...

Մի քայլ ևս յառաջ... և մեր առաջ տրձանանում են Իրաւական կարգի կուսակցութեան մարգարիտները։ Այդ կուսակցութիւնն ամենևին դէն է շպրտել երեսակալը։ մերկ ճակատով գրի է առնում իր ծրագրում՝

«Լիակատար յարգանք այլոց տեսակէտներին—համոզմունքներին, բանակռուի մէջ զրպարտութեան և բիրտ ոյժի բացէ իրաց մերժումն—սրանք պիտի լինեն ամեն ազնիւ կուսակցութեան գործողութեան ղեկավար հիմունքները, կուսակցութեան, որը ձգտում է հանուրի բարօրարութեանը և որն իր դրօշակի տակ տեղ չի տալիս անձնական (անհատական բնաւորութեան—личнаго характера) միտումներին»...

Չէ՞ որ այս ասուածքը գեղեցիկ է, և այն՝ դեմոնստրատիւ (ցուցարարական) գեղեցիկ...

Սակայն... սակայն մի քանի տող ցած՝ Իրաւական կարգի կուսակցութիւնը, առանց ինչ ամաչելու, գրի է առնում իր ծրագրի § 5-ում այսպիսի հարուած սահմանադրական-ժողովրդական կուսակցութեան յատուկ հասցէով՝

«Ռուսիայի Միութիւն և անբաժանելիութիւն։—Այս կէտը արդի հանգամանքներում, մեր ծրագրի ամենագլխաւոր կէտն է։ Այս կէտն ոչ միայն չեն շեշտում ուրիշ՝ հրապարակում արդէն գործող կուսակցութիւնների ծրագրները, այն է՝ սահմանադրական-ժողովրդական և սոցիալ-ժողովրդական կուսակցութիւնների ծրագրները, այլ այդ երկու կուսակցութիւնները ըստ ամենայնի ընդունում՝ են (вполнѣ допускаютъ) Ռուսիոյ բաժանումը զատ-զատ մասերի՝ սեպհական աւտոնոմ կազմակերպութեամբ, պահպանելով սրանց միջև միայնեթ ֆեդերատիւ հիմունքների վրայ յենուող կապը» (§ 5)...

Իսկ մի քանի ևս տող ցած՝ կուսակցութիւնը՝ իբր «բացատրութիւն» իր ծրագրի՝ գրում է՝

«Այդ մարդիկ (այսինքն սահմ.-ժողովրդ. կուսակցութեան կողմնակիցները), ընտրուելով անդամ Պետական Դումայի, իրականացնելու են Ռուսսիայի վերակազմութիւնը՝ ըստ ֆեդերատիւ տիպի։ Ճիշտ է, այժմ յիշեալ կուսակցութեան կողմնակիցներն աշխատում են մամուլի միջոցով և խօսքով հաւատացնել, որ Մոսկովեան համաժողովի որոշումներով Ռուսսիայի զատ-զատ մասերի աւտոնոմիան ի նկատի ունի միայն կուլտուր, և ոչ՝ քաղաքական իմաստով։ Սակայն այսպիսի հաւաստիացումները չունեն և ոչ մի հիմունք. յիշեալ որոշումների տեկստն աւելի քան պարզ է, և ապա հենց ինքն «աւտոնոմիա» խօսքը ըստ ամենայնի որոշ տերմին է, և այն՝ միայն քաղաքական, այլ ոչ՝ կուլտուր, ինչպէս այն յայտնի է (??) պետական իրաւագիտութեան հետ դէթ ամենահարևանցի իսկ չափով ծանօթ ամեն մէկին,—Իրաւական կարգի կուսակցութիւնը, իր կողմից, բացէիբաց բացասում է Ռուսսիան ըստ ֆեդերատիւ տիպի վերակազմելու ամեն մտածողութիւն։ Մենք պիտի դիմենք ոչ թէ պետութիւնը և սրա բնակչութիւնը ճեղքելուն՝ զատ-զատ վայրերի աւտոնոմ առանձնացումով և բնակչութեան իրաւունքների՝ սրա հետ անխուսափելիօրէն կապուած տերրիտորիալ (երկրային) հաւասարութեան, այլ որպէսզի կառուցենք մէն մի ռուսական քաղաքացիականութիւն, բոլորի իրաւանց հաւասարութիւն համայն Ռուսսիոյ տարածութեան վրայ՝ անկախ ծննդավայրից կամ այս-այն մասում մշտական բնակչութիւն ունենալուց»...

Ահա այսպիսի իմաստուն, վայրահաջ երևէջերի է դիմում Իրաւական կարգի կուսակցութիւնը՝ իր ծրագրի ամենագլխաւոր կէտի» նկատմամբ, հարկաւ, յուսալով պարզամիտ թեթևսոլիկների վրայ, որոնք ժամանակ չունեն սովորելու՝ ինքնաբերա-

բար ըմբռնել սահմ.-ժողովրդական և սոցիալ-ժողովրդական կուսակցութիւնների՝ ռուս տառերով գրի առած ծրագրները,— պարզամիտ թեթևսօլիկների, որոնք, հարկաւ, չեն կասկածելու այն մասին թէ Իրաւական կարգի կուսակցութեան ծրագրի խմբագրներն ունեն «ծանօթութիւն» պետական իրաւագիտութեան հետ՝ ընդհանրապէս և աւտօնօմիա ու ֆեդերացիա հարցերի նկատմամբ՝ ի մասնաւորի։ Սակայն այդպիսի պարզամիտ մարդկանց թիւը մեծ չի, իսկ եթէ մեծ էլ է, սրանց կբուժի ինքը ժամանակը, այո, ժամանակը, բարոյական-կուլտուր ցաւագարութեան, ախտացաւի այդ ամենալաւ, անվրէպ բուժիչը։ Եւ սրա՝ բուժիչ ժամանակի հետևից չի հասնիլ այն կուսակցութիւնը, որը շարէշար շարում է բարակ մազի վրայ գեթիռամբական դրուատներ իր իսկ «կուսակցական ազնուութեան»ը և, միաժամանակ, միևնոյն կոյտը գլորում՝ և՛ սահմ.-ժողովրդական կուսակցութիւնը, և՝ սոցիալ-ժողովրդական կուսակցութիւնը, և՛ աւտօնօմիան, և՛ ֆեդերացիան,—և այդ՝ անտես առնելով սահմ.-ժողովրդական կուսակցութեան կողմից՝ և մամուլի միջոցով *), և բանաւոր կերպով տրուած ամեն բացատրութիւնները...

Ո՛չ, բարակ մազը կկտրուի... Եւ, այսպէս ասած, «սահմանադրական-արքայական» Իրաւական կարգի կուսակցութիւնը, որպէս զի ունենայ իրաւունք գրելու իր դրօշակի վրայ այնպիսի բառեր, ինչպէս՝ «լիակատար յարգանք այլոց տեսակէտներին—համոզմունքներին, բանակռուի մէջ զրպարտութեան և բիրտ ոյժի բացէիբաց մերժումն» «ազնիւ կուսակցութիւն», —կրկնում եմ՝ որպէս զի Իրաւական կարգի կուսակցութիւնն ունենայ իրաւունք գրելու իր դրօշակի վրայ այսպիսի բառեր, նա պիտ ունենայ գէթ տարրական իսկ հասկացողութիւն այլոց տեսակէտները—համոզմունքներն յարգելու մասին, բարոյական բանակռուի մասին, նա պիտ իրօք զսպի—լկեցնի իր մէջ «անձնական միտումներ»-ի շեշտը, պիտ իրօք բարձրանայ—բացասի բիրտ ոյժի հրապոյրները, պիտի գէթ չնչին իսկ չափով յիրաւի ծանօթանայ կուսակցական «ազնիւ» բանակռուի դիսցիպլինայի էական տարրերի հետ և... մի փոքր էլ զբաղուի «պետական իրաւագիտութիւն» անուանեալ գիտելիքով...

---

*) Տես զորօր. Ѳ.Ѳ. Кокошкинъ: 1),,Областная автономія и единство Россіи'', 1905 թ. Գինը՝ 2կ., 2) ,,О правахъ Національностей по децентрализаціи'' (Докладъ Бюро съѣзду Земскихъ и Городскихъ дѣятелей 12—15 Сент. 1905 года и постановленія Съѣзда), 1906 թ., Գինը՝ 10 կ.։

Երբ իրաւական կարգի կուսակցութիւնն այդ կանի, այն ժամանակ նա ինքը կկարմրի իր ամեն «նախկին սխալանքներ»-ից...

Ի բոլոր սրտէ ցանկանք, որ Իրաւական Կարգի կուսակցութիւնը գէթ ապագայում կարող լինի լրացնել իր ցայսօրուայ այդ պակասը։ Այն ժամանակ սահմանադրական—ժողովրդական կուսակցութեան համար ևս դիւրին կլինի կանգնել նրա կշտին և բանակոիւ մղել հաւասար զէնքով...

Այստեղ ես կանգ կառնեմ։

Սրանից դէնը սկսում են սուղ ազգայնութեան հողի սընունդ տէնդէնցիտների (միտումներ) խորխորատ—խոռոչները, ուր quasi-սահմանադրական ցուցանակի տակ պատսպարուել են պէս պէս Արքայականները (Царисты) Հայրենիքի Միութեան (Отечественый Союзъ) ագէնտները և վերջապէս, բացարձակ հակասահմանադրականները—Աջակողմեաններից ամենաաջակողմեանները՝ Ինքնակալութեան կողմնակիցները (сторонники самодержавія)՝ կուսակցական ցուցանշաններով և առանց սրանց, սակայն՝ միշտ իրենց յատուկ պրինցիպեալ ոռնոցով՝

«Ռուսիան նախ և առաջ ռուսների համար է», «Ռուսիան ռուսների համար է», «Ռուսիան միայնակեթ ռուսների համար է», և այլն...

Սարսուռ, դժնեայ սարսուռ է ազդում այդպէս ոռնացող սաղմոսերգուների աջակողմեան ամենահեռաւոր՝ սևհարիւրային (Черносотенцы) խորխորատ-խոռոչը...

Այնտեղ զազիր ձեռքերով բոցադէզ խարոյկ են շպրտում երիտասարդ, կենսունակ Ռուսիայի ամենանուրբ, ամենաազնիւ արիւնաշաղախ սպասելիքները, կտոր-կտոր անում, գարշ ոտքերի տակ կոխկրտում սրբազնասուրբ դրօշակները...

Այնտեղ դիւային դաշինքով ի մի ձուլուած երկոտանի սանդարամետականներն ոռնում են՝

«Նկեղեցին պիտի ներշնչի ժողովրդին ատելութիւն դէպի կրամօլնիկները (խռովարար, ապստամբ) և այլադաւանները»...

Սակայն, մի պահ լռութիւն՝

«Чаемый, молимый
День наступаетъ. Близокъ часъ»!—
(И. С. Аксаковъ: «Пророкъ»)

Սպասածդ, թախանձածդ օրը լուսանալու վրայ է։ Մօտ է ժամը...։

ԲԺԻՇԿ ՍԻՄԷՕՆ ՇԱՀ-ՆԱԶԱՐԵԱՆՑ

Մարտ 19, 1906 թ.
Մոսկուա

* *

(Կատո Միքէլաձէի)

Ահաբեր ժայռը ահա երերաց
Ալեկոծ ծովի սէգ ալիքներից,
Եւ հզօր հիմքը շարժուեցաւ՝ դողաց
Նոր լուսով ծագող հրավառ արեգից։

Ճչո՛ւմ է վա՜յ տալիս ճչում,
Ա՜հ՝ տառապանքի օրերը հասան,
Ու�ը է դառնում քոյնը, չգիտէ
Ո՞րտեղ որոնէ իրեն ապաստան։

Կանչում է արծիւն բազէ-ուրուրին
Ազատ, կաչաղակ, գիշատիչ հաւքեր,
Ցաւին ցաւացիլ օգնութեան հասնել
Մի կերպ սփոփել անսահման դարդեր...

Օգնում են նրան։ Բայց ժայռն ահռելի
Հիմքից ատսանուած շարժւում է տեղից,
Զո՛ւր է օգնութիւն, նոքա տըկար են,
Ծովը կատաղած ելնում է ափից։

Եւ ալիքները բարձր թռիչքներով
Բազէ-ուրուրին հեռու են թռցնում՝,
Իրար ետեւից եկող ահն ու վախը
Արծուի սրտի մէջ հեւանք ծնեցնում։

Ալեկոծւում է ծովը. իսկ խաւարն
Տեղի տուեց ճաճանչ ճառագայթներին,
Որոնք սփոուեցան երկնքից երկիր
Ոսկէ սաւանով աշխարհ ծածկեցին։

Ահա՛ արշալոյս, ահա՝ ջինջ երկինք,
Ուրախ եւ զուարթ ղողանջ զանգերի,
Ահա՛ ընութիւն թարմ՝ կանաչազարդ,
Լսւում է ճի՜ւ ճի՜ւ սթափ ճնճղուկների։

Ծառերը ծաղկազարդ, անթի՜ւ ծաղիկներ,
Հրճուում է ազատ զողտը ընութիւն,
Գնում են ղէպ՝ ծով, վազում են արագ
Արարչից ստեղծուած հոգիներ արթուն։

Շարժուում է ժայռը ահեղ գոչումով
Եւ հիմքը խղճուկ մօտ է երկփեղկման,
Ծովը ծփում է, եւ արծուի բոյնը
Տեսնում է աչքով մերձաւոր վախճան։

Ճչո՛ւմ է արծիւն, վա՜յ տալիս՝ ճչում,
Ահա տանջանքի օրերը հասան,
Աւեր է դառնում բոյնը, չը գիտէ
Որտեղ որոնէ իրեն ապաստան։

Թարգմ. վրաց. Հ. ՏԷՐ-ԱՍՏՈՒԱԾԱՏՐԵԱՆՑ

ԱՐԵՏԱՐԱՆԻ ԵՂԲԱՅՐՆԵՐԸ *)

X

Ամեն տարի, երբ ողջ բնութիւնը կենդանութեան թռիչքներ է գործում, և գարունը իր խնամատար ստեղծագործութեամբ թեւաքօղում է արար-աշխարհը, ես մի ներքին ոյժի հոսանքի եմ ենթակայ լինում և միայն ու միայն մեր գիւղի գարունն եմ ցաւատանջ խոհերով մտաբերում։ Ես ինքս էլ հաշիւ ու համար չեմ տալիս ինձ, թէ ինչու է այդ այդպէս։ Բայց որ դա այդպէս է և մինչև օրս առեղծուածային մշուշով է ծածկուած ինձ համար, ճիշտ է։ Երևի այն, որին մարդիկ իրանց անմեղութեան օրերում հասկանալ անկարող են, այն մինչև վերջն էլ ամփոփում է իր մէջ բնութեան մի գերագոյն գաղտնիք, որը ասես անըմբռնելի է միշտ մարդկանց համար։ Երևի այդ է, որ մի ներքին սարսուռ ազդող հոսանքով և էլէկտրական ցնցումներով անցնում է մեր երակներով, երբ իւրաքանչիւր անդամ մենք կրկնում ենք «հայրենիք», «ծննդավայր» բառերը։

Եւ մի՞թէ այդ բառերը չեն, որ դարձեալ մի անբացատրելի և հզօր թափով մղում են մարդկանց դէպի կրակ ու ջուր, սուր ու թուր, թողնելով անողոք ճակատագրի քարասիրտ ճիրաններում և կին, և երեխայ, և տուն-տեղ։ Եւ այդ գարունը, որ ես մոռանալ անկարող եմ, այդ գարունը իմ հայրենիքի, իմ սևաւոր ծննդավայրի գարունն է, որի իւրա-

---

*) Տես «Լումայ» № 5—6.

քանչիւր վայրկեանը այժմ ես մտախոհ քաղցրութեամբ եմ յիշում, և իմ սիրտը ծովածուփ ալիքներով անվերջ խռովայոյզ մրրիկներով է ալէկոծւում և ինձ հեռու, շատ հեռու տանում։

Հէնց այդպիսի գեղահրաշ գարուն էր մեր գիւղում։ Իր ուրախ ժպիտը երևան հանել, և համատարած բնութիւնը իր խորհրդաւոր դերի մէջն էր, երբ Խօջայ-Մարդարը միայնակ իրանց սաքւում նստած՝ անվերջ մրմռում էր։ Ամեն անգամ, երբ նա հոգեկան այդպիսի դրութեան մէջ էր լինում, իմ սիրտը փշաքաղւում էր. ես գիտէի, որ նա լռիկ ծրագիրներ է պատրաստում սրանրա տունը քանդելու, սրա-նրա գլխին մի նոր օյին, մի անաստուած հարսանիք բռնելու։

Երկար նա այդպէս պիտի մնար, եթէ նրան այդ դրութիւնից դուրս չբերէր նրա կին Ծովերը։

—Մ՚յ մարդ, դէհ հէրիք է էլի. էլի ի՞նչ թաղայ օյին ես մոգոնում։

—Էլի մէջ մտար, հա. ախր, քած, քո ի՞նչ գործն է խառնուել իմ գործերին։

—Յիսուս ու Քրիստոս, քա մարդ, ի՞նչ ես կատղել. հետդ խօսալ չի լինում։

—Նալաթ քեզ, չար սատանայ։

—Ցօ ի՞նչ է, մէ ասա։

—Զոռ-ցաւ է, անզգամ։

—Ի՞նչ եմ արել, մեղքս ի՞նչ է։

—Խանգարեցիր։

—Քա մարդ, ի՞նչ էիր անում, որ խանգարեցի, չէ՞ որ սգաւորի պէս տաղ արել, նստել էիր։

—Ի՞նչ անեմ չանեմ, հիմի քո քաւթառ գլխի բանը չէ։

—Հիմի քաւթառ դարձայ, հա. մեռնեմ էն օրուան որ մեռելդ, սատկածդ ժամում թողած մուրիկ-մուրիկ խելխոտ կերածի նման ետևիցս քաշ էիր գալիս։

—Ասելդ ի՞նչ է։

—Ասելս էն է, որ դու, միտդ է, խոստացել ես, որ,

երբ ես քեզ առնեմ, մի տարուայ աշխատածդ երեխս համար թագաւորի բակը գցես։ Էսօր կաս, վաղը՝ ոչ. էն ժամանակ Սագոն ինձ պահողը չէ։

Խօջայ-Մարգարի երեսին երկիւղի մի նշոյլ երևաց, սակայն նա շուտ կորաւ, և նա հարցրեց.

—Երեխեդ ուր է, որ էդպէս մեծ-մեծ բրդում ես։ Ես իմ խօսքի տէրն եմ։

—Ոնց թէ ուր է. ուր կլինի երեխէն։ Չէ՞ մի էստեղ-էնտեղ կապիր ինձ, ես էս չորս ամիս է երեխով եմ, փող պատրաստիր։

Փողի և երեխի անունը մի բոպէ վախեցրին Խօջայ-Մարգարին, բայց տեսնելով, որ հակառակելով ոչինչ չի կարող շինել, դիմեց խորամանկութեան։

—Ա՜յ Ծովեր ջան, որ էդպէս է, իմ աչքն էլ, քոնն էլ լոյս լինի։ Քո ուզածը իմ աչքին լինի։ Ոչ թէ մի տարուայ աշխատանքս, երկու, երեքը ասա։

—Դէ լաւ լաւ, մի գիլի աւետարանդ կարդա, ես քեզ լաւ եմ ճանաչում։ Ե՞րբ ես գցելու։

—Ծովեր ջան, Սագոյին պսակենք, գլխներիցս ռադ անենք, էն ժամանակ ամեն բանն էլ լաւ կլինի։ Մէկէլ որ երեխէն դեռ չի ծնուել։ Թող ծնուի, հեշտ է, անհոգ եղիր։

—Դէհ, պսակիր, ես հօ չեմ հակառակում։

—Լաւ, ես հէնց հիմի ծրագիր էի պատրաստում, թէ ինչպէս շարժուեմ, ինչպէս սկսեմ։

—Ի՞նչ։

Դարբնենց Սանդուխտին ուզեմ, վերջացնեմ։ Մի քիչ պիտի խելօք ժաժ գալ։ Սահունին կարող է ամեն բան փչացնել։ Ես հէնց դրա համար էի խօլվաթացել, որ ծրագիր պատրաստեմ։ Բայց մէրը չմեռնի Խօջայ-Մարգարին։ Նա իր բանը մի քանի տարի առաջ է պնդել։

—Ի՞նչ ես արել։

—Անխելք, մոռացել ես էն 13 մանէթը։ Ես ով վարդերը ով։

—Ի՞նչ ես ուզում անել։

—Ի՞նչ... ես %% կուզեմ մի թեթև բերնով, յետոյ կասեմ, որ հանաք եմ անում, տասն հազար էնքան փող էլ ձեզ ղուրբան։ Այսինքն կը յիշեցնեմ, կքաղցրացնեմ և ապա հարց բաց կանեմ Սանդուխտի ուզելու համար։ Իսկ երբ թարսուեն, պահանջից, սպառնալիքից սարսելով, խելքի կըգան։ Ախր քանի տարի է, էդ փողը դիտես ինչքանէ դարձել, 330 մանէթ, հինգ տարի է, չէ։ Մինչ Ծովերը շշմած՝ մնացել էր կանգնած, նա դուրս եկաւ և շտապեց Դարբնենց տունը։

Պառաւ Վարդերը ոչինչ չնկատեց նրա նենգամիտ դէմքի վրայ, միայն Սանդուխտն էր, որ մի անենկարագրելի ցաւ զգաց, երբ տեսաւ նրա խորամանկ ժպիտը։ Ջահիլ աղջիկները միշտ մի խորաթափանց հայեացք ունեն, որը աւելի քան պարզ է լինում նրանց համար, երբ խնդիրը կապուած է լինում իրանց էութեան հետ։ Այսպիսի ժամանակներում նրանք կէտ առ կէտ ասես կարդում են դիմացինի սիրտը։ Այդ պատճառով նա նայեց նրան արհամարանքով լի մի հայեացքով և փութաց ծածկուել նրանից, սակայն այնպէս, որ միշտ հետամուտ լինել կարողանար նրանց խօսակցութեանը։

—Վարդեր, քէֆդ ինչպէս է։ Երկար նստեցի մենակ, յիշեցի անցեալը, սիրտս տխրեց, ասի գնամ էն պառաւի մօտ, մի քիչ զրոյց անեմ, ու եկայ։

—Շնորհակալ եմ Խօջայ-Մարգար։ Աստուած քո քէֆը հարցնի։

—Վարդեր, թէև դարուն է, բայց ամառուանից աւելի շոգ է, օրեկան մի քանի անգամ ջուր եմ խմում էլի ծարաւս չի կոտրում։

—Մենք լաւ սառը ջուր ունենք։ Սանդուխտը նոր բերեց, կուզես ասեմ թող բերի։

—Ես էլ հէնց ուզում էի ջուր ուզել. բայց դու ինձանից շատ ասացիր։ Էհ, դու էլ ինձանից շատ պիտի ապրես։

—Աստուած ոչ անի։ Սանդուխտ, Սանդուխտ ջան, ջուր բեր Խոջայ Մարգարին։

Սանդուխտը իսկոյն կատարեց տատի հրամանը։ Ջուր խմելուց յետոյ, երբ Սանդուխտը դարձեալ իր առաջուայ տեղը գնաց, Խոջայ Մարգարը շարունակեց.

—Վարդեր, աչքդ լոյս, հասել է, հարկաւոր է մի փեսացու գտնել, բայց իղուր ինչու եմ քո գլուխը ցաւացնում, ես ինչ եմ, իմ ջանը դուրս գայ, փեսացուն, ճարեմ։ Ես քեզ մոռացող չեմ։ Ցիշում ես, նախանցեալ տարի էլ, երբ լսեցի որ նեղութեան մէջ ես, իսկոյն փող ուղարկեցի, ցաւդ հոգացի։ Էհ, մարդ ենք էլի։ Գիտես, որ էն ուրիշի տուած լինէի հիմի ինչքան էր դարձել։ Դու, փառք Աստուծոյ, գիտես էդ փողի բանը։ Էհ, ինչ երկարացնեմ, հիմի էլ ջանս դուրս գայ, գնամ փեսայացու ճարեմ։

—Շնորհակալ եմ, Խոջայ-Մարգար, բայց մեր Սանդուխտի դեռ ժամանակը չէ։

—Ի՞նչպէս չէ, ես որտեղից եմ, խօ օտար չեմ, չէ՞ որ 14—15 տարեկան է։ Խոմ չպիտի դախացնես։

—Աստուած մի արասցէ։

—Դէհ որ «Աստուած մի արասցէ», ես ուզում եմ քեզ հետ պարզ խօսել։

—Ի հարկէ, էդպէս լաւ է։

—Վարդեր, ասացի, որ հասել է, և ես քո թոռան մուշտարին եմ։ Սագօս էլ է հասել, կպսակենք։ Ջահիլ են, կբաղդաւորացնենք։ Դու էլ քանի կենդանի ես, քո աչքովդ թոռանդ բաղդաւորութիւնը կը տեսնես և կիմանաս, որ տուն-տեղդ արտ-ափդ շան ու դիլի բերան չեն ընկնելու, այլ էլի նրան են մնալու։

—Խոջայ-Մարգար, լաւ միտք է. բայց ես առանց Սանդուխտիս կամքի քեզ բան չեմ կարող ասել և էս օր ջօջութեանը, հոգուս չեմ կարող մեղք անել։

—Մաշալայ—մաշալայ, ա՛յ հիմի գիտեմ, որ ածէ քեզ հետ բարեկամութիւն անել, հիմի գիտեմ, որ մաղ-

ես սպիտակացրել։ Շատ ուրախ եմ էդ խօսքիդ համար։

– Էդ իմ պարտականութիւնն է, հոգի ունեմ տալու, կարող եմ քայլն աչքով նայել իմ ումուտ-աղրաբին։

—Ես մի քանի օրից յետոյ, Վարդեր, կգամ վերջնական պատասխան ստանալու։

—Լաւ։

—Դէհ մնաս բարով։—Այդ օրը երեկոյեան Սահունին և Վարդերը առանձնացած երկար-երկար խորհրդակցում էին թէ ինչպէս վարուեն, ինչ պատասխանեն Խօջայ-Մարգարին։ Թշուառ պառաւը նոր էր գլխի ընկել, որ իւր միամտութեամբ երկու ոտքով ու ձեռքով ընկել է այդ քարասիրտ վաշխառուի ծուղակը, միայն ունենալով Սահունիի նման խնամատար, նա այնքան էլ չէր վրդովւում։ Ծերերի սրտերում աւելի հեշտութեամբ է բռնկւում փոթորիկը, նոյնքան հեշտութեամբ էլ անցնում է նա։ Զուր չէ ասած, որ ծերն ու երեխան նման են միմեանց։ Միայն Սանդուխան էր, որի կրծքում փրփրադէզ ալիքները հուժկու թափով մռնչում էին։ Խեղճ աղջիկը պարզ հասկանում էր, որ Խօջայ-Մարգարը իր տմարդի, իր անմարդավայել վարմունքով կամենում է իրան քաշ տալ տանել իբրև մի անշունչ առարկայի, որին վերցնում են պարտքի փոխարէն, երբ անկարող են լինում այն վճարել։ Նա իր ամբողջ էութեամբ փշաքաղւում էր, երբ յիշում էր այդ, նրա մատաղ ինքնասիրութիւնը վիրաւորուած էր, նա վճռել էր ամեն ինչով հասկացնել այդ տգրուկ վաշխառուին, որ իր երակներում հոսում է իր հօր հարազատ արիւնը, նա լաւ գիտէր թէ ով է եղել իր հայրը, որի անունը պատկառանքով են դեռ յիշում իրանց համայնքը և վճռել էր ապացուցանել, որ նրա արժանաւոր զաւակն է։ Նա չէր սիրում իր սեռին յատուկ թոյլասրտութեամբ արցունքներ թափել այն տեղ, ուր

հոգու լորով և տոկուն կամք է հարկաւոր։ Անիրաւ, մրմնջում էր ատէպ-ատէպ նա անլսելի ձայնով,—միթէ քո արածը ողորմութիւն էր, միթէ քո 13 ռուբլին Յուդայի արծաթը չէր։ Դաւաճան աշակերտը իր ստացած արծաթով Արդարութիւն—Անմեղութիւնը մատնեց, միթէ դու էլ քո տուած արծաթովը չես մատնում անմեղութիւնը և այն էլ վսեմ գաղափարի դիմակի տակ, այն էլ մերձաւորի փրկութեան ձեռք կարկառելու սրբազան բաղձանքով։ Անիրաւ, զգում ես արդեօք, որ քո արածը ողորմութիւն չէ, այլ սոսոր դաւաճանութիւն աքօլուած մարդասէր վեհ գաղափարի ներքոյ։

Մինչ Վարդերն ու Սահունին իրանց շուրջը մուռացութեան տուած՝ խորհրդածութիւնների մէջ էին, Վարազդատը անհնարելի կերպով ծլկուեց և մի քանի րոպէից յետոյ արդէն Սանդուխտի մօտն էր։

—Ինչ ես, իմ հոգիս, իմ սէր, դարձեալ ալեկոծուել, երեկ քեզ ասացի, որ արդարութիւնը յաճախ, ճիշտ է, կընկնի, կճխլտուի ցեխի մէջ, բայց անհետանալ, կորչիլ, ոչնչանալ՝ ոչ։

—Ես քեզ չեմ հասկանում, դու այսօր, չգիտեմ, ինչու ուրախ ես երևում։

—Միանգամայն ճիշտ ես նկատում, ուրախ եմ, որովհետև շատ բան գիտեմ, ուրախ եմ, որովհետև արդարութիւնը պիտի յաղթանակէ։

—Ինչ է պատահել, Վարազդատ ջան, մի տանջիր ինձ։

—Ահա թէ ինչ, հայրս ու Վարդերը երկար խօսում էին։ Ինչ կարծիք, որ խօսակցութեան միակ առարկան Փշտոյենց Մարգարն էր ու իր բռնած գործը։ Ես պատի երեսին մօտզուած ականջ էի դնում, թէև լաւ բան չէ, բայց դէհ ինչ արած, երբ անկարող եղայ զսպել հետաքրքրութիւնս։ Հայրս այդ գարշելի մարդի տուած գումարը հէնց ձեր ստացած առաջի իրիկուն յանձնել է մեր առաջնորդին, զգուշացնելով նրան, որ

այդ փողով նա աշխատում է ապագայում նոր որոգայթներ լարել ձեր դէմ։ Հայրս ասես կարդացել է այդ անիրաւ մարդի սիրտն ու միտքը։ Առաջնորդի հետ նրանք ստուգել են տուած գումարի որքանութիւնը, վաւերացրել են այդ մի գրութեամբ։ Շատ խելօք եպիսկոպոս է, ամեն տեղ մարդիկ ունի, ամբողջ իր ոյժով ոտքի է կանգնում, երբ մէկն ու մէկը ճշմարտութեան դէմ է գնում։ Այժմ Փշտօենց Մարգարի պոչը նրա ձեռքին է։ Ասում են, Սագօն է դուրս տուել գաղտնիքը. Մովսէսն էլ այդ խոստովանել է առաջնորդին, և այդ խոստովանութեան միջոցին մարդիկ են եղել կից սենեակում, որոնք և հաստատել են այդ ամենը։ Մի խօսքով, եթէ նա չհանդստանայ, նրա տուած Յուդայի արծաթը իրան կ'շպրտուի, և առաջնորդը ինքը սպառնում է դատ բաց անել։ Տեսնում ես, որ արդարութիւնը յաղթանակում է։

—Փառք քեզ, Աստուած, անմեղների պաշտպան Աստուած։

—Վերջապէս, եթէ այդ էլ չլինէր, մի՞թէ կարծում ես թոյլ կտայի բաժանել քեզ ինձանից։

—Այդ ես գիտեմ։

—Վա՜յ, ես մոռացայ քեզ յայտնելու ամենագլխաւորը. հայրս վաղը կամ միւս օր բացակայելու է դէպի սահմանը։

—Մի՞թէ, ինչ կայ որ։

—Շատ բան, Սանդուխտ ջան, նա չի ուզում, որ մարդիկ նայեն նրա բարեգործութեան վրայ իբրև նախամտածուած մի պատրուակի այն դէպքում, եթէ մենք ամուսնանանք, այլ ուզում է ստուգել, թէ որքան ճշմարիտ են շրջող խաբրիկները։

—Ի՞նչ խաբրիկներ, ինչեր ես այսօր խօսում, Վարդատ։

—Լաւ բաներ, լաւ խաբրիկներ, հայրս ուզում է իմանալ, թէ արդեօք ճիշտ է, որ քո հայրը կենդանի

է և եթէ այո, հնարներ գործ դնել վերադարձնելու նրան իր տուն տեղի վրայ, և այն ժամանակ թող նա տնօրինէ իր աղջկայ բաղդը։ Մի խօսքով, թէև հայրս գիտէ մեր յարաբերութիւնների մասին, բայց ուզում է հեռու մնալ չար լեզուներից մէկ՝ միւսը՝ որ մխիթարած կլինի մի անտէր, անգլուխ օջախի, որի վրայ գայլի տենչանքով են նայում Խօջայ-Մարգարները։

—Հայրս կենդանի է ... հեկեկաց դժբաղդ աղջիկը և տարիների ընթացքում դիզուած դառնութեան արտասուքները արագ-արագ անընդհատ ցայտեցին նրա աչքերից։ Այժմ միայն անկարող էր նա զսպել իր սեռին յատուկ թուլասրտութիւնը, և նրա անարդուած, վիրաւորուած ինքնասիրութիւնը աւելի ևս բորբոքուեց, աւելի ևս վառեց այն ահաւոր կրակը, որի գոյութիւնը ճանաչել չէին ուզում մարդիկ, որովհետև ինքը որբ էր, անտէր էր, աղքատ էր։

—Ինչու՞ ես լաց լինում, եթէ ես իմանայի, որ դու փոխանակ խնդալու կարտմես, երբեք չէի յայտնիլ քեզ այդ։

—Չէ, չէ, Վարազդատ ջան, ինքս էլ չեմ հասկանում, թէ ինչի պիտի լաց լինեմ։ Մի վիրաւորուիր, սիրելիս, դրանք բուռն գոհունակութեան արցունքներ են։ Ես անարժան եմ, որ Աստուած այդպէս վարձատրում է ինձ։ Լաց եմ լինում նրա համար, որ քանի քանի ինձ նմաններ կան, որոնք մարդիկ չեն, որովհետև որբ են. քանի-քանի ինձ նմաններ կան, որոնց մարդիկ արհամարհել գլ տեն, որովհետև նրանք աղքատ են, անտէր են. քանի-քանի ինձ նմաններ կան, որոնք կեանքի անհարազատ զաւակ են կոչւում, և մարդիկ դաղանային արենուշտ հակումներով լցուած՝ ամեն ժամ, ամեն րոպէ խաղում են նրանց սեաւոր ճակատագրի հետ։ Միայն ես բաղդաւորուելով, մի թէ կվերանայ այն անհուն, այն ահաւոր չարիքը, որի վշտալից ծալքերում լողում են անթիւ ու անհամար զոհեր։ Միայն ես սրբե-

լով իմ արտասուքները, մինթէ կլուեն այն ծով վշտերը, աղի արցունքները, որոնք հանապազ փաթաթուած են խեղճերի, անարգուածների պարանոցով։ Իմ հայրս, ասում էք, փութացել է այն սեւաւոր, այն վշտահիւս վայրերը սրբելու, ամոքելու թշուառների տառապանքը, բայց չէ՞ որ միևնոյն վիճակին է թողել իր հարազատներին։ Սրբել և որ դլխաւորն է վերջ տալ կեանքի անդնդախոր ծալքերում վազող արցունքների հոսանքին, լոկ անհատների գործ չէ՝ նրանք մէկ տեղ գուցէ հասնեն իրանց նպատակին, իսկ միւս տեղ՝ ոչ, ինչպէս հայրս։ Նա գուցէ շատ բան է արել, բայց առանց նրան, առանց քո հօրը ինչի էր նման մեր օրը։ Մինթէ մենք էլ այն վշտախորով երկրի տարաբաղդ զաւակների օրին չէինք լինի։ Այն լացի ու արիւնի երկրի մարդկանց առօրեայ խոցերին վերջ տալու համար, որոնք ահռելի չափերի են հասել և լայն ծաւալ ունեն բռնած, հարկաւոր է համախմբուած օգնութիւն, ուր թէ կին, թէ երեխայ, թէ ծեր, թէ ջահիլ, թէ հասակաւոր, թէ անհասակ, թէ աշխարհական, և թէ հոգևորական պիտի դեր ունենան խաղալու։ Մենակ իմ հայրը՝ քիչ է։

Որպէս մարմնացած դառնութիւն անվերջ խօսում ու խօսում էր այդ տարաբաղդ աղջիկը։ Տարիների ընթացքում ծով դառնութիւնը վշտի լեզու էր դրել նրա բերանում, և նա անընդհատ և բողոքում էր, և սգում, և ոգևորւում։

Վարաղդատը լուռ լսում էր և չէր համարձակւում ընդհատել նրան։ Նա նոր էր ըմբռնում, թէ այդ ճարպիկ աղջիկը իր մենաւոր դառնութեան մէջ շնորհիւ դիրք ու թղթի, որքան էր առաջ գնացել։

Եւ նա զուարճանում էր իր սանի վրայ։

XII

Ռոզկոյի խորհրդաւոր անհետանալը մեծ իրարանցում էր

առաջացրել ամբողջքրդական աշխարհում։ Ոչ ոք չէր կարող որոշակի մի բան ասել թէ նա ուր է։ Այսպէս էին շաֆում, այնպէս էին ձևում, սակայն ոչ մէկը խելքի մոտիկ չէր թուում։ Քրդական վրէժխնդրութեան կրակը վառն բոցերով բորբոքուել էր Ռուզկոյի հօր ամբողջ օրայում բոլորն էլ ջանքերը լարած՝ ձգտում էին, ինչպէս և լինի, գտնել յանցաւորին։ Սակայն քնած չէր և յանցաւորը։ Այդ օրից նա գրեթէ եռապատկեց իրան յատուկ զգուշութիւնը։ Բայց տեսնելով, որ անհրաժեշտ է մի առ ժամանակ հեռանալ այդ վայրերից, մինչ գրգռուած կրքերը կհանդարտուեն, նա վճռեց միայն որոշ ժամանակով հրաժեշտ տալ այդ վայրերին։ Սակայն հեշտ չէր նրան իրագործել այդ։ Ամէն անգամ, երբ նա կամենում էր հեռանալ, Խաղալէի կուսական դէմքը իր չքնաղ դեղեցկութեամբ ցցում էր նրա առաջին, և նա իր ամբողջ էութեամբ թուլանում էր։ Այստեղ նրա բոցավառ երևակայութիւնը ասես անվերջ շշնջում էր՝ «դու չպէտք է մենակ թողնես Խաղալէին. նա գիտակից է քո խորհուրդներին ինչպէս մարդ. նա նուիրել է քեզ իր սիրտն ու հոգին, որոնք տակաւին այնքան են անարատ մնացել, որքան անարատ են նրա հայրենի երկրի լեռների կատարները. առանց նրան դու չես գնալ»։

Մի երեկոյ, երբ Սահրատը այսպիսի հոգետանջ վարանումների մէջ էր, և մաղձալից փոթորիկներին դատապարտուած նրա ներքին աշխարհը մի խռովայոյզ ալեկոծութեամբ ծփում էր, նրան գաղտագնաց քայլերով մօտեցաւ Խաղալէն, որը իր սիրաբորբոք փսփսոցով հասկացրեց՝ մի քանի բոպէից յետոյ, երբ մութը աւելի կթանձրանայ, իջնել ձորակը։

Սիրած էակի պատուէրը Սահրատը ճշտութեամբ կատարեց։ Շատ չանցած՝ այդ տեղ եկաւ և Խաղալէն, որը փաթաթուելով նրան նստեց նրա կողքին, կանաչների վրայ։

—Սահրատ, դու չկարծես, թէ ես չեմ իմանում,

թէ ինչ մրրիկներով է բռնկուել քո սիրտը։ Խազալէն գիտէ ամէն բան. նա օր ու գիշեր հետևում է քեզ և կուզէ իմանալ քո վշտի պատճառը։

—Խազալէ ջանէ, ինչ կասկածոտ ես։ Ինչ վիշտ կարող է նորից բուն դնել իմ սրտում բացի քո և մեր ցաւատանջ երկրի ինձ հասցրած վշտից։

—Բայց չէ՞ որ դու համոզուած ես, որ ուիրդ ներածին չափ կարեկից ես եղել երկրիդ վշտերին. թող ամեն մէկը քո չափ արած լինի։ Այդ այդպէս է։ Իսկ իմ տուածը դու իրաւունք չունես վիշտ անուանելու, երբ լաւ գիտես, որ ես էլ անտարբեր չեմ դէպի քեզ և գուցէ աշխարհում քեզանից առաւել սիրելի բան չունեմ։ Միթէ իմ սիրտ ու հոգուց աւելին ես կարող եմ քեզ տալ։

—Խազալէ-ջանէ, ես աներկբայ եմ, որ դու այդպէս ես, և հէնց այդ էլ ինձ ցաւ է պատճառում, որովհետև ես կամենում եմ մի առժամանակ հեռանալ այս տեղից. բայց առանց քեզ անկարող եմ, այդ պատճառով և տրտմում է իմ հոգին։

—Ինչ միամիտ ես, Սահրատ, երբ Խազալէի հոգին ու միտքը քեզ հետ են, միթէ նա կզլանայ քեզ յանձնելու և իր ճակատագիրը։

—Ուրեմն գնանք, գնանք, իմ Խազալէ, մենք կարող ենք մի առժամանակ պատսպարուել Նախավկայի վանքում, որտեղից ես դարձեալ հետամուտ կլինեմ իմ ծրագրած գործին։

—Գնանք, Սահրատ ջան, բայց Խազալէն կարող է էնպիսի օրին սարքել, որ մերոնք քեզ չկասկածեն այդ բանում։ Ես իմ շորերովը կզուգեմ ու կզարդարեմ էն շուն Ըռզկոյի դիակը, որը կնետենք Տղմուտը, որ երբ նրանց պզմանները *) գտնեն, կասկածեն, որ էդ շունը գիտմամբ անհետացել էր, ապա յարմար բոպէին յայտնուել է իբր ինձ առևանգելու, բայց որովհետև ես յու-

*) Ազգականները։

սահատութիւնից իբր նետած եմ եղել ինձ Տղմուտը, նա էլ անկարող է եղել ապրել և հետևել է իմ օրինակին։ Իսկ նրա ստացած վերքերը և զգեստաւորութիւնը կմնան նրանց համար մի առեղծուած։ Մի խօսքով, իմ ու նրա պատմութիւնը կախուած կլինեն իրարից, և մեր անհետանալու ու կորստեան պատճառը կլինենք մենք։

—Իմ Խազալէ, դա լաւ մշուշով պատմութիւն կլինի, որ ըմբռնել, հասկանալ ու պարզել Սադայէն էլ անկարող կլինի։

—Մենք վաղ գիշերը կարող ենք այդ անել ու հեռանալ, բայց աւելի լաւ կլինի, որ ես, Սահրատ, մի քանի օրով առաջ հեռանամ քեզանից, ապա դու ինձ կգտնես Նախավկայի վանքում։ Ես այնտեղ կերթամ տղամարդի տարազով։

—Այդ հեշտ է ճարել։

—Ուրեմն մենք հասած ենք մեր մուրազին։

—Գր ևթ

—Ի՞նչու գրեթէ, ես Նախավկայի վանքում կընդունեմ քրիստոնէութիւնը, և ամեն բան։

—Այն ժամանակ դու ինձ ես յաւիտեան։

XIII

Գարնանային մի ամպամած առաւօտ էր։ Երկինքը մթին էր տալիս և քանի գնում խոժոռում էր ու առաւել ևս ահաւոր կերպարանք ստանում։ Մասիսի ստոր ոտներին յատուկ բոցակէզ արև չէր երևում, այլ միայն տեղ-տեղ էր նա իր գունատ երեսը արտաքս բերում, ապա նոյնքան աննշան փութիկոտութեամբ անհետանում էր թանձրաշերտ թուղպերի ծալքերում։ Անձրև չէր տեղում, այլ մերթակի հազիւ նշմարելի կաթիլներով մաղում էր նա այնպէս, որ տեղ-տեղ նրա գոյութիւնը մնում էր դարձեալ աննշմարելի։

Այս էր պատճառը, որ իջևանի աւանի խորդ ու

բորդ փողոցներում կեանքը իր սովորական դերի մէջ չէր։ Ոչ ոք չէր երևում փողոցներում, հատ ու կէտ երևացողն էլ գլխակոր աճապարում էր շուտ տեղն հասնելու, ուշք անգամ չառնելով, թէ ինչ է կատարուում իր շուրջը։

Բնութիւնը իր այս ու այն փոփոխութիւնների ժամանակը յաճախ իրան վիճակակից է դարձնում և մարդուն։ Երևի այս էր պատճառը, որ բնութեան այդ համատարած տրտմութեան քողը ասես սփռուած էր և ողջ աշխարհի ու մարդկանց ճակատին։ Այսպիսի րոպէներին թւում է թէ տիեզերքի համայն արարածները մի անբացատրելի, մի անխզելի գերմարդկային օղակով կապուած են միմեանցից այնպէս, որ մէկի հոգեկան ջերմագին հրճուանքը անցնում է միւսին, մէկի հոգու խորունկ դառնութիւնը վիշտ ու տառապանքը անցնում է միւսին, և այսպէս անվերջ։ Այդ ընդհանուր թախծութեան ու սեւաթոյր մշուշից զերծ չէր և Սեփանիկենց ապարանքը։ Այնտեղ թէև գերդաստանի անդամները վաղուց ոտքի էին կանգնել, սակայն բոլորն էլ մի ցաւոտ դառնութեամբ լցուած մի քանի ժամ էր, ինչ շրջապատել էին ինչ որէ մի մահճակալ, որի վրայ ծանր հիւանդութեան ճիրաններում մաքառում էր մի մաշուած, մի մահուան գոյներով պատած մարդ։

Այդ օր Սեփանիկը մոռացութեան էր տուել իր առօրեայ գործը, իր գերդաստանի մենակ ապրուստի աղբիւրը, իր վաճառականութիւնը։ Նա հիւանդի մօտին նստած՝ աշխատում էր մեղմել նրա տանջանքները և յոյս ու եռանդ ներշնչել նրան, որ նա չէ մեռնելու։ Այդ օր Սաթիկը ազնուագոյն փեթակի մէջ եղած թագուհու նման չէր աճապարել գործի դնելու իր տան անդամներին։ Նա չէր մտել խոհանոցը պատուէրներ տալու սպասաւորին այս ու այն խորտիկներ պատրաստելու։ Նա մոռացել էր իր հարազատ, իր անմեղ փոքրիկներին, որոնք մօր կողքին նստոտած՝ ակնապիշ ե-

ղած՝ նայում էին մէկ հիւանդին, մէկ իրանց մօրը, և չէին համարձակւում իրանց պահանջները յայտնելու, որոնց մասին ասես մոռացել էր մայրը։ Հոգեկան անկեղծ, ջերմ և մարդասէր կարեկցական զգացմունքները այնպէս էին համակել նրա ամբողջ էութիւնը, որ նա իրօք մոռացել էր, որ իր դստրիկը, իր Համազասպուհին և Վազգէնը դպրոց պիտի գնան, որ հարկաւոր է նրանց նախաճաշիկ պատրաստել և ճանապարհ դնել, նա մոռացել էր իր չարաճճի Վարդոյին, որին կաթ պիտի տաքացնէր ու տար։ Մի խօսքով, առաքինի տան, նոյնքան արժանաւոր ամուսինները մոռացել էին իրանց սեփհական ցաւերը և ճիգեր էին գործ դնում ամոքելու այն հիւանդի վշտերը, որի ով լինելը դեռ ճշտիւ չէին կարողացել իմանալ, այլ նայում էին նրա վրայ, որպէս մի պանդուխտ, անտուն ու անտեղ հիւանդի վրայ, որին օգնել քրիստոնէական ջերմ պարտականութիւն էին համարում իրանց համար։ Սեփանիկը հանդիպելով նրան իրանց հարևան գիւղում և տեսնելով, որ նա թոքերի բորբոքումով ծանր հիւանդ է, որին ոչ ոք չկար օգնական, հարկ էր համարել պատսպարել և խնամել նրան։

—Մաթիկ, երեխաներին իզուր ես դու ականատես դարձնում այսպիսի երևոյթների. թող նրանք այդքան վաղ չիմանան, որ մարդկութեան պարանոցին անվերջ փաթաթուած են դառնութիւնների, վշտերի, ցաւերի, լաց ու արցունքների տանջանքները։

—Ընդհակառակն, Սեփանիկ, թող նրանք հէնց այժմեանից նշմարեն մարդկանց տառապանքները և ըմբռնեն, որ մենք հարազատների հոգատարութեամբ համակուած՝ աշխատում ենք մեղմել մերձաւորի ցաւերը։ Գի՞տես, որպիսի ցանկալի և արդիւնաւէտ զգացմունքներ կզարթեցնէ մեր այս բռնած ընթացքը նրանց մատաղ սրտերում։ Այո, թող կարեկցող զգացմունքները խոր արմատներ դնեն դրանց սրտերում։ Եւ որքան վաղ, այնքան լաւ։

— Ես, Սաթիկ ջան, հակառակ չեմ դրան, միայն կարեկցող զգացմունքները այլ կերպ էլ կարելի է բռնկել նրանց սրտերում: Իսկ այսպիսի պարագաներում նրանց մատաղ սրտերում որքան կարեկցական զգացմունքներն են ծնւում ու զօրանում, այնքան էլ մեծամաղձոտ և դառնութեան խռովագին վշտերն են իրանց խոցերը սերմանում, որոնք ապագայում կարող են աղետաբեր հետևանքներ ունենալ նրանց համար: Այդ պատճառով, երբ մարդ յիշում է մէկը չպէտք է մոռանայ միւսը: Երկուսն էլ թանկ են մեզ համար:

— Իզուր ես դու այդպէս երկչոտ աչքով նայում դէպի ապագան, որը ստեղծւում է հանդամանքների և անհատների շնորհիւ, նայած թէ, իրանց էութեամբ սրանք ինչ հայեացքների տէր մարդիկ են լինում: Դու այսպէս ես նայում գործի վրայ, իսկ ես ասում եմ, որ ծնողները պարտական են հէնց մանուկ հասակում բարձրացնել իրանց զաւակների համար կեանքի այն վարագոյրի մի ծայրը, որի տակ ծփումէ կեանքը իր հմայիչ, իր քաղցրաշունչ վայելքներով և սոսկալի ցնցող խոցերով ու դառնութիւններով, և տարիների ընթացքում ծնողները պիտի հետզհետէ պարզեն նրանց համար թէ մէկի և թէ միւսի նշանակութիւնը: Երբ երեխան տեսնումէ ծառը, նա պիտի իմանայ, որ նա տալիս է իւրաքանչիւր տարի անուշահամ պտուղներ, սակայն չպէտքէ ծածկել նրանից, որ այդ ծառը կարողէ ենթակայ լինել հազար ու մի փոթորիկների, որոնք միշտ էլ կարող են կրստաբեր հետևանքներ ունենալ հէնց այդ ծառի համար: Իսկ ապագայում, երբ նա կճաշակէ պտուղի քաղցրութիւնը, նա իր սեփական փորձով կիմանայ, որ հէնց այդ պտուղի խորքումն էլ կարողեն որդեր լինել: Մի խօսքով, մանուկ հասակից երեխան պիտի գիտակից լինի, որ կան փոթորիկներ, բայց կան և դրանց համար արգելանքներ: Նա պէտքէ գիտենայ, որ կայ քաղցրութիւն, կայ և դառնութիւն, և մէկը

առանց միւսի կորցնում է իր իսկական նշանակութիւնը։ Դու վախենում ես, բայց ես ուրախանում եմ, որ մեր փոքրիկները ականատես են լինում այսպիսի երևոյթների, որոնք, դու վաղ ես համարում և որոնք աւելի շատ դասեր են նրանց համար, քան ուսուցչի տուածը։ Ծնողների սեպուհ պարտականութիւնն է կեանքի դասերի մէջ վարժեցնել իրանց զաւակներին, որը անում եմ այժմ և ես։

—Էհ, Սաթիկ, շատ հեռու գնացիր, հէնց ես էլ քեզ հետ համաձայն եմ, որ ծնողները պարտական են կեանքի դասերի մէջ վարժեցնել իրանց զաւակներին։ Սակայն ցնցող երևոյթների ականատես անելը նրանց փայլուն ապագայ չի խոստանում։ Նախ քան այդ ծնողները պիտի թեթևակի պատմեն, նկարագրեն նրանց կեանքի դառնութիւնների մասին, ապա ցոյց տան այդ իսկական դառնութիւնը իր սոսկալի դոյներով։

—Այդ աւելի վատ, յաճախ մարդը դայլի լոկ անունից աւելի է փշաքաղւում, քան երբ նա յանկարծակի է յայտնւում։ Պատմուածքներից յաճախ աւելի են երեխաները սարսափում, քան թէ իսկական այդ սարսափը։ Կարելի է սարսափը ցոյց տալ և տեղն—տեղ պատմել նրա մասին...

«Օֆֆ... ծանրագին և խուլ ձայնով հառաչեց հիւանդը, որը վայրկենաբար բաց արեց իր մտախոհ աչքերը, նայեց իր շուրջը, ապա փակեց նրանց։

—Ինչ ես ցանկանում, ասա, մենք այստեղ ենք,—հարցրեց Սեփանիկը։

Հիւանդը չլսեց նրան, Սեփանիկը կրկնեց հարցը, որից յետոյ նա դարձեալ բաց արեց աչքերը։

—Ով էք դուք,—հարցրեց նա։

—Ես քո եղբայրն եմ, եթէ այդ էլ չես ուզում՝ ես հայ եմ, և դու հայի յարկի տակն ես գտնւում։

—Ախ, հառաչեց դարձեալ դժբաղտը—, հայի յարկի տակ, հայի... միթէ նա դեռ յարկ ունի, միթէ

տակաւին անգութ ձեռքերը կանգուն են թողել նրան... միթէ նրանք տակաւին չեն կործանել նրան հիմնայատակ... բայց չէ...աչքերովս ես ի՞նչեր չտեսայ,... կործանուած տաճարներ, մոխրի կոյտեր... մարդկանց լճացած, մարդկանց լեարդացած արիւն..., ո՜հ, որքան անմեղութեամբ էր բուրում։ Այդ բոլորը ես տեսայ... միթէ այդպէս չէ եղել իմ ճանապարհը... Եւ ո՞ր տեղից կարող եմ ես մի այսպիսի յարկի ներքոյ գտնուել։ Չէ, չէ, հեռու ինձանից անրջական պատրանքներ... ձեր ասած յարկերից, ա՜խ, այլ ևս չկան...

—Մի վրդովուէք, եթէ այդպիսի յարկեր չկան, լաւ գիտցէք, որ դուք բարեկամի յարկի տակ էք հանգչում։

—Բարեկամի... այդ ես ունեմ, բայց մի՞թէ ես գտայ նրան... Ոչ, ոչ, Դուք Սահրատը չէք... Նա օ՞ֆֆ... հեռու է, հեռու և դուցէ մրափած յաւիտենականութեան մրափով... այս հերոսները երկար չեն ապրում... արիւնոտ երկիրը, ա՜խ, քա՜նի-քա՜նի այդպիսները թաղեցմի՞թէ կենդանի կմնար Սահրատը... Թող սպասէ նրան Վարդերը. հերոսները մայրեր չունեն, նրանք ընդհանուրին են պատկանում. թող սպասէ նրան դժբաղդ Սանդուխտը... հերոսները զաւակներ չունեն... նրանց զաւակներն են... Դու Սահրատը չես... նա տուն չունի, նրա տունը՝ արար-աշխարհն է, նրա յարկը կապոյտ երկինքը... նրա անկողինը լերան ապառաժը, նրա բարձը անմեղների արիւնով ներկած քարը... Ախ, ո՞ւր է նա... Սեփանիկը պարզ հասկացաւ, որ իր մօտ գտնուում է ոչ հասարակ մահկանացու...

Նա իսկոյն մի նամակ պատրաստեց Նախավկայի վանահօր անունով և ուղարկեց նրան և վճռեց առ այժմ անդորրութիւն տալ Հիւանդին։ Սաթիկն էլ ըղձաց այդ, այդ պատճառով փութաց իր փոքրիկների հետ հանգիստ թողնել հիւանդին և, նախաճաշիկ տալով Դստրիկին, Համազասպուհուն ու Վազգէնին, ուղարկեց նրանց դպրոց։

Հիւանդի մօտ մնաց միայն Սեփանիկը։

XIV

Հիւանդը զառանցում էր, մերթ հանգիստ քնած մշշումէր։ Սեփանիկը զգաց, որ հիւանդի դրութիւնը դէպի լաւն է ընթանում։ Նա հասկացաւ, որ կրիզիսը անցել էր։ Մի երկու ժամից յետոյ հիւանդը զարթնեց և կաթ խնդրեց։ Սեփանիկը իսկոյն կատարեց նրա խնդիրը։ Հիւանդին կաթ խմացնելուց յետոյ հիւանդը պարկեց և մի քանի րոպէից յետոյ դարձեալ անուշ քնած էր նա։ Հետևեալ առաւօտ դեռ արշալոյսը չբացուած՝ նա սկսեց խօսել Սեփանիկի հետ, որը անկարող էր պարզել, թէ նա զառանցում է, թէ գիտակցօրէն զրոյց է անում։

— Ես մեռնում եմ քո յարկի տակ, սակայն չեմ կարող չխոստովանել քեզ. մեռելները, ասում են, երբ առանց խոստովանութեան են լինում, հանգիստ ու դադար չեն առնում իրանց գերեզմաններում... Ես չեմ ուզում քահանայ կանչել տալ ու նրան ասել իմ խոստովանանքը, որովհետև մեր սեաւոր աշխարհը դեռ քահանայ չունի այս բառի լայն մտքով... Այն որի կրծքում գոյութիւն ունի կեանքի այն գերագոյն ոյժը, որը սեղան կապերով կապում է համայն արարածները մի անխզելի օղակով, այն իմ այժմեան պարագաներում ամենից առաւել է ինձ համար։ Երբ ես մեռնեմ, դու պիտի ասես, որ իմ յարկի տակ կնքեց իր վախճանը մի հայ ուսուցիչ։ Ես քահանայի որդի եմ, որը իր առաքինի վարք ու բարքով և կենցաղավարութեամբ շատ բարձր էր կանգնած մեր արդի հոգևոր հայրերից... Մանուկ հասակիցս հայրս սկսեց վարժեցնել ինձ դպրոցներում... Ես շանասիրութեամբ առաջէի գնում ուսմանս մէջ... Վերջը իմացայ, որ հայրս ցանկանումէ, որ ես ապագայում քահանա դառնամ... Մի սոսկում անցաւ երակներովս, որովհետև ես թէև սիրումեմ հայաստանեայց եկեղեցու քահանայութիւնը, սակայն անկարող եմ նողկանքի անհուն դառնութեամբ չտեսել մեր արդի

հոգևորական ռեժիմը։ Եւ այսպէս, ես սկսեցի գլուխ կորցրածի նման միջոցներ որոնել խոյս տալ այդ ինձ համար պատրաստուող ապագայից, և այդ ինձ շուտ յաջողուեց՝ ես շուտով առանց կոպէկի գլուխ առայ ու հեռացայ հայրականս տանից և ինձ յաջողուեց մտնել մի միջնակարգ դպրոց, որտեղից ուսուցիչներ էին դուրս գալիս։ Մի քանի ժամանակից յետոյ հայրս իմացաւ և նամակներով յայտնեց իր զայրոյթը, որը ես երբէք չեմ կարող մոռանալ, թէ ինչպէս նա իր ամենաթունդ բարկութիւնը վերջացնում էր այս հայհոյանքով՝ «Թքեմ քո հանոզի երեսին»։ Վերջի տարուայ ամառը, երբ ես պիտի աւարտէի իմ դասընթացքը, ապրում էի ծննդավայրումս։ Ոհ այդ տարին և այդ ամառը ճակատագրական էին ինձ համար... Այդ տարին ես ճաշակեցի կեանքի, երիտասարդ կեանքի, ամեն քաղցր վայելքները և անտանելի դառնութիւնը ու վիշտը։ Այդ տարին մեր քաղաքի մրայոն և գեղեցկատեսիլ օրիորդներից մէկը իր սիրան ու հոգին ամբողջովին ինձ տուեց։ Ես հրճւում էի երջանկութեան նաւի վրայ և լողում էի կեանքի սիրաշունչ ծալքերով և ոչ մի տեղ չէի գտնում կայան իմ սիրաբորբոք նաւիս։ Հայրս իմացաւ, բարկացաւ, կշտամբեց և առաջարկեց վերջ տալ այդ բոլորին... Ես ուզումէի կատարել հօրս առաջարկը, բայց միթէ կկատարէր այդ սիրտս։ Ա՜խ, ոչ։ Եւ այդպէս այրուած, վառուած սրտով սեպտեմբերը ամսին ես թողի ծննդավայրս ու հեռացայ դէպի դրպրոց շարունակելու կրթութիւնս։ Իմ անմոռան Աննան իր սիրաբորբոք գրութիւններով իւրաքանչիւր շաբաթ մխիթարումէր ինձ։ Այդպէս անցաւ մի ամիս, որը առաւել ևս բարդեց իմ տանջանքները, հայրս անսպասելի կերպով վախճանուեց և ամբողջ մեր տան ծանրութիւնը ընկաւ իմ պարանոցին։ Եթէ չլինէր այդ ժամանակ իմ գողտրիկ, իմ անբաղդ Աննան, ես յաւիտեան կորած էի։ Դակայն անսիրտ ճակատագիրը այդ էլ խլեց ինձանից՝

ծնողները բռնի կերպով, ծեծ ու ջարդով ամուսնացրին իմ այդ սիրած ու փայփայած արարածին մի ատելի խանութպանի հետ։ Այդ օրից ահա անցել են տասնից աւել տարիներ, բայց իմ Աննայի գրած տողերը մի ցնցող ոյժով երերումեն ինձ. Ախ, Երօ ջան, Վահէ ջան,- այսպէս էր նա ինձ կոչում,- աշխատիր խանդարել, ապա գալ ես չեմ սիրի երբէք էն չան տղին։ Սպասումեմ, սպասումեմ, սպասումեմ,- մոռանալու բաներ են միթէ ընթերցող։ Ես մտամոլոր և ցնորուած մտքերով աշխատումէի մոռանալ ամեն անցած-գնացածը։ Բայց միթէ, հեշտ բան էր այդ։ Սակայն, ինչպէս մեր պապերը ասել են՝ «Աստուած մէկ դուռ երբ դնում է, միւսը բաց է անում»։ Եւ ճիշտ որ այդպէս էլ եղաւ։ Ինձ համար բացուեցաւ մխիթարութեան մի այլ դուռ, որը մասամբ մեղմեց իմ տառապանքը և հոգետանջ դրութիւնը։ Սկսուեցին մեր անտէր «վթանում» արիւնոտ գործերը կրկնուիլ մէկը միւսից ահռելի, մէկը միւսից ցնցող, և արիւն-արտասուքը թափուեց անխնայ ամեն տեղ... Ես մի հզօր ոյժ զգացի երակներումս. ես ճաշակել էի արիւնի և արցունքների դառնութիւնը և գիտէի նրանց խորութիւնը, ուստի սկսեցի կարելիին չափ սրբել հոսող արիւնը և արտասուքը, որը մասամբ թեթևացրեց վէրքերիս կսկիծը։ Այժմ էլ դուրս եմ եկել, և քանի ժամանակ է շրջում եմ այդ արիւնոտ երկրում ու փընտրում եմ մէկին, որը նոյնպէս արիւն ունէր իր սրտում և աճապարել էր այդ վայրերը՝ արիւնը արիւնով լուանալու։ Ես չկարողացայ տեսնել նրան՝ այդ ինձ չաջողուեց։ Այս ձախորդ հանգամանքները թերևս և մահս խանգարեցին այդ։ Բայց եթէ մեռնեմ, կուզէի, որ գերեզմանիս վրայ գրած լինէր՝ «Վշտահիւս Սահունի է այս», որ նաև հարազատներս գտնել կարողանան ինձ և գիտակից լինեն, որ դուք էք եղել իմ վերջին օրերի սփոփիչը...

—Դուք չէք մեռնիլ, Սահրատը կքանդէ մահուան

կապանքները,—յանկարծ լսուեց միւս սենեակից Սահրատի բարձրագոչ ձայնը, որը միաժամանակ բաց արեց դուռը և յուզուած ու շանթահար եղածի նման գրկեց Հիւանդի գլուխը։ Տեսարանը ցնցող էր։ Հիւանդը նոր ոյժ, նոր կեանք զգալով իր երակներում ցատկեց անկողնից և ուղիղ նստեց. բայց այդ վայրկենական էր՝ նա թուլացաւ, նուաղեց ու կորցրեց գիտակցութիւնը։ Կաբիք եղաւ սառ ջուր սրսկել նրա երեսին, որից փոքր առ փոքր ուշքի եկաւ և սկսեց դառնագին հեկեկալ։

Սեփանիկի նամակը իր ժամանակին էր հասել, և Սահրատը Խազալէի հետ փութացել էր ժամ առաջ հասնել հիւանդին։—Վարժապետ, պէտք չէ լաց լինել, ես գիտեմ, թէ դուք ինչու համար էք դռնէ դուռ ընկել՝ Սեփանիկը գրել է ինձ բոլորը. եղէք աներկմիտ՝ ես այժմեանից ձեր տրամադրութեան տակն եմ գտնուում. առաջնացէք, և միասին կվերադառնաք. ես գործեցի այն, որը պարտականէի գործելու, իսկ այժմ իմ հայրենի օջախը արժանի է ինձ իրան որդի կոչելու, այժմ ես կաշխատեմ նրա խոցերը բուժելու, որին օգնելու մարդասէր զգացմունքը ձեզ այստեղ է հասցրել։ Ահա այն, որը պիտի այն օջախի գլուխը անցնի և դարմանի իմ վաղեմի վիշտը. լեռների զաւակ է, քրդուհի է, բայց նախավկայի մենաստանում մտել է մեր եկեղեցու ծոցը,—Խազալէն մօտեցաւ և համբուրեց Սահունիի ձեռքը։

XV

Գիշեր էր, սարսափով լի գիշեր։ Մարգկային ոտքը վաղուց էր կտրուել մեր գիւղի փողոցներից։ Մթաշաղ խաւարը առաւել ևս ահաւոր էր դարձնում գիշերուայ այդ տագնապալի գոյութիւնը։ Ինչու խաւարի հետ կապուած է միշտ մթին, միշտ չարագուշակ ու խորհրդաւոր գործերի սոսկալի հասկացողութիւնը, որը դեռ մատաղ օրերից մի անբացատրելի գոյնով իշխում է

մանկան հոգու վրայ։ Այդպիսի սարսափով գիշերները շատ են եղել մեր գիւղերում։ Պատահել է, որ երեկոյեան անվրդով, առանց մազի չափ անգամ վախ զգալու մտել են անկողին է ու քնել, իսկ առաւօտը եղել է մի սգալի տեսարան՝ սրա տունն են կտրել, նրա աղջիկն են առևանգել, նրան խեղդամահ են արել իր անկողնում, և այսպէս անվերջ, և այս բոլորը գիշերուայ ժամերին։

Այդ գիշերները աւելի ահաբեկող սարսուռ են միշտ ստեղծել մանաւանդ այն խրճիթներում, ուր միայն հայ գեղջկուհին է եղել տան ընդհանուր պահապանը, որովհետև ամուսինը այս ու այն գործով, կամ յաճախ հենց «էնպէս» զարիբութեան է գնացած եղել։ Եւ այդպիսի խրճիթներ ոչ սակաւ էին մեր գիւղերում։ Գիշերուայ դիւային ուրուականը աւելի ևս ահաւոր էր դարձնում և մեր լճակը, որը այսպիսի ժամերին յուսահատ սգաւորի նման իր անվերջ վայ—վայով ասես դառնագին հեծեծանքներ էր շշնջում իր ափերին, որոնք իւրաքանչիւր անգամ, երբ ջրի համաչափ ալիքները զարնուումէին նրանց, տնքում էին մի այնպիսի ողբագին ձայնով, որ թուում էր թէ՝ վերքերով պատած մի հիւանդ է ընկած այնտեղ, որի խոցերը պատռումէ բժշկի նշտարը։ Եւ լճակի այդ խուլ հառաչանքը միշտ ինձ տանումէր դէպ այն վաղանցուկ հեռուն, որը անվերջ կորել է յաւիտենականութեան ովկիանոսում։ Սակայն կային մեր գիւղում և շատ անվեհեր երիտասարդներ, որոնք մի առանձնակի շնչով էին բռնում, երբ գիշերը վրայ էր հասնում։ Նրանք խոստովանում էին ինձ, որ իրանք նոր ոյժ, նոր կրակ էին զգում իրանց երակներում, երբ խաւարը իր ահեղ թափով ծածկում էր մեր շրջակայքը։

Այդպիսի երիտասարդներից էր և Վարազդատը, որը իր առանձին ընկերներն ուներ, որոնց հետ այսպիսի ժամերին շրջում էր այս փողոցից այն փողոցը և զանազան մարդութիւններ կատարում նրանց հետ։

Սակայն այժմ նա աւելի քան զգուշ էր դարձել և միշտ շրջում էր միայնակ, այն էլ կամ իրանց դռան էր կանգ առնում, մտածութիւնների գիրկն ընկած, կամ Վարդերի մօտն էր գնում, փոքր ինչ զրոյց անում Սանդուղտի հետ, սիրտ տալիս նրանց և այսպէս անվերջ։ Այսպիսի ժամերին, ինչ կարծիք, որ խօսակցութեան միակ առարկան իր հայրն էր։

—Դիտես ինչ կայ, Վարդեր, հայրիկս մենակ չի վերադառնայ,—ասում էր նա,— անպատճառ Սահրատին պիտի գտնի ու բերի։

—Ա՜խ, բալա՛յ, քօռանամ ես, միթէ ես էնքան բաղդաւոր կլինեմ, որ կորած, մեռած ասլանիս մէկ էլ արժանանամ տեսնելու։ Ո՞վ գիտէ, ինչպէս կորա՜ւ իմ բալաս, իզուր կարծիք է, որ նա, կենդանի է։

—Չէ, Վարդեր, հայրս դատարկագլուխ մարդ չէ. նա այսպիսի քայլեր չէր անի, եթէ մի բան իմացած, կամ լսած չլինէր նրա մասին։

—Ով է ասում, որ դատարկագլուխ էր, ոչ, նա գնաց մեր վերջին կասկածը փարատելու։ Նա հաստատ ոչինչ չգիտէր, այլ լոկ կասկածի զոհ է եղել։

—Բայց յանկարծ, որ այդ կասկածը իրականանայ, ինչ կասես այն ժամանակ։

—Մի պատարագ անել կտամ, մատաղ կանեմ։ Բայց միթէ էդ հաւատալու բան է։

—Տատի, քո ձեռը Աստուծոյ վէճից միշտ կախ պահիր, ով գիտէ, դուցէ, նա խղճայ մեզ։ Ա՜խ, միթէ նա պիտի թողնի, որ անիրաւութիւնը յաղթանակի, հըրճուի. միթէ նա Փշաքենց—Մարգարին անպատիժ պիտի թողնի,—վրայ բերեց Սանդուխտը։

—Հա, Սանդուխտ ջան, դուռը փակէ՛լ ես, ասում են, էն աւազակ Սաղօն սպառնացել է, որ կփախցնի քեզ,—նկատեց Վարազդատը։

—Հողեմ էնպէս աւազակի գլուխը, ով է նրան շան տեղ դնում,—ասաց Սանդուխտը։

—Չէ, բալայ, կարող է մարդիկ վերցնել հեռը,— զգուշացրեց Վարդերը։

Մինչ սրանք այսպէս խօսում էին, շների հաղոցը սուր կերպարանք ստացաւ։ Վարազդատենց փողոցի վրայ։ Վերջինս շտապեց դուրս թռչել դէպի այն կողմը։ Վարդերը և Սանդուխտը դուռը ամուր փականքով փակեցին և իսկոյն պարկեցին քնելու։ Փոքր ինչ հեռանալով Վարդերենց տանից, յանկարծ Վարազդատը իրան շրջապատուած տեսաւ մի քանի մարդկանցով, որոնք մի ակնթարթում բռնեցին նրան և կապեցին ձեռքերը։ Դրանց մէջ նա ճանաչեց Փշտօենց Մարգարին և Սաղոյին։

—Նկ մեզ հետ, մի վախեցիր, մենք քեզ փնտռելու չենք, այլ կպահենք մեր գոմում, մինչև մեզ յաջողուի Սանդուղտին էլ բերելու, բայց չկարծես թէ քեզ հաժար։ Դու էս քանի ամիս է, մեր ձեռքն ու ոտքը կապելես քո աչալրջութեամբ, և մեզ չէր յաջողւում թռցնելու այն համեղ կտորը, նկատեց հազիւ լսելի ձայնով խօսյայ Մարգարը,—հիմի ամեն բան շուտ կվերջանայ։

—Քաւթար,—կատաղութեամբ նկատեց նրան Վարազդատը,—լաւ իմացիր, որ դու կենդանի չես կարող նրան իրանց չեմից դուրս հանել, զօռով բան չիլինելու։

—Քեզ էլ քո խաթրով բռնել ու մեր տուն տանել չէր լինի, լակոտ, համա հիմի խաղալով կգաս։

—Ես կգամ, բայց դու չես մարսելու։

—Ընկիր առաջս, լակոտ, օձի փուշը լակլակը կուլ կտայ։

Գիշերուայ այդ պահուն մեր գիւղի այն ծայրից, ուր դոռոզ հոկայի պէս ցցուած էր Գեղ լեռը, հանգիստ ընթացքով գիւղն էին մտնում երեք հոգի։ Նրանցից երկուսը քրդական տարազով էին, իսկ միւսը հայկական։ Առաջիններից մէկը, մի թախծալի հայեացք ուղղեց լերան ստորոտից վազող առուակին, մի դառնագին ձայնով հառաչեց, ապա լռութեամբ շարունակեց իր ճանապարհը։

Ֆարիներիի ընթացքում պարփակուած կրակը կապադի քացերով բռնկուել էր նրա կրծքում, որը այժմ մի հուփ-կու թափով բորբոքուում էր այնտեղ։ Դեզ լեառը շատ քան էր շշնջում նրան, որը միայն իրան էր յայտնի։ Ընկերներից ոչ մէկը անգիտակ էր նրա ներքին խուլ կռուին։ Որքան անծանօթը առաջ էր շարժում, այն քան առաւել անցեալի ծանրախոհ մտքերը ճնշում էին նրա հոգին ու միտքը։ Այդ տեղ նրա ճանապարհին ընկած իւրաքանչիւր քար ու թուփը իւր ասելիքը ունէր նրան, և մէկը միւսից ցնցող ու ահաւոր։ Անծանօթը կարծում էր, թէ վաղուց, շատ վաղուց է մրափել իր կրծքում այն գազանը, որը մի ամեհի թափով գործում է ամեն անգամ, երբ բուն է դնում այս ու այն անարատ կրծքում։ Սակայն նա չգիտէր երբ մարդիկ վերատին վերադառնում են մի որև է վայր, որի հետ կապուած են ինչ-ինչ արկածներով, այդ արկածները նոր հոգի ու նոր կեանք են առնում և ցցւում առաջիդ և քո անցեալիդ անողորմ պատկերիդ աւելի սոսկալի գոյներով է կենդանանում առաջիդ։ Այսպէս նրանք մտան գիւղը։ Երկուսը անցան դէպի Դարբնենց փողոցը, իսկ միւսը՝ մտաւ Սահունենց տունը։ Այն երկուսը, մօտենալով Դարբնենց դռան, մի փոքր կանգ առին, ապա նրանցից մէկը փսփսաց միւսին՝ «Խաղալէ ջանէ, դու սպասիր, ես բարձրանամ կտուրը, մտնեմ հերդիսից, բաց անեմ դուռը, դնանք սուս ու փուս հանգստանանք. թէ չէ նոր դուռ ծեծել, զարթեցնել խեղճերին, որոնք սարսափահար կլինեն։ Մենք կառանձնանանք սաքուում, մինչ առաւօտ, վարժապետը կգայ կհաղորդի նրանց մեր գալուստը՝ վարժապետը վաղ է զարթնում։ Այս ասելով, նա բարձրացաւ տանիքը, զգուշութեամբ իջաւ հերդիսից, դուռը բաց արեց, և մի երկու րոպէից յետոյ նրանք առանց հանուելու անուշ խռմբացնում էին սաքուում։

Եկողները Սահրատն ու Խաղալէն էին, իսկ միւսը՝ Սահունին։ Որքան էլ զգուշութեամբ իջաւ Սահրատը

հերդիսից, սակայն պառաւ Վարդերը զարթնեց։ Քնի մէջ նա մի թրմփոց լսեց ու աչքերը բաց արեց։ Խրճիթում մութն էր։ Երկար ականջ դրեց, էլ ոչինչ չլսեց։ Ծերերը զգոյշ են, նա իր կասկածը փարատելու համար՝ ճրագը վառեց։ Խրճիթում ոչոք չկար։ Միայն Սանդուխտն էր, որ անվրդով խաղաղ քնի մէջ էր ընկղմուած։ Դրա անվրդով տեսքը աւելի ևս կրկնապատկեց նրա վախը, նրա երկիւղը։ Նա իսկոյն հագնուեց և ճրագը ձեռքին առաջացաւ դէպի մառանը։ Ոչոք չկար։ Անցաւ գոմը՝ ոչ ոք չկար։ Անցաւ սաքուն ու տեղն ու տեղը մնաց քարացած՝ այն տեղ անխռով մեկնուած էին երկու քուրդ։ Սարսափը մի ակնթարթում համակեց նրա ամբողջ էութիւնը, բայց որքան նա զօրացաւ, այնքան էլ ինքնապաշտպանութեան գիտակցութիւնը աճեց նրա մէջ։ Նրա մայրական ջերմ սէրը դէպի իր թոռը մի հզօր թափով վանեց նրանից երկչոտութեան օգին, և նա հենց առաջին բոպէից մտաւ իր դերի մէջ, նրա գլխում յղացաւ իր անելիքը։ Ինչ անէր. թողնել նրանց այդպէս և դուրս թռչել օգնութիւն գոչելու, թերևս ուշ լինէր, թերևս հարևանները ուշ ոտքի ելնէին, և աւազակները յաջողեցնէին ճանկել իրանց որոշած որսը՝ Սանդուխտը, ու անհետանային։ Ձեռքերը ծալել ու կանգնել, անկարող էր, վտանգը ահաւոր էր և ուղիղ նրա աչքերին էր նայում։ Երկիւղը, թէ անսպասելի անճարութիւնը ու անհաճոյ հանդիպումը այնպէս էին կուրացրել թշուառ կնոջը, որ նա հաշուի անդամ չէր առնում, թէ եթէ աւազակները եկել էին աւարի, կամ թոռան յափշտակելու, ինչու պիտի հանդիստ մեկնուէին քնելու։ Մի խօսքով, այսպիսի բոպէներում յաճախ մարդը ինքն էլ չէ իմանում իր անելիքը։ Այսպէս էր և Վարդերը, նա խորին զգուշութեամբ վերադարձաւ խրճիթը, այնտեղից վերցրեց կանեփի հաստ պարանը, ցնցող ձեռքերով օղակներ պատրաստեց նրա ծայրերին և մօտեցաւ քրդերին։ Ո՞րքան մեծ էր երկիւղի

սարսափը, որ տարաբաղդ կինը չկարողացաւ նոյն իսկ ճանաչել իր հարազատ զաւակին։ Նա ծերերին յատուկ զգուշութեամբ բարձրացրեց որդու գլուխը և օղակը անցկացրեց այնտեղ։ Ճանապարհի յոգնածութիւնը մի անասելի թմրութեամբ կաշկանդել էր նրանց անդամները, նա չիմացաւ թէ ինչ է կատարւում իր հետ, ապա նա նոյնպիսի զգուշութեամբ բարձրացրեց Խաղալէի գլուխը, որը նոյնպէս անցկացրեց օղակի մէջ։ Յետոյ բռնեց պարանի մէջ տեղը, և նրա ջլուտ ձեռքերը պատրաստւում էին ձգելու նրան, երբ տանիքից մի խումբ մարդկանց փսփսոց լսեց. նրան թուաց, որ քրդերի ընկերներն էին դրանք։ Նրա ձեռքերը անզգայ ցնցուեցին, պարանը վայր ընկաւ, և նա, մի աղիողորմ ճիչ արձակելով, ընկաւ դետին ուշաթափուած։

Ուղիղ այդ վայրկենին խրճթի խորքից հերարձակ, գիշերուայ մի վերնազգեստով բարկութեան կրակով լցուած՝ մերկացրած դաշոյնը ձեռքին սաքուն թըռաւ Սանդուխտը յուսահատութեամբ ճչալով,— «տատի, մի վախիր, ես հասայ»։

Մօր և աղջկայ աղիողորմ ճիչը ոտքի կանգնացրին քրդերին, որոնցից մէկը «Մարէ, զաւակս» գոռալով, օղակը պարանոցին գրկեց մօր և աղջկայ գլուխը։

—«Մայր»,—հեծկլտաց Սանդուխտը և նոյնպէս ուշաթափուեց։

—«Ջուր տուր, Խաղալէ-ջանէ, ջուր»։

—«Դա Սահրատի ձայնն է, տղերք, փախչենք և բաց թողնենք էն լակոտին»—շշնջաց տանիքում իր ընկերներին մի տարիքաւոր մարդ։

Դա Փշտոյենց Մարգարն էր։

ԼԵՒՈՆ ԽԱՆԶԱԴԷ

* * *

Վշտերի աշխարհ...
Երկաթից պիտի Զուլեղ նոր սրտեր.
Զորդին փոռած են դիակներ անթիվ,
Սուրբ ազատութեան արի զինուորներ:

Մութը կոխել է. Սեւ են մեր օրեր.
Հոգեւարքի ժամ. լեշկեր ուրուրնե՛ր,
Կերէ՛ք, լափեցէ՛ք մեր սիրտ մեր ուղեղ.
Մանո՛ւկ, մի՛ հեծեր, առ քեզ սուր, աղեղ.

Թոյլ են ձեռքերդ, բայց ջինջ են աչերդ,
Հոգիդ պատնէշ է քո մարմնի հաւար.
Թող ուժ տան բազկիդ վեմ ոգիներ
Մեռնող զոհերի անթիվ, անհամար.

Տես, խաւարել են աստղերն երկնքում,
Ամօթից սեւցել կաթնագոյն լուսին,
Քար կտրած մեռել թոյլերն օդում
Հնձուորն էլ դաշտում գերանդին ուսին:

Լսո՛ւմ ես: Հեռում խուլ իրարանցում...
Ասես հեղեղնէ ժայռեր գլորում.
Զայն տուր, ձայնակցի՛ր, այդ տանջուածների
Արեան գետերն են, այդ արցունքի ծովն որբ ու անտէրի:

Արիւնն ոչ ունի. արտասուաց ծովը
Հիմն ի վեր կանէ դահիճների բուն,
Ոհ, այս բոցափառ մահաբեր հովը
Անփառ կորչոտի կտայ ամենուն:

ՍՏԵՓԱՆ ԳԱԲՐԻԷԼԵԱՆՑ

ԻՆՉ Է ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹԻՒՆԸ՞)

(ըստ Մէնգէրի)

Քրիստոնէական եկեղեցին, որ իւր գոյութեան առաջին դարերում Հռոմէական տէրութեան տեղական հալածանքներին էր ենթարկուած՝ սկզբում հաւատացեալների մի ազատ ժողով էր, ուր ոչ մի ստիպողական իշխանութիւն չկար։ Միջին դարերում եկեղեցին իւր անդամների գործողութիւնները ենթարկում էր ճնշման և խիստ պատիժների, իսկ եկեղեցւոյ պաշտօնեաները իրաւունք ստացան իրենց անդամներին անբարոյական կամ յանցաւոր գործերի համար ոչ միայն տուգանքի ենթարկելու և բանտարկելու, այլ և մահով պատժելու։ Այսպիսով եկեղեցին, որ սկզբում մի բարոյական միութիւն էր, այս ժամանակներում ստիպողական իշխանութեան այն դերն էր իւրացրել, որ այժմ բացառապէս պատկանում է կառավարութիւններին։ Այժմ կաթոլիկ եկեղեցւոյ պատմական գործունէութիւնը, որ իրագործւում է միմիայն խոստովանքի միջոցաւ, արդէն կորցրել է իւր նշանակութիւնը և ձեւական է դարձել։ Ժամանակակից բողոքական եկեղեցիներն էլ բոլորովին հրաժարուել են որև է պատիժ սահմանելու ձգտումից և աշխատում են իրենց հաւատակիցների բարոյական զարգացման նպաստել մի մի բացառապէս քարոզներով, մխիթարանքներով և բարի օրինակով։ Սակայն եկեղեցւոյ ազդեցութիւնը դեռ այժմ բաւական զօրեղ է իւր հաւատացեալներին այս կամ այն գործողութիւնը կատարել դրդելու համար կրօնական խընդիրներում և առհասարակ յայտնի չափով դեռ ղեկավարում է մարդկանց վարմունքները։ Այսպիսով դուրս է գալիս, որ ոչ թէ մի, այլ երկու բարոյականութիւն կայ, որոնք եկեղեցին և պետութիւնը միմեանց դէմ կռուելիս՝ նոյնպէս ընդհարւում են իրար հետ։

Մինչև այսօր այս կռիւը սովորաբար որոշւում էր յօգուտ եկեղեցւոյ, որովհետև ժողովրդի լայն խաւերը նրա իշխանութիւնը համարում էին աւելի հին և ամուր քան թէ տէրութեան իշխանութիւններ։ Այսպէս վերջին ժամանակների պատմութիւնից բաւական է յիշել պրուսական կառավարութեան ընդհարումը պապի հետ, երբոր մարմնաւոր իշխանութիւնը պաշտո-

---

*) Լուսայ № 5—6.

նից հրաժարեցրեց բոլոր եպիսկոպոսներին, իսկ կաթոլիկ ժողովուրդը շարունակում էր ճանաչելու նրանց իշխանությունը։

Երրորդ ֆակտորը, որ ստեղծում է առանձին բարոյականությունը՝ դա տնտեսական դասակարգերն են։ Սկզբում այս տարրերը միմեանցից բաժան բաժան անհատներից էին բաղկացած, որ հետզհետէ սկսեցին զանազան հանգամանքներում միանալ և մշակեցին առանձին բարոյականության գաղափար։ Այժմ այս տարրերն են՝ ազնվականությունը, հոգևորականությունը, զինվորական դասակարգը, պաշտոնեաները, փաստաբանները, բժիշկները և արդիւնաբերողները, որովհետև դասակարգը մարդուն կապում է իւր հետ կենսական նշանաւոր նպատակներով և մանաւանդ տնտեսական և սոցիալական շահերով, ուստի և դասակարգային բարոյականությունը յետ է մղում եկեղեցական և պետական բարոյականությունը։ Բաւական է յիշել մենամարտության մասին եղած ծիծաղելի և զզուելի վէճը, որ դեռ շարունակւում է։ Պետական և եկեղեցական կանոնները թէև արգելում են մենամարտությունը, բայց իշխանություն ունեցողները ի նկատի առնելով զինուորականների տրամադրությունը ոչ միայն թոյլատրում են, այլ և ամեն կերպ խրախուսում։ Մի քանի արտօնաւոր դասակարգեր՝ օֆիցերները, պաշտոնեաները, փաստաբանները հսկողություն են տնօրինում իրենց ընկերակիցների մասնագիտական և մասնաւոր կեանքի վրայ, այսինքն վարչական իշխանություն են գործադրում և դասակարգային բարոյականության պահանջները խախտելու դէպքերում վարչական պատիժներ են նշանակում և մինչև անգամ իրենց շրջանից արտաքսում են յանցաւորներին։ Այսպիսով արտօնեալ դասակարգերը հնարաւորություն են ստանում փաթաթել իրենց դասակարգային բարոյականությունը և եսական ձգտումները ուրիշների վրայ ստիպողական միջոցներով և սրանից տուժում ստորին խաւերը, գիւղացիք, մանրավաճառականները, բանուորները, որոնք նոյնպիսի կազմակերպությունից զուրկ են։

Բարոյականության չորրորդ աղբիւրը կուսակցություններն են, որոնք իրենց ազդեցության ուժով վերոյիշեալ ֆակտորներից թոյլ են։

Իրենց նպատակների համեմատ կուսակցությունները անուանւում են քաղաքական, տնտեսական և գեղարուեստական։ Ամեն մի կուսակցություն իւր անդամների համար ստեղծում է առանձին կուսակցական բարոյականություն։ Կուսակցությունների մեծ մասը ձգտում է ոչ մի այն պահպանելու, այլ փոփո-

խելու գոյութիւն ունեցող պետական, եկեղեցական և հասարակական հիմնարկութիւնները, ուստի և կուսակցական բարոյականութիւնը յայտնի կերպով տարբերուում է սովորական բարոյականութեան կանոններից և այլ միութիւնների հասկացողութիւններից։ Այս երևոյթը տեղի է ունենում մանաւանդ այն դէպքերում, երբոր մի որև է կուսակցութիւն ծածկում է իւր նպատակները և գործունէութիւնը։ Այսպիսի հանգամանքներում կուսակցական և ընդհանուր բարոյականութեան մէջ կարող է ծագել ուղղակի սարսափելի հակադրութիւն։ Բաւական է յիշել մեր ժամանակի անիշխանականների աղանդը և նրանց քարոզները։

Կուսակցական պայքարների սաստկանալու ժամանակ կուսակցական բարոյականութիւնը շատ անգամ հերքում է ուրիշ միութիւնների բարոյական հասկացողութիւնները։ Այսպէս օրինակ Գերմանիայում բեֆորմացիայի ժամանակ երևնամեայ պատերազմի վերջանալուց առաջ բարոյական բոլոր միւս ֆակտորների մէջ իշխում էր դաւանաբանական բորոյականութիւնը, իսկ մեծ յեղափոխութեան ժամանակ, երբոր Յակոբանների կլուբը կառավարութիւնից էլ զօրեղ էր, Ֆրանսիայում բոլորին տիրում էր քաղաքական կուսակցութիւնների բարոյականութիւնը։ Խաղաղ ժամանակներում ընդհակառակը կուսակցական բարոյականութեան ազդեցութիւնը հասարակական կեանքում այնքան էլ մեծ չէ լինում։ Մի քանի կուսակցութիւններ թէև ձգտում են զօրեղացնել իրենց դաւանանքի ազդեցութիւնը նրանով, որ իրենց մարմիններին իրաւունք տալիս իրենց կուսակիցներին վարչական պատիժների ենթարկելու, բայց որովհետև քաղաքական կուսակցութիւնների պատիժը կարող է վերջանալ միմիայն կուսակցութիւնից արտաքսելով, որ առանձին մեծ հետևանք չէ ունենում պատժուածի համար, ուստի և այս տեսակ կուսակցութիւնները չեն կարողանում ստիպմամբ հպատակեցնել իրենց վարդապետութեան ժողովուրդի այլ դասակարգերը։ Ուրիշ ազդեցութիւն ունեն կեանքի վրայ տնտեսական կուսակցութիւնները, որոնք կարող են ազդել մարդու կենսական պայմանների վրայ։

Սրան գեղեցիկ ապացոյց կարող են լինել արդիւնաբերական բանուորների մասնագիտական միութիւնները, որոնք շատ քաղաքակիրթ երկրներում ստիպել են խոշոր նախաձեռնողներին, այլ խաւերին, ճանաչելու իրենց բարոյական կանոնները բանուորների և գործատէրերի յարաբերութիւնների մէջ։ Վերջապէս բարոյականութեան հինգերորդ աղբիւրը հասարակական կարծիքն է։

Գ. ԵՆԳԻԲԱՐԵԱՆ

Կը շարունակուի.

ԱՊԱԳԱՅ ՄԱՐԴԿՈՒԹԻՒՆ *)

(3000 թուական)

Պրոֆէսոր Պաոլո Մանտեգացցայի սոցիալական ֆանտազիա

Ե. Կառավարչական պալատն այցելելը.—Աշխարհը կառավարելու սիստեմը 3000 թուականին.— Պալատի չորս բաժինը՝ Առողջապահութիւն, Դպրոց, Արդիւնագործութիւն եւ Առեւտուր.—Ֆինանսական բաժին.

Պաոլոն մի քանի անգամ առաջարկել էր Մարիային գնալ զննելու համաշխարհային մայրաքաղաքի կառավարչական պալատը, բայց նա միշտ յետաձգում էր այդ զննումն ասելով, թէ քաղաքականութիւնից բնաւ ոչինչ չի հասկանում։ Վերջապէս մի գեղեցիկ առաւօտ գնացին։

—Աիրելի Պաոլո,—ժպտալով ասաց Մարիան իր փեսացուին ճանապարհին,—ես մի անզարգացած աղջիկ եմ, ուստի գուցէ չեմ կարող հասկանալ, թէ ինչպէս կարելի է մի կենդրոնից ամբողջ աշխարհը կառավարել։

—Ես քեզ հետ համաձայն չեմ, թէ դու անզարգացած աղջիկ ես,—պատասխանեց Պաոլոն,— և այս պատճառով վստահ եմ, որ կը հասկանաս, թէ ինչպէս է Անտրոպոլն այդ մեծ և բարդ գործից գլուխ հանում, մանաւանդ որ դրան հասկանալը երբէք դժուար չէ։

—XIX դարում, երբ ֆրանսական մեծ յեղափոխութիւնը 1789-ին յայտարարեց մարդու իրաւունքները, մարդիկ մի հսկայական քայլ արին առաջադիմութեան ասպարէզում, և գրեթէ ամեն տեղ Եւրոպայում հանրապետական կամ սահմանադրական վարչութիւն հաստատուեց։ Այդ ժամանակ մի իտա-

---

*) Տես «Լումայ» № 5—6.

լական մինիստր դիւտ արաւ, որ թէպէտ ըստ երևութին նչին էր, բայց իրօք խորին իմաստ ունէր, այսինքն՝ թէ Սիկիլիայում կամ Սարդինիայում վճարուող հարկերի մի ֆրանկը Հռոմում մի սու է դառնում. մնացած տասնիններն սուն ծախսւում է ճանապարհի և գլխաւորապէս աստիճանաւորների ոռճկի վրայ։ Իշխանութիւնը հարիւրաւոր և հազարաւոր մարդկանց մէջ էր բաժանուած, որոնցից ամեն մէկն անկախութիւն էր պահանջում, և դրանից ամեն մի քայլափոխում թիւրիմացութիւններ էին ծագում։ Բոլոր իշխանաւորներն, այսպէս ասած, ազատ ընտրութիւնների զաւակներ էին, բայց նրանց պատասխանատուութիւնը մինչ այն աստիճան անըմբռնելի էր, որ երբ կամեցան նրանց պատասխանատուութեան ենթարկել, տեսան որ այդ մտադրութիւնը նոյնչափ դժուար է իրագործել, ինչպէս ձեռքով ամպ բռնելը։ Համայնքներում կային համայնական խորհրդականներ, որոնց գլուխն էր սինդիկը (վճիռների վերահսկող). համայնական խորհրդականներից հաշիւ ու հաշար էին պահանջում նահանգական խորհրդականները, որոնց գլուխ էին կանգնած, կենդրոնական կառավարութիւնից նշանակուած պրեֆէկտները. յետոյ գալիս էին սենատը և պալատը, որոնք մշտապէս անհամաձայն էին իրար հետ, բայց միևնոյն ժամանակ մին առանց մեկի ոչինչ վճռելու իրաւունք չունէր։ Պալատի և սենատի գլուխ էր կանգնած թագաւորը, որ իրաւունք ունէր արձակել պալատը, և նրա ու սենատի քուէարկած օրէնքները փոխել։ Մինիստրները պատգամաւորների ձայների մեծամասնութեամբ էին մնում իրանց տեղերում և պարտաւոր էին յարմարուել նրանց և նրանց քմահաճոյքներին, անդադար մի օրէնքի փոխանակ միւսն առաջարկելով։ Այս բոլորի հետևանքն այն էր լինում, որ օրէնքները բնաւ չէին յարգւում և կատարեալ անկարգութիւն էր տիրում պետական կեանքի մէջ։

—Այն սոցիալական կարգ ու կանոնին հասնելու համար, —շարունակեց Պաոլօն,—որով մենք ներկայումս օգտւում ենք, շատ դարեր պէտք եղան։ Հաւաքականութեան կռիւը կապիտալիզմի դէմ պակաս ջանք չպահանջեց մարդկութիւնից, քան թէ պատերազմների և զօրաբանակների ոչնչացումը։ Դու ինքդ կառավարչական պալատը դննելով կը տեսնես, ինչպէս հեշտ է մի կենտրոնից կառավարել ամբողջ աշխարհը, երբ մարդկային հասարակութիւններն իրանք իրանց են կառավարում։ Ամբողջ աշխարհի նահանգներն այստեղ, Անդրօպոլում, են միանում, ուստի համաշխարհային, այսինքն համայն աշխարհի շահերին վերաբերուած հարցերը գլխաւորապէս այստեղ են վճռւում։

—Ամեն տարի մի ամսով հաւաքւում են Անդրոպոլում աշխարհիս ամեն ծայրերից պատգամաւորներ, նրանք ձայների մեծամասնութեամբ են ընտրւում և ոռճիկ նշանում իրանց աշխատանքների համար, նրանց մէջ կանայք էլ կան։ Նրանք իրանց միջից գլխաւոր են ընտրում, որ ստանում է պանկրատի տիտղոս։

—Պանկրատը մի տարուայ ընթացքում իր ձեռքին ունի համայն աշխարհի կառավարչական կապերը։ Բացի պատգամաւորների նիստերը ղեկավարելուց, նա նախագահում է բարձրագոյն խորհրդարանում, որ բաղկացած է կենտրոնական բաժինների, այսինքն՝ երկրագործութեան, հասարակաց առողջութեան, լուսաւորութեան, վաճառականութեան և արդիւնագործութեան վերահսկուչներից, որոնք նման են հին մինիստրներին։ Այդ խորհրդարանին կարող են ներկայանալ իրանց առաջարկութիւններով և շրջանների ու համայնքների մեծաւորները։ Մարդիկ, թէև քիչ ուշ, հասկացան, թէ իրանք բնութեան զաւակներն են՝ ինչպէս ամենամանր գործերում նմանապէս քաղաքականութեան մէջ, նրանք պարտաւոր են նրան նմանուել։ Երբ մոլորութիւնների կամ կրքերի պատճառով մենք բնութիւնից հեռանում ենք, անդադար սխալանքների մէջ ենք ընկնում, իսկ ընդհակառակը երբ հաւատարիմ ենք մնում նրան, մեզնում ամեն բան շատ լաւ է գնում։ Մարդուս յատուկ հպարտութեամբ, մենք երևակայում ենք, թէ մեր բոլոր գիւտերն ու հնարումները յատկապէս մեր ստեղծագործական ոգու արտադրութիւններն են, մինչդեռ իրօք նրանք լոկ բնութեան նմանողութիւն են։ Մենք անպայման նոր ոչինչ չենք հնարել, որ առաջ աշխարհում այս կամ այն ձևով գոյութիւն ունեցած չլինէր։ Մեր ուղեղի ամենաուժգին ճիգն անգամ չի կարող աւելի հեռուն երթալ քան բնութեան ոյժերի գործադրութիւնը և բնութեան մէջ մեզնից անկախ միշտ գոյութիւն ունեցող տարրերի պէսպէս եղանակով դասաւորութիւնը։ Մարդիկ վաղուց պիտի հասկանային այս պարզ ճշմարտութիւնը։ Ինչպէս որ մարդկային կազմուածքի մէջ բջիջները զատ—զատ անկախ կեանք են վարում, իսկ նեարդային համակարգութեան օգնութեամբ մի բարեկարգ կազմուածք են ներկայացնում, ճիշդ այնպէս մեր մոլորակի վրայ բոլոր համայնքներն անկախ են կառավարւում, բայց, մեր նեարդերը փոխարինող, հեռագրական հաղորդիչների միջոցով բոլորը միաւորւում են Անդրոպոլի հետ, որ միաժամանակ ներկայացնում է մեր մոլորակի հսկայ կազմուածքի և ուղեղը և սիրտը։ Իհարկէ, համայնքների

և գլխաւոր կենտրոնի միջև կան կապակցող կենդրոններ և կենդրոնիկներ, որոնք նոյն դերն են կատարում, ինչ որ նեարդային հանգոյցները մարդուս մարմնի մէջ։ Իւրաքանչիւր համայնք կամ կոմմուն կառավարւում է անկախ, սինդիկի և համայնական խորհրդի օգնութեամբ՝ շրջանների կամ նահանգների գլուխ են կանգնած, այսպէս անուանուած, պոդէստաները (դատաւոր) և նահանգային խորհուրդները։ Իսկ Անդրապոլում վճռւում են հարցեր և հրատարակւում օրէնքներ, որոնք համաշխարհային նշանակութիւն ունեն, համայնական և նահանգային օրէնքներն էլ ոչ մի դէպքում չեն փոխւում։

—Սրանից դու կարող ես տեսնել, Մարիա, թէ ինչպէս պարզ և մի և նոյն ժամանակ ինչ կարգով պիտի շրջան անէ կեանքը մեր քաղաքական կազմի մէջ,—աւարտեց Պաւլոն իր բացատրութիւնը, որով նա կամենում էր նախապատրաստել իր հարսնացուին կառավարչական պալատը զննելու համար, և որը Մարիան, արդարութիւնը պահանջում է ասել, լսում էր մեծ ուշադրութեամբ։

Շքեղ սանդխով բարձրանալով, մեր ճանապարհորդները մտան ընդարձակ ընդունարանը, որին հետևում էր մի ահագին դահլիճ՝ պանկրատի և ծառայողների պարապմունքի և բարձր խորհրդարանի նիստերի համար։ Ընդունարանից կարելի էր անցնել պալատի չորս կողմնակի շինուածքները, ուր գտնուած էին համաշխարհային կառավարութեան՝ չորս բաժինները՝ երկրագործութեան, հասարակական առողջութեան, լուսաւորութեան և արդիւնագործութեան վաճառականութեան հետ միասին։ Այդ չորս բաժինների տրամադրութեան տակ կենդրոնացած էին այն բոլոր ոյժերն ու միջոցները, որոնք անցեալ ժամանակներում, երբ միլիտարիզմն էր իշխում, վատնւում էին զօրքերի և պատերազմական նաւատորմիղների վրայ։ Պաւլոն և Մարիան գնացին հողամշակութեան բաժինը, որի մուտքի վերևը մի հակիրճ վերտառութիւն կար «Հող»։ Ամենից առաջ այստեղ նրանց հիացում պատճառեցին բազմաթիւ արձանները և գեղանի նկարչութիւնը, որ լիքն էր բնութեան և հողագործութեան նշանաբաններով։ Այդ նկարչութիւնը ճշմարտութիւն էր արտաշնչում և ունէր կենսուրախ բնաւորութիւն, ըստորում XXX դարի մարդկանց հայեացքով, ուրախութիւնն ու զուարթութիւնը անբաժան են քաղաքակրթութեան առաջադիմութիւնից, մռայլ գոյներ, որոնք մտաւոր անկման և կեղծաւորութեան յաղթանակի ուլեկիցներ են, ոչ մի տեղը չէին երևում։

Մի շատ սիրուիր ծառայող առաջնորդեց Գաալին և Մարիային «Հողի» զանազան ենթաբաժինները, բացատրելով, թէ ինչ հարցերի ուսումնասիրութեամբ են զբաղուում այս կամ այն ենթաբաժնի գիտնականները։ Իմիջի այլոց նա ցոյց տուեց նրանց մի մեծ տեղագրական քարտէզ, որի վրայ սպիտակ, կարմիր և կանաչ ներկերով նշանակուած էին ամբողջ մոլորակի մշակուած, քիչ մշակուած և բնաւ չմշակուած վայրերը։

—Ահա—ասաց նա,—որքան հող դեռևս անմշակ է մնացել։ Չնայելով որ քաղաքակրթութիւնն այսքան դար արդէն ազատ է պատերազմից, և վերջինիս վրայ վատնած միջոցներն այժմ գլխաւորապէս գիւղատնտեսութիւնը ծաղկեցնելու վրայ է գործադրում։

—Ներկայ վայրկեանում հերթական հարցը մեզնում այն է, թէ ինչ պէտք է անել կենդրոնական Աֆրիկայում և Ամազոնկա գետի երկարութեամբ տարածուած ահագին անտառները։ Ոչնչացնել արդեօք նրանց և տնկարաններով փոխարինել, թէ անջրդիացման միջոցով ցամաքեցնել և մաքրել աւելորդ բոյսերից։ Ագրոնոմները, տնտեսագէտները և բուսաբանները դեռևս համաձայնութեան չեն եկել այդ հարցի վերաբերմամբ, որ ամբողջ, մանաւանդ գիտնական, աշխարհի հետաքրքրութիւնն է շարժում, ըստորում շատ հազարաւոր մոլոններ տարածուած անտառների ոչնչացումը սաստիկ պիտի ազդէ ամբողջ մոլորակի կլիմայի վրայ։ Տեղական բնակիչների կարծիքներն են ժողովում, նաև պաշտօնապէս ուղարկած են մասնագէտներ Աֆրիկա և Ամերիկա՝ տեղնուտեղը գործն ուսումնասիրելու համար։ Անտառներ կտրելը և ճահիճներ ցամքացնելը՝ մի կողմից մշակելու պէտքական հողի տարածութիւնը կընդարձակէ, իսկ միւս կողմից ահագին օգուտ կը բերէ մարդկանց առողջութեան, որովհետև ճահիճները թունաւոր նիւթերի համար իբրև գլխաւոր աղբիւրներ են ծառայում։ Եւրոպայում ճահիճներ այլևս գոյութիւն չունեն, իսկ Աֆրիկայում և Ամերիկայում նրանք դեռ շատ են, մանաւանդ կուսական անտառներում։ Այդ հարցերի ուսումնասիրութեամբ զբաղուած են «Հողի» երկու ենթաբաժինների գիտնականները, բայց նրանց օգնում են և «Առողջութիւն» բաժնում աշխատող բժիշկները։

—Մեր «Հող» բաժնում,—շարունակեց առաջնորդը—զբաղուած են նմանապէս հաղորդակցութեան ճանապարհներով։ Մեզնում կան մասնագէտներ—ցամաքային, ջրային և օդային հաղորդակցութեան ճանապարհների ինժիներ։ Նրանց պարտաւորութիւնն է հոգալ հաղորդակցութեան ճանապարհների

բարելաւման մասին, ճանապարհների, որոնք կարևոր դեր են խաղում մարդկային ընտանիքի կեանքի մէջ։ Իդէպ ասեմ, որ հաղորդակցութեան ճանապարհների հարցում շատ զանազան կարծիքներ կան։ Օրինակ, շատ գիտնականներ օդային ճանապարհորդութիւնն առողջամիտ չեն համարում և նախապատուութիւն են տալիս էլէքտրական ճանապարհներին։

Հողագործութեան բաժնից մեր ճանապարհորդներն անցան ժողովրդական առողջութեան բաժինը, որի աշխատանոցներում գիտնականներ ու բժիշկներ մեծամեծ խնդիրներ լուծելով էին զբաղուած՝ ինչպէս ոչնչացնել հիւանդութիւնները, երկարացնել մարդկային կեանքը մինչև բնական սահմանը և խլել մահից նրան յատուկ երկիւղը և տանջանքը։ Ափսոս, որ 3000 թուին էլ, ինչպէս առաջ, շարունակում էին ծնուել բնութիւնից թոյլ և հիւանդոտ մանուկներ, որոնց տխուր և կարճատև կեանք էր սպասում, և որոնցից նոյնպիսի խախուտ սերունդ պիտի առաջանար։ Իրաւէ, բնական թոյլ անհատներին ամուսնանալու արգելքը մասամբ նուազեցրեց մարդկանց մէջ ժառանգական ընդունակութիւնը դէպի հիւանդութիւնները, բայց չարիքն արմատախիլ չարեց։ Անշնչան դեր չկատարեցին այստեղ և բժիշկների սխալանքներն ու մոլորութիւնները։

XIX դարի վերջին բժշկականութիւնը մի հսկայական քայլ արեց դէպի առաջ, գտնելով հիւանդութիւնների աղբիւրը ցաւ արտադրող միկրօբների մէջ, բայց այնու ամենայնիւ համաճարակները շարունակում էին գոյութիւն ունենալ անընդհատ մինչև XXV դարը, երբ մի նշանաւոր ֆրանսիացի գիտնական գտաւ մի ամենակարող նախապահպանողական սուբստանցիա, որն առանց վնասելու կաղմուածքին, կարելի է ներս թողնել արիւնագարձ երակների մէջ։ Այսպիսով հէնց որ երևում էին ժանտախտ, խօլերա, դեղին տենդ կամ մի այլ վարակիչ հիւանդութիւն, ցաւի սպառնալիքին ենթարկուած տեղի բնակիչները շտապով դիմում էին նոր միջոցին, և հիւանդանալու ամեն վտանգ անհետանում էր։ Այն երկրներում, ուր միջոցներ գործ չեն դնում սահմանափակելու ցաւին ընդունակ մանուկների բազմածնութիւնը և ուր չեն դիմում նոր միջոցի սրսկման, մինչև հիմա շարունակում են միկրօբներին սպանող ագէնտներ որոնել։

—Մի տարօրինակ համաշխարհային օրէնք է,—ասաց «Առողջութիւն» բաժնի տեսուչը, որ ինքն էր ցոյց տալիս այցելուներին իր բաժինը,—ծնողների թուի շատ մեծանալու հետ միասին երևան են գալիս համաճարակները։ Ո՞րքան թանաք

ու թուղթ է գործ դրուել Մալտուսի տեսութիւնը հերքելու համար, այնինչ բնութիւնն ինքը պարզապէս ասում է մարդկանց՝ «եթէ ուզում էք չափազանց բազմանալ, ապա մի տրտնջէք վաղաժամ մահու դէմ»։

Մեր օրերում մարդկային կեանքի երկարութիւնը նշանաւոր կերպով աւելացել է, շնորհիւ աղքատ դասակարգի դրութեան բարւոքման և առողջապահութեան զարգացման։ Մինչդեռ XIX դարում կեանքի միջին երկարատևութիւնը 28—30 տարի էր, այժմ նա հասնում է մինչև 71, իսկ մի քանի շրջաններում նաև 85 տարի։ Բացի դրանից, միլիոնաւոր մարդիկ մեռնում են ոչ թէ ցաւերից, այլ բնական մահով, ստատիստիկային նայելով, մահացութիւն բնական պատճառներից, ծերութիւնից, ներկայումս 100-ին 30 է. բայց գիտնականները յուսով են, որ կը գայ մի օր, երբ միայն ծերութիւնը կը լինի մարդկանց մահուան պատճառը։

«Առողջութիւն» բաժնից մեր ճանապարհորդներն անցան «Դպրոց» բաժինը։ Նախընթաց բաժնի վերատեսչի փոխարէն յայտնուեց մի նոր առաջնորդ։

—Այն բաժիններում,— ասաց նա,— որոնց դուք հէնց հիմա զննեցիք, զբաղուած են միջոցներ որոնելով, որ մարդկանց առողջութիւնը բարւոքեն և նրանց կեանքը երկարացնեն։ Իսկ մեր պարտաւորութիւնն է դաստիարակել և կրթել, հոգալ այն ամենի մասին, ինչ ազնուացնում է զգացումը և զարգացնում խոհականութիւնը։ Մարդկային իմացականութեան բարձրացումը և նրա ընդունակութիւնը՝ գիտակցաբար վայելել քաղաքակրթութեան բոլոր բարիքները—ահա մեր նպատակը։ Սակայն մի կարծէք, թէ Անդրօպոլիից աշխարհի բոլոր ծայրերը հրամաններ են արձակւում դաստիարակութեան և կրթութեան այս կամ այն մեթոդների մասին։ Ամեն մի հայրենիք, ամեն մի շրջան իր հայեցողութեամբ է կազմակերպում իր դպրոցները, և կենտրոնական կառավարութիւնն այդ կողմից ոչ մի իշխանութիւն չունի նրա վրայ։ Մենք միայն խորհուրդներ ենք տալիս և վճռում այն հարցերը, որ մեզ ուղարկում են քննելու համար,—աւել ոչինչ։ Անդրօպոլում կայ օրինակելի դպրոց —մոդել, որը դուք կարող էք զննել։ Աշխարհի բոլոր կողմերը մենք ուղարկում ենք տեսուչներ, որոնք ուսումնասիրում են տեղային դաստիարակչական և կրթական հաստատութիւնները, և նրանց մասին զեկուցագիր են ներկայացնում կենտրոնական կառավարութեան հայեցողութեանը։

—Տեսուչների անցեալ տարուայ գիտական ճանապար-

հորդութիւնները վերջնականապէս մեզ համոզեցին նրանում, թէ մարդկութեան երջանկութիւնը կախու�ունի երկու մեծ ֆակտորներից՝ քաջառողջութիւնից և կատարեալ հաւասարակշռութիւնից—մտածելու ընդունակութեան և զգացմունքի ուժգնութեան մէջ. միմիայն այդ երկու ֆակտորների ներկայութեամբ կարող են մարդկային էութեան բոլոր կողմերը հաւասարաչափ գործել, առանց յոգնեցնելու կազմուածքը։

—Դեռ ևս անցեալ դարում,—շարունակեց գիտնական առաջնորդը,—դաստիարակութեան և կրթութեան մէթոդները երկրագնդի վրայ չափազանց զանազանակերպ էին։ Ընդհակառակը ներկայումս նրանք շատ քիչ են, և ժամանակով բանն այնտեղ կը յանգի, որ ամէն տեղ մի ընդհանուր մէթոդ կը լինի։ Ահա 50 տարի է, որ Անդրօպոլում ժողովւում են մեծ մանկավարժներ, քննում են դպրոցական հարցեր և չանք անում մշակել այդ իդէալական մէթոդը։ Մեր բաժնի վերատեսուչը և պանկրատը—վերջին սոցիալական իերարխիայի ամենաբարձր աստիճանի վրայ է կանգնած, մի դիրք, որը կարելի է հաւասարացնել հին կաթոլիկ եկեղեցու պապի դիրքի հետ—անդադար բանակցում են միմեանց հետ այդ առաջնակարգ կարևոր հարցերի առիթով։ Այժմեան վերատեսուչը, ծագումով իտալացի, որ 20 տարուց աւելի է, ինչ ծառայում է բաժնում և ամենքից համաշխարհային հանճար է ճանաչուած, այնուամենայնիւ մշտապէս խորհրդակցում է բաժնային վերատեսուչների և նախկին պանկրատների հետ և մի քայլ չի անում առանց նրանց հաւանութեան։ Այդ մարդու ուղեղի մէջ է, կարելի է ասել, կենդրոնացած մարդկութեան օգտին աշխատող համայն աշխարհի միտքը։ Երբ նրա մօտ ժողովւում են խորհրդականներն ու վերատեսուչները, և դպրոցական հարցերի մասին վէճեր են սկսւում, նա միշտ ասում է՝ «գնանք, աշխարհի բաղկերակը շօշափենք»։ Ասպիսի խօսք եթէ մի ուրիշի բերանից դուրս գար, տարօրինակ և ինքնավստահ կերևար, բայց նրա բերնում միանգամայն բնական է, արտայայտում է մի մեծ, թէև պարզ, ճշմարտութիւն։

—Ներկայումս այդ մեծ մարդն, ի միջի այլոց, այն խնդրի լուծումով է զբաղուած, թէ կինը մինչև որ աստիճան կարող է հետևել տղամարդին գիտութեան մէջ։ Այդ հարցը, որ հին է ինչպէս աշխարհս, դեռևս վերջնականապէս չի լուծուած։ Շատ երկրներում մինչև հիմա դեռ բաց է մնացած հարցը, թէ արդեօք կարելի՞ է կնամարդին էլ թոյլատրել զբաղուելու տղամարդի գործով, թէ ամէն մի սեռի գործու-

նէութիւնը համապատասխան պիտի լինի նրա բնական կոչմանը։ Անդրոպոլեան դպրոցի վերատեսուչը, մի նշանաւոր գիտնական, նոյնպէս աշխատում է այդ՝ դեռևս չլուծուած հարցի վրայ։

—Մեզնում, Անդրոպոլում, կան կառավարչական դպրոցներ, որոնք օրինակելի կարող են լինել ամենի համար, բայց նրանց թւում գտնւում են շատ ու շատ մասնաւորներ, որոնց մէջ դասաւանդում են ինչ և ինչպէս կամենում են։ Համարեա՝ ամեն օր Անդրոպոլի լրագիրներում կարելի է յայտարարութիւնների հանդիպել նոր դպրոցների մասին, ուսման նոր առարկաներով։ Այս դպրոցների մեծ մասը բացւում է հարուստ քաղաքացիների և նոր գաղափարներ տարածողների ձեռքով։ Կառավարութիւնը բաւականանում է նրանով, որ հաստատում է ծրագիրներ և ուղարկում իր ներկայացուցիչներին ներկայ լինելու բժշկի, ինժինների, մեքենագէտի և այլ կոչում ստացողների քննութեանը։ Քննուողին երբէք չեն հարցնում, թէ որտեղ և ում մօտ է սովորել, նրան քննում են շատ խիստ թէ տեսական և թէ գործնական հարցերի վերաբերմամբ, և յետոյ արժանացնում են դիպլոմի կամ մերժում։ Բնական է որ անդրոպոլեան դպրոցներն աշխարհում ամենալաւերն են համարւում, ուստի նրանցից ստացուած դիպլոմներն էլ աւելի բարձր են գնահատւում։ Ամեն օր բազմաթիւ երիտասարդներ են գալիս Անդրոպոլ թանկագին դիպլոմը ստանալու։ Դպրոցական խորհրդներում գլխաւոր ուշադրութիւնն ուսանողի անհատական ընդունակութիւնների վրայ են դարձնում, և դրան համեմատ ղեկավարում են զբաղմունքները և առաջարկում այս կամ այն պարապմունքը։ Որովհետև աշխարհում մարդ չկայ, որ մի բանի ընդունակ չլինի, ուստի մեր կարծիքով անհատական ընդունակութիւնների որոշման մէջ է գտնւում այն գաղտնիքը, թէ ինչ պէտք է անել, որպէս զի կրթութիւնը շօշափելի օգուտ բերէ ամեն մէկին։ Բայց այդ որոշումը կարելի է անել միայն յայտնի անհատի մտաւորը մանրամասնօրէն ուսումնասիրելուց, կամ—աւելի ճիշդ—նրա ուղեղը քննելուց յետոյ։ Ափսոս, որ առանձին ճառագայթների օգնութեամբ ուղեղ քննելու մէթօդը դեռ վերջնականապէս չի կատարելագործուել։ Ներկայումս հոգեբանները և գիտնականները կարող են ասել, թէ այս կամ այն անհատի ուղեղն իր մէջ յանցաւորութեան հետքեր է կրում, կամ թէ նա ապուշի, միջին մարդի կամ հանճարի է պատկանում՝ դրանից հետու հոգեբանները դեռևս չեն գնում։ Նաև հարկաւոր է իմանալ, թէ ովքեր են եղել անհատի ծնողները, և ինչպէս են անցել նրա առաջին տարիները, որպէս զի

երևայ, թէ ուղեղի որ մասերն են բնականապէս աւելի թոյլ կամ ուժեղ, որոնց պէտք է զարգացնել, և ընդհակառակը, որոնց եռանդը թուլացնել։ Այդ բոլորը խիստ կարևոր են գիտական զբաղմունքները զնկավարելու և պարապմունք ընտրելու գործում։ Շատ դժբախտութիւններ են տեղի ունենում մեր հասարակութեան մէջ այդ կարևոր հարցերի չափազանց հարևանցի հետազօտութիւնից։

Հրաժարական ողջոյն տալով Դպրոցի բաժնի քաղցրաբարոյ գիտնականին, Պաօլօն և Մարիան անցան Արդիւնագործութեան և Առևտրի բաժինը։ Այստեղ մուտքի մօտ փառաւորապէս կանգնած էր ազատութեան հսկայական արձանը։

—Ինչպէս տեսնում ես, Մարիա,—ասաց Պաօլօն,—արձանը պատկերացնում է շղթաները խորտակող ստրկին։ Այդ շղթաները նշանաբան են այն շղթաների, որոնցով կալանաւորուած էին հին դարերում արդիւնագործութիւնն ու վաճառականութիւնը։ Զարմանքով ես մտածում, թէ ինչպէս էին կարողանում մեր նախնիքը համբերութեամբ տանել ստրկութեան պէսպէս ձևերը, որոնք տիրում էին մարդկային կեանքի զանազան սահմաններում։ Կարող ես երևակայել, ինչպէս մինչև XX դարի վերջը Եւրոպայի շատ քաղաքներ, որոնց թւում և իտալական բոլոր քաղաքները, չէիր կարող մտնել, մինչև որ բակեղէններդ, պայուսակներդ և նոյն իսկ քո անձդ չենթարկուէին անարգական և տաղտկալի զննութեան։ Բանը նրանումն է, որ բոլոր ամենագործածական առարկաների վրայ ներմուծական մաքս էր դրուած, և եթէ ճանապարհորդը գալիս էր արտասահմանից, մինչև անգամ եթէ հեռաւորութիւնը շատ քիչ լինէր, նա անպատճառ պիտի ենթարկուէր ֆինանսների վարչութեան և քաղաքային գվարդիայի զինուորների խուզարկութեանը, որոնք եթէ գտնէին նրա մօտ արտասահմանի ապրանք, յայտնի մաքս էին պահանջում նրա համար։ Փառք Աստուծոյ, որ դեռ XXI դարում Եւրոպայի և Ամերիկայի տէրութիւնների մէջ բոլոր մաքսերը վերացան, իսկ նրանից քիչ յետոյ հիմնուեցին Համաշխարհային Միացեալ Նահանգները, և մաքսատներն ամեն տեղից անհետացան։ Մեր ժամանակի տնտեսագէտները չեն հասկանում պրոտէկցիոնիզմ (հովանաւորութիւն) և ազատ առևտուր բառերը։ Կէցցէ՛ քաղաքակրթութիւն, կէցցէ՛ առաջադիմութիւն։ Հիմա համայն աշխարհի ազգերն ազատ կերպով փոխանակում են իրանց արտադրութիւնները, իսկ մաքսային

շինուածքները բերդերի հետ միասին թանգարանների փոխուեցին, կամ վաղեմի հնութեան աւերուած յուշարձաններ են ներկայացնում։

—Մեր բաժնում,—ասաց այցելուներին նոր առաջնորդը,—տնտեսագէտներն, արդիւնագործներն ու վաճառականները զբաղւում են համաշխարհային վաճառականութեան վերաբերուած կարևոր խնդիրների քննութեամբ, և աշխարհի ամեն ծայրերից այստեղ ուղարկուած ստատիստիքական տեղեկութիւնների հիման վրայ թանկագին խորհուրդներ և ցուցումներ են տալիս։ Բերեմ մի այդպիսի օրինակ ձեզ համար։ Երեք թէ չորս տարի առաջ Կանադայում մի մեծ գործարան շինուեց՝ շինութեան նոր նիւթ արտադրելու համար։ Այդ նիւթը, որ նման է սիլիկատի հետ խառնած ցեմենտի, շատ դիմացկուն է և գլխաւորն անչափ էժանագին, այս պատճառով էլ շատ շուտով չափազանց ժողովրդականացաւ։ Գործարանն, աջողութիւնից քաջալերուած, կրկնապատկեց արտադրութիւնը, բայց նոյն ժամանակին ճավա կղզու վրայ մի ուրիշ նոյնպիսի գործարան բացուեց, որ աւելի առատ ապրանք էր պատրաստում, ուրեմն հետևանքն անկասկած պէտք է լինէր գերարտադրութիւն։ Կենդրոնական վարչութիւնը տեղեկանալով այդ մասին իր ագէնտների զեկուցումներից և ստատիստիքական հաշիւներից, անյապաղ հեռագրով երկու գործարանին էլ ծանուցագրեց, խորհուրդ տալով չափաւորել արտադրութիւնը։ Եթէ այս նախազգուշութիւնն իր ժամանակին չտրուէր, որ տեղի ունեցաւ միայն անցեալ շաբաթ, գործարաններից մէկն անպատճառ մեծ ապազայում կը քայքայուէր։ Նոյնպիսի հոգատարութեամբ ենք վերաբերում մենք առհասարակ ամեն արդիւնագործական ձեռնարկութիւններին, հրահանգներ և խորհուրդներ տալով նրանց։ Մեր միւս պարտականութիւնը կայանում է արդիւնագործութեան արտադրած նոր ապրանքներն ուսումնասիրելու և վերլուծելու մէջ, որոնք, այսինքն ապրանքները, շատ անգամ չեն արդարացնում գնողների փայլուն յոյսերը։ Ինչպէս յայտնի է, այդ սահմանում մեծ մտապատրանքներ են տիրում, որոնց հետ միասին պատահում են և աղէտներ։ Ինչ վերաբերում է վաճառականութեան բաժնին, նրա պաշտօնը հաւասման է արդիւնագործութեան բաժնի հետ։ Սա գանձարանային վարչաբաժին չէ, այլ աւելի տեղեկատու բիւրօ։ Պէկինի, Նիւ-Եօրկի, Գենուայի կամ Լօնդօնի բոլոր խոշոր առևտրականներն ուղած վայրկեանին կարող են հեռագրով

տեղեկութիւններ ստանալ ամբողջ աշխարհի առևտրական շարժման, այս կամ այն նաւահանգստում նաւերի թուի, ապրանքների քանակի և որակի մասին և այլն։

Շնորհակալ լինելով արդիւնագործութեան և առևտրի բաժնի ծառայողից, Պաօլոն և Մարիան մեկնեցին կառավարչական պալատից։ Դուրս գալով նրանք ուշադրութիւն դարձրին ճիշդ հանդէպ գտնուող փոքրիկ միյարկանի տան վրայ, որի մէջ անց էին կացրած բազմաթիւ հեռագրաթելեր։ Մուտքի վերևը կար մի վերտառութիւն «Դրամ»։ Նրանք չզննեցին այդ հաստատութիւնը, իսկ Պաօլոն պատմեց իր ուղեկցուհուն բոլորն, ինչ գիտէր XXXI դարի ֆինանսների մասին։ Ծախքի գլխաւոր յօդուածներն էին—գիւղատնտեսութեան և բարեգործութեան զարգացումը, գիտական հետազօտութիւններն ու գիւտերը, նաև ժողովրդական առողջութեան մասին խնամատարութիւնը։ Իւրաքանչիւր համայնք իր սեփական բիւջէն ունէր և իր հայեցողութեամբ հարկեր էր դնում իր անդամների վրայ։ Անկախ սրանից ամեն մի շրջանի աւագը հասոյթ էր ժողովում քաղաքացիներից, որ ուղարկէ Անդրօպոլ համաշխարհային բիւջէն լրացնելու համար։ Հասոյթները տաքսայի համեմատ էին ստացւում, նայելով վճարողի դրութեանը, աղքատները միանգամայն ազատ էին վճարելուց։ Շրջանային խորհուրդները, խիստ և անարդար հարկի ենթարկուելու դէպքում, կարող էին բողոքներ ուղարկել Անդրօպոլի բարձր խորհրդարանը։ Սակայն 3000-թուին բողոքներ շատ քիչ էին լինում, ըստորում այն ժամանակ հարկի էին ենթարկւում միայն կարողաւոր մարդիկ և որովհետև հասարակական զգացումը սաստիկ զարգացած էր, ուստի ամեն մարդ յօժարակամ տալիս էր դրամ համաշխարհային մեծ շահերի համար։

Զ. Անդրօպոլի մարմնամարզարանը

Ծառերով շրջապատուած մի հրապարակում կային միմեանց հանդէպ երկու շինուածք։ Մէկում զետեղուած էր մարմնամարզարանն, իսկ միւսում—դպրոցը։ Մարմնամարզարանի մուտքի վերևն այս վերտառութիւնն էր գտնւում՝ «Առողջ եղէք և հետևեցէք բազդի ճանապարհով։ Ուժեղ եղէք և ազատ կը լինէք»։ Նախագաւթում կանգնած էր մի վիթխարի արձանախումբ, որ պատկերացնում էր Հերքուլէսին և Ապոլլոնին, իր-

րև սիմվոլական համազուգութիւն ֆիզիքական և հոգեկան ոյժերի։

Մեր ճանապարհորդները զանց չարին, իհարկէ, այցելել մարմնամարզարանը։ Դժբաղտաբար մենք միայն դրա համառօտ նկարագիրը կարող ենք տալ, որովհետև եթէ մանրամասն խօսենք այդ մկնակների դպրոցի բոլոր հրաշալիքների մասին, այն ժամանակ ահագին հատոր հարկաւոր կը լինի գրել։

Մարմնամարզարանը երկու կէսի էր բաժանւում՝ արական և իգական, որոնք ունէին և մի ընդհանուր սենեակ՝ ըմբշամարտային մրցութիւնները կամ տօնախմբութիւնները միասին կազմակերպելու դէպքի համար։ Մարմնամարզարանի վերատեսուչը տղամարդ էր, բայց կանանց բաժնում դասաւանդութիւնով բացառապէս կանայք էին զբաղւում։ Երկու կիսաբաժնի մուտքն էլ ազատ էր աշակերտ—աշակերտուհիների ազգականների և ծանօթների համար, թէ սովորական դասերին և թէ ժամանակ առ ժամանակ սարքուող մրցութիւններին։ Որովհետև առարկաները և նրանց աւանդման եղանակները երկու բաժնումն էլ միատեսակ էին, ուստի մեզ կարիք չկայ իւրաքանչիւրն առանձին նկարագրել, այլ կը խօսենք յատկապէս արական բաժնի մասին։ Հաստատութեան մէջ ընդունւում էին ոչ միայն ֆիզիքական զարգացման կարօտ մանուկներ, այլև պատանիներ և հասակաւորներ, որոնք ցանկանում էին կազդուրել իրանց ոյժերն, օրինակ, երկարատև և յոգնեցնող ճանապարհորդութիւնից առաջ, և այլն։ Մի ամիս անցնելուց յետոյ թոյլ անհատը դառնում է ամուր և ուժեղ։ Առաջին գործողութիւնը, որին սկսնակը ենթարկւում էր, ամբողջ մարմինը թաց սպունգով շփելումն էր կայանում, յետոյ ընդհանուր մասսաժ էին անում, բայց ոչ թէ ձեռներով, այլ մի առանձին գործիքով, որ յայտնի էր պանտոմասսա անունով։ Դրան հետևում էին՝ ամբողջովին սաւանի մէջ փաթաթելն, այնպէս որ միայն գլուխն էր ազատ մնում, ջրի մէջ վայրկենական ընկղմումը, դարձեալ մասսաժ և պէսպէս ֆիզիքական վարժութիւններ։ Որովհետև այդ գործողութիւններից մի քանիսը երկար էին շարունակւում և տաղտկալի էին, ուստի նրանց կատարելու միջոցին, զուարճութեան համար, երաժշտութիւն էր լինում։ Այդ բանը մտցրել էին բժիշկների խորհրդով, որոնք գտնում էին, թէ հոգու վհատուած տրամադրութիւնը կարող է վատ ազդել անհատի առողջութեան վրայ և մինչև անգամ արգելել ձեռքի այս կամ այն գործողութեանը, որ հասնի իր բժշկարար նպատակին։ Բացի ընդհանուր մասսաժից հարկաւոր դէպքում կատարւում էր և մասնաւորը

մի որևէ օրգանի վրայ։ Յաճախ մասսաժին կից կատարում էին՝ էլէքտրացում, ջերմութեան զանազան աստիճանների ազդեցութիւն, ջրաբուժութիւն և այլն։

Այսպիսով մարմնամարզարանը ներկայանում էր և մի իր տեսակի բուժարան։ Բայց նրա գլխաւոր կոչումն էր ծառայել իբրև դպրոց, որի մէջ սովորեցնում էին ձի հեծնել, վելօսիպէդ կառավարել, լողալ, մենամարտել, թռչկոտել և մրցման ամեն տեսակները։ Ամեն նարամուտ սկսնակի բժիշկները քննում են և նշանակում այս կամ այն մարմնամարզական վարժութիւնը։ Դասընթացքն աւարտելուց յետոյ, աշակերտները ստանում են դիպլօմներ, որոնք վկայում են, թէ նրանք փորձառու են ձի հեծնելում, լողալում և այլն։ Այսպիսի դիպլօմ չունենալն ուղղակի ամօթ է համարւում։ Տարին երկու կամ երեք անգամ մարմնամարզարանում ըմբշամարտային հանդիսաւոր տօներ են կատարւում, որոնց ժամանակ աշակերտներն ու աշակերտուհիները ցոյց են տալիս իրանց ճարտարութիւնը։ Այդ տօնակատարութիւնները տեղի են ունենում մշտապէս բազմաթիւ ժողովրդի ներկայութեամբ՝ ներկայ է լինում նաև պանկարտը բաժնային վերատեսուչների հետ։ Առհասարակ պէտք է նկատել որ ամեն տեսակի մրցման սէրը սաստիկ զարգացած է, իսկ առողջութեան բարւոքումը և մկնակային ոյժի աւելանալն, իբրև նրա հետևանք, համարեա միանգամայն ոչնչացրել են մարդկանց մէջ ջղայնութիւնը, որ XIX և հետևեալ դարերում նրանց համար պատուհաս էր դարձել։

Մ ՊՈՊՈՎԵԱՆ

(Կը շարունակուի)

ՆՈՐ ԿԵԱՆՔԻ ՇԵՄՔԻՆ *)

ՀՈՐՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՆ

Դահլիճը այնպէս, ինչպէս առաջին գործողութեան ժամանակ էր, միայն մի փոքր անկարգ։

I ՏԵՍԱՐԱՆ

ԱՐՈՒՍԵԱԿ ԵՒ ԱՍՏՂԻԿ

Արուսեակ. Գիտէս Աստղիկ, այժմ ես էլ սկսել եմ սիրել կեանքը։ Ամեն մի տգեղութիւն իսկոյն աչքիս է զարկում։ Այ, տես այս անկարգութեան մէջ ինչպէս կարելի է նայել, ինչո՞ւ չկարգաւորել, չմաքրել, որպէս զի այս բոլորը ժպտան մեզ։ Դէ, վեր մաքրենք, կարգի դնենք։ (Վեր է կենում և կարգի բերում) Ա՜, իսկ դու նստած ես։

Աստղիկ. Ես մտածում եմ մի հարսանիքի մասին, որ տեղի պիտի ունենայ կիւրակի երեկոյեան։

Արուսեակ. Դրանք թող ու այժմ, քեզ բան եմ պատմում։ Առաջ շարունակ իմ բերանն էին գալիս հետևեալ տողերը և իբրև մրմունջ կրկին դուրս գալիս՝

Գահավիժուեցայ, սարերին դիպան
Վառ երազներիս ապարանքները.

Իսկ այժմ կուրծքս յաճախ է բարձրանում և ուժեղ ձայնով դուրս բերում այնտեղից՝

Գարուն կանաչ և ծաղիկներ
Բերաւ փոեց մեր լեռներին
Եւ իշխանի հատու սուսեր
Խաղաղութիւն մեր ոտերին։

---

*) Լուսայ 5—6.

Ո՜, դուք մնացիք, իմ խեղճ ծաղկաբոյսեր։ Այժմ այլ ես չէք թառամիլ, ինչպէս ես առաջ։ Գնամ ցնցուղը բերիմ։ (գնում է)։

Աստղիկ. (Պարկած տեղից վեր է կենում) մեզ կենդանի ծաղիկներ են պէտք, կենդանի, այ ողորմելի։

Արուսեակ. (Ներս գալով և ջրելով). Խմեցէք, կեանք առէք։ Ես այժմ ապրել եմ ուզում և պիտի ապրեմ։ Ապրենք ուրեմն միասին։

Աստղիկ. Անցան օրհնեալ ժամանակները, այժմ կենդանի ծաղիկներ են պէտք։

Արուսեակ. Եւ միթէ սրանք կենդանի չեն, Աստղիկ։ Նրանք ինձ հետ էին ընչում։ Երբ ես առ ժամանակ դադարեցի նրանց հետ խօսելուց, տես, նրանք այսպէս դարձաւ։ Այժմ նրանք դարձեալ պիտի շարժուին և ամեն մի խօսքիս պատասխանեն բողբոջի մի թերև բացումով։ Ես նրանց իշխանն եմ։ (Երգում է) «Եւ իշխանի հատ ու սուսեր։

Խաղաղութիւն մեր սրտերին»։

Հա, մենք սովորել ենք ապրել իրարով։

Աստղիկ. (Ծիծաղելով) Շատ խորհրդաւոր կեանք է։

Արուսեակ. Ինչպէս կուզես անուանիր (դարձեալ ջրում է)։

Աստղիկ. (Լռութիւնից յետոյ) գիտես ինչ կայ, Արուսեակ. Նաղիկը նշանուում է. ահա թէ որտեղ են կենդանի ծաղիկները։

Արուսեակ. Օ՜, այ քեզ նորութիւն, որ վաղ պէտք է լինէր և ո՞ւմ հետ։ (կենտրոնանալով) Պարոն Մենակեանի՞ հետ։

Աստղիկ. Ոչ, մի երիտասարդ ինժենեռի հետ։

Արուսեակ. (Լռութիւն) և դու նախանձուում ես նրան։ (Լռութիւն) Ուղիղն ասիր, Աստղիկ (մտնում է և փարում) գուցէ դու էլ կկամենայիր.... և ես արգելք եմ լինում...

Աստղիկ. (Դէմքը դնում է նրա կրծքին) Ես... ոչինչ... չգիտեմ։ (Քիչ յետոյ բարձրանում և առանց քրոջ դէմքին նայելու) Ես պիտի գնամ Նաղիկի մօտ, խօսք եմ տուել (իսկոյն հեռանում է)։

Արուսեակ։ (Ետևից) Բայց սպասիր, Աստղիկ։ (Բարձր) Աստղիկ։

II ՏԵՍԱՐԱՆ

Արուսեակ. (մենակ). Այժմ վրաս էր եկել, կամքս կազմակերպուել։ Մի քանի անգամ լսել տուի ձայնս, որից յետոյ ինքս ինձնից զոհ, կարծում էի թէ արդէն զինուոր դարձայ կեանքի կուռում և յաղթանակներ պիտի տանեմ։ Բայց ահա

քոյրս... Խեղճ աղջիկ... ինչով է մեղաւոր նա։ Եթէ նոյն իսկ յաղթանակեմ, նա միշտ ցցուած կմնայ աչքիս առաջ և ես կմտածեմ ու կյանդիմանեմ ինձ, որ կարող էի բաղդաւորացնել նրան, բայց չարի, կարող էի նաև մօրս՝ այդ ողորմելի պառաւին բաղդաւորացնել, որը շարունակ կարծում է, թէ ինչ որ մի ձգտման համար տանջւում եմ, մի ձգտման համար, որից նոյն իսկ ես խորշում եմ։... Բայց ինչ կլինի, եթէ այդ բաղդաւորութիւնը տամ նրանց, որից թերևս եղբայրս էլ իւր մասը կունենայ ստանալու։ Բայց ինչ մտքեր եմ անում։ Այսքան կռուելուց, որոնածիս ուղին գտնելուց յետոյ վերկենալ և անմնատուր լինել մի երիտասարդի... Ո՛չ, ոչ, այդ չի կարող լինել։ Եւ Լևոնը, որին պարտական եմ խղճիս հանգստութիւնը, կամքիս ոյժը, ճանապարհիս ուղղութիւնը, ի՞նչ կասէ։ (Լռութիւն) իսկ եթէ յանկարծակի առաջարկեն—և այդ մայրս կանէ —նրան ընտրել։... Այո՛, ես միշտ երազել եմ գիտակցական սիրոյ մասին, մի սէր, որի հիմքը լոկ զգացմունք, խորհրդաւորութիւն, կոյր պաշտամունք ու երկրպագութիւն չէ, այլ շօշափելի, իրական մի բան, որ սիրած էակին բարձրացնէ ոչ իբրև բանաստեղծի, արուեստագէտի, այլ որպէս զինուորի, քիմիկոսի, նոյն իսկ անդամահատի կամ ճանապարհորդի, որի համար անհնարին է միայն բնութեան գեղեցկութիւններով յափշտակուելով բաւականանալ, այլ պատրաստ է ամեն քայլափոխում կանգ առնել յոգնածի հառաչը, վաստակածի տնքոցը լսելու։ (Ներս են մտնում Համբարձում և Աթանէս)։

III ՏԵՍԱՐԱՆ

ԱՐՈՒՍԵԱԿ, ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԵՒ ԱԹԱՆԷՍ.

Համբարձում (Խիստ լուրջ) Ո՞ւր է մայրդ։

Արուսեակ. Տանը չէ, գնաց Մարիամ հօրաքրոջ մօտ։ (Ուզում է գնալ)

Համբարձում. (Սառն) Մի գնար։ (Բեռուն) նստիր քեռի, տեսնենք ինչ ենք անում։ (Լռութիւն)

Աթանէս. Ի՞նչ պէտք է անենք, նա խօ չի ուզիլ, որ մենք անպատիւ լինենք։ Կհամաձայնի ու վերջացաւ, այնպէս չէ՞, Արուսեակ։

Արուսեակ. Չեմ հասկանում։

Համբարձում. Արուսեակ, դու երբևիցէ լրջօրէն մտածել ես եղբօրդ և առհասարակ մեր ընտանիքի մասին։

Արուսեակ. Նրանց վիճակը միշտ իմ հոգսի առարկան է եղել։

Աթանէս. Նոր սերնդի սովորութիւնն է այդ։ Հէնց որ մի բան ասում ես, խօսքով յետ չեն մնում։ Լեզուի տակը խոսեղ չկայ որ ծակէ, ամեն կողմ ազատ շարժւում է։ Բայց որ գործին ենք գալիս, մատը մատին չեն խփում։

Արուսեակ. Անխղճութեան օրինակներ դեռ ես չեմ տուել ես։

Աթանէս. Քեզ է միայն այդպէս թւում։

Արուսեակ. Եթէ ես կարևոր դէպքերում պաշտպանել եմ ուզում ինձ և այն ասում, ինչ խիղճս ու կամքս են թելադրում...

Համբարձում. (Խիստ) Եթէ խնդիրը միայն քեզ վերաբերուելիս լինի, կարող ես անել, ինչ կամքդ ու խիղճդ են թելադրում և հաւատացիր, ոչ ոք չի խանգարիլ քեզ։ Կարիր ինչ և ինչպէս կամենում ես, հագիր ինչ ցանկանում ես, բայց...

Արուսեակ. Այդ դեռ բաւական չէ։ Ամենից առաջ...

Համբարձում. (Ընդհատում է) Նախ լսիր։ Բայց երբ հարցը բոլորիս է վերաբերում՝ քեզ, քրոջդ, մորդ, վերջապէս ինձ, մեր հասարակական դիրքին, դու այդպէս վարուելու և քեզ միայն իրրև չափ ընդունելու իրաւունք չունիս։ Օրինակի համար ինչով է մեղաւոր խեղճ մայրդ, որ շարունակ տանջւում է։

Արուսեակ. Ես տանջող չեմ. եթէ նա իրեն տանջում է մի երևակայական ցաւով, ես ինչ անեմ։ Եթէ ես համոզուիմ որ յիրաւի ուրիշների տանջանքի պատճառ եմ, անիրաւսափելի, անմիջական պատճառ, կոչնչացնեմ ինձ, անձնասպանութիւնը գործեմ, ինձ գեթը կը նեռեմ։ Եթէ կայ մէկը, որ դանդատուելու տեղիք ունի ինձանից, այդ ինքս եմ։

Աթանէս. Կամ մենք չենք քեզ հասկանում և կամ դու՝ մեզ։ Վերջապէս դու պէտք է հասկանաս, որ եղբայրդ պարտաւոր չէ քեզ պահելու 20 տարեկան հասակիցդ յետոյ։

Համբարձում. Ոչ, քեռի, ոչ։ Բանը նրանումն է, որ դա չի հասկանում, թէ ինչ կապ կայ իւր և քրոջ, իւր և իմ մէջ։ (Հետզհետէ աւելի յուզուած) Վերջապէս մինչև կոկորդս հասցրեց դա։ Երևի ուզում է որ սրանք սպիտակեն (բռնում է մազերը), ու խանութում օրն ի բուն մաշուող ջղերս վերջապէս քայքայուին, կնճիռները ճակատս և քունքերիս պատեն և այնուհետև միայն ասէ «խեղճ եղբայրս»։

Արուսեակ. (Լացակրկնած). Բայց ես ոչ ոքի արգելք չեմ դառնում։

Համբարձում. Դու դարձեալ շարունակում ես քո յամառութիւնը։ Եղբայրս այնպէս տմարդի վարուից և ժենակ թողեց ինձ, դու էլ այդպէս ես վճռել տանջել մեզ։ Ո՞ւր կորչենք ձեր ձեռքից հապա։ (Ներս է մտնում Հաննան)։

Արուսեակ (վճռականօրէն) Կորցրէք ինձ այստեղից, ձեր աչքի առաջից, ընդունեցէք որ այլ ևս ես չկամ և այնուհետև հանգիստ կլինիք։

Աննա. Դարձեալ, աղջիկս։

Արուսեակ. Այո, մայրիկ. միակ միջոցն այս է, կորցրէք ինձ և դուք հանգիստ կլինիք։

Համբարձում։ Այդ չի կարող լինել։ Ես չեմ կարող խօսքս յետ վերցնել, դու Զամբակեանին պիտի գնաս։ Այդ պահանջում են քո, իմ և բոլորիս շահերը։

Աթանէս. Ի՞նչպէս կարելի է, կխայտառակուենք բոլորի առաջ։

Արուսեակ. Գուցէ բոլորիդ շահերը, բայց ոչ երբէք իմը (գնում է)։

Համբարձում. (Ետևից) Ո՞ւր (Աննային). Գնա, հասկցիր թէ չէ վերջը վատ կլինի։ (Գնում է քեռու հետ միասին)։

Աննա։ Մեռնէի ու այս բոլորը չտեսնէի։ Բայց քանի որ Աստուած այս թշուառ հոգիս չի առնում, ինչ անեմ։ Երևի մեղաւոր եմ, փառք իրեն։

IV ՏԵՍԱՐԱՆ

Արուսեակ (ժենակ.) (Ներս է մտնում միւս դռնից մի նամակ ձեռքին) ինչ է գրում, Աստուած իմ։ (Անհամբերութեամբ բաց է անում ու կարդում) «Յարգելի օրիորդ. թէև Ձեզ յայտնի պատճառով դժուարանում եմ այցելել Ձեզ, սակայն գիտեմ թէ ինչ է պատահել ու պատահում Ձեզ հետ։ Աւելորդ եմ համարում յորդորել Ձեզ, որ արի լինիք և չ՝ընկճուիք։ Եթէ որևէ կարիք ունենաք—ես պարզ եմ գրում—վստահ եղէք իմ անկեղծ բարեկամութեան վրայ, որը յուսամ խզած չէք լինիլ իմ և Ձեր եղբօր մէջ պատահած անախորժ դիպուածի պատճառով։

«Մորին յարգանքներով Լ. Մ.»

Հասկանալի է, կամենում է որևէ կերպով օգնած լինել ինձ, նաև պաշտպանած։ Ես մի մատաղ տունկ էի նրա համար, որը նա ամրացրեց և մտածում է առաջիկայ մեծ փոթորկից

պաշտպանելու։ (ԼուԹիւն) բայց... ինչը կապեց մեզ երկուսիս և... ըստ իս այսպէս սերտ... Աշոտի երախտիքը, ընկերական պարտքը... (Արագ) Գուցէ և սէրը... Գիտակից, բնաւորութեան տէր մարդիկ երևի այսպէս վաղ չեն ցոյց տալիս իրենց սէրը։... Բայց այդ միևնոյն և ինձ համար. ես մինչև այժմ այլ նպատակի եմ ձգտել և պիտի ձգտեմ։ Ես ուզում եմ ինքնուրոյն և ազատ լինել նոյն իսկ իրրև ամուսին, անկախ։ Իսկ դրա համար ես պէտք է աշխատել կարողանամ։

Ահա թէ որտեղ է ազատութեան և անկախութեան սկիզբը։ Եւ սակայն եղբայրս ստիպում է ինձ ու պիտի ստիպի մինչև վերջ։ (ԼուԹիւն) Բայց ինչու առաջ մեծը պիտի ամուսնանայ յետոյ փոքրը, առաջ քոյրը և յետոյ եղբայրը։ Ով մտածեց, յօրինեց, հրամայեց և սրբագործեց այս օրէնքը։ Եւ սակայն (մեղմանում) ինչ անի եղբայրս, երբ անգիտակցաբար հարկադրուած է գնալ հասարակութեան, այդ լիմար հօտի ետևից։ Այլ է Լևոնը, Աշոտը, նրանց համար թերևս հասարակութեան կարծիքը նոյն իսկ գոյութիւն չունի։ Ապա ուրեմն ես խանգարում եմ նրանց՝ եղբօրս, քրոջս, մօրս։ (ԼուԹիւն)։ Չէ, ես անկարող եմ թոյլ չտալ, որ նրանք ապրեն, իսկ դրա համար պէտք է որ ես... ընկնեմ... Եւ գնամ... Բայց ուր, Ջամբազեանին, ոչ ոչ, աւելի լաւ է մեռնել. Լևոնին, բայց Համբարձումը և այն սոսկալի տեսարանը, որով կապուած են նրանք։ Այդ անկարելի է։ (Վճռական տոնով) Ես չպէտք է լինիմ այն երեքի համար... Խեղճ Լևոն, երևի չգիտէ, թէ ինչ սոսկալի վճիռ է կայացնում իւր թուլակամ, երերուն բարեկամուհին։ (Երեսը ծածկում է ձեռքերով և ընկնում թախտի վրայ, երեսը բարձին)։

V ՏԵՍԱՐԱՆ

ԱՐՈՒՍԵԱԿ ԵՒ ԼԵՒՈՆ

Լևոն. (Ներս է մտնում կամաց և կանգնում դռան մօտ) Այս ինչ է պատահել, Աստուած իմ. հիւանդ է նա։ Եւ այսպէս մենակ։ Խեղճ աղջիկ, կղզուի վերջապէս ամուր բռունցքների մէջ, ես այդ գիտեմ, եթէ որևէ զօրաւոր ձեռք չիլէ նրան... Եւ ինչու իմը չլինի այդ ձեռքը, որ սխալուած չի լինիլ, եթէ իլէ այդ աղնիւ սիրտը նրանցից, որոնք չեն հասկանում նրան այլ լոկ սեղմել, տրորել ցանկանում։ (ԼուԹիւն. Արուսեակը հեկեկանքի ձայներ է հանում։ Լևոնը մօտենում է. կամաց) Յարգելի օրիորդ։ (Արուսեակը բարձրացնում է գլուխը,

նայում է Լևոնին և կրկին իսկոյն երեսը բարձին դնում) Օրիորդ Արուսեակ։

Արուսեակ. (Կամաց բարձրանում է, նստում ու մէջքը յենում դիւանին)։ Օ՜, պարոն Լևոն։

Լեւոն։ Որքան նուազած էք երևում։ Դուք քնած էիք և լաց էիք լինում երազի մէջ։ Որքան նեարդային էք։

Արուսեակ. Ո՛չ, ես քնած չէի։

Լեւոն. Ա՜, ուրեմն...

Արուսեակ. Ախ, պարոն Լևոն, եթէ իմանաք, թէ ինչ վճիռ է կայացրել Ձեր ծանօթուհին։

Լեւոն. Ո՞ր ծանօթուհին.

Արուսեակ. Ձեր դժբաղդ, անկամ, թեթև զեփիւռի առաջ իսկ ճկուող բարեկամուհին—ես։

Լեւոն. Ի՞նչ վճիռ, օրիորդ։ Ես թոյլ չեմ տալիս ինձ մտածելու, որ վատ վճիռ կը լինի այն։

Արուսեակ (կտրական.) Լաւը կամ վատը չգիտեմ, պարոն Լևոն, միայն վռնել եմ այլ ևս... չլինել, հասկանում էք, չլինել։

Լեւոն (զարմացած) Ես միանգամայն հիասթափուած եմ, օրիորդ Արուսեակ։ Դուք միանգամայն կերպարանափոխուել էք։ Մթթէ դուք այն օրիորդ Արուսեակը չէք, որ վճռեց իւր յուզմունքը, շարժումը և տանջանքը բողոք, պայքար ու պահանջ դարձնել։ Ասացէք ուրեմն, ի՞նչ պատահեց ձեզ հետ։

Արուսեակ. Եւ իրաւունք ունիմ, պ. Լևոն, այդ վարմունքի համար։ Ես կամեցայ այն երեքին տեղի տալ և տեսայ, որ աւելի լաւ է ես՝ մէկս չլինեմ, քան այն երեքը, որոնք իմ պատճառով տանջւում են։

Լեւոն. Եւ դուք յանցաւոր էք զգում ձեզ դրանում։ Նրանք տանջւում են հասարակական կարծիքից, որը չէ կարող բռնել նրանց և ասել. «Ինչո՞ւ էք այդպէս անում»։ Իսկ դուք կարող էք բռնել այդ երեքին և ասել. «ինչո՞ւ էք տանջում ինձ յանուն մի անբերևոյթ հասկացողութեան, թողէք ինձ, թէ չէ ես ձեզ չեմ ճանաչիլ այլ ևս»։ Օրիորդ Արուսեակ, թոյլ տուէք ասել, որ ձեր վճիռը փոքրոգութիւն է, որ ոչ մի բանով արդարացնել չէք կարող։

Արուսեակ. Ես շատ կուզեցի, պ, Լևոն և կշարունակէի կռուել, սակայն վախենում եմ, վախենում, որ կոիւս յաղթանակով չվերջանայ։ Նրանք զօրեղ են, պ. Լևոն, զօրեղ, որովհետև, ասում եմ առանց քաշուելու, կեանքս նրանցից է կախուած, առանց նրանց ես անկարող եմ ապրել։

Լեւոն. Երբէք չեմ կարող համաձայնել Ձեզ հետ, օրիորդ։ Շատ իրաւացի էք, երբ ասում էք, թէ անկախ կեանք պէտք է ստեղծել սեպհական աշխատանքի շնորհիւ, սակայն ընտանիքի ամենասրբազան պարտականութիւններից մէկն էլ այն է, որ օրիորդին այդ դրութեան հասցնելու բոլոր միջոցները տայ։ Դուք այդ ուղղութեամբ գործելով շատ բան էք արել երբ կէս գիշերը անցրել էք, պէտքը համարէիք արշալոյսին։

Արուսեակ. Բայց դժուար է, դժուար, պարոն Լեւոն։

Լեւոն. Սակայն ես համբերել եմ, համբերել և սպասել Աշոտի հետ միասին։ (Ներս է մտնում Աշոտ ճանապարհորդական շորերով, փոշոտուած, ջամբրուկը (чемоданъ) ձեռքին)։

VI ՏԵՍԱՐԱՆ

ԱՐՈՒՍԵԱԿ, ԼԵՒՈՆ ԵՒ ԱՇՈՏ

Աշոտ. Ահա և ես, անշուշտ չէիք սպասում։ Ո՞ւր է մայրիկը, տեսնենք ինձ պիտի ընդունի՞ իւր յարկի տակ։ (Արուսեակը թռչկոտում է ուրախութիւնից, Լեւոնի հետ միասին վրայ է հասնում և համբուրում եղբօրը։ Յետոյ համբուրում են Աշոտ և Լեւոնը)։

Արուսեակ. (Նորից փարում է)։ Աստուած իմ, Աշոտը։ Այդ ինչպէս եղաւ, սիրելիս, որ եկար։

Աշոտ. Լեւոնը։ Ոհ, որքան ուրախ եմ սիրելի քրոջս և ամենամտերիմ ընկերոջս տեսնելով։ Է՜, ինչպէս էք։ Արուսեա՞կ։ (դիտելով խոր) Քեզ լաւ չեմ տեսնում։ Լեւոն, քոյրս հիւանդ հո չէ եղել։

Լեւոն. Հիւանդ չէ, Աշոտ, բայց դրա մասին յետոյ կը խօսեն։ք, իսկ դու պատմիր մայրաքաղաքի մասին։ Բաւական ժամանակ է նամակ չունիմ։ Ճշմարիտ է որ արձակուած ուսանողներին նորից ընդունում են։

Արուսեակ. (Որ մինչև այժմ աչքերը մի տեղի յառած մտածում էր, յանկարծակի ընդհատում է) Պարոն Լեւոն, յիրաւի պէտք էր սպասել արշալոյսին։ Եւ ահա նա իւր գեղահրաշ տեսարանով, որ անշուշտ նոր օր է բերել մեզ երկարաձիգ ամպամած օրերից յետոյ։ Օ՜, պարոն Լեւոն, այս բոլորը ես ձեզ եմ պարտական։

Աշոտ. (քննական հայեացքով) Ինչ որ խորհրդաւոր խօսակցութիւն... Անշուշտ որևէ լուրջ բան եղել է, որ ինձնից ուզում էք ծածկել։ Ո՞ւր է մայրիկը։

Արուսեակ. (վրայ է բերում խսկոյն). Նա տանը չէ, Աշոտ։ Իսկ ինչ վերաբերում է լուրջ խնդրին, այո, նա եղել է և կար մի փոքր առաջ, բայց այժմ անհետ կորցրի։ Այդ կորուստը պարտական եմ քեզ և պ. Լեոնին (փարում է Աշոտին)։

Լեոն. Խնդրում եմ, օրիորդ, թողնենք այդ բոլորը և թոյլ տանք որ Աշոտը պատմէ մեզ մայրաքաղաքի վերջին դէպքերի մասին։

Արուսեակ. Այո, պարոն Լեոն, արշալոյսին անկարելի է լուրջ խնդիրների մասին խօսել, պէտք է լոկ դիտել սքանչելիքները... նրանց շրջանում ապրել և հիանալ։

VII ՏԵՍԱՐԱՆ

ՆՈՅՆԵՐԸ, ՀԱՄԲԱՐՁՈՒՄ, ԳԱՐԵԳԻՆ ԵՒ ԱԹԱՆԷՍ.

Աթանէս. Ա՜, քրոջ տղայ, չեկար—չեկար ու հէնց որ ամուսնացար, մեզ նոր միտդ ձգեցիր։ Բարով ես եկել, երևի տիկինդ կլինի ուղարկած, հրէուհին լաւ կին—արմատ է լինում, ես նրանց լաւ եմ ճանաչում։ Մօրդ էլ այնպէս եմ հասկացրել։ Չկարծես թէ քեռիդ քո մասին չէ մտածել։

Աշոտ. Ես մոռացել էի, քեռի, որ դու բաւականին սրախօս ես։ Է՜ լաւ, այդ թողնենք։ Համբարձո՛ւմ, չես խօսում։ Քեռի՞, ի՞նչպէս ես, ձերո՞նք ինչպէս են։

Աթանէս. Փառք Աստծոյ, ապրում ենք, եթէ մի քանիսից ցած ենք, շատերից էլ բարձր ենք։ Մի վախենալ, քանի տասներս դեռ չեն թափուել բոլորովին, այդպէս էլ կմնամ, եթէ աւելի չբարձրանամ։

Աշոտ (տհաճութեամբ երես է դարձնում) Համբարձո՛ւմ, իսկ դու քո գործերիդ մասին ոչինչ չես ասում։ Առևտուրը այժմ կարծեմ լաւ պիտի գնալիս լինի առհասարակ։

Համբարձում. Չեմ դանդատւում։ Բայց, քանի եղբայրս մենակ թողեց ինձ և օտար երկրում հաստատուեց, այնտեղից աղջիկ առնելով, դեռ շատ առաջ կերթամ, այնպէս չէ՞, քեռի։

Աշոտ. Է՜, դրանք թողնենք, շատ ենք խօսել դրանց մասին։ Ես համոզուած եմ, որ իմ օգնութեան առանձին կարիք չես ունենալ։ Դու այն ասա, այս տարի Արուսեակին ուղարկո՞ւմ ես ինձ մօտ։ (Արուսեակ փարում է Աշոտին)։

Համբարձում. (Կամաց եղբօրը) Այդ թող։ (Ցանկարծակի) Ախ, ես բոլորովին մոռացայ։ Ներեցէք պարոն Զամբազեան։ Աշոտ, խնդրեմ ծանօթանաք, պ. Զամբազեան Արուսեակի փեսա.

ցուն (հանդիսաւոր. ներկայացնում է իրար)։

Աշոտ (եղբօրը) Մի թէ արդէն...

Արուսեակ (սեղմւում է եղբօրը) Աշոտ...

Աթանէս. Չի՞ ճանաչում ինչ է յայտնի Զամբաղեանի որդուն։

Լեւոն (դիտելով) Զամբաղեան... (կամաց Աշոտին) Յայտնի շուլեօր։

Համբարձում (Լեւոնին) Պարոն, բաւական է, ես Ձեզ միանգամ արդէն դուրս եմ արել մեր տնից ձեր՝ այնտեղ պառակտում ձգելուն համար։ Այժմ էլ իմ առաջ էք անպատուում հիւրիս։ (Տաքանալով աւելի և աւելի) Դէ՛ շուտ, քանի ուշ չէ։

Լեւոն. Առաջին՝ ես ձեր ընտանիքի մէջ պառակտում չեմ ձգել, այլ լոկ ձեզ եմ վիրաւորել, այո՛, սոսկալի վիրաւորանքով. երկրորդ ես այժմ ձեր տանը չեմ, այլ ընկերոջս՝ ձեր եղբօր հիւրն եմ։

Աթանէս. Ինչ, մարդուն (ցոյց տալով Գարեգնի վրայ) կանչել էք այստեղ անարգելու համար։

Գարեգին. Ես լռում եմ, պ. Համբարձում, այդ է պահանջում խոհեմութիւնը, իսկ դուք չէք կարող և չպէտք է լռէք։

Աշոտ. Ես այս բոլորից ոչինչ չեմ հասկանում։

Լեւոն. Բան հասկանալու համար, սիրելի Աշոտ, պէտք է ամէն բան իմանալ այս խեղճ զոհից (ցոյց է տալիս Արուսեակի վրայ) որի աղնիւ ձգտումները, որի մատաղ սիրտը, երիտասարդական թարմութիւնը ահա 2—3 տարի է որ անխղճօրէն սեղմւում է գետնին, դէպի չքացում տարւում, ահա (ձեռքով օդի մէջ շրջան գծելով Համբարձումի, Աթանէսի և Գարեգնի ուղղութեամբ) այս պարոնների եռանդուն ջանքերով։

Գարեգին. Պարոն Համբարձում, ես գնում եմ, բայց իմացած եղէք, այս անարգանքի համար դուք էք միակ պատասխանատուն (գնում է)։

Համբարձում (մօտենում է Լեւոնին) Նա պէտք է դուրս գնայ իսկոյն։ (Բռնում է Լեւոնի թեւից) Դուրս իսկոյն, ասացի, քանի ուշ չէ.

Լեւոն (դէն է հրում) Հեռու, ասում եմ, թէ չէ... Կարծում ես մեծդ է դատական ոստիկանը... (Աշոտը մէջ է ընկնում)

Արուսեակ. Աստուած իմ, Օգնի՛ր Աշոտ։ Օգնեցէք...

Աշոտ. Թող, Համբարձում։

Համբարձում. Ոչ, նա չպէտք է իմ տանը մնայ նոյն իսկ մի բոպէ (նորից բռնում է Լեւոնի թեւից) դէ՛ շուտ, սրիկայ։

Աշոտ. (որոտում է)։ Բաց թող, ասում եմ և հեռացիր։ Նա այժմ իմ հիւրն է և համոզուած եմ, որ յանցաւոր չէ։

Համբարձում. Ուսումն էլ չօգնեց քեզ և միշտ մնացիր ու կմնաս եղբօրդ թշնամին։ (Խիստ յուզուած) Ուրեմն յանցաւոր չէ նա հարազատ եղբօրդ վրայ ձեռք բարձրացնողը, քրոջդ ուղիղ ճանապարհից հանողը։

Արուսեակ. Նա՞ նա՞, որ ինձ ազատեց խարխափումներից, տանջանքներիս լեղու տուեց, որ լաց, հեկեկանքս բողոք ու պահանջ չինեց։ Նա ինձ ճանապարհից չհանեց, այլ ուղիղ ճանապարհի բերեց։

Համբարձում. (ատամները կրճտացնելով) Ախ դու...

Աթանէս. Արի, արի, Համբարձում, թող մենք գնանք, թող մենակ մնանք, դարձեալ իրենք են մեզ մօտ գալու։ Բայց (մի կողմը) Աւաղ իմ յոյներ։

Համբարձում (Աթանէսի հետ նրա դրդմամբ մի անկիւնը գնալով տհաճ) Բայց ո՞ւր գնամ, ո՞ւր գնամ իմ տնից, առանց դուրս նետելու նրան այստեղից։

Աշոտ. Այժմ եմ հասկանում, թէ ինչու այսպէս ընկել է նախկին այծեամը (նայում է Արուսեակին), աշխոյժ ու առոյգ այծեամը, թօղնել ու թառամել։ Եւ դու չես խղճացել նրան, Համբարձում։

Համբարձում. Ես այն էի ուզում դրա համար, ինչ պարտաւոր է ցանկանալու և անելու իւրաքանչիւր եղբայր իւր քրոջը։

Աշոտ։ Գուցէ, չեմ ուզում վիճել։ (Կամաց) պատրաստուիր, Արուսեակ, մենք շուտով պիտի հեռանանք այստեղից։ Գնանք այստեղ, ուր հեռու այս մթնոլորտից առ ժամանակ նոր օդ կշնչես ու նոր կեանք կստանաս։

Արուսեակ. Պարոն Լեւոնն էլ մեզ հետ կգայ, չէ՞։

Աշոտ. Անշուշտ։ Մենք միասին ենք ապրում և միասին կլինենք միշտ։

Արուսեակ. Ո՜հ որքան երջանիկ եմ զգում ինձ։

Լեւոն. Այո՛, Աշոտ, վաղուց պէտք էր պոկել, հանել այդ չքնաղ ծաղիկը, չեմ քաշւում ուղիղն ասելու, այս ճահճից։ Մենք գնանք, բայց դարձեալ պէտք է վերադառնալ մաքրելու ճահիճը և կեանք տալու նեխուած մթնոլորտին։

Աթանէս (մի կողմը) (Ձեռքերը տարածելով) Աւաղ իմ յոյսեր։

Ա. ԳԵԱՆՋԵՑԵԱՆ

(Վարագոյր։)

Տ. Ս. ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ

36. Ծանօթ եղաւ արդէն Շնորհալիին անձնաւորութիւնը այն նախընթաց տեղեկութիւններով զոր տուինք նախորդ հայրապետներուն վրայ խօսած ատեննիս։ Ներսէսի ծնունդն է ի Ծովք, իսկ Ներսէս անունը չեմք գիտեր աւազանի է թէ քահանայական օծման։ Իւր եղբօրմէն վեց տարի միայն կրտսեր է. ուստի համեմատաբար 12 կամ 14 տարեկան էր նորա կաթողիկոս եղած տարին, 1113-ին։ Իւր եղբօր հետ աշակերտած էր Կարմիրվանեցի Ստեփանոս վարդապետին և կուսակրօն քահանայ օծուեցաւ իւր եղբօրմէն հազիւ 18 տարեկան եղած ատեն 1120-ին, երբ Գրիգոր կաթողիկոս կը գտնուէր ի Շուղր։ Ներսէսի առաջին ուսումնասիրութիւնները եկեղեցական և կրօնական եղան միանգամայն, և կանուխէն սկսաւ գրել այն բազմաթիւ չափաւ երկասիրութիւնները որք մեծաւ մասամբ հասած են մեզի, և յորս վանկաչափ և յանգաւոր ձև մը սկսած է գործածել. որ իրմէ առաջ հազիւ ծանօթ եղած է, իսկ իրմէ ետքը յոյժ տարածուած։ Քահանայութենէն սկսելով Ներսէս իւր եղբօր գործակիցն ու ընկերակիցն եղաւ, և կամ ինչպէս մեր լեզուով պիտի ըսէինք, նորա պաշտօնական և մասնաւոր քարտուղարը միանգամայն։ Ներսէս պատմութեան մէջ երկու մականուններով ճանչցուած է, թէպէտ երկուքն ալ բացառաբար իրեն յատուկ չեն։ Կայեցի մականունը ստացաւ կարի անագան երբ կաթողիկոսարանը փոխադրուեցաւ ի Հռոմկլայ, 1147-ին և ինքն ալ հաստատապէս այնտեղ բնակել պարտաւորեցաւ, զի ծննդեամբ Ծովքեցի էր և ոչ Կայեցի։ Միւս կողմանէ Կայի բնակողներ բազմաթիւ եղած են. թէպէտ անտի չեն առնուր իրենց մականունը։ Աւելի յատուկ է Շնորհալի մականունը, սակայն այդ ալ միայն իրեն տրուած չէ, այլ իւր աշակերտակիցներն ալ, Ղուկասու մեկնիչ Իգնատիոսը, Կաթողիկեայց մեկնիչ Սարգիսը, Մարկոսի մեկնիչ Բարսեղը, հաւասարապէս Շնորհալի մականուն ունին, և կերևի թէ Շնորհալի անուամբ ճանչցուեցան Կարմիրվանեցւոյն աշակերտութենէն ծաղկող մեկնիչ վարդապետները, յորոց մին էր և այս Ներսէս մեկ-

նիչն Մատթէոսի։ Այսու հանդերձ Շնորհալի մականունը այնպէս յատուկ եղած է Ներսէսի, որ պարզապէս սոյն անուամբ կը ճանչցուի ինքը պատմութեան մէջ։

37. Ներսէսի գործունէութիւնը աստիճան մը ևս ընդարձակուեցաւ, երբ եպիսկոպոս ձեռնադրուեցաւ 33 տարեկան եղած ատեն 1135-ին։ Այն ատեն կաթողիկոսարանն կը գտնուէր ի Ծովք։ Քանի մի տարի ետքը 1141-ին, Ներսէս գտնուեցաւ Անտիոքայ Լատինաց ժողովին, և Գրիգորի Երուսաղէմ ուխտի գացած ատեն 1142-ին, Ներսէս ստանձնեց ուվարեց կաթողիկոսարանի գործերը։ Մանրամասն պատմութիւններ ինքն ալ մեզի թողած չէ. 20 և աւելի տարիներ կը սահին առանց պատմութեան, յորս միայն Ամայեցւոց մոլորութեան խնդիրը տեսանք պատմուած։ Այլ Ներսէսի կեանքը անգործ չանցաւ, իւր երկասիրութիւնք, և մանաւանդ քերթողական գրութիւնք, մեծաւ մասամբ այս ատեն են գրուած, և ասոնց մէջն են տաղաչափեալ Պատմութիւնն, Ողբն Եդեսիոյ, և Բանն միսիթարական ի տնօրէնութիւնս Քրիստոսի, որ աւելի *Ցիսուս որդի* սկզբնաւորութեամբն է ծանօթ։ Բաց աստի ունի բազմաթիւ և այլազան տաղեր և գրուածներ և Ս. Գրոց մեկնութիւններ։ Ներսէս երկրորդական գրից մէջ ծերացաւ գրեթէ, զի ինչպէս ըսինք չատ կրտսեր չէր քան զեղբայրն, և երբ Գրիգոր ծերութեան և տկարութեան համար կաթողիկոսութիւնը կը փոխանցէր իւր կրտսեր եղբօր, 1166 ապրիլ 17-ին, ինքն 70 կամ 72 տարեկան էր, իսկ Ներսէս 64-էն պակաս չէր, որ է ըսել արդէն ալեորեալ և պատկառելի անձ մըն էր։ Երեք ամիսները զորս իբր կաթողիկոսակից անցուց մինչև իւր եղբօր մահը, 1166 յուլիսին, մեք ըստ հաստատուն սովորութեանց կը վերագրենք նախորդին, և Գրիգորի մահուանէ կը սկսենք Շնորհալւոյն բուն կաթողիկոսութեան միջոցը։

38. Նոյնպէս ըմբռնած էր Ներսէս ալ, զի իւր առաջին և նախընծայ հայրապետական գործը, որ է անգրանիկ օրհնութեան կոնդակը, Գրիգորի մահուանէն յետոյ արձակեց։ Այդ կոնդակն է որ *Թուղթ ընդհանրական* կամ պարզապէս *Ընդհանրական* անունով կը ճանչցուի ազգիս մէջ, և մեր եկեղեցւոյն պաշտօնական գրութեանց մէջ նախապատիւ տեղ մը կը գրաւէ։ Շնորհալին, ինչպէս և վայել էր իւր շնորհալից և շնորհաբաշխ գրչին, արտասովոր կարևորութիւն տուաւ այդ գրութեան, և ուզեց որ դաւանական և կրօնական կէտերու առձեռն ուղեցոյց մը լինի այն ամենուն համար, և անոր մէջ գտնեն իրեն հաւատքին և պաշտամունքին և կենցաղավարութեանց հիմնական օրէնքները. և իբր ապահով առաջնորդ հետևին անոր։ Շնորհալին իւր գիրը

կուղղէ *Առ հաւօրէն հայասեռ ազինս*, թէ ի հայրենիս մնացեալոց և թէ յարևմուտս պանդխտելոց, թէ զանազան աշխարհաց մէջ թափառելոց և թէ հեռաւոր երկիրներ ցրուելոց։ Գրութեան պատճառն է, որ ինքն ամեն կողմ չկրնար շրջել, և կենդրոնական մայրաքաղաք ու հայրապետանոց ալ չունի որ անտի խօսի, այլ *իբրեւ զայծեամն յորսորդաց եւ ի շանց փախուցեալ, ի քարանձաւս կը բնակի Հռոմկլայի մէջ առանձնացեալ* (Ընդհ. 7), մինչ միւս կողմանէ չէ կարող իւր խիղճը հանդարտեցնել, և միակ եղանակ կը գտնէ գրաւոր կերպով հովուական պարտքը լրացնել։ Այս է Ընդհանրականին նպատակը։ Պարունակութեան առաջին մասը դաւանական է, և ընդարձակ կերպով կը բացատրուին Երրորդութեան և Մարդեղութեան խորհուրդները և հաւատոյ կարևորութիւնը։ Անկէ ետքը կսկսի կանոնական մասը, որ բաժնուած է զանազան գլուխներու, և ըստ իւրաքանչիւր աստիճանի կարևոր խրատներ տրուած են. 1. վանականաց, 2. վանահարց, 3. եպիսկոպոսաց, 4. քահանայից, 5. իշխանաց, 6. զինուորաց, 7. քաղաքացւոց, 8. դիւղացւոց, և 9. կանանց։ Իւրաքանչիւր գլխոյն մէջ կան եկեղեցական իրաւանց, կանոնաց, ծիսից և սովորութեանց վերաբերեալ ամենակարևոր կէտեր, որոնց ամբողջական ուսումնասիրութիւնը՝ բովանդակ Հայ Եկեղեցւոյ ուսումնասիրութիւն մը կը լինի, որ մեր նպատակէն դուրս է։ Այն օրէն մինչև ցայսօր Շնորհալւոյն Ընդհանրականը հայ եկեղեցականաց առձեռն պատրաստ գիրքը եղած է, և բոլոր պէտք եղածը անոր մէջէն կը քաղեն։

39. Շնորհալւոյն կենաց և գործունէութեանց մեծագոյն արարքը միութենական բանակցութիւնները լինելով, հարկ է որ յատուկ մտադրութիւն դարձնենք անոնց։ Շնորհալին ջերմ պաշտպան եղաւ այդ ձգտմանց, և ամենայն ուժով շարունակեց Յունաց Մանուէլ կայսեր հետ սկսած բանակցութիւնը, զոր ճշտիւ խօսելով ինքն իսկ սկսած էր Մամեստիոյ կուսակալ Ալեքսի հետ։ Շնորհալւոյն այդ միութենական ձգտումները այնպիսի մեծ ոգեորութիւն պատճառած են Հռովմէադաւաններուն, որ զՆերսէս կատարեալ հովմէական մը կը կարծեն, և *Սուրբ* անունն ալ կընծայեն անոր, պարզապէս Հայոց եկեղեցւոյն հոգիէն զատուած և Կաթոլիկ եկեղեցւոյ հոգւոյն յարած ենթադրելով զնա։ Սակայն Շնորհալւոյն բոլոր կեանքին մէջ, իւր և Հռովմայ պապերուն հետ որև է յարաբերութեան գործ մը, կամ նշան մը չգտնուիր։ Իսկ Յունաց հետ միաբանութեանց ջանքը Հռովմէադաւաններուն փափագին չծառայեր, քանի որ արդէն Յոյնք և Լատինք իրարմէ բաժնուած էին, և Յունական եկեղեցին Լատիններէն իրրև հերձեալ

և մոլորեալ կը նկատուէր։ Մանուէլ Կոմենոս կայսր, զոր այնչափ կը բարձրացնեն մերայինք, և որ միութեան գործին ոգին կը նկատուի, նոյն այն Մանուէլն է, որ Լատինաց հին և նոր հերձակներէն ամեն տեսակ մեղադրանքներով կանարգուի, թէ իւր հակահռովմէական ընթացքին համար, և թէ 1147-ի երկրորդ խաչակրութեան ձախողուելուն պատճառ լինելուն համար։ Անկէ ետքն ալ բոլոր իր կեանքին մէջ լատինաց թշնամութիւն ցուցած և անոնցմէ ալ թշնամութիւն գտած է։ Զենք գիտեր թէ Շնորհալին ինչ տեսակ հռովմէական մը կը լինի, որ հռովմէականաց և հռովմէականութեան ոխերիմ թշնամւոյն հետ համաձայնել կը ճգնի, իսկ բուն հռովմէականութեան հետ յարաբերութիւն հաստատել իսկ չձեռնարկեր։

40. Այլ թէ ինչ էր Շնորհալւոյն միութենական ձգտմանց բուն ոգին, մեզ դժուարին չէ բացայայտ կերպով պարզաբանել։ *Միութիւն* կամ *միաբանութիւն* բառը մերայնոց միտքին մէջ կամ բերնին վրայ չունի երբէք այն իմաստը, զոր կընծայեն նմին Հռովմէականք։ Սոցա համար միութիւն է, երբ ուրիշ ուրիշ եկեղեցի մը կուգայ կը համաձայնի կամ կը հպատակի իրենց եկեղեցւոյն։ Մինչև մէկ աստիճան ցոյնք ալ նմանօրինակ իմաստ մը կ'ուզէին տալ միութեան խօսքին, ինչպէս բանակցութեանց պատմութիւնն ալ պիտի ցուցնէ։ Հռովմէականութիւն և Բիւզանդականութիւն մէկէ աւելի զիրար չշոշափող սկզբունքներ ունին։ Իսկ Հայոց համար միութիւնն է, ոչ թէ գտնուող եկեղեցիներէն միոյն տիրապետութիւնը, և ոչ իսկ իրենց եկեղեցւոյն տիրապետութիւնը, այլ նախնական և հնաւանդ եկեղեցւոյն տիրապետութիւնը, որ սկզբնական եկեղեցին էր, և սկզբնական լինելով ճշմարիտ ալ էր. և որ սեփական էր ամեն քրիստոսադաւան եկեղեցեաց, երբ որեւէ երկրորդական պատճառներով իրարմէ զատուած չէին։ Դաւանական մասին մէջ հինն ու նախնականը, կանոնական մասին մէջ առաջինն ու սկզբնականը, ծիսական մասին մէջ էականն ու ընդհանրականը, ամեն կէտերու մէջ ի հնուց անհրաժեշտ նկատուած և անհրաժեշտ վճռուածները. իսկ մնացեալ կէտերու մէջ, որք ազատ կը մնան, իւրաքանչիւր եկեղեցւոյ սեփական սովորութեանց յարգն ու պահպանութիւնը։ Զիրար պատուել փոփոխակի. իւրաքանչիւրին կարողութեան համեմատ ազդեցութիւնն ալ ճանչնալ, ի Քրիստոս եղբայրութիւնը արդեամբ ցուցնել ի հոգի և ի մարմին, ի ներքուստ և արտաքուստ, և նոյն իսկ արտաքին միջոցներով իրարու նպաստել, իրարու նեղութեան հասնել, և մանաւանդ եկեղեցւոյ հակառակորդաց և դաւաճանողաց դէմ համերաշխ միութեամբ գործել։ Նմանապէս զիրար հոգևոր

հաղորդութենէ ալ չզրկել, և քրիստոնէական մխիթարութիւններէ չհեռացնել, և այդպէս ի սէր և ի պատիւ զմիմեանս ելանելով միութիւն և միաբանութիւն հաստատել ի Քրիստոս և յԵկեղեցի։ Այդ նպատակին հասնելու համար Հայեր մեծ քաջուած երբեմն զոհողութեանց ալ ենթարկուիլ և զիջողութեանց մէջ առատանալ, կամ կարևոր եկեղեցիներու ազդեցութիւնը յարգելու համար, կամ տկարաց տկարութիւնը բառնալու համար, և կամ ընդհանուր չինութեան համար օրինաւորէն ալ հրաժարելու տեւտարանական սկզբունքին հետեւելու համար։ Սակայն երբ իրենց ուղղամտութիւնը չարաչար է մեկնուած, կամ իրենց արտաքին տկարութիւնը ի չարն է գործածուած, յանկարծ զայրացած է իրենց ոգին, և զիջողութեանց չափն ալ լրանալով հարկ սեպած են իրենց ուղղութիւնը համարձակ պաշտպանել։

41։ Շնորհալւոյն դառնալով, ի հարկէ կսպասէր նա Ալեքսի ձեռօք ղրկուած գրոյն ընելիք ազդեցութեան, և Կոստանդնապոլսէ գալիք պատասխանին, այլ երկու տարիներ անցած էին իզուր, չենք գիտեր Ալեքսի դարձին ուշանալուն կամ թէ Մանուէլի զբաղեալ լինելուն համար։ Զարմանալի է որ Մանուէլ չէ լսած Գրիգորի մահը, որով տարի անցնելէ ետքը, 1167 սեպտեմբերին, նոյն Գրիգորի կուղղէ իւր նամակը, և միութենական բանակցութեանց համար Կոստանդնուպոլիս կը հրաւիրէ հաւատոյ գրոյն հեղինակ և կաթողիկոսին եղբայր Ներսէսը, և Սմբատ անունով մեծ պալատական մըն ալ կը ղրկէ, որպէսզի կայսերական ծախքով և արժանաւոր պատուով Կոստանդնուպոլիս բերուի Հայոց կաթողիկոսին ներկայացուցիչը։ Ներսէս, որ արդէն կաթողիկոսական աթոռին վրայ կը գտնուէր, ուրախութեամբ ընդունեց կայսեր գիրը Սմբատ պալատականին ձեռքէն, սակայն այլ ևս վայել չէր իրեն իբր բանագնաց երթալ, և ոչ ալ կրնար իւր աթոռը թողուլ ու հեռանալ։ Զուզեց ալ ուրիշ մը իբր պատուիրակ ղրկել, զի գործը փափուկ էր և կուզէր անձամբ վարել բանակցութիւնները։ Մըտածելով որ Մանուէլ ստէպ իւր մայրաքաղաքէն կը հեռանայ, և Իկոնիոնի Տաճիկներու հետ պատերազմելու պատճառաւ Կիլիկիա կը մօտենայ, խնդրեց որ ինքն կայսրն յանձն առնու *զալ յարևելս* (Ընդհ. 112), և այնտեղ ժողովով կարգադրուի ամեն բան։ Շնորհալին լսած էր որ Հռովմայ պապէն ալ պատգամաւորներ եկած են Կոստանդնուպոլիս, և ինքն ալ լուր կուտար թէ Ասորւոց պատրիարքէն ալ պատգամաւորներ եկած են Հռոմկլայ, հետևաբար կը յուսայր, թէ Հայք և Յոյնք և Լատինք և Ասորիք, որ է ըսել բովանդակ քրիստոնեայք կրնան միութեան յանգիլ (Ընդհ. 117)։ Շնորհալին կը խորհրդածէր ևս, թէ որովհետև բա-

ժանումը եօթն հարիւր տարիէ իվեր հինցած և արմատացած և ատելութեան փոխարկուած է (Ընդհ. 114), ուստի պէտք է խոհեմութեամբ գործել, և պէտք չէ որ և ոչ մի կողմերը պնդէ իրրև վերջնական պայման, և բանակցութիւնն *ոչ եղիցի որպէս տեառն առ ծառայս եւ ծառայից առ տեառս* (Ընդհ. 117), ոչ մէկ կողմը հրամայէ և միւսը հնազանդի, այլ իւրաքանչիւր կողմ ինչ որ ուրիշի վրայ պակաս կը կարծէ՝ յայտնէ, և անաչառ քննութիւն լինի, թաղաւոր ճանչցուի՝ Քրիստոս, և դատաւոր ճանչցուին առաքեալք և մարգարէք և ուղղապէս վարդապետք եկեղեցւոյ, և որ կողմին խօսքը իրաւացի յայտնուի, *զայն ընկալցուք անհակառակ*, կամ որ կողմին խօսքը անիրաւ դատուի, *անցանէ ի բաց հրաժարեսցուք երկոքեան* (Ընդհ. 118)։ Քննութիւնն ալ չլինի հակառակութեամբ եւ անօգուտ բանակռուութեամբ որպէս մինչեւ ցայժմ, այլ ըլլայ հեզութեամբ եւ հանդարտութեամբ եւ զբեռն իրերաց բառնալով եւ զտկարութիւն տկարաց բժշկելով։ Առաջուց դիտելով թէ Յոյնք աւելի կօրաւոր և աւելի իմաստուն կը կարծեն զինքեանս քան զՀայս, կը յարէ. *Զէ ինչ անտեղի կամ առաջին, կատարելոց յիմաստութիւն յանկատարից ընդունել զօգտակարագոյն ինչ բան* (Ընդհ. 119)։ Շնորհալին կընդունի թէ ինչպէս Հայեր Յոյներէ սորվելիք և ուղղելիք կունենան, նոյնպէս և Յոյներ Հայերէն սորվելիք և ուղղելիք կէտեր ունին։ Ահա Շնորհալւոյն իմացած միութեան կերպը, զոր կընդարձակէ հաւասարապէս Յունաց և Հայոց, Լատինաց և Ասորւոց, ինչպէս կանուխ ակնարկեցինք։

42. Այդ նամակին կցեց Շնորհալին իւր պաշտօնական գիրեր, մին *Սահմանք հաւատոյ*, և միւսը *Յաղագս աւանդութեանց մակագրեալ*, յորս աւելի ընդարձակ կերպով կը բացատրէ ինչ որ Մամեստիայէ ղրկուած *Դիր հաւատոյ*-ով գրած էր։ Այդ երկրորդը աւելորդ էր, ինչպէս ինքն ալ կը դիտէ, սակայն *պնդազոյնս պահանջէր զայն թղթաբերն Սմբատ ի դիմաց կայսեր*։ Այդ պահանջին պատճառը միայն այն կրնայ լինել, որ առաջին գիրը գրուած էր ի Ներսիսէ իբր եպիսկոպոսէ։ Մանուէլ իրաւունք ունէր աւելի պաշտօնական հիմնագիր մը ուզել կաթողիկոսէն, և որովհետև Դրիգոր վախճանած էր, նոյն ինքն Ներսէս իբր կաթողիկոս պէտք էր հաստատէր ինչ որ յառաջ իբր եպիսկոպոս գրած էր։ Այդ երկրորդ գիրը պարունակութեամբ առաջինէն տարբեր չէ, այլ շարադրութեամբ ճոխագոյն է։ *Սահմանք հաւատոյ*-ին մէջ աւելի ընդարձակութեամբ կը բացատրուին Մարդեղութեան խնդիրները, և գլխաւորապէս ի Քրիստոս բնութեանց և կամաց և գործողութեանց միութեան կամ միաւո-

րութեան վարդապետութիւնը և կը պաշտպանուի Հայ Եկեղեցւոյ դաւանութիւնը։ Իսկ Աւանդութեանց մասին մէջ կը խօսուի զանազան ծիսական նիւթոց վրայ, որք են. 1. Պատարագին բաղարջ հացը, 2. Պատարագին անջուր բաժակը, 3. Ծնունդին և մկրտութեան ի միասին տօնուիլը, 4. Սուրբ Աստուածին խաչեցաբը. 5. Խաչերուն բեւեռ զարնելը. 6. Խաչերու օրհնութիւնը, 7. Պատկերաց պաշտօնը, 8. Առաջաւորաց պահքը։ Այդ ամեն կէտերուն մէջ Շնորհալին կը ցուցնէ թէ Հայոց եկեղեցւոյ աւանդութիւնը ուղիղ է և հնաւանդ, և թէ Հայոց եկեղեցին պարտաւոր չէ նմանիլ ուրիշ եկեղեցիներու, որք նոյնպէս կարող են իրենց աւանդութիւնները պահպանել, զի յայսպիսիս իւրաքանչիւր եկեղեցի իրաւունք ունի իւրը պահպանել։ Ներսէսի կաթողիկոսութենէն տարի մը և աւելի ետքը, 1167 սեպտեմբերին գրուած էր Մանուէլի նամակը. հաշուի առնլով վրան եկող ձմեռը, և պատգամաւորին գալը, և գալուստէն յետոյ անցած ժամանակը, հնարաւոր է 1168 տարուան գարնան թողուլ Ներսէսի պատասխանները, թէպէտ ոչ նամակին և ոչ ծանօթութեանց մէջ թուական յիշուած չէ։

43. Սմբատ պալատական կը դառնայ ի Կոստանդնուպոլիս Ներսէսի պատասխաններով, որք դարձեալ լաւ՝ այսինքն յուսադրական տպաւորութիւն կը թողուն կայսեր և պատրիարքին, պալատականաց և եկեղեցականաց վրայ։ Սակայն Մանուէլ *արեւմտական աշխարհին շփոթմամբք զբաղեալ, անկարանայր զելսն յարեւելս ըստ հայցուածոյ հայրապետին* (Ընդհ. 144), այսինքն է, թէ անհնար կը լինէր Մանուէլի Կիլիկիա երթալ, և ժամանակ մը պատեհ առթի ակնկալութեամբ ատեն անցնելէ յետոյ, կայսրը վերջապէս որոշեց բանակցութիւնները բերանացի շարունակել, և Հայերը Յոյներուն մօտեցնելու համար եկեղեցական պատգամաւորութիւն մը ղրկել, և ընտրեց Թէորիանոս անուն ասաուածաբան և փիլիսոփայ վարդապետը, և անոր ընկեր տուաւ Փիլիպպուպոլսոյ հայոց վանքին առաջնորդ Ութման մականուանեալ Յովհան՝ կամ ըստ այլոց Վահան վարդապետը, և պաշտօնական յանձնարարագիրներով, 1170 մայիսին յղեց Հռոմկլայ։ Այստեղ յայտնի կը լինի թէ Յոյներ եղածէն գոհ մնացած չէին, և Ներսէսի ղրկած հաւատոյ և աւանդութեանց գիրերը իրենց ուզածին յարմար եկած չէին. քանի որ Հայոց եկեղեցին յամենայնի և ըստ ամենայնի պաշտպանուած էր, զի կուզէին որ Հայեր թէ ոչ ամեն, գոնէ գլխաւոր կարծուած կէտերու մէջ իրենց դաւանութիւնն ու ծէսը մոռնուն, և Յոյներուն դաւանական և ծիսական ձևերը ընդունին։ Թէորիանոս շուտով Հռոմկլայ հա-

սաւ և սկսաւ վիճաբանութիւններ կատարել շաբաթներով և ամիսներով, որպէս զի Շնորհալին համոզէ թէ ինչ որ Հայերը կը դաւանին կամ կը պահեն բոլորովին մոլար ու սխալ են, և պէտք է որ Ցունաց դաւանական բացատրութեանց և ծիսական կարգաց համակերպին։

44. Լամբրոնացին ալ կը յիշէ թէ Թէորիանոս այդ վիճաբանութեանց մէջ փոխանակուած հարցուպատասխանները *զամենեսեան ի գրի դրոշմեաց* (Ընդհ. 153), թէպէտ ինչ գրածը մեր մէջ չենք գտներ։ Սակայն յունարէն լեզուով կը գտնուի Թէորիանոսի և Ներսէսի վիճաբանութեանց ընդարձակ ատենագրութիւն մը, այնպէս մանրամասնութեամբ յառաջ բերուած, որ կարծես թէ ողագրեալ լինէր։ Այդ գրութեան մէջ գլխաւոր տեղը բռնողը մի բնութիւն կամ երկու բնութիւն ըսելու կէտն է, որուն վրայ երկարօրէն կը խօսակցին. և որուն կը հետևի ի Քրիստոս մի կամ երկու կամաց խնդիրը իբր առաջնոյն յաւելուած։ Ասոնցմէ զատ վիճաբանութեան նիւթ են եղած. 1. Քրիստոսի ծննդեան տօնին օրը. 2. Սուրբ Աստուածին խաչեցարը. 3. Միւռոնի նիւթը. 4. Ժամասացութիւնը գաւթի մէջ կատարելը. 5. Քաղկեդոնի ժողովին վճիռը կամ Լեոնի առմարին գլխաւոր մասը. որոց նկատմամբ համառօտ վիճաբանութիւններ կը լինին։ Այդ գրութիւնն անշուշտ Թէորիանոս ըստ իւր մտաց պատրաստեց և ներկայեց Մանուէլի։ Ինքն այնպէս կը ցուցնէ թէ Ներսէս ամեն բանի կը համոզուի և կը զիջանի. կը նզովէ Հայոց դաւանութիւնն ու սովորութիւնը. և ինքն և իր եպիսկոպոսներ կը դոչենթէ *Հռովմէական* են, ինչպէս կը թարգմանէ Կալանոս, որ ըստ Թէորիանոսի պէտք էր ըսէր թէ *Հռոմ* են, զի Թէորիանոս ինքն ալ հռովմէական չէր։ Ըստ Թէորիանոսի Ներսէս ամեն բան ընդունելէ և մեղայ գոչելէ և իր անցեալը նզովելէ ետքը կը խոստանայ որ ժողով մը գումարէ, և ինքն նախ Թէորիանոսի դէմ խօսի, որպէս զի իրենները գրաւէ. և յետոյ կամաց կամաց զիջանի և Թէորիանոսի բոլոր ըսելիքները ընդունի (Կալանոս. Պատմ. 319)։ Ներսէս կը խնդրէ նաև *զղջացեալ սրտիւ եւ արտասուաթոր աչօք* (Կալ. Պատմ. 322), որպէս զի Կոստանդնուպոլսոյ յոյն պատրիարքը հանդիսաւոր կերպով Ս. Սոփիայի տաճարին մէջ *օրհնեսցէ զազգն Հայոց որ այնքան ժամանակս մնաց ի նզովս*։ Այսպէս կը նկարագրէ Թէորիանոս իւր դեսպանութեան ելքը։

45. Ամենայն ոք կզգայ թէ որչափ անյարմար են այդ եզրակացութիւնք Շնորհալւոյն բերնին. զոր ոչ թէ մեք միայն իբրև կարող անձ մէկը ճանչնանք, այլ և ըստ վկայութեան նորին

իսկ Թէոդրիանոսի, զոր յառաջ կը բերէ Կալանոս, Շնորհալին անհաս գիտութեան և կատարեալ առաքինութեան տէր անձ մըն էր, այնպէս որ իրաւամբ կը կարծուէր, *թէ ոմն Աստուածաբան եւ Ոսկիբերան յայտնեալ է ի Հայոց ազգէ* (Կալ. պտ. 240). բայց բնաւ իսկ Գրիգոր Աստուածաբանի և Յովհան Ոսկեբերանի համահաւասար չէր լինէր, եթէ սխալ վարդապետութիւնն իբր ուղիղ կարծելու չափ տգիտութեան մէջ էր։ Շնորհալին կը յանդիմանէ Պօղոս քահանայ մը, որովհետև Յունաց դաւանութիւնն էր ընդուներ և Հայոց եկեղեցին կը բամբասէր (Ընդհ. 207). արդ ինչպէս հնար է ենթադրել որ ինքն նոյնը ըրած լինի։ Ասկէ աւելի վճռական է նամակն զոր Շնորհալին կը գրէ Մանուէլի Թէոդրիանոսի դառնալուն առթիւ, և նորա ձեռօք ալ կը յղէ 1170 հոկտեմբերին։ Այդ նամակին մէջ ինչ որ աւանդութեանց կամ ծիսից խնդիրներ են՝ բնաւ իսկ յիշուած չեն, կամ այն է որ անոնց վրայ խօսուած ալ չէ, կամ այն է որ խօսուելէն յետոյ խընդրոյ նիւթ մնացած չէ, և կամ թէ այն կէտերուն մէջ Ներսէս բացարձակապէս իւր եկեղեցւոյն աւանդութեանց պահպանութիւնը պնդած է։ Դաւանական կէտին գալով Ներսէս կընդունի թէ հնար է՝ կերպով մը երկու բնութիւն ըսել առանց նեստորական լինելու, համաձայնելով Գրիգորի Աստուածաբանի բացատրութեան որ երկու ըսաւ *վասն անկորուստ եւ անյեղլի զոլոյ բնութեանցն* (Ընդհ. 151)։ Սակայն միւս կողմանէ կը նկատէ և կը պնդէ թէ առանց ետիքական լինելու իրենք ալ կարող են մի բնութիւն ըսել հետեւելով Կիւրղի Աղեքսանդրացւոյ, որ մի բնութիւն ըսաւ *յաղագս անճառ միաւորութեանն*։ Շնորհալին կաշխատի այս կերպով միաբանութեան կէտ մը ստեղծել, որպէս զի մի և երկու ըսողներ մեկնողական համաձայնութեամբ զիրար գտնեն, և առանց զիրար բառացի նոյնութեան ստիպելու, սէր հաստատեն հաւատքի նոյնութեան վրայ, թէ Քրիստոս Աստուած և մարդ է միանգամայն, և ոչ թէ այլ ոք և այլ ոք։ Բայց պաշտօնական համաձայնութիւն կնքելու համար հարկ կը դատի ազգային ժողով գումարել, յորում պիտի աշխատի սիրոյ և խաղաղութեան յորդորիչ և թելադիր ըլլալ։

46. Ըստ Լամբրոնացւոյն Մանուէլ կայսր և Միքայէլ պատրիարք յոյժ գոհ կը մնան Թէոդրիանոսի պատմածէն և Շնորհալւոյն գրածէն, և մեծ յոյս կը տածեն թէ խաղաղութիւնը և միաբանութիւնը պիտի յաջողին։ Այսու հանդերձ այս անգամ ալ պէտք չէ շատ յառաջել լաւատես ակնկալութիւններով։ Երկու տարի կանցնի մինչև որ Յոյներ պատասխանեն Հայոց, և այդ երկար լռութիւնը տեղի պիտի չունենար, եթէ ամենայն ինչ աւարտած

էր։ Յոյները պէտք չէր պատեհը կորսնցնէին եթէ Շնորհալին մեղայով իւր անցեալը նզովեր էր, և ոչ ալ նոր պայմաններ պէտք է առաջարկուէին եթէ ամեն պայմաններ ընդունուած էին։ Երկու տարի ետքը կը գրուի Մանուէլի պատասխանը 1772 դեկտեմբերին, յորում Մանուէլ կը զարմանայ թէ ինչպէս Ներսէս կարող է տակաւին մի բնութիւն ասացուածոյն վրայ պնդել. ուստի Հայոց պաշտպանութեան պատասխանները կարճելու նպատակով ինը առաջարկներ կը ներկայացնէ, և նախկին պատուիրակները Թէոդիանոս իմաստասէրը և Յովհաննէս Ութմանը նորէն Հռոմկլայ կը ղրկէ, որպէս զի խոստացուած ժողովը գումարուի և Հայերը հանդիսապէս ստորագրեն յիշեալ ինը առաջարկութիւնները։ Լամբրոնացին ծանօթութեանց մէջ կըսէ թէ կայսրը թողած էր որ Հայերը չընդունուած գլուխներուն համար հաւանեցուցիչ պատճառներ առաջարկեն, բայց նամակին մէջ այդ պարագայն չյիշուիր։ Միքայէլ պատրիարգին կողմէն ալ նամակ մը կայր սիրայորդոր ոճով գրուած։

47. Առաջարկուած ինն գլուխները հետևեալներն են. 1. Մի բնութիւն ըսողները նզովել։ 2. Երկու բնութիւն բացատրութիւնը ընդունել. 3. Սուրբ Աստուածը առանց *խաչեցարի* և առանց *ելի* երգել. 4. Ծնունդը և բոլոր յարակից տնօրինականները, ևս և Ամենայն Սրբոց տօնը Յոյներուն հետ կատարել. 5. Միւռոնը ձէթով պատրաստել. 6. Խմորուն հացով և ջրախառն բաժակով պատարագել. 7. Բոլոր եկեղեցականները և աշխարհականները պատարագի ատեն եկեղեցւոյ մէջ պահել. 8. Չորրորդ և հինգերորդ և վեցերորդ և եօթներորդ տիեզերական ժողովները ընդունել, որ է ըսել Քաղկեդոնի և Կոստանդնուպօլսոյ Բ. և Գ. և Նիկիոյ Բ. ժողովները տիեզերական ճանչնալ. 9. Հայոց կաթողիկոսներուն առաջարկութիւնը, կամ աւելի ճիշտ՝ հաստատութիւնը Յունաց կայսրէն ընդունել։ Այդ համառօտ քաղուածը բաւական է մեզի ցուցնելու, թէ ինչ կիմանային Յոյնք երբ միութիւն կըսէին։ Առաջարկեալ գլուխներուն մէջ ոչ միայն կան այնպիսի կէտեր որ իւրաքանչիւր եկեղեցւոյ սեփական ծեսէր են, և որոց նկատմամբ պէտք չէր իսկ խօսք ընել, այլ և կայ վերջին գլուխը, որ բացարձակապէս կը նշանակէ Հայոց եկեղեցւոյ պետը Յունաց եկեղեցւոյն և Յունաց կայսեր հպատակեցնել, և ինչ որ Յոյներ իրենց քաղաքական զօրութեան և տիրապետութեան ժամանակ բռնութեամբ իսկ չկարացին ընել, այժմ Հայոց յօժարակամ յանձնառութեամբը հաստատել։ Միւս կողմանէ յայտնի կը լինի որ Թէոդիանոսի առաջին պատգամաւորութենէն Շնորհալին ալ իրազեկ եղած էր, թէ Յոյներ իւր

ուղիղ ու սուրբ նպատակէն շատ հեռու են. և թէպէտ երկու տարի անցած էր այն ժամանակէն ի վեր, սակայն խոստացուած ժողովը չէր հրաւիրած, գումարումէն օգուտ չսպասելով։

48. Երբ Թէոդիանոս և Ուլթման 1173-ին սկիզբները Հռոմկլայ հասան, Կիլիկիոյ և Միջագետաց եպիսկոպոսներէն փոքրիկ գումարում մը կազմուեցաւ, և կարգացուեցան կայսեր և պատրիարգին նամակները և հռչակաւոր ինը գլուխները։ Ներսէս միութեան սրտանց փափագող էր և միութեան գործը ինքը ստեղծեր էր, և որչափ ալ պաղէր Յունաց ընթացքէն, չէր կրնար բոլորովին հրաժարիլ իւր սիրելի գաղափարէն։ Հետեւաբար չուզեց իսկոյն խիստ ու վերջնական մերժողականով պատասխանել, և ընդհանուր ազգային ժողով գումարելու անհրաժեշտ պէտքը առջև դնելով ուզեց գործը երկարաձգել. իբր զի առանց արևելեան եպիսկոպոսաց համաձայնութեան, ընդհանուր եկեղեցւոյ վերաբերեալ որոշում մը կաթողիկոսն ինքնին կամ միայն Կիլիկիոյ եպիսկոպոսներով չէր կրնար աւարտել։ Այսպէս խնդիրը կը յետաձգէ, երկու նամակներուն պատասխաններ կը գրէ, Թէոդիանոսն և Ուլթմանն ալ կը համոզէ թէ եպիսկոպոսաց հաւաքուելուն շատ ատեն պէտք է, և երկուքն ալ ձեռնունայն ետ կը դարձնէ։ Շնորհալին կայսեր նամակին մէջ կանուխէն կը յայտնէ, թէ ինն առաջարկները բոլորովին ընդունել անհնար է, բայց այսու հանդերձ ոմանց համար զոհողութիւն ու զիջողութիւն ընելու պիտի աշխատի, *ոչ իբր ի մոլորութենէ դառնալով ի ճշմարտութիւն*, այլ որպէս զի ազգովին աստուածային սիրոյն ստուգիւ փափագող լինելին ցուցնեն։ Կազդարարէ ևս թէ իրենք ալ իրենց առաջարկներն ունին, Յոյներուն վրայ տեսնուած դայթակղութեանց նկատմամբ. և պիտի պահանջեն որ անոնք ալ Յունաց կողմէն վերցուին։ Դալով գումարուելիք ժողովոյն, Լամբրոնացին ծանօթութեանց մէջ կըսէ, թէ Ներսէս հրաման հանեց *յամենայն Հայաստանեայս, սկսեալ յաթոռոյն Աղուանից մինչեւ ի կողմանս Սուրացւոց եւ մինչեւ յարեւմտային կողմանս*։ Սակայն հրաւիրագրոյն պատճէնը չգներ, այլ լոկ ազգարարութեան թուղթ մը կայ առ Արևելեայս, թէ առանց իրենց բան պիտի չորոշուի, ուստի զրոյցներէ չվրդովուին (Ընդհ. 209)։ Ստեփաննոս անուն վարդապետ մըն ալ կը յղէ յարևելս, միտքերը իմանալու պաշտօնով։ Ըստ այսմ ստոյգ է թէ Շնորհալին թէև ժողով գումարել ուզեց, բայց հրաւիրելու չհասաւ։ Յաջորդ ժողովներու մէջ ալ երբէք յիշատակութիւն չենք գտներ որ Շնորհալին իրօք ժողով մը հրաւիրած ըլլայ։

49. Այլ եթէ հրաւիրած ալ լինէր, դարձեալ միութեան

խնդիրը նոր քայլ մը պիտի չառնէր. զի նոյն 1773 տարին Շնորհալւոյն կեանքին վերջինը եղաւ. և այստեղ կը փակուի կամ կընդհատի միութենական խնդիրը, որչափ ինչ կը պատկանի Շնորհալւոյ ժամանակին 1166-է 1173։ Այս կէտին հասնելով նորէն կուզենք դիտել տալ, թէ անհնար է Շնորհալւոյն ընթացքին մէջ գտնել փոքրիկ մի կէտ անգամ, որով նա հեռացած լինի իւր եկեղեցւոյն դաւանութիւններէն և աւանդութիւններէն և ծէսերէն. որչափ ալ հոգւով չափ հետամուտ եղած է և ամեն զոհողութեանց պատրաստականութիւն ունեցած է, որպէս զի Քրիստոսի եկեղեցւոյն ցանկացեալ միութիւնը վերահաստատուի։ Հռովմէական եկեղեցւոյն հետ ուղղակի յարաբերութիւն ունեցած չէ, յարգած է յունական եկեղեցին թէպէտ հռովմէականին հակառակ, այլ յայտնելով նորա թերութիւններն ալ, իրաքանչիւր եկեղեցւոյ առանձնակի սովորութիւնները ազատ ճանչցած է, որպէս զի Հայոցն ալ յարգուի. ամեն եկեղեցեաց մէջէն էական և հիմնական կէտերը քաղելով, միութեան խարիսխ մը կազմել ուզած է, և զայդ անհնարին չէ կարծած, բարեմտաբար ենթադրելով թէ այն ուղիղ հոգին զոր ինքն ունէր իբր Հայրապետ Հայոց, կրնար գտնուիլ ուրիշ եկեղեցեաց տիրապետութեան հետամուտ հայրապետներուն վրայ։ Երբ Թէորիանոսի վեհերն էին որք մեկնութեանց ձեւով կը յառաջէին, տակաւին յուսոյ տեղ կրնար ըլլալ. բայց երբ հռչակաւոր ինը գլուխները տեսնուեցան, Շնորհալին ալ զգաց թէ ուրիշներ տարբեր ջուրերու վրայ կը նաւարկեն։ Առաջին գլուխը, որ է բնութեանց խնդիրը, կը լուսաբանուէր ինն երսրդով, յորում Յոյներ կաթողիկոսութիւնը իրենց ենթարկելու առաջարկը յայտնապէս մէջտեղ կը դնէին։ Այդ ամենը նախադասելով էր ի հարկէ որ Շնորհալին 1170-է 1173, իւր կենաց վերջին երեք տարիներու մէջ բոլորովին թուլցուցեր էր միութենական եռանդը, և իւր գրութիւնք կորուսեր էին նախկին հրաբորբոք աւիւնը, և դարձած էին լոկ ձեւակերպութեան և պատշաճից նամակներ։

50. Շնորհալւոյն գործունէութեան մնացեալ մասերը, կը վերաբերին ներքին կարգադրութեանց և մասնաւոր խնամոց, զորս պէտք է քաղենք մեզի հասած նամակներէն։ Գլխաւորն է Որեւորդեաց դարձին համար Սամոստիոյ Թորոս եպիսկոպոսին և Գաղան իշխանին գրած նամակը, յորում կը կարգադրէ դարձող արեւորդիները եկեղեցւոյ մէջ ընդունելու համար հարկ եղած պայմանները և արարողութիւնները (Ընդհ. 223)։ Այս արեւորդիք կը նկարագրուին իբրև դիւաց պաշտօն մատուցանող ազանդ մը, և յայսմ կը նմանին այժմեան Եէզիդիներու, միւս կողմանէ կը

համեմատուին յոյն Պողոմելոս կամ Բագուել կոչուած աղանդաւորներուն, որք Պաւլիկեանց սերունդ էին ի Բուլղարիա, և այն ատեն Արևորդիք ալ կարող են նկատուիլ Թոնդրակեցւոց սերունդ և Գրիգոր Պահլաւունւոյն ժամանակ յիշատակուած Ամայեցւոց մի ճիւղ. զի տեղով ալ իրարմէ շատ հեռու չեն, և Մրջաղետաց բնակիչներ են հաւասարապէս։ Նկատողութեան արժանի է և Կարսեցւոց ուղղած գիրը, յորում հանգուցեալ Աբրահամ եպիսկոպոսի տեղ, ժողովուրդին ընտրած ու ընծայած Խաչատուր քահանայն եպիսկոպոս կը ձեռնադրէ և կը գրկէ։ Այս թուղթէն կը քաղենք թէ մինչև Շնորհալւոյն ժամանակը պահուած էր տակաւին եկեղեցւոյ հնաւանդ սովորութիւնը, որով ոչ թէ վանականաց այլ քահանայից դասէն կառնուէին վիճակաց առաջնորդները։ Շնորհալին ներքին մեծ յուզումներ ու խնդիրներ չունեցաւ, այլ արթուն կերպով հովուեց ու խնամեց իւր ցըրուեալ հօտը, և որչափ պարագայք կը ներէին, ջանաց ամեն կողմ տարածել իւր հայրապետական հոգացողութիւնը։

51. Ներքին գործունէութեան մէջ Շնորհալւոյն մեծագոյն երախտիքը ծիսական բարեկարգութիւնն է, և մեր այժմեան ծիսական կարգերը Շնորհալւոյն տուած վերջնական ձևովը մնացած են. զի անկէ ետքը կատարուած փոփոխութիւնք կամ յաւելուածք կարի իսկ սակաւ են և էականը չեն այլայլեր։ Ժամերգութեանց առաջին ձևը Թարգմանչաց կարգաւորութիւնն է, որ Սահակէն սկսելով Մանդակունիին կը փակուի, այլ այս նախնական կարգադրութենէն ամբողջական յիշատակ մը հասած չէ։ Օձնեցւոյն գրութիւնք ծիսական կարգադրութիւններ ունին ժամերգութեանց վրայ. Անձևացւոյն մեկնութիւնն ալ գրեթէ ամբողջական կարգ մը կը պարունակէ. թէպէտ իդէպ է ենթադրել թէ չնշանակուած ու զանց եղած կէտերն ալ պէտք է գտնուին։ Շնորհալին ժամագիրքն ու շարականը լեցուցած է իւր երգերով, և շատ կարգադրութիւններ աւելցուցած է տօնացոյցին վրայ, զորս մի առ մի յառաջ բերել այս տեղին չը պատկաներ, և շատերն ալ հանրածանօթ են։ Կէտ մի միայն հարկ կը սեպենք դիտել տալ թէ Շնորհալւոյն դարը հոգևոր պաշտամանց յոյժ եռանդեան դարը չէր. և չկրնար ենթադրուիլ որ Շնորհալին յաջողած լինի իւր կամքով հոգևոր պաշտամանց բեռը ծանրացնել։ Մեք կը կարծենք ընդհանրապէս թէ նա թեթևցուցած է, թէ գլխաւորապէս այն ժամանակէն կսկսի սաղմոսները շարականներու հետ փոխանակելու սովորութիւնը։ Սաղմոսները թերևս սկսած էին տաղտկալի դառնալ, մանաւանդ օրական ութը կանոն քաղելը, և աւելի զուարճալի և հաճելի

պիտի լինէր օրին յարմար երգերով ճոխացնել հասարակաց աղօթքները։ Շնորհալին ոչ միայն աղօթասէր մը եղած է, այլ և լաւ քերթող և լաւ երաժիշտ, որ ինքն երգերը յօրինած է և ինքն նուագած, և ինքնին եկեղեցական պաշտօնէից և հաւատացելոց սորվեցուցած։ Անշուշտ այն ատեն օգուտ կը քաղէին երգեցողութեան խաղերէն, որոց հին ուսումը այժմ բոլորովին անծանօթ մնացած է, և զարմանալի է որ տարածեալ լինելու սահմանեալ ուսում մը իսպառ կորստեան մատնուած է։

52. Միսական բարեկարգութիւններն չեն աւարտեր լոկ շարականաց և երգոց յօրինուածով։ Եկեղեցական պաշտամանց հոգին և կարգը, և ընդհանուր ձևակերպութիւնները և ասութեանց կանոնները պէտք է որ միօրինակ լինին, և այդ միօրինակութիւնն ալ հիմնուած լինի նախնական և հնաւանդ ձևին վրայ։ Կերևի թէ գայթական Հայեր շատ զօրաւոր չէին ի մասինս, և նոյն իսկ Սեաւ լերան հաղարաւոր վանականք, որոց աշակերտած էր և ինքն Ներսէս, մեծ հեղինակութիւն չէին զգար իրենց վրայ։ Շնորհալին պարտաւորուեցաւ յատուկ հարցումներ ուղղել և տեղեկութիւններ առնուլ Թեղենեաց և Մաքենեաց մեծ ուխտերէն, որք աւելի նշանաւոր էին իրենց ճըշտապահ կարգադրութեամբ։ Անցեալ դարու ժամագիրքներն ալ ունէին ընդարձակ հրահանգ մը Խրատ ժամատեղեաց անուամբ, յօրինեալ ի Շնորհալւոյն հետեւողութեամբ Թեղենեաց, և Մաքենեաց, սակայն նոյն հրահանգն ալ կըսէ թէ Շնորհալին թերին լրացուց և յայտնի աղաւաղեալը ուղղեց։ Այդ հրահանգը, ի բաց առեալ այն մասերը՝ զորս յետագայ սովորութիւնք փոփոխեցին, մինչև ցայսօր լաւագոյն ուղեցոյցն է մեր ժամասացութեանց։ Չենք կարող մերժել թէ Շնորհալին քանի քանի կէտերու մէջ առաջնորդուեցաւ օտար եկեղեցեաց սովորութիւններէն, և անոնց մէջ լաւագոյն տեսածներնէն ինչինչ փոխառութիւններ ըրաւ մեր եկեղեցւոյն համար։ Սակայն լաւ զննութենէ յետոյ կ'ստուգուի թէ կարի սակաւ են ընդհանուր պաշտամանց, և ժամասացութեանց և պատարագի մէջ եղած օտար փոխառութիւնք, և Շնորհալին ուղած է աւելի նոյն իսկ ազգային եկեղեցւոյն ոգւովը բարեկարգել ազգային պաշտամունքը։

53. Գլխաւոր խնդիր մըն է ձեռնադրութեան մաշտոցը, որուն փոփոխութիւնը կը վերագրուի Շնորհալւոյն, այլ մեզի հաւանական չերևիր այդ կարծիքը։ Ծանօթ է որ քահանայական աստիճանները եօթն են ըստ Լատինաց և չորս ըստ Յունաց։ Յունականներն են 1. քահանայ, 2. սարկաւագ, 3. դպիր կամ

կիսաւարկաւագ. 4. ընթերցող կամ անագանոս, իսկ Լատինա-կաններն էն. 1. քահանայ. 2. սարկաւագ, 3. կիսասարկաւագ, 4. ջահընկալ, 5. երգմնեցուցիչ. 6. ընթերցող, 7. դռնապան. երկուքն ալ ունին աստիճանաց պատրաստութեան վիճակ մը, որ է երգեցողն կամ սաղմոսերգուն։ Այսն յիշատակը և մինչև ցայսօր անխախտ պահուած մեր ծիսական պահանջմունք, չորսէ աւելի աստիճան չեն ենթադրեր և չորսէ աւելի աստիճանի ալ գործ չունին և անվրէպ է թէ ի նախնումն չորս էին նաև հայ քահանայութեան աստիճանները։ Այժմ եօթն են, և այդ փոփոխութիւնը նուիրագործելու փափագը զայն Շնորհալւոյն կը վերագրէ։ Սակայն Շնորհալին երբէք Լատինաց հետ յարաբերութիւն չունեցաւ, որ անոնցմէ բան մը փոխանցէ։ Երկրորդ իւր միութենական գործունէութիւնը Յունաց հետ լինելով հնար չէր որ յունական ուղղութիւնէն խոտորէր։ Երրորդ՝ Լամբրոնացին որ Շնորհալիէն բաւական յետոյ ծաղկեցաւ և եկեղեցական կարգաց վրայ գրեց, և որ Լատինաց հետ սերտ յարաբերութիւններ ունեցաւ, ինքն իսկ տակաւին չգիտեր աստիճանաց եօթը լինելը և միշտ չորս աստիճանաց վրայ կը խօսի։ Վերջապէս եօթն աստիճանաց ձեռնադրութեան մաշտոցը՝ զոր այժմ կը գործածենք, և որ յայտնապէս լատինէ փոխանցուած է, հինին վրայ նորը զգեցնելով, Շնորհալւոյն գրչէն ելած չերևիր և աւելի ստորին ժամանակաց գործ կը տեսնուի, գուցէ դար մի ևս յետոյ, երբ լատինական ազդեցութիւնն սկսաւ տիրել Կիլիկիոյ աթոռոյն մէջ։

54. Այդչափ՝ ինչ բաւական լինի Շնորհալւոյն նկատմամբ։ Աւելի երկար գրել հնար էր, այլ մեր նպատակէն աւելի կը լինէր։ Շնորհալին մի կողմանէ ներքին բարեզարդութեան և միւս կողմանէ եկեղեցական միութեան ղբաղումներով անցուց իւր եօթնամեայ (1166—1173) կաթողիկոսութեան ժամանակը, և լի արդեամբ և ամօք 71 տարեկան հասակին մէջ վախճանեցաւ, յամսեանն օգոստոսի, որ օր երեքտասան էր, յաւուր հինգշաբաթոջ. և ի թուականիս հայոց ի վեցհարիւր քսանևերկու» որ է 1173 օգոստոս 13, ինչպէս կ'ըսէ Լամբրոնացին ի ծանօթութիւնս, թէպէտ և այլուր կըսէ «յօգոստոսի հինգ», և որովհետև օգոստոսի 13-ը հինգշաբթի չէր, այլ երկուշաբթի էր այն տարին, և օգոստոսի հինգն ալ կիրակի է, հետևաբար հինգշաբթին ամուր բռնելով պէտք է դնել ի 9 կամ ի 16 օգոստոսի, որ է Աստուածածնայ պահոց, կամ նոյն իսկ Շնորհալիէն հաստատուած Աստուածածնայ ինն օրէքին հինգշաբթին։ Թաղումը եղաւ մեծահանդէս շքով. եկեղե-

ցականաց բազմութիւն հաւաքուեցաւ ամեն կողմերէն, քանի մի օր մարմինը պահուեցաւ, մինչև որ բազմութիւն ժողովուի, և նոյն առթիւ ալ որոշուեցաւ Շնորհալւոյն տարեկան յիշատակը կամ տօնը կատարել։ Երբ մահուան գոյժը Կոստանդնուպոլիս հասաւ, այնտեղ ալ սուգ եղաւ, և Մանուէլ կարար ցաւեցաւ որ միութեան գործոյն մեծ գործակիցը կորաւ, այլ հրամայեց, կ'ըսէ Լամբրոնացին ի ծանօթութիւնս, որ իրենց եկեղեցեաց մէջ ընդ առաջին սուրբսն տօնախմութեամբ յիշատակուի ամ ըստ ամէ։ Սակայն ոչ երբէք կը գտնենք որ Յունաց եկեղեցին Ներսէս Շնորհալւոյ տօն կատարած լինի։ Մեր մէջ իհարկէ նախ պարզ տարեդարձ մըն էր տօնուածը, զի հին ձեռագիր տօնացոյցներ չունին Կլայեցւոյն անունը, այլ միայն յայսմաւուրք կը նշանակեն նորա յիշատակը սեպտեմբեր 25-ին և յունիս 13-ին, ինչպէս Ռուբինեանց ժամանակի կաթողիկոսներէն և թագաւորներէն և թագուհիներէն շատերուն անուններն ալ։ Ժամանակին մեծագոյն անունն է Շնորհալին Ս. Ներսէս, այն որ հայրապետաց մէջ փառաւորագոյն, մատենագիրներու մէջ արդիւնաւորագոյն, սրբակրօն անձերու մէջ գերագոյն, եկեղեցւոյ և ազգի օգտակար եղողներու մէջ գերազանց. յամենայնի բարձր դիրք մը կը գրաւէ, և կը նկատուի իբրև լրումն երանաշնորհ Ս. Հարց Եկեղեցւոյս մերոյ, որք իբր պահապանք աւանդութեան և իբր վարդապետք հաւատոյ մեծ հեղինակութիւն կը վայելեն կրօնական խնդրոց նկատմամբ։ Մեք կը սիրենք ընդհանուր եկեղեցւոյ միաձայն աւանդութեան հեղինակութիւնը հասցնել մինչև հինգերորդ դարու սկիզբները, հալածանաց և երից Ս. Ժողովոց միջոցներու մէջ փակելով զայն, զի Քաղկեդոնի ժամանակէն սկսան տարաձայնութիւնք։ Անտի սկսելով կուենանք մեր եկեղեցւոյն սեփական Ս. Հարց շարք մը. որ Հայաստանեայց եկեղեցւոյն աւանդութիւնը պահած ենն և ահա ասոնց շարքն է որ կը փակուի ի Շնորհալի հայրապետն և ի մեծ վարդապետն Ս. Ներսէս Կլայեցի։

ԲՆՆԱՍԷՐ

ՄԱՄՈՒԼԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ

«Անահիտը» Հայոց հարցի մասին

«Անահիտ» ամսաթերթի այս տարուայ թիւ 3, 4 և 5-ի մէջ կարդում ենք թերթի խմբագիր՝ պ. Արշակ Զօպանեանի մի ընդարձակ և շատ ուշագրաւ յօդուած Հայոց հարցի մասին՝ «Ռուսիա և Հայերը» վերնագրով։ Հեղինակը գտնում է, որ ժամանակ է որոշել Հայերի դիրքը դէպի Ռուսիան, և հայերիս համար չկայ այժմ աւելի կարևոր հարց, որովհետև վերջին քառորդ դարու աղէտները հետևանք են այդ անորոշութեան։

Քննելով, Պետրոս մեծի ժամանակներից սկսած, հայոց հարցի զանազան ֆազիսները և հայոց ազգի ներկայացուցիչների բռնած դիրքը, զանազան լուրջ փաստաթերթերով ապացուցանում է վերջինների կատարեալ անտակտութիւնը և տգիտութիւնը այլազգի քաղաքականութեան վերաբերմամբ և մատնացոյց է անում այն քաղաքականութիւնը և դիրքը դէպի այլ և այլ պետութիւնները, որին պէտք է հետևեն հայ ազգի «փոլիթիքան»ները, եթէ ուզում են մնասած չլինել Տաճկահայ հարցի լուծման։

7 թուի պատերազմից յետոյ, երբ հայերը արտայայտեցին իրենց հակառուս ձգտումները, սկսում է նկատուել այն անտարբերութիւնը, որ ցոյց տուեց Ռուս կառավարութիւնը հայոց խնդրի վերաբերմամբ։

Բայց Ռուսը իւր գործունէութեան ընթացքում չդադարեց Հայերի ու Ռուսների խզած յարաբերութիւնների լաւանալուն նպաստել։ Հայերս չկարողացանք օգտուել հանգամանքից և այդպիսով աւելի մնասեցինք մեզ։

Քննելով հնչակեանների ծրագիրը և նրանց խաղացած դերը, հեղինակը մատնացոյց է անում այն անխոհեմութիւնը, որ հայերը ունեցան արտայայտել, չհերքելով հնչակեան ծրագրի այն կէտը, որ ուղղուած էր Ռուսաց դէմ և որը

> «Ունեցաւ այն միակ արդիւնքը որ անխուսափելի էր. Ռուս կառավարութիւնը՝ 1890—91-էն սկսեալ՝ որոշապէս հակառակորդ դարձաւ տաճկահայ դատին»։

Իսկ հայերի անգլիամոլ ընթացքը այն հետևանքն ունեցաւ, որ «երբ հայկական տագնապը պայթեցաւ՝ Սասունի արիւնհեղութեամբ, ռուս կառավարութիւնը նախ տարտամ ընթացք մը բռնեց, որ յետոյ որոշապէս հակառակութեան փոխուեցաւ»։

Բացի դորանից, երբ հայերի անվերջ դիմումները Անգլիային անօգուտ անցան, հայոց «հայրիկ»ը 1895 թուի ամառը միայն դիմեց Ռուսաց Ցարին, մինչդեռ՝

«Մասունի 1904-ի կոտորածէն անմիջապէս յետոյ՝ Հայրիկէն դիմում մը, էն առաջ Ցարին ուղղուած, կարող էր մեծ արդիւնք ունենալ. 1895-ի պմառը արդէն շատ ուշ էր. Ռուս դիւանագիտութիւն որոշապէս հակահայ ուղղութիւն մը տուած էր արդէն իր քաղաքականութեան. Ռուսները սաստիկ գրգռուած էին այն ծայրահեղ ուվրանաբաց անգլիասիրութենէն զոր հայք ցոյց կուտային»...

Պոլսի հայոց պատրիարքարանի կողմից Եւրոպական դեսպաններին դիմող մի անձ, երբ բոլորից յոյսը կտրած դիմեց Ռուս դեսպանատուն

«սա պատասխանն ընդունեցաւ զինքն ընդունող դեսպանատան պաշտօնեային կողմէն՝ «Մեխալ դուռ էք զարկեր. Սբր Ֆիլիբ Քըրրիին դացէք»։

Հեղինակը ինչպէս ասել է շատ վաղուց կրկնում է և պնդում թէ՝

«Առանց Ռուսին հաւանութեան և գործակցութեան հայկական հարցը չի կրնար լուծուիլ և թէ հայք, փրկելու համար իրենց ազգը կորուստէ պէտք է Ռուսը իրենց բարեկամ դարձնեն»...

Թէ արդեօք որ Ռուսին պէտք է բարեկամանանք մենք՝ ցարականն թէ ազատականն, հեղինակն ասում է՝

«Անշուշտ կը բաղձանք որ Ռուսիոյ ազատական շարժումը հանգի լուրջ և տևական արդիւնքի մը. բայց, ազգովին՝ Ռուս ծայրահեղ յեղափոխականներուն միանալը ոչ պարտականութիւն ունինք, ոչ կարելիութիւն, որովհետև նրանց ծրագիրը այժմ անգործադրելի է, իսկ մեր ազգին ցաւերը անմիջական դարման կըհայցեն»...

«Սահմանադրական-տեսոքրաթ կուսակցութիւնը որ վաղուան Ռուսիային վարիչը և կանոնաւորիչը պիտի ըլլայ՝ ինչպէս Քլէմանսօ իսկ գուշակեց, և որուն գլուխը Քովալեվսկիի պէս լուրջ և հայասէր անձնաւորութիւններ կան, մեր ազգային շահերուն համար լիովին նպատակաւոր է և յուսատու։

Գիտնանք օգտուելը»... Երբէք ըսել չեմ ուզեր որ մեր ազգը իր ամբողջ յոյսը Ռուսիոյ վրայ դնելու է։ Ազգ մը, ինչպէս մարդ մը, միշտ իր յոյսը էն առաջ իր կրայ դնելու է»։

Գալով «Դաշնակցութեան», որի ծրագրի խմաստը Տաճկահայերին օգտակար լինելն է, հեղինակը նրանց ընթացքն էլ տարօրինակ է գտնում, որովհետև նրանք փոխանակ զուտ ազգային լինելու՝ ընկերվարական մարմին հրատարակեցին իրենց, որ անշուշտ մնասակար պէտք է լինի հայոց հարցի համար.

«Անհրաժեշտ է վերջապէս որ հայութիւնը Կովկասի մէջ ունենայ կուսակցութիւն մը, որ ըլլայ որոշապէս և ամեն բանէ առաջ «ազգային», որ իրեն միակ նպատակ ունենայ հայ ժողովրդին «ազգային շահերը պաշտպանել»

և որ ոչ մէկի խտիր չդնէ հարուստի և աղքատի, բանուորի ու քափիթալիստի միջև, ձգտի ընդհանրական միացնել բոլոր հայերը ազգային գործունէութեան մէջ»...

Որովհետև «ազգ մը միշտ պէտք է գիտնայ իր շահերուն համեմատ՝ ընտրել իր դաշնակիցները», հեղինակը գտնում է որ հայերի և Թուրքերի մերձեցումը անկարելի է, որովհետև ինչպէս ցոյց է տալիս մեր պատմութիւնը, Թուրք-Թաթար ցեղերն են մեր բուն Թշնամին և «երթալ անձնատուր ըլլալով այսպիսի զանգուածի մը մենք մեր ձեռքով չուանը մեր վիզն անցուցած կըլլանք։ Այս բոլորէն չեմ հետևցներ որ Թուրք կառավարութեան դէմ պէտք է մենք յարձակինք անխորհուրդ և անխոհեմ պայքարներով...

Բայց եթէ «Դաշնակցութիւնը» նորէն պիտի Տաճկահայոց օգնութեան համար այն ձեւով որով ըրաւ ցարդ, կըհաւատեմ այդ կուսակցութեան վարիչները որ լաւագոյն բան մը ըրած կըլլան այդ տեսակ օգնութենէ մը զրկելով Տաճկահայերը»։

Այլ շրջապատող ազգերից, ինչպէս գտնում է հեղինակը, մենք պէտք է ամեն ջանք գործ դնենք մօտ բարեկամութիւն կապելու արաբների հետ, որոնք «ասպետական ու նուրբ ցեղ մըն են»։ Մենք այժմէն պէտք է դաշնակցենք վաղուան արաբ զօրութեան հետ։

Պէտք է ջանանք նաև պարսիկների հետ բարեկամութիւն հաստատել, նախ որ նրանք մեզ ցեղակից են և ապա որ կարող են զարթնել և գեղեցկութիւն ստեղծել, ինչպէս անցեալում ունեցել են իրենց շքեղ քաղաքակրթութիւնը։

Ու քանի որ մեր դաշնակիցներն որոշելու մէջ է հարցը, հարկաւոր է նաև հայոց համար՝ վրացոց եւ իրենց մէջ գտնուած անհամաձայնութիւնները չնջել և այդ ժողովուրդը մեզ բարեկամ դարձնել։

Բայց դաշնակիցներ ունենալով չի վերջանում հարցը. բաւական չէ դաշնակցել և սպասել օգնութեան դրսից. հայոց ազգի գործիչները պարտաւոր են մտածել ազգի մտաւոր զարգացման և ինքնաճանաչութեան մասին. պէտք է նաև զարգացնեն ժողովրդի մէջ ինքնապաշտպանութեան գաղափարը, որ ամենից անհրաժեշտն է այսօր հայերիս համար։

Որովհետև հայոց հարցի լուծումը սպասելու է միմիայն «Դումայից», պէտք է որ Դաշնակցութիւնը խոհեմութիւն ունենայ և ծայրահեղութեան չհասնի Ռուսաց կառավարութեան վերաբերմամբ, իսկ ապագայ Ռուսաց պարլամենտի հայ անդամները պարտաւոր են կազմել «Հայկական կուսակցութիւն» Դումայի մէջ, որը շատ բան պէտք է ունենայ կատարելու։ Այս է յօդուածի բուն իմաստը։

Թերթի մէջ զետեղուած է նաև մի գեղեցիկ յօդուած Փարիզի հայ երաժշտութեան մասին և Փարիզի հայկական միութեան կանոնադրութիւնը։

ՎԱՐԴԳԷՍ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

—

Էվոլիւցիայի օրէնքը։

Ամեն բան մեզանում քայքայւում է, մի անօրինակ անարխիա տիրապետում է մեր գործերում, կաթողիկոսի հրաւէրով մարդիկ ժողովուել էին Էջմիածին կրօնը հայոց դպրոցներից հանելու, հոգևոր տեսչի ժամանակ այսօր ճեմարանում կրօնի դասեր չկան, դպրոցը գոյութիւն չունի, իսկ մարդիկ ռոճիկներ են ստանում, կաթողիկոսի դիւանատնից շաբաթը մի քանի հակասական հեռագիրներ են դուրս գալիս, մեր գործերը վարում են բռնի ոյժով յեղափոխական խմբերը, որոնք ուրիշ հանգամանքներում և ուրիշ գործերի համար էին ծնունդ առել։

Մտքի և գաղափարի կռիւը տեղի է տուել ֆիզիքական ուժին և միմեանց հակառակ կողմերը վախենում են որ գործը սպանութիւններով և արիւնհեղութեամբ կվերջանայ։

«Մշակ» լրագիրը արդարացի կերպով բողոք է բարձրացրել մեր կեանքում կատարուող բռնութիւնների դէմ և յուսահատական կոչ է անում, որ ժողովուրդը արթնանայ, որ ժողովուրդը ուժգին թափով և եռանդագին հակադրութիւն ստեղծէ կատարուող անարդարութիւնների դէմ։ Այս բոլորը շատ ճիշտ է և կարևոր։

Կռիւը սկսուել է Յովնանեան օր. դպրոցի տեսչի առիթով և մենք կարևոր ենք համարում ասելու, որ Էջմիածինը այս դէպքում մեծ սխալներ է կատարել, որ դպրոցի հոգաբարձութիւնը ոչ մի հիմք, ոչ մի արդարացի պատճառ չունի Լևոն Սարգսեանին հեռացնելու, որովհետև ոչ մի փաստ չունի տակաւին թէ նա անօգտաւէտ տեսչացու է։ Բայց այս խնդիրը արեգակի պէս պարզ է։ Այս թողնենք մի կողմ։

Մենք կամենում ենք մի յետանայեաց հայեացք ձգել մեր գործերի վերայ, որից պարզ երևում է, որ «Մշակ» լրագիրը ինքը նոյնպէս մի ժամանակ խաւար ամբոխի տրամադրութեամբ էր գործում և յենւում էր բռնի ուժի վերայ։ Եւ այսօրուայ դաշնակցականներից շատերը, որոց ազգակործան արարմունքների դէմ արդարացի կերպով բողոքում է «Մշակ»ը, ոչ միայն նախկին մշակականներ են, այլ և շատերը աշխատակից են եղել այդ թերթին։ Առաջ էլ «Արձագանք», «Նոր—Դար» և այլ զուտ ազգային թերթերը նոյն դրութեան մէջ էին, ինչ որ այսօր ինքը «Մշակը»։ Հայ հասարակութիւնը լաւ յիշում է, թէ ինչ միջոցներով և որպիսի ձևերով էին կատարել տալիս մշակականները հոգաբարձական և պատգամաւորական ընտրութիւնները, թէ ինչ կերպով կաթուղիկոսական ընտրութիւնների ժամանակ Էջմիածնի սինոդից

հեռացուեցին Սուքիաս և Ներսէս եպիսկոպոսները և Բարդուղիմէոս վարդապետը, թէ ինչ միջոցներով էջմիածնում ժողոված պատգամաւորները ստիպուած էին ընտրութիւն կատարելու։ Էջմիածնում կային մարդիկ, որոնք ժողովել էին տեղական խաւար ամբոխը, որ գոռում էր տաճար գնացող պատգամաւորներին թէ կենդանի չեն դուրս գայ տաճարից, եթէ այս ինչ կամ այն ինչ թեկնածուին հակառակ ձայն տան։ Կենդանի են դեռ բազմաթիւ պատգամաւորներ, որոնք այս բոլորը յիշում են։

Ինչ որ ցանես, այն էլ կհնձես։ Բռնի և կոպիտ ուժի, անգիտակից ամբոխի ձայնի գերակշռութեան սիստեմը «Մշակը» մտցրեց մեր գործերի մէջ և այսօր ինքը այս բոլորի դէմ բողոքում է։ Մենք, ի հարկէ, ուրախ ենք, որ այսօր «Մշակը» խելքի է եկել և կատարում է այն հայրենասիրական գործերը, որ առաջ կատարում էին ուրիշ թերթեր։ Այսօր էլ «Մշակի» դէմ նոյն անմիտ մեղադրանքներն են ստեղծում նրա հակառակորդները, ինչ որ ինքը «Մշակը» անբարեխղճաբար գործ էր դնում իւր հակառակորդների դէմ։ Մթթէ այսօր էլ «Մշակի» դէմ չեն աղաղաղում, որ նա մատնութիւն է անում, որ նա բուրժուական օրգան է, ինչ որ «Մշակը» անում էր Կարապետ Եղեանի, Եւանգուլեանի և Աբգար Յովհաննիսեանի դէմ, այսինքն այնպիսի գործիչների, որոնց անկեղծ ազգասիրութիւնը և հայութեան սէրը ամեն կասկածից վեր է։ «Մշակով» կըրթուած ու մեծացած աշակերտները աւելի լաւ բան չեն կարողանել՝ քան բռնանալ, կին և աղջիկ առևանգել, քսան կոպէկի համար սպանութիւններ գործել, ատրճանակով փող կորզել իբր ազգասիրական գործի համար և գաղափարը տարածել հրով ու սրով։

Էվոլիւցիայի օրէնքով ուրիշ կերպ էլ լինել չէր կարող։ Այդ պարոնները ինքեանք միջոցների խտրութիւն չէին անում իրանց հակառակորդների դէմ կռուելիս, ուստի և այսօր նոցա աշակերտները նոցա փեշակի մէջ մի փոքր առաջ են գնացել։ Նոքա փայտով և զրպարտութեամբ էին կռուում, իսկ այսօր իրենց հակառակորդները աւելի վատթար և տմարդի ուժով են նոցա դէմ հրամաններ հանում և ձեռքից խլում նոցա դիրքերը։

Այս երևոյթը նոր բան չէ հայ ազգի կեանքում, հազարաւոր տարիներ առաջ էլ մեր նախարարները միմեանց ջնջելու մէջ ոչ մի միջոցի առաջ կանգ չէին առնում, մեր կաթողիկոսներն ու եպիսկոպոսներն էլ կռուի մէջ անիսնայ էին միմեանց հետ, մեր իշխաններն էլ փառաւոր կերպով կոտորում էին ամբողջ սերունդներ և առհասարակ մեր ազգային յատկութիւնն է ինքնակիրութիւնը։ Մենք մի ազգ ենք որ ինքնավարութեան անընդունակ է և այդ բազմաթիւ պատմական փաստերով ապացուցուած է։ Մենք աշխարհ դղրդացրինք, որ մեզանից խլեցին մեր կալուածները և դպրոցները, բայց երբոր վերադարձրին՝ մենք ինքներս սկսեցինք այնպիսի մի ներքին կռիւ, որի հասցրած վնասները գուցէ աւելի վատթար լինեն քան ռուս կառավարութեան տուած վնասները։ ՀԻՆ ԵՐԳԻՉ

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

I

Այսօր միայն առիթ ունեցայ տեսնելու և կարդալու «Լուսայ» ամսագրի №№ 5—6-ում (եր. 169—170) Վ. Ա. ստորագրութեամբ նամակը, վերաբերեալ «պատմագիրք Հայոց» գործի հրատարակութեան։ Խնդրում եմ ամսագրի մոտակայ համարում տպագրել ներկայ պատասխանս այդ նամակին։

Ճիշտ չէ, իբր թէ պեր. Սուքիաս արքեպիսկոպոսը, 6000 ռուբլի նուիրելով պատմագրքի հրատարակութեան նպաստ՝ «մի քանի պայմաններ էր դրել հրատարակիչներին»։ Նա ոչ մի պայման իւր կողմից չէ դրել։ Հրատարակութիւնը Էջմիածնի անունով կոչելու առաջարկութիւնը ծագել է աշխատակիցների կողմից, որին ես համաձայնութիւն եմ տուել մի յայտնի պայմանով, իսկ առաջին հատորի վաճառումից գոյացած դրամով երկրորդ հատորը տպելու միտքը ինձ է պատկանում։

Մինչև այժմ լոյս ընծայուած մի գրքոյկի, Ղազար Փարպեցու վրայ, որ կազմում է Ա. հատորի չորրորդ գիրքը՝ չէ դրուած ոչ նուիրատուի անունը և ոչ «Էջմիածնի հրատարակութիւն» վերնագիրը այն պատճառով, որ այս և այսպիսի յիշատակութիւնները դրուելու են ամեն մի հատորի ընդարձակ վերնագրում, և ոչ թէ ամեն մի գրքոյկի վրայ, որ կրում է կարճ վերնագիր։ Ըստ այսմ՝ Կորիւնի վրայ, որ Ա. հատորի առաջին գրքոյկը կը կազմէ կդրուի նուիրատու Սուքիաս արքեպիսկոպոսի անունը և «Հրատարակութիւն սրբոյ Էջմիածնի» յիշատակութիւնը (եթէ իմ գրած մի յայտնի պայմանը իրագործուի)։

Ճիշտ է Վ. Ա-ի նամակի մի դիտողութիւնը միայն, որ հրատարակութիւնը շատ է ձգձգուում։ Ներկայումս մամուլի տակ է Ա. հատորի երկրորդ գրքոյկը, Ագաթանգեղոսը, և մեծ մասամբ տպագրուած է։ Նա վաղուց վերջացած կլինէր՝ եթէ անսպասելի կերպով մի թիւրիմացութիւն չծագէր մի աշխատակցի և հրատարակիչների մէջ, որի չնորհիւ տպագրելի նիւթի շարունակութիւնը դեռ չեմ ստացել։ Յոյս ունեմ, որ այս թիւրիմացութիւնը կվերանայ և գործը անխափան կշարունակուի սեպտեմբերից. իսկ եթէ այս չյաջողի, հարկադրուած կլինեմ հասարակութեան առաջ պարզել գործի բոլոր հանգամանքները, և այն ժամանակ հասարակութիւնը կդատէ, ով է մեղաւորը։

Ինձ համար մութ է մնում Վ. Ա-ի նամակի մի խօսքը.— «ինչ իրաւունքով կամայական գործածութիւն է տուած օտարի սեպհականութեան»։ Եթէ «օտարի սեպհականութիւն» ասելով Վ. Ա. հասկանում է Սուքիաս արքեպիսկոպոսի Պատմագրքի հրատարակութեան նուիրած 6000 ռուբլին, այս գումարին ոչ մի կամայական գործածութիւն չէ տրուած, այլ նա ծառայել է և պիտի ծառայէ բուն այն նպատակին, որի համար

նուիրուած է. իսկ եթէ ուրիշ բան է ուզում ասել նամակի հեղինակը, այն ես արդէն չեմ հասկանում։ *)

28 օգոստոսի 1906, ՍՏ. ՄԱԼԽԱՍԵԱՆՑ
Ախալցխայ։

II

Խմբագրութեան «Լումայ» ամսագրի.

Խնդրում ենք մի անկիւն շնորհէք Ձեր թերթի էջերում նորին Պայծառափայլութեան տ. Փոխարքայի թոյլտուութեամբ ս. Էջմիածնի անտառում Մայիսի 21-ին կազմած ժողովրդական զբօսանքի մտից և ելից հաշուին։

Մուտք.

Ա.) 30 հոգուց ստացուած է մօտ 1000 կտոր իրեղէն վիճակախաղի համար, որից զուտ արդիւնք գոյացաւ, տոմսակը 25 կ. 250 ռուբ. բ.) մուտքի տոմսակներից՝ 167 ռ. 25 կ. գ.) բուֆէտը՝ 132 ռ. 75 կ. դ.) դրամական նուէրներ զանազան տեղերից՝ 3810 ռ. 5 կ. ընդամենը՝ մուտքը եղել է 4360 ռ. 5 կոպ.։

Ելք.

Զբօսանքը կազմելու համար, տախտակամած պատրաստելու համար, բուֆէտի համար պաշարեղէն, Երևանից զինուորական երաժշտական խումբ բերել և տանելը և վարձատրութիւն թէ այդ խմբին և տեղական սազանդարներին, այլ և փոստ – հեռագրական ծախք նուէրները ս. Էջմիածին փոխադրելու համար և մանր ծախք՝ ընդամենը 368 ռուբլի 43 կոպ.։

Զուտ արդիւնքի բաշխումը.

Զուտ արդիւնքը, որ անում է 3991 ռուբ. 62 կ., բաշխուածէ այսպէս.

1.) 591 ռուբ. 62 կ. բաժանուած է Վաղարշապատի աղքատ բնակիչներին և գաղթականներին. նպաստ տրուելէ գլխաւորապէս հագստեղէն և ալիւր։

2.) 400 ռուբ. պահուած է նոյն նպատակի համար առաջիկայ ձմեռային ամիսներին օգնութիւն հասցնելու, երբ ցրտերի պատճառով չքաւոր ընտանիքներն աւելի կարօտ են լինում օգնութեան։

3. 600 ռուբ. յանձնուած է Վաղարշապատի ծխական հոգաբարձութեան այն պայմանով, որ տղայոց և օրիորդաց դպրոցներում այդ գումարի տոկոսներից 4 ռուբլիանոց թոշակներ տրուին աղքատ աշակերտներին որպէս ուսման վճար. իսկ երբ հոգաբարձութիւնը նոր դպրոցական շէնք կառուցանելու լինի, այդ գումարը պիտի գործադրուի դպրոցների համար անհրաժեշտ ուսումնական պիտոյքներ ձեռք բերելու։

---

*) Այս նամակը ժամուլի տակ էր, երբ մեր թղթակցից տեղեկացանք, որ գեր. Սուքիաս աբ. յանձնել է Ս. Էջմիածնի փաստաբանին՝ դատով վերականգնել իւր իրաւունքը «Պատմ. Հայոց» հրատ. վերաբերեալ։ ԽՄԲ.

4.) 600 ռուբ. ուղարկուածէ Նախիջևանի յաջորդ տ. Լևոն Վարդապետին՝ հայ-թուրքական ընդհարումների ժամանակ ամենից աւելի վնասուած շրջակայ հայ գիւղերին նպաստ տալու համար։

5.) 800 ռուբ. Էջմիածնի գաւառի Ղոյթուր գիւղի 29 հայ ընտանիքներին, որոնց տնտեսութիւնը միանգամայն քայքայուելէ անցեալ ամառ տեղի ունեցած ընդհարման ժամանակ։

Եւ 6.) 1000 ռուբ. յատկացուածէ Ապարանի որևէ գիւղում, ըստ որոշման իրենց ապարանցոց, մի դպրոցական շէնք կառուցանելու։

Զբօսանք կազմողները իրենց անկեղծ շնորհակալութիւնն են յայտնում այն բոլոր բարեգործ անձանց, որոնք իրենց առատ նուէրներով աջակցեցին այդ ձեռնարկութեան յաջողութեան։

Նահապետ Եպիսկոպոս, Եկատերինա Ֆրէնկէլ, Ց. Յովհաննիսեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Մեծարգոյ պարոններ՝ եղբարք Խրիստաֆոր, Աղէքսանդր (ինժ.), Միքայէլ և Գրիգոր Բաղդ. նազարեանները իրանց հանգուցեալ մօր՝ Զամախուոյ քաղաքացուհի Թագուհի Սարգսեան Նազարեանցի մտհուան տարելիցի առիթով հոգեհացի փոխարէն թերթիս խմբագրին յանձնեցին յիսուն ռուբլի յօգուտ Զուշուայ հայ արկածեալների, որպիսի գումարը խմբագրութիւնս ներկայացրեց թեմիս սրբազան Առաջնորդին գործադրելու յիշեալ նպատակի համար։

—Ս. Էջմիածնում արդէն կառուցուած է ելեքտրական կայարան և Մայր Աթոռի ամեն հաստատութիւններ հոկտեմբերից կլուսաւորուին ելեքտրական լուսաւորութեամբ։

—Մեզ ուղարկուած է պ. Վարդան Վարդանեանի հրատարակած «Ոգի Հայաստանի»-ի գունատիպ ուլօրը ձեռագործի համար, մի չքեղ հրատարակութիւն, կարևոր ամեն մի ընտանիքի համար։ Դինն է 5 ռ.։

—Ս. Էջմիածնի միաբաններից Արսէն վարդ. Ղլտճեան, Պոստանդին, Սրմբատ և Պօղոս սարկաւագները՝ կուսակրօնութիւնը թողնելով վերադարձան աշխարհական կոչման։

—Օգոստոսի 16-ին ս. Էջմիածնում բացուեցաւ Ռուսահայերի կենդրոնական ժողովը, և մի քանի նիստերից յետոյ փակուեցաւ փոխարքայի հրամանով։

—Մեզ հաղորդում են, որ մեր երկու նշանաւոր հոգևոր Դպրոցներում, այն է ս. Էջմիածնի ճեմարանում և Ներսիսեան Դպրոցում, որոնցից գլխաւորապէս հայ եկեղեցին ստանում է իւր հոգևոր հովիւները, ներկայումս վերցրուած է կրօնական առարկաների դասաւանդութիւնը և մնացել է կրօնի ուսուցման միայն աննշան հետը։

---

† Հոկտ. ամսին հայ հասարակութիւնը երկու նշանաւոր կորուստ ունեցաւ. Ն. Նախիջևանում վախճանուեց Նահապետ եպիսկոպոսը, Ռուսաստանի Հայ եկեղեցու նշանաւոր դէմքերից մէկը. և Խարկովում՝ ինժ. Նիկողայոս Գրիգորեանը, Թիֆլիսի հայ հասարակութեան նշանաւոր գործիչներից մէկը (զոհ կուսակցական անխիղճ հալածանքի)։ Այդ երկուսի յիշատակին կնուիրենք «Լուսայի» առաջիկայ համարը։

Խմբագիր-Հրատարակիչ՝ ԳԻՒՏ Ա. Բ. ԱՂԱՆԵԱՆՑ